- բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորում, կազմակերպում և վերահսկում,
- համալսարանական կրթության ներքին որակի ապահովմանն առնչվող գործառույթների համակարգում և վերահսկում,
- ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում ու վերահսկում (նաև հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում),
- ուսումնական գործընթացին մասնակցող ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի համակարգում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
- ամբիոնային ուսումնական բեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,
- ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպում և հաշվառում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում,
- առկա և հեռակա ուսուցման դասերի կայացման վերահսկում, դասամատյանների ստուգում,
- ֆակուլտետային կուրատորների և մագիստրոսական ծրագրերի ղեկավարների աշխատանքների կոորդինացում,
- ֆակուլտետների դեկանատների, ամբիոնների և ուսումնական կենտրոնների աշխատակիցներին մեթոդական աջակցություն,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի և բակալավրիատի 2-րդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կազմակերպում և իրականացում,
- ԵՊՀ-ում կրթական ծրագրերից և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան հարցման կազմակերպում,
- ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպում,
- ուսանողների շարժունության հետ կապված գործընթացի կազմակերպում, հրամանագրում և վերահսկում,

- բակալավրիատի և մագիստրատուրայի անվճար-վճարովի համակարգում ուսանողների փոխատեղման /ռոտացիա/ անցկացում, ուսման վարձի զեղչման գործընթացի կազմակերպում, ձևակերպում և ամփոփում,
- վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
- ԵՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների համար տվյալների նախապատրաստում և ամփոփում,
- Կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվա-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- ուսանողների տվյալների հենքի ստեղծում և պահպանում,
- ուսումնական պլանների, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացի կազմակերպում և վերահսկում,
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համար վիճակագրական տվյալների նախապատրաստում և տրամադրում,
- ԳԱՑ (Գնահատման առանցքային ցուցանիշ) ամփոփ գրքի համար տվյալների նախապատրաստում,
- Գնահատման առանցքային ցուցանիշների ամփոփում:

Վարչության կազմում գործում են 5 բաժիններ.

- Բակալավրիատի
- Մագիստրատուրայի
- Կազմակերպչական
- Ուսումնական գործընթացի վերահսկման
- Պրակտիկայի

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու տարում ևս կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է ԵՊՀ կայքէջում՝ ուսանողների և դասախոսների իրազեկության մակարդակի բարձրացման և համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով:
- Հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես և նախորդ տարիներին, վարչությունն առաջնորդվել է ռեկտորի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման հրաման-ժամանակացույցով:
- Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական կազմակերպման պայմանագրերի կնքման գործընթացը:
- Այս ուստարում ևս վերանայվել են առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները:

- ՀՀ հեռուստալրագրության ոլորտում ժամանակակից և որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով ԵՊՀ-ի և Հանրային հեռուստաընկերության խորհրդի համատեղ նախաձեռնության արդյունքում, ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ, բացվել է Մասս-մեդիայի կրթական կենտրոնը, որի հիմնական նպատակն է կադրեր պատրաստել հեռուստատեսային և ռադիոյի ոլորտների համար: Կենտրոնում «Ռեժիսուրա», «Օպերատորություն», «Լրագրություն» և «Կառավարում» մասնագիտություններով իրականացվում են «Հեռուստառեժիսուրա», «Պրոդյուսերական գործ» և «Հաղորդավարական գործ» մագիստրոսական ծրագրերը:
- Շարունակվել են ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցությունն օպտիմալացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:
- Վեբ հենքով էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision YSU» ծրագրի կիրառումը թույլ է տալիս կատարելագործել ուսումնական գործընթացի պլանավորումը, կառավարումը և կատարողականի վերահսկումը, մասնավորապես՝ ուսումնական պլաններից ավտոմատացված անցում իրականացնել ուսումնական աշխատանքային պլաններին, դրանց հիման վրա կազմել ամբիոնային բեռնվածությունները, դյուրացնել դասատախտակների կազմման և ստուգման գործընթացները: Ավտոմատ համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ վերահսկվում է ամբիոնների կատարողականը, որի արդյունքները հաշվի են առնվում մյուս ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:
- ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ շարունակվել է աշխատանքը ուսումնական դասընթացների ելքային կրթական արդյունքների սահմանման ուղղությամբ՝ չափելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով:
- Վարչությունն իր մասնակցությունն է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկի վերանայման գործընթացին:
- Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով վարչության բոլոր բաժիններն իրենց գործունեությունն իրականացրել են՝ հետևելով ՀՀ Կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին:
- Ուսումնական գործընթացները բարելավելու նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ստորաբաժանումները կազմակերպել են ստուգումներ այդ գործընթացներին առնչվող գործառույթների շրջանակում:
- Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:
- Ֆակուլտետների հետ տարվել են աշխատանքներ քննաշրջանների և փոխատեղման արդյունքներն ուսանողների համար առավել հասանելի դարձնելու և այդ գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու ուղղությամբ:
- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման, ինչպես նաև ուսումնական բեռնվածությունների կատարողականի վերահսկման նպատակով, բացի գործող ավտոմատ համակարգերի կատարելագործումից, վարչությունում ստեղծվել է պրոֆեսորադասախոսական կազմի տվյալների բազա, որը, բացի դասախոսի ուսումնական բեռնվածությունից, պարունակում է նաև յուրաքանչյուր դասախոսի վերջին չորս տարվա ուսանողական հարցումների և դասախոսների վերապատրաստվելու մասին ամփոփ տվյալները:

- Վարչության կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների գործավարլաբորանտների հետ՝ նրանց մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
- Հաշվետու տարում ևս հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են աշխատանքներ արդյունավետ օգտագործման և դասերի կայացման ուղղությամբ:
- Միջին մասնագիտական պետական հաստատությունների շրջանավարտների կրթությունը ԵՊՀ-ում շարունակելու համար հաշվետու տարում ևս շարունակվել է ԵՊՀ-ի և այդ հաստատությունների միջև համագործակցության գործընթացը:
- ԵՊՀ-ի և 9 ավագ դպրոցների միջև կնքած պայմանագրերի համաձայն՝ շարունակվել է դրանց հետ համալսարանի համագործակցությունը, և նախատեսված է համալսարանի 13 ֆակուլտետի առանձին դասախոսների դասավանդումը հիշյալ դպրոցներում, իսկ դասավանդման ժամերը դարձյալ ներառվել են դասախոսների անհատական բեռնվածության մեջ:
- Ընթացիկ ուստարում իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման խիստ պահանջներով՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել է ուսանողական նպաստների հատկացումը: Առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1339 ուսանողների, որոնցից 355-ը՝ բակալավրիատի 1-ին կուրսում, 354-ը՝ 2-րդում, 240-ը՝ 3-րդում, իսկ 387-ը՝ մագիստրատուրայի 1-ին կուրսում: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 101 ուսանող (30,1%), 2-րդ կուրսի՝ 84 (24,9%), 3-րդ կուրսի՝ 41 (21,9%) և 76 ուսանող (20,3%) մագիստրատուրայի 1-ին կուրսում:
- ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին շարունակվել է ուսանողական նպաստների հատկացումը: Առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1339 ուսանողների, որոնցից 355-ը՝ բակալավրիատի 1-ին կուրսում, 354-ը՝ 2-րդում, 240-ը՝ 3-րդում, իսկ 387-ը՝ մագիստրատուրայի 1-ին կուրսում: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 101 ուսանող (30,1%), 2-րդ կուրսի՝ 84 (24,9%), 3-րդ կուրսի՝ 41 (21,9%) և 76 ուսանող (20,3%) մագիստրատուրայի 1-ին կուրսում:
- Հասարակական ակտիվություն ցուցաբերած բարձր առաջադիմությամբ ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ, բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ, որոնց թիվը 58 է:
- Հաշվետու տարում ևս «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից 1-ին կիսամյակում օգտվել է 1984 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2874: Նրանցից 1-ին կիսամյակում 1423-ը եղել են բակալավրիատի, 372-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, և 189-ը՝ աշխատակիցների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 2118-ը եղել են բակալավրիատի, 581-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, և 175-ը՝ աշխատակիցների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է ավելի քան 264 մլն դրամ: Կատարված գործընթացն ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների մանրամասն ամփոփվել է առանձին գրքի տեսքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:
- ՏՏԿՀ կենտրոնում մշակված «SuperVision YSU» ծրագրի միջոցով Ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները՝ զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի

կազմակերպելու նպատակով: Ինչպես նախորդ, հաշվետու ուստարում ևս ՏՏԿՀ կենտրոնում և Ուսումնամեթոդական վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների և կենտրոնների դեկանատների աշխատակիցների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

- 2013-14 ուստարվանից «SuperVision YSU» ծրագրի միջոցով ֆակուլտետներում ներդրվել է ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակը, որը հեշտացնում է ֆակուլտետներում ուսանողների անձնական գործի վարումը, ուսանողների տվյալների բազայի լրամշակումը և այլ գործընթացներ:
- Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:
- Առկա և հեռակա ուսուցման համակարգերում շարունակվել են կրթության որակի բարելավմանը նպաստող կարևոր գործոններից հանդիսացող դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումների կազմակերպումն ու իրականացումը:
- Շարունակվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքները, որոնց շնորհիվ իրականացվել է ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման գործընթացը:
- 2013-2014 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 4904 դիպլոմ, որոնցից 2430-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1352-ը՝ մագիստրատուրայում, 750-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 343-ը՝ մագիստրատուրայում, 1-ը՝ նախորդ տարիների 5-րդ կուրսի շրջանավարտի: Վերականգնվել և տրվել են շրջանավարտների 28 դիպլոմի կրկնօրինակներ:
- Հաշվետու ուստարում ևս Որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ վերամշակվել, տպագրվել և բակալավրիատի ու մագիստրատուրայի շրջանավարտներին է հանձնվել միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) տարբերակով դիպլոմի հավելված:
- Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:
- Հաշվետու տարում ևս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն:
- Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու ուստարում մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանների արդյունքների տվյալներն ու ամփոփվել առանձին գրքի ձևով:
- Նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար ներկայումս համալսարանն ունի 84 պայմանագրեր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ Ազգային

ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ Գերագույն դատարանը, նախարարությունները, ՋԼՄ խմբագրությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները): Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել գործատուների պահանջները, որոնք հետագայում աշխատանքի տեղավորման հարցում կնպաստեն շրջանավարտների մրցունակ լինելուն: Այդ ամենի արդյունքում որոշ շրջանավարտներ աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պետությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտրոններում:

- Բացված նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմմանը:
- Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա են անցել 5243 ուսանող (բակալավր և մագիստրոս): Հատուկ ուշադրություն է դարձվում ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, որն անցկացվում է ԵՊՀ-ի Բյուրականի և Հանքավանի հանգրվաններում (Աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության ֆակուլտետների ուսանողների համար), իսկ նույն ֆակուլտետների, ինչպես նաև Պատմության և Աստվածաբանության ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվում են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներ: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողների համար պրակտիկա է կազմակերպվել նաև Ռուսաստանի Դաշնությունում: Ուսումնական պրակտիկա են անցել 1397 ուսանող, որոնցից 897-ը՝ դաշտային:

ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գալստյան Վաչագան Սարգսի*

Հաշվետու ուստարում դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, իրազեկության մակարդակը բարձրացնելու համար մեծ աշխատանք է տարվել ավագ դպրոցների 2013-2014 ուստարվա շրջանավարտների հետ: Կազմակերպվել են հանդիպում-զրույցներ, քննարկումներ աշակերտների, նրանց ծնողների, ուսուցիչների հետ: Նրանց ներկայացվել են ԵՊՀ մասնագիտությունները, շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգը: Այս գործընթացին ակտիվորեն մասնակցել են ֆակուլտետների դեկանները:

Շուրջ մեկ տասնյակ պետական քոլեջների հետ շարունակական կրթության վերաբերյալ կնքվել են պայմանագրեր: Երևանի պետական համալսարանում 14 մասնագիտությունների գծով կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից շուրջ 100 հայտ է ներկայացվել:

Հաշվետու ուսումնական տարում ևս վարչության աշխատակիցները ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպել են ակնարկային և բովանդակային դասախոսություններ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: ԵՊՀ վարկանիշի բարձրացման, կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու նպատակով և խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է նպատակային ճանաչողական այցեր. ԵՊՀ-ում հյուրընկալված աշակերտները նաև դասախոսություններ են լսել տարբեր ֆակուլտետներում: Բնագիտական հոսքերի աշակերտների համար անցկացվել են լաբորատոր պարապմունքներ քիմիա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաներից: Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել են անվճար դասընթացներ ինֆորմատիկա, բանավոր հաղորդակցման մշակույթ, ստեղծագործական աշխատանք առարկաներից, որոնց մասնակցել են շուրջ 200 դիմորդներ:

2013-2014 ուսումնական տարում ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը, մասնավորապես դիմորդներին հասանելի դարձնելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց-2014» ձեռնարկը, որը բավականաչափ տեղեկություն է պարունակում ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին: Նույն նպատակով պատրաստվել են նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ՝ 2000 տպաքանակով: Ուղեցույցները և բուկլետները անվճար բաժանվել են հանրապետության բոլոր հանրակրթական հաստատություններին: Համալսարանի ինտերնետային կայքում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը կատարելագործվել է ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ «Դիմորդի ուղեցույց»-ը կայքում տեղադրելու միջոցով:

Արդեն բարի ավանդույթ է դարձել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար տարբեր առարկաների գծով օլիմպիադայի կազմակերպումը: Հաշվետու տարում այն անցկացվել է Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Արարատում, Գավառում, Գորիսում և Արմավիրում: Նախորդ տարիների համեմատ՝ մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը, և աճել է մասնակիցների թիվը. ՀՀ 197 դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 2822 աշակերտ: Հաղթող են

ճանաչվել 393 մասնակիցներ, որոնցից 207-ը ԵՊՀ ղեկավարության կողմից հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են I, II, III կարգի դիպլոմներով, արժեքավոր գրքերով, 186-ը՝ գովասանագրերով և արժեքավոր գրքերով: Օլիմպիադայի մասնակիցների համար կազմակերպվել են հանդիպում ԵՊՀ ռեկտորի հետ, ինչպես նաև ֆակուլտետային «բաց դռներ»՝ ըստ նախասիրությունների:

2012-13թթ. Մինչհամալսարանական կրթության վարչությունը մեծ աշխատանք է տարել ՀՀ մարզերում (Շիրակ, Արարատ, Տավուշ, Արմավիր, Սյունիք, Գեղարքունիք), որտեղ ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու նպատակով պաշտոնապես բացվել էին ԵՊՀ ներկայացուցչություններ, որոնց թվին հաշվետու տարում ավելացել է նաև Արագածոտնի մարզի ներկայացուցչությունը: ԵՊՀ-ն, հիմք ունենալով նախորդ տարիների համագործակցությունը ավագ դպրոցների հետ, հաշվետու ուստարում ևս համագործակցության պայմանագրեր է կնքել Երևանի 10 ավագ դպրոցների հետ՝ այդ թիվը հասցնելով 19-ի, մարզերում՝ 10-ի, իսկ պայմանագրային քոլեջների ընդհանուր թիվը հասցվել է 16-ի:

Այդ ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 32 փորձառու դասախոսներ դասավանդել են հանրակրթական մի շարք դասընթացներ, որոնց վարձատրությունն իրականացվել է ԵՊՀ-ի միջոցների հաշվին: Նշված ծրագիրը բավականին մեծ արձագանք է ստացել ինչպես դպրոցների տնօրինության, այնպես էլ ծնողական խորհուրդների կողմից:

Մինչհամալսարանական կրթության վարչության կողմից կազմակերպվել են նաև ակնարկային դասախոսություններ մարզերի պայմանագրային ավագ դպրոցներում: 2013թ. հոկտեմբերին այդ այցերը եղել են Գորիսում, Բերդավանում, Վարդենիկում, Գյումրիում, Վանաձորում, Գուգարքում, իսկ 2014թ. ապրիլին՝ Գորիսում, Վանաձորում, Գուգարքում, Բերդավանում, Աբովյանում, Եղեգնաձորում, Վարդենիկում:

Դպրոցների տնօրեններն իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն են հայտնել այդ այցերի համար՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման գործում նշելով դրանց կարևորությունը:

Հաշվետու ուստարում Մինչհամալսարանական կրթության վարչությունը մասնակցել է նաև Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «EXPO-2014»-ին՝ ԵՊՀ-ն ներկայացնելով «Դիմորդի ուղեցույց»-ի, բուկլետների և խորհրդատվության միջոցով:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու ուստարում ևս վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2014թ. ընդունելության կազմակերպման գործընթացին:

Հաշվետու տարում վարչությունը ձգտել է կատարելագործել նախապատրաստական դասընթացների համակարգը՝ այդ նպատակով ձևավորելով դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի, և ապահովելով դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու, ավարտական քննությունների թեստեր պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առարկաների: Ունկնդիրների ուսումը կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների համար նախատեսված ծրագրերին: Դասավանդվող բոլոր առարկաներից 2014թ. փետրվար ամսին կազմակերպվել և անց են կացվել ստուգարքներ, ապրիլին՝ ստուգողական գրավոր աշխատանքներ, իսկ մայիսի վերջին տասնօրյակում՝ ավարտական քննություններ:

Ըստ ընտրած մասնագիտությունների՝ ունկնդիրների համար ուսուցումը կազմակերպվել է 12 հանրակրթական առարկաներից: Նախապատրաստական դասընթացներ բաժնի ունկնդիրների մեծ մասը, հաջողությամբ հանձնելով առկա ուսուցման ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ, իսկ մյուս մասը դիմելու է հեռակա բաժիններ:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Աղասյան Ժասմեն Արտաշեսի*

Կրթական ծրագրերը՝ որակավորման բարձրացում
մասնագիտական վերապատրաստում
ստաժավորում
կրթական ծառայություններ

2013-2014 ուսումնական տարում Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից չորս կրթական ծրագրերով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ա. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

1. Ունկնդիրների թիվն ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		ընդամենը	ԵՊՀ	այլ հաստա-տություններ
1.	Որակավորման բարձրացում	2023	2019	4
2.	Մասնագիտական վերապատրաստում	302	-	302
3.	Ստաժավորում	16	-	16
4.	Կրթական ծառայություններ	8	5	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2349**	**2024**	**325**

2. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում

2.1. Ըստ կրթական կառուցամասի մոդուլների և դասընթացների

Հ/հ	Մոդուլի և դասընթացի անվանումը	Ունկնդիրների թիվը
1.	**Անգլերենը ակադեմիական միջավայրում**	**207**
2.	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**	**536**
2.1.	Համակարգչային գրագիտություն	196
2.2.	Լսարանային ցուցադրությունների պատրաստում	180
2.3.	Կիրառական ծրագրային փաթեթներ (MATLAB, Mathematics)	39
2.4.	Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում	121
3.	**Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն**	**411**
3.1.	Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ	148
3.2.	Ուսումնական ծրագրերի մշակման հիմունքներ	48
3.3.	Կրթության հոգեբանություն	118

3.4.	Խոսքի մշակույթ (հռետորական արվեստ)	97
4.	**Մասնագիտական պատրաստություն**	**564**
4.1.	**Մասնագիտության արդի հիմնախնդիրները**	**316**
4.1.1.	Անգլերեն	53
4.1.2.	Մաթեմատիկա	29
4.1.3.	Կենսաբանություն	26
4.1.4.	Հոգեբանություն	25
4.1.5.	Տնտեսագիտություն	24
4.1.6.	Ֆիզիկա	19
4.1.7.	Փիլիսոփայություն	17
4.1.8.	Ժուռնալիստիկա	16
4.1.9.	Գերմաներեն	16
4.1.10.	Ինֆորմատիկա	15
4.1.11	Ֆրանսերեն	15
4.1.12	Գրականագիտություն	13
4.1.13.	Քաղաքագիտություն	13
4.1.14	Բուժպատրաստություն	12
4.1.15	Հայոց լեզու	11
4.1.16	Միջազգային հարաբերություններ	11
4.1.17	Քիմիա	1
4.2.	**Կամընտրական դասընթացներ**	**248**
4.2.1.	Անգլերեն	63
4.2.2.	Քիմիա	50
4.2.3.	Մաթեմատիկա	42
4.2.4.	Ֆրանսերեն	29
4.2.5.	Դիվանագիտական բանակցություն	17
4.2.6.	Ինֆորմատիկա	14
4.2.7.	Միջազգային հարաբերություններ	12
4.2.8.	Քաղպաշտպանություն	12
4.2.9.	Կրթության կառավարման հիմնախնդիրները	9
5.	**Որակավորման բարձրացման այլ ձևեր**	**305**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2023**

2.2. Ունկնդիրների թիվն ըստ ֆակուլտետների և դասընթացների

Հ/հ	Ֆակուլտետի և/ կամ ամբիոնի անվանումը	Ունկնդիրների թիվը ըստ դասընթացների												Ընդամենը
		Անգլերենը ակադեմիական միջավայրում	Հանձնակարգչային գրագիտություն	Լաբորատորային ցուցադրությունների պատրաստում	Կիրառական ծրագրային փաթեթներ	Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում	Դասավանդման, ուսումն. և գնահատ. ժամանակակից մեթոդներ	Ուսումնական ծրագրերի մշակման հիմունքներ	Կրթության հոգեբանություն	Խոսքի մշակույթ	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	Մասնագիտական այլ դասընթացներ	Որակավորման բարձրացման այլ ձևեր	
1.	Մաթեմատիկայի և մեխանիկայի	3	8	10	10	3	4	-	4	-	17	30	4	**93**
2.	Ինֆորմ. և կիրառ. մաթեմատիկայի	2	4	5	11	2	4	-	4	4	21	18	8	**83**
3.	Ֆիզիկայի	4	6	10	7	3	5	1	2	2	13	7	6	**66**
4.	Ռադիոֆիզիկայի	3	2	1	3	1	1	-	-	-	11	-	1	**23**
5.	Քիմիայի	4	2	1	1	8	3	2	6	5	1	50	4	**87**
6.	Կենսաբանության	5	2	2	-	1	4	2	1	1	26	-	11	**55**
7.	Աշխարհագր. և երկրաբանության	5	2	-	1	-	2	-	6	1	-	-	2	**19**
8.	Տնտեսագիտության	10	14	10	2	12	12	7	4	3	24	1	15	**114**
9.	Փիլիսոփայության և հոգեբանության	14	13	13	-	1	9	-	5	5	41	-	23	**124**
10.	Սոցիոլոգիայի	8	11	11	-	2	9	-	4	4	-	-	22	**71**
11.	Պատմության	9	8	7	-	5	7	1	7	2	-	-	9	**55**
12.	Միջազգային հարաբերությունների	19	15	15	-	1	6	-	3	2	24	28	37	**150**
13.	Արևելագիտության	3	12	10	-	2	3	2	2	3	-	-	13	**50**
14.	Հայ բանասիրության	14	9	9	-	8	23	4	9	5	24	7	15	**127**
15.	Ժուռնալիստիկայի	6	7	4	-	2	4	-	-	3	16	-	9	**51**
16.	Ռուս բանասիրության	9	6	8	-	12	5	4	8	9	-	-	27	**89**
17.	Ռոմանագերման. բանասիրության	75	58	51	-	48	38	19	50	36	84	94	77	**630**
18.	Իրավագիտության	6	9	6	-	1	4	1	-	-	-	-	5	**32**
19.	Աստվածաբանության	-	1	1	-	-	2	-	-	-	-	-	3	**7**
20.	ՏՏԿՀ կենտրոն	-	4	4	4	4	-	-	-	-	-	-	3	**19**
21.	Միջազգային կրթական կենտրոն	2	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	**3**
22.	Ֆիզդաստիարակության և սպորտի	-	-	-	-	-	-	-	-	9	-	-	-	**9**
23.	Քաղաքաշտպանության	-	1	1	-	5	3	5	2	3	12	12	11	**55**
24.	Իջևանի մասնաճյուղ	-	1	1	-	-	-	-	-	-	-	-	-	**2**
25.	Այլ բուհեր	-	-	-	-	-	-	-	-	-	2	1	-	**3**
26.	Ազատ ունկնդիր	6	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	**7**
	Ընդամենը	**207**	**196**	**180**	**39**	**121**	**148**	**48**	**118**	**97**	**316**	**248**	**305**	**2023**

2.3. Աշխատանքների թիվն ըստ հետազոտական-մեթոդական կառուցամասի բաղադրիչների

Հ/հ	Ֆակուլտետի և/կամ ամբիոնի անվանումը	Կառուցամասի բաղադրիչները							Ընդամենը
		հոդված	մեթոդ. աշխ.	զեկու-ցում	ուսումն. ձեռն.	դասա-գիրք	մենա-գրութ.	ատեն. պաշտ.	
1.	Մաթեմատիկայի և մեխանիկայի	32	-	34	4	2	-	-	**72**
2.	Ինֆորմ. և կիրառ. մաթեմատիկայի	5	-	13	1	-	-	-	**19**
3.	Ֆիզիկայի	112	1	73	3	-	-	2	**191**
4.	Ռադիոֆիզիկայի	37	-	13	1	-	-	1	**52**
5.	Քիմիայի	44	6	54	3	-	-	1	**108**
6.	Կենսաբանության	52	-	29	5	-	-	-	**86**
7.	Աշխարհագր. և երկրաբանության	9	-	5	2	-	-	-	**16**
8.	Տնտեսագիտության	35	1	10	3	-	4	1	**54**
9.	Փիլիսոփայության և հոգեբանության	53	5	63	4	-	5	3	**133**
10.	Սոցիոլոգիայի	31	-	17	9	-	4	1	**62**
11.	Պատմության	90	5	24	4	2	11	-	**136**
12.	Միջազգային հարաբերությունների	41	5	23	6	1	5	5	**86**
13.	Արևելագիտության	12	1	8	-	1	-	-	**22**
14.	Հայ բանասիրության	55	4	26	13	3	5	1	**107**
15.	Ժուռնալիստիկայի	8	4	9	2	-	1	-	**24**
16.	Ռուս բանասիրության	37	-	56	7	3	2	-	**105**
17.	Ռոմանագերմ. բանասիրության	169	4	59	14	16	5	11	**278**
18.	Իրավագիտության	29	3	10	21	1	10	1	**75**
19.	Աստվածաբանության	18	-	7	-	-	1	-	**26**
20.	ՏՏԿՀ կենտրոն	2	-	3	-	-	-	-	**5**
21.	Միջազգային կրթական կենտրոն	12	-	9	1	-	2	-	**24**
22.	Ֆիզդաստիարակության ամբիոն	-	-	3	1	-	-	-	**4**
23.	Քաղպաշտպանության ամբիոն	-	-	-	-	-	-	-	-
	Ընդամենը	**883**	**39**	**548**	**104**	**29**	**55**	**27**	**1685**

3. Մասնագիտական վերապատրաստում ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը
1.	ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստում	12
2.	ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի զինվորականների վերապատրաստում	52
3.	ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստում	44
4.	ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	182
5.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	12
	ԸՆԴԱՄԵՆԸ	**302**

4. Կրթական ծառայություններ

Հ/հ	Դասընթացի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		Ընդամենը	որից	
			ԵՊՀ	այլ հաստա-տություններ
1.	Անգլերեն (միջազգային հավաստագրում)	**6**	5	1
2.	Համակարգչային հմտություններ	**1**	-	1
3.	Հոգեբանություն	**1**	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8**	**5**	**3**

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ժամաքանակը		
		ընդամենը	բեռնված.	ժամավճար
	Ա. Դասախոսների որակավորման բարձրացում	**3497**	1416	2081
	Բ. Մասնագիտական վերապատրաստում	**1729**		1729
1.	ՀՀ քաղծառայողների վերապատրաստում	834	-	834
2.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	895	-	895
	Վարչական աշխատանք	**60**	-	60
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5286**	**1416**	**3870**

2013-2014 ուստարում Երևանի պետական համալսարանում լրացուցիչ կրթությունը զարգացել է ըստ հիմնական կրթական ծրագրերի.

1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1.1. Շարունակվել է կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի դասընթացներին հաշվետու տարում մասնակցել է 2023 ունկնդիր: Անգլերենի դասընթացի 207 ունկնդրից 113-ը ստացել է ITEP միջազգային

հավաստագրում (B1, B2, C1, C2): Հաշվետու տարում առաջին անգամ դասընթացին մասնակցել է նաև փոխանակման ծրագրերում ընդգրկված 6 ուսանող:

1.2. Ծրագրի կրթական կառուցամասում առաջատարը եղել է մասնագիտական պատրաստության բաղադրիչը. 26 մասնագիտությամբ կազմակերպված դասընթացներին մասնակցել է 564 դասախոս:

1.3. Կրեդիտային համակարգը ակնհայտորեն խթանել է ԵՊՀ դասախոսների կրթական մոտիվացիան՝ նպաստելով նաև ակադեմիական շարժունությանը. ունկնդիրներից 305-ը հիմնական ծրագրից դուրս մասնակցել է ԵՊՀ-ում, ՀՀ-ում և արտերկրում (98 ունկնդիր) կազմակերպված մասնագիտական կատարելագործման տարբեր դասընթացների՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով՝ որակավորման բարձրացման իրենց հիմնական ծրագրի կատարողականին փոխանցելով 602 կրեդիտ (որից 359-ը՝ արտերկրից):

1.4. Հաշվետու տարում ակտիվացել է դասախոսների մասնակցությունը ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասին. 398 ունկնդիր ներկայացրել է 1690 աշխատանք: Սակայն պետք է նշել, որ դրանք ներառում են հիմնականում 2 բաղադրիչ՝ գիտական հոդված (891) և զեկուցում գիտաժողովում (548): Քիչ են ներկայացված մյուս բաղադրիչները՝ դասագիրք, մենագրություն, ուսումնական ձեռնարկ և ուսումնամեթոդական աշխատանք (ընդամենը՝ 226):

1.5. Հանրապետության տարբեր բուհերի 19 դասախոս համալսարանում կատարելագործվել է տարբեր ծրագրերով՝ միաժամանակ ծանոթանալով ԵՊՀ ամբիոնների կրթական և հետազոտական աշխատանքներին:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2.1. Հասարակության հետ կապերի հետագա զարգացումն ապահովելու և հանրային ծրագրերում ԵՊՀ առավելագույն ներգրավումն իրագործելու նպատակով վարչությունը շարունակել է հարատև կրթության ծրագրերի իրականացումը 2 հիմնական ուղղությամբ՝ հանրային ծառայողների և հոգեբանների մասնագիտական վերապատրաստում:

2.2. ԵՊՀ-ում են վերապատրաստվել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և պետական այլ կառույցների աշխատակազմերի 302 հանրային ծառայող և զինծառայող՝ 7 մասնագիտական կրթական ծրագրերով:

2.3. «Հոգեբանություն» մասնագիտությամբ 1,5-ամյա վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել զուգահեռաբար 2 խմբերի համար: 2-րդ տարվա խմբի 12 ունկնդիրներն ամփոփիչ ատեստավորում են անցել՝ հաջողությամբ ավարտելով դասընթացը:

2.4. Վարչությունը մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն է ցուցաբերել ԼՂՀ-ում քաղաքացիական ծառայողների վերապատրաստմանը՝ միաժամանակ երեք ծրագրով 5 դասախոս գործուղելով:

Վարչության պետը 2013թ. հոկտեմբերին մասնակցել է 2 հանդիպման՝

1. Մոսկվայում՝ «Բաումանի անվան համալսարանի հեռավար ուսուցման կենտրոնների աշխատանքը ԱՊՀ երկրների համալսարաններում» միջազգային խորհրդակցությանը՝ «Հեռավար ուսուցումը Երևանի պետական համալսարանում» զեկուցումով:

2. Երևանում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով ՈԱԱԿ-ի կազմակերպած վերապատրաստման երրորդ փուլին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 229 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Առկա պայմանագրերի շրջանակներում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տեղի են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակումներ: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանողները մասնակցում են Քուվեյթում գործող արաբերեն լեզվի կենտրոններում կազմակերպվող և տարբեր տևողություն ունեցող դասընթացներին (3 ամիս, 10 ամիս): Ռոստոկի համալսարանի հետ գործող պայմանագրի շրջանակում Ֆիզիկայի և Քիմիայի ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները գործուղվում են մինչև 1 տարի ժամկետով՝ համապատասխանաբար համատեղ գիտահետազոտական աշխատանք կատարելու և ուսումնական վերապատրաստում անցնելու նպատակով: Ռուսաստանի Դաշնության Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում Ֆիզիկայի ֆակուլտետի լավագույն ուսանողներին գիտահետազոտական համատեղ աշխատանք կատարելու հնարավորություն է տրվում:

ԵՊՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցում են փոխանակման ծրագրերին՝ անցնելով լեզվի վերապատրաստման դասընթացներ: Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները բուլղարերենի վերապատրաստում են անցնում Բուլղարիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանում, ինչպես նաև հունարեն լեզվի դասընթացների են մասնակցում Հունաստանում՝ Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանում: Վերջին դասընթացներին մասնակցում են նաև Պատմության ֆակուլտետի լավագույն ուսանողները: Ի դեպ, ուսանողները մասնակցում են նաև հունական «Յասոն» կրթամշակութային ծրագրին: Իտալիայի Կա՛ Ֆոսկարի համալսարանում իտալերենի վերապատրաստման դասընթացներին մասնակցում են Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

Առավել ակտիվ շարունակվում է համագործակցությունը Արիզոնայի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Կազանի Դաշնային համալսարանի (Ռուսաստան), Բոլոնիայի համալսարանի (Իտալիա), Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտի (Ֆրանսիա), Մոնպելիե-I համալսարանի (Ֆրանսիա), Պրովանսի համալսարանի (Ֆրանսիա), Մաղտըմգուլիի անվան թուրքմենական պետական համալսարանի (Թուրքմենստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կրակովի Յագելլոնյան համալսարանի (Լեհաստան) հետ: 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում պայմանագրեր են ստորագրվել ներքոնշյալ բուհերի, հետազոտական կենտրոնների, հիմնադրամների և ընկերությունների հետ.

- Բուխարեստի համալսարան, Ռումինիա
- Սըկտըվկարի պետական համալսարան, ՌԴ
- Ֆ. Մ. Դոստոևսկու անվան Օմսկի պետական համալսարան, ՌԴ
- Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի Կիևյան իրավունքի ինստիտուտ, Ուկրաինա
- Istituto di Alti Studi in Geopolitica e Scienze Ausiliarie, Իտալիա
- Տյումենի պետական համալսարան, ՌԴ
- Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան, ՌԴ

- Դաղստանի պետական համալսարան, ՌԴ
- Համազգային հայ կրթական և մշակութային միության Լիբանանի Շրջանային վարչություն, Լիբանան
- Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգա
- Լե Մանի համալսարան, Ֆրանսիա
- Հայ կաթողիկե Մեսրոպյան վարժարան, Լիբանան
- Համազգային հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչություն, Լիբանան
- «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան, ՌԴ

Վերակնքվել են Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (Ֆրանսիա), Ի. Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի (Վրաստան), Ֆլորենցիայի համալսարանի (Իտալիա), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ) հետ ստորագրված պայմանագրերը:

Ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ 2013-2014 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպման գործում աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններին և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանություններին:

2013թ. հոկտեմբերի 29-ին Կրակովի Յագելլոնյան համալսարանի հետ համատեղ ԵՊՀ-ում կազմակերպվել է ««Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը. նպատակներ-պրակտիկա-մարտահրավերներ» թեմայով կլոր սեղան-քննարկում, որի կիզակետում քննարկվում էր Հայաստանի՝ Եվրոպական միությանը կամ Մաքսային միությանը միանալու հարցը:

2014թ. հունվարի 22-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է Տեմպուս ծրագրի ՊԻԿԱՍԱ նախագծի մեկնարկային հանդիպումը, որին մասնակցում էին արտասահմանյան տարբեր երկրների ներկայացուցիչներ:

2014թ. մարտի 24-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ նվիրված թուրքմեն մեծ բանաստեղծ Մահթումկուլի Ֆրագիի 290-ամյակին, և կայացել է Մահթումկուլի Ֆրագիի բանաստեղծությունների հայերեն թարգմանությամբ ժողովածուի շնորհանդեսը:

2014թ. մարտի 24-ից 28-ը ԵՊՀ-ում Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի հետ համատեղ կազմակերպվել է «Հայ-վրացական գիտամշակութային կապերն ու տարածաշրջանային խնդիրները» թեմայով միջազգային գիտաժողով:

2014թ. մայիսի 15-ից 16-ը ԵՊՀ-ում կազմակերպվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների Եվրոպական ասոցիացիայի (EURASHE) 24-րդ տարեկան վեհաժողովը և գիտաժողովը, որին ներկա են եղել հյուրեր Ֆրանսիայից, Լեհաստանից, Մեծ Բրիտանիայից:

2014թ. հունիսի 10-ից 12-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է Տեմպուսի La Manche ծրագրի չորրորդ հանդիպումը, որին ներկա են եղել հյուրեր Ֆրանսիայից, Լեհաստանից, Մեծ Բրիտանիայից, Պորտուգալիայից, Ուկրաինայից, Հունաստանից, Բելառուսից, Մոլդովայից:

2013-2014 ուսումնական տարում միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ է 2014թ. հունիսի 9-ից 13-ը ԵՊՀ-ի 95-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, որին ներկա էին հյուրեր տարբեր օտարերկրյա բուհերից և միջազգային ընկերություններից: Այդ շրջանակում 2014թ. հունիսի 11-ին կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Կրթությունը 21-րդ դարում. խնդիրներ և մարտահրավերներ» թեմայով, որին ներկա են եղել հյուրեր Բուլղարիայից, Ռուսաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից, Վրաստանից:

ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների և հաստատությունների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվետու տարում կազմակերպվել են փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրության ոլորտներ, իրականացվել են ճանաչողական այցեր՝ դրանով իսկ ամրապնդելով և էլ ավելի զարգացնելով արդեն առկա համագործակցությունները:

Այսպես՝

- 2013թ. սեպտեմբերի 18-ին Ճապոնիայի Սոկա համալսարանի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ ռեկտորի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Ճապոնիա, որտեղ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը Սոկա համալսարանի ռեկտորի կողմից արժանացել է բուհի բարձրագույն մեդալի, իսկ համալսարանի ուսանողական միավորման ներկայացուցիչը բարեկամության պատվոգիր է հանձնել ԵՊՀ ռեկտորին:
- 2013թ. հոկտեմբերի 8-ին Ուրալի դաշնային համալսարանի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ է այցելել Ուրալի դաշնային համալսարանի ուսանողական պատվիրակությունը՝ ԵՊՀ ուսանողական կառույցների հետ համագործակցելու, ուսանողական փոխանակման ծրագրերով այդ համագործակցությունն ամրապնդելու նպատակով:
- 2013թ. նոյեմբերի 10-ին ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, աշխատանքային այցով մեկնել է Թուրքմենստան՝ մասնակցելու «Կրթությունը, սպորտը և տուրիզմը հզորության և երջանկության դարաշրջանում» խորագրով միջազգային գիտաժողովին և ցուցահանդեսին: Աշխատանքային այցի ընթացքում պատվիրակության անդամները հանդիպել են թուրքմենական մի շարք բուհերի ղեկավարության հետ, քննարկել բուհերի հետագա համագործակցության ծրագրերը:
- 2014թ. փետրվարի 27-ին ճանաչողական այցով ԵՊՀ-ում հյուրընկալվել են մոլդովական երկու համալսարանների ներկայացուցիչներ՝ Քիշնևի պետական համալսարանից և Տիրասպոլի Շևչենկոյի անվան պետական համալսարանից: Այցի նպատակն էր ծանոթանալ գործընկեր բուհի գործունեությանն ու բուհում գործող օրինաչափություններին:
- 2014թ. մարտի 11-ին ԵՊՀ ռեկտորի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Ռուսաստան, որտեղ ստորագրվել է համաձայնագիր ԵՊՀ-ի և Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի միջև, որին առաջիկայում հետևելու են երկու համալսարանների առանձին ստորաբաժանումների միջև ստորագրվելիք պայմանագրերը:
- 2014թ. մարտի 27-ին ԵՊՀ է այցելել Քուվեյթի համալսարանի պատվիրակությունը՝ միջբուհական համագործակցության, ինչպես նաև կրթության ու գիտության ոլորտներում փոխգործակցության հեռանկարները քննարկելու համար: Արդյունքում ԵՊՀ-ի և Քուվեյթի համալսարանի միջև ստորագրվել է փոխանակման և համագործակցության պայմանագիր:
- 2014թ. մայիսի 13-ին ԵՊՀ ռեկտորի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Թուրքմենստան՝ մասնակցելու «Մահթումկուլի Ֆրագին և համամարդկային մշակութային արժեքները» խորագրով գիտաժողովին: Գիտաժողովի բացման արարողության ժամանակ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը Թուրքմենստանի նախագահի կողմից արժանացել է «Մահթումկուլի Ֆրագի» մեդալին:
- 2013-2014 ուստարում շարունակվել է համագործակցությունը Արիզոնայի նահանգային համալսարանի, Հարավային դաշնային համալսարանի հետ:
- 2013-2014 ուստարում շարունակվել է նաև համագործակցությունը Մոնպելիե 1, Մոնպելիե 3 համալսարանների հետ:
- ԵՊՀ-ի և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2013-2014 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարան են գործուղվել 7 ուսանողներ՝ Միջազգային հարաբերությունների, Աշխարհագրության և երկրաբանության, Ռուս բանասիրության ֆակուլտետներից: 2013-2014 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի

բարեկամության համալսարանի հետ համագործակցության շրջանակում ավելացել է նոր մասնագիտացում՝ «Տուրիզմի միջմշակութային հաղորդակցություն և տուրիզմ» մասնագիտությամբ:

- 2013-2014 ուստարում շարունակվել է համագործակցությունը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի հետ, որի շրջանակում նախատեսվում է ԵՊՀ ասպիրանտի ատենախոսության պաշտպանությունը վերոհիշյալ համալսարանում:
- Պրովանսի համալսարանի հետ համագործակցության շրջանակում շարունակվել են ԵՊՀ-ի և Պրովանսի համալսարանի տարբեր ֆակուլտետների միջև ուսանողական փոխանակումները:

Այս շրջանակներում կազմակերպվել են ԵՊՀ ռեկտորի և օտարերկրյա համալսարանների պատվիրակությունների հետ անհատական հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության և գիտահետազոտական ու կրթության զարգացմանը վերաբերող հարցեր:

Հաշվետու տարվա ընթացքում ԵՊՀ են ժամանել մի շարք պատվիրակություններ Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունից, Քուվեյթից, Թուրքմենստանից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպանների հետ: Համալսարան են ժամանել օտարերկրյա համալսարանների պրոֆեսորներ՝ ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում և կենտրոններում մասնագիտական դասընթացներ անցկացնելու նպատակով:

Այսպես՝

- 2013թ. սեպտեմբերի 30-ին «Հարավային Կովկասում Եվրամիության, մասնավորապես՝ Գերմանիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու տարածաշրջանային զարգացումները և այդ կոնտեքստում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, դրա հնարավոր զարգացումները» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել ՀՀ-ում ԳԴՀ նախկին դեսպան Հանս-Յոհեն Շմիդտը:
- 2013թ. հոկտեմբերի 9-ին Իրավագիտության ֆակուլտետ է այցելել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մարվրինը, ով ֆակուլտետի ուսանողներին ներկայացրել է ՌԴ Սահմանադրական դատարանի կառուցվածքը, աշխատանքային գործընթացներն ու կարգերը, կառույցի առջև ծառացած խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները:
- 2013թ. նոյեմբերի 5-ին ԵՊՀ է այցելել Լիտվայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին, ով հանդիպել է ԵՊՀ ռեկտորի հետ, հետաքրքրվել համալսարանի գործունեությամբ:
- 2013թ. նոյեմբերի 5-ին ԵՊՀ է այցելել Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիտովը: Այցի հիմնական նպատակն էր էլ ավելի խորացնել ԵՊՀ-ի և Աստանայի Լ. Ի. Գումիլյովի անվան համալսարանի միջև համագործակցությունը:
- 2013թ. նոյեմբերի 7-ին ԵՊՀ է այցելել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոն, ով համալսարանականների հետ հանդիպման ժամանակ հանդես է եկել Մաքսային միության ստեղծման ու դրան նպաստող քաղաքական ու տնտեսական իրադարձությունների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու հեռանկարների մասին դասախոսությամբ:

- 2013թ. դեկտեմբերի 11-ին ԵՊՀ է այցելել ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆֆերնը, ով մասնակցել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի գործունեության տասնամյակին նվիրված միջոցառմանը:
- 2014թ. մարտի 4-ին ԵՊՀ է այցելել Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսին, ով Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին ներկայացրել է Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանի անցած փուլերը և խոսել պետության որդեգրած առաջնահերթությունների մասին:
- 2014թ. մարտի 18-ին ԵՊՀ է այցելել հանրային միջազգային իրավունքի պրոֆեսոր, դր. Ֆաբիան Ռաիմոնդոն, ով ԵՊՀ ուսանողների համար հանդես է եկել «Մալվինյան հարցը» թեմայով զեկույցով:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում շարունակվել է օտարերկրյա մասնագետների դասավանդումը: 2013-2014 ուսումնական տարում ԵՊՀ-ում դասավանդել են ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Գերմանիայից, Լեհաստանից, Իրանից, Վրաստանից, Սիրիայից, Լիբանանից, Հնդկաստանից, Ավստրալիայից և Ռուսաստանից ժամանած դասախոսներ: Օտարերկրյա դասախոսներին ԵՊՀ գրադարանից անվճար օգտվելու հնարավորություն է տրվել, նրանք ապահովվել են աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններով, կազմակերպվել են նաև մշակութային ծրագրեր և ճանաչողական այցեր: ԵՊՀ ֆակուլտետներում շարունակվել է գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, լեհերեն և արաբերեն լեզուների դասավանդումը:

ԵՊՀ-ն այսօր լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և հանդիսանում է Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության, Ռեկտորների ռուսաստանյան միության և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ, Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգայի անդամ:

2013-2014 ուստարում ԵՊՀ ստորաբաժանումներն ու մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտական և կրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր:

Հաշվետու տարում առավել ուշագրավ են՝

- Ֆակուլտետներին ներկայացված Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) և Բաց հասարակության ինստիտուտի (OSI) կողմից 2013-2014 ուսումնական տարվա համար ուսանողներին, ասպիրանտներին և գիտնականներին առաջարկված մի շարք դրամաշնորհային ծրագրերը:
- Հունաստանի Հանրապետության կրթության նախարարության կողմից ներկայացված 2013-2014 ուսումնական տարում Հունաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակային ծրագրի մրցույթը, որի մասին տեղեկացվել են ԵՊՀ ֆակուլտետները:
- 2013-2014թ. ուստարում ԵՊՀ ուսանողներին ներկայացված ERASMUS MUNDUS միջազգային կրթական ծրագիրը, որի նպատակն է խթանել համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև, ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունությանը հատկապես ոչ Եվրոպական միության անդամ երկրներից դեպի Եվրոպական միության անդամ երկրներ:

- IREX (Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ)-ի կողմից ԵՊՀ ուսանողներին և շրջանավարտներին ներկայացված կրթական փոխանակման ծրագրերը:
- Գերմանիայի Բունդեսթագի կողմից հայտարարված «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագիրը:

ԵՊՀ ստորաբաժանումները և մասնագետները տեղեկացվել են տարբեր ոլորտներում՝ քաղաքագիտություն, իրավագիտություն, սոցիոլոգիա, մաթեմատիկա և այլն, կրթաթոշակների, համագործակցության ծրագրերի, միջազգային գիտաժողովների վերաբերյալ, ինչպես նաև ստացել են օժանդակություն հայտերի լրացման գործում:

- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը տեղեկացվել է Իսպանիայի Կադիսի համալսարանի «Միջազգային շարժունակության 100 կրթաթոշակներ» ծրագրի շրջանակում 2013-2014 ուստարվա համար հատկացված կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների, Տնտեսագիտության, Պատմության ֆակուլտետները տեղեկացվել են Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված «Հայաստան. քաղաքական և տնտեսական հեռանկարներ» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության հետազոտությունների դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ:
- Արևելագիտության, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետները տեղեկացվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «UNESCO-Sharjah Prize for Arab Culture» մրցույթի վերաբերյալ:
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը տեղեկացվել է Ֆրանսիայի Էքս-Մարսել համալսարանի հատկացրած կրթաթոշակների վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ԱՄՆ դեսպանատան հայտարարած Ֆուլբրայթ կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Հենրիխ Բյոլի անվան ֆոնդի կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ուսանողական խորհուրդը տեղեկացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Ուսանողական խորհուրդների դերը համալսարանական կյանքում» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Սոցիոլոգիայի ֆակուլտետը տեղեկացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Ընտանեկան բռնություն» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ուսանողների փոխանակման ծրագրի վերաբերյալ:
- Սոցիոլոգիայի ֆակուլտետը տեղեկացվել է Գերմանիայի Լյուդվիգշվագեն համալսարանում սովորելու հնարավորության վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի գիտահետազոտական աշխատանքների մրցույթի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Լեհաստանում անցկացվելիք «Հումանիտար և սոցիալական գիտությունների ակտուալ խնդիրները» թեմայով որակավորման բարձրացման դասընթացի վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել է Ֆրանսիայի Կառավարման ազգային դպրոցի հանրային կառավարման ոլորտին վերաբերող դասընթացների վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների, Իրավագիտության, Պատմության, Սոցիոլոգիայի ֆակուլտետները տեղեկացվել են Պրահայում կազմակերպվելիք ամառային դպրոցի վերաբերյալ:

- Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները տեղեկացվել են Բուլղարիայի Սոֆիայի Սբ. Կլիմենտ Օհրիդսկի համալսարանում կազմակերպվելիք բուլղարերեն լեզվի, գրականության և մշակույթի ամենամյա ամառային դասընթացների վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել է Կորեայի Կառավարության մագիստրոսական կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Արևելագիտության, Սոցիոլոգիայի, Միջազգային հարաբերությունների, Պատմության ֆակուլտետները տեղեկացվել են Քարնեգի հետազոտական կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Արևելագիտության ֆակուլտետը տեղեկացվել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության նախարարության կողմից արաբերեն լեզվի ուսուցման համար 2014-2015 ուստարում ՀՀ քաղաքացիների համար հատկացված կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կազմակերպած միջազգային օլիմպիադայի վերաբերյալ:
- Արևելագիտության ֆակուլտետը տեղեկացվել է Քուվեյթի համալսարանի արաբերեն լեզվի ուսուցման կենտրոնում 2014-2015 ուստարում սովորելու հնարավորության վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Հնդկաստանի Կառավարության Մշակութային հարաբերությունների հնդկական խորհրդի կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը տեղեկացվել է Օլդենբուրգի Կառլ Վոն Օսիեցկի համալսարանում կազմակերպվելիք շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային գիտաժողովի վերաբերյալ:
- Աստվածաբանության ֆակուլտետը տեղեկացվել է Սալոնիկի Արիստոտելի համալսարանում կազմակերպվելիք ամառային դասընթացների վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կրտսեր հետազոտողների դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Ֆրանսիայի Կառավարության հատկացրած կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ՝ Ֆրանսիայի ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ուսանելու ու գիտական հետազոտություններ կատարելու համար:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Վիշեգրադի միջազգային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ:
- Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել են Հարավային Կովկասում կոնֆլիկտի կանխարգելման թեմայով Հայաստանում և Վրաստանում կազմակերպվելիք միջազգային ամառային դպրոցի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Վարշավայի տնտեսագիտական դպրոցի կազմակերպած ամառային դպրոցի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են «Արփա» հիմնարկի հայտարարած Նորարարության մրցույթի վերաբերյալ:
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը տեղեկացվել է Իտալիայի դեսպանատան հատկացրած կրթաթոշակային տեղերի մրցույթի վերաբերյալ:

ԵՊՀ ֆակուլտետներից ստացված արձագանքների շնորհիվ ԵՊՀ մասնագետներին և ուսանողներին հնարավորություն է տրվել մասնակցելու վերոհիշյալ գիտակրթական սեմինարներին, գիտաժողովներին, կրթական և հետազոտական ծրագրերին: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Այսպես՝ հաշվետու տարում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Վրաստան, Գերմանիա, ԱՄՆ, Իտալիա:

2013-2014 ուստարում ԵՊՀ-ում իրականացված դրամաշնորհները

	Դրամաշնորհի անվանումը	Ղեկավար
1.	Erasmus Mundus IANUS (Inter-Academic Network Erasmus Mundus)	Ջիննի Վեյթսման
2.	Erasmus Mundus BACKIS (Between Black and Caspian Seas)	Հայկուհի Մկրտչյան
3.	Erasmus Mundus WEBB (Whole Europe Beyond Borders)	Նաիրա Մնացականյան
4.	Erasmus Mundus ELECTRA (Enhancing Learning in ENPI Countries through Clean technologies and Research related Activities)	Նաիրա Մնացականյան
5.	Erasmus Mundus EMBER (Erasmus Mundus Broadening Educational Experiences)	Նաիրա Մնացականյան
6.	Erasmus Mundus HUMERIA (Humanities, Education, Research, International relations, Arts)	Հայկուհի Մկրտչյան
7.	Tempus Cap4Com «Բուհ-ձեռնարկություն համագործակցության խթանումը ՀՀ-ում, Ուկրաինայում և Վրաստանում հմտությունների վրա հիմնված վերապատրաստումների նպատակով»	Ալեքսանդր Մարգարով
8.	Tempus LaMANCHE «Փոփոխությունների ուղղորդումն ու կառավարումը բարձրագույն կրթության ոլորտում»	Ալեքսանդր Մարգարով
9.	Tempus ATHENA «Կայուն և ինքնավար բարձրագույն կրթության համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածաշրջանում»	Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Գրիգորյան, Մենուա Սողոմոնյան
10.	Tempus PICASA (Promoting Internationalization of HEIs in Eastern Neighborhood Countries through Cultural and Structural Adaptations)	Ալեքսանդր Մարգարով
11.	Tempus PACT (Project Actors Capacity Training in Caucasus)	Վաչե Քալաշյան

Erasmus Mundus IANUS, BACKIS, WEBB, ELECTRA, EMBER, HUMERIA ծրագրերի հիմնական նպատակը ուսանողական, դասախոսական և վարչական անձնակազմի փոխանակումներն են ԵՄ անդամ և թիրախային երկրների միջև: Ծրագրերի դիմումների ընդունման առաջին շրջափուլի ավարտին ԵՊՀ-ից եվրոպական բուհեր են մեկնել ընդհանուր առմամբ 35 մասնակից, իսկ ԵՊՀ են ժամանել 8 արտասահմանցիներ, որոնց շարքում ընդգրկված են ինչպես բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներ, այնպես էլ դասախոսական ու վարչական անձնակազմի ներկայացուցիչներ:

2013-2014 ուստարում շարունակվել է Tempus Cap4Com դրամաշնորհային ծրագիրը, որը միտված է ամրապնդել ՀՀ-ի, Ուկրաինայի ու Վրաստանի համալսարանների կարողությունները՝ դրանք շուկայական տնտեսությանը համապատասխանեցնելու նպատակով:

2012 թ-ին մեկնարկած և երեք տարի տևողությամբ Tempus LaMANCHE ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում խթանել բարձրագույն կրթության (ԲԿ) արդիականացումը: LA MANCHE կոնսորցիումը 29 հաստատությունների համագործակցություն է, որում ընդգրկված են Արևելյան հարևանության տարածաշրջանի 23, ԵՄ՝ 5 բուհեր և մեկ բրիտանական բիզնես կազմակերպություն: Կոնսորցիումը ներկայացնում է 10 երկրներ՝ 5 գործընկեր երկրներ Արևելյան հարևանության տարածաշրջանից՝ Հայաստան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա, և 5 ԵՄ երկրներ՝ Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Պորտուգալիա և Միացյալ Թագավորություն:

Tempus SuToMa ծրագիրն իրականացվում է կովկասյան երեք երկրների մասնակցությամբ՝ Հայաստան, Վրաստան և Ադրբեջան, և նույնպես նախատեսված է 3 տարի ժամկետով: Ծրագրի հիմնական նպատակն է ձևավորել 12 նոր առարկաներ, որոնք հետագայում դասավանդվելու են վերոնշյալ երեք երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Tempus ATHENA ծրագիրը միտված է նպաստելու բարձրագույն կրթության համակարգերի արդիականացմանը ՀՀ-ում, Մոլդովայում և Ուկրաինայում: Ծրագրի համակարգողը Եվրոպական համալսարանների ասոցիացիան է: ՀՀ-ից ընդգրկված են ԵՊՀ-ն, Գավառի պետական համալսարանը, ՀՊՃՀ-ն, Պետական համալսարանների ռեկտորների խորհուրդը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել ինստիտուցիոնալ և ֆինանսական ինքնավարությունն ու հաշվետվողականությունը, այն է՝ բուհերի կարողությունները: ATHENA-ն դասվում է կառուցվածքային գործողությունների շարքին և համակարգային մոտեցում է ենթադրում՝ ներառելով ազգային պետական իշխանության մարմիններին և այլ շահակիցներին (տեղական աշխատաժողովներ և վերապատրաստումներ, սեմինարներ): Ծրագիրը ռազմավարական շրջանակներ և միջոցառումների պլաններ կմշակի ազգային մակարդակում տևական կառուցվածքային փոփոխություններ կատարելու համար:

Tempus PICASA ծրագրի առաջնային նպատակներից է բուհերի կառավարման կառուցվածքային ու մշակութային բաղադրիչներում միջազգայնացման գործընթացների զարգացման և ինտեգրման միջոցով նպաստել Արևելյան հարևանության տարածքի՝ Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի բարձրագույն կրթական համակարգերի ճանաչմանը:

Tempus PACT ծրագրի նպատակն է աջակցել և վերապատրաստել ծրագրի աշխատակիցներին, երիտասարդ գիտնականներին, հետբուհական համակարգում սովորող ուսանողներին և հայ, վրացի ու ադրբեջանցի երիտասարդ դասախոսներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու:

Արտերկրից ԵՊՀ-ում սովորող ուսանողները

2013-2014 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 477 օտարերկրացի ուսանողներ և ասպիրանտներ, այդ թվում՝ 34 ուսանող Միջազգային կրթական կենտրոնում (ՄԿԿ), բակալավրիատում՝ 253 (224-ը՝ վճարովի, 29-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 89 (65-ը՝ վճարովի, 24-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 38 (36-ը՝ վճարովի, 2-ը՝ անվճար հիմունքներով) և հեռակա՝ 40 ուսանող: Վճարովի հիմունքներով սովորող օտարերկրացիներից գանձված ուսման վարձը կազմել է 188.215.000 դրամ:

2013-2014 ուստարվա օտարերկրյա ուսանողների, ասպիրանտների, ստաժորների, հեռակա ուսանողների կազմը.

Արտերկրից ԵՊՀ-ում սովորած օտարերկրյա ուսանողների կազմը 2008-2014 տարիների ընթացքում

N	Կարգավիճակը	2008/09	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
1	2	3	4	5	6	7	8
1.	ՄԿԿ	67	28	41	29	56	34
2.	Բակալավրիատ	343	303	251	225	226	253
3.	Մագիստրատուրա	69	52	40	62	80	89
4.	Ասպիրանտուրա	404	320	244	104	63	38
5.	Ստաժորներ	-	6	6	12	14	23
6.	Հեռակա ուսուցում	20	36	51	59	49	40
	Ընդամենը	903	745	633	491	488	477

2013-2014 ուստարվա ընթացքում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի 32 երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը՝ ընդամենը 56.000 ԱՄՆ դոլարի չափով:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ կողմից փոխհատուցվել են համալսարանում սովորող 46 սիրիահայ ուսանողների և մագիստրանտների ուսման վարձերի 60%-ը:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի կողմից ֆինանսավորվել են նաև համալսարանական կյանքի այլ բնագավառներ, այդ թվում՝ գիտաուսումնական գրականության հրատարակություն, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական պարբերականի հրատարակության օժանդակություն և այլն:

ԵՊՀ հրատարակչության և «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության հետ բանակցություններ են տարվել գիտական և ուսումնական գրականության հրատարակման վերաբերյալ: Կազմակերպվել է լույս տեսնող և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամին (Լիսաբոն)՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: 2013-2014 ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 400 կտոր գրականություն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գրիգորյան Կարեն Հովիկի, բան. գիտ. թեկնածու*

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության գործունեության հիմնական ուղղություններն են.

- հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում,
- հայաստանյան և արտերկրի ԶԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) փոխգործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում,
- ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում,
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում,
- մեթոդական աշխատանքների իրականացում,
- միջոցառումների ֆոտո- և տեսանկարահանում, նյութերի արխիվացում:

Համապատասխան գործունեության առանցքում եղել են ԵՊՀ 95-ամյակին նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող աշխատանքները:

2013-2014 ուստարում վարչությունում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում

- Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում ԵՊՀ զարգացման ռազմավարությամբ սահմանված խնդիրների իրականացման ուղղությամբ, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ԵՊՀ ռեկտորատ:
- ԵՊՀ-ում տարվող աշխատանքներին համահունչ մշակվել են ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրմանն առնչվող փաստաթղթեր, ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, համակարգվել են ԵՊՀ 2012/13 ուստարվա հաշվետվության մշակման աշխատանքները:
- Վարչությունը ներգրավված է եղել գնումների՝ օրենքով նախատեսված պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների իրականացման գործում:
- Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ, քննարկվել են ստորաբաժանումներում տարվող աշխատանքների առանձնահատկությունները:
- ԵՊՀ-ում նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր: «ԵՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ում

ամրագրված դրույթները սահմանված կարգով օգտագործելու նպատակով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել ԵՊՀ ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ:

- Վարչությունն ապահովել է տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ ԵՊՀ փոխգործակցությունը, ապահովել է ԵՊՀ պատշաճ արձագանքը նրանց նախաձեռնություններին:

Հայաստանյան և արտերկրի ԶԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) համագործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում, հանրային կապեր

- Հետևողական աշխատանք է կատարվել «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթների կիրառման և իրազեկման հայտերը ԵՊՀ ստորաբաժանումների կողմից ճիշտ ժամկետներում ու պատշաճ կերպով լրացնելու ուղղությամբ: Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների հետ:
- 2013-2014 ուստարվա ընթացքում վարչությունը ստացել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 217 հայտ:
- Շուրջ 50 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ԶԼՄ-ներին:
- Իրականացվել է տպագիր ԶԼՄ-ներում և ինտերնետային կայքերում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ:
- Տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 589, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը՝ 936:
- Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատ, իրականացվել է նյութերի վերլուծություն:
- ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի հեռուստաէկրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը շուրջ 220 է:
- Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊՀ խորհրդանշանների մասսայականացման ուղղությամբ:
- Կապեր են հաստատվել նոր ձևավորված զանգվածային լրատվության միջոցների հետ, ամրապնդվել են հին կապերը:

Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում

- ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են 55 կայք ու ենթակայք:
- Կայքի «Նորություններ» բաժնում հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հրապարակվել է 1410 նյութ:
- Ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու սոցիալական ցանցերի միջոցով ստացված նամակները:
- ԵՊՀ կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով ստացված բազմաբնույթ (936) նամակներին ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

- Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում, նախորդ ուստարվա համեմատ, կայքի այցելուների թիվն աճել է՝ հասնելով օրական միջինը 4700-ի:
- Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացվել են մոտ 4000 գիտական հրապարակումների մասին տվյալներ, ներկայումս կայքում առկա են 17.230 հրապարակումներ:
- Վարչական փաստաթղթերի (http://doc.ysu.am) կայքը շարունակվել է պարբերաբար թարմացվել. տեղադրվել են Գիտխորհրդի արձանագրություններն ու որոշումները, ֆակուլտետային խորհուրդների արձանագրություններն ու որոշումները, կանոնակարգերն ու կանոնադրությունները, հաշվետվությունները, ռեկտորի հրամանները, ուղեցույցները և այլն: ԵՊՀ մասնագիտական աստիճանաշնորհման խորհուրդների (http://ysu.am/council) կայքը թարմացվել է 320 անգամ: Հայ մամուլի պատմության (http://www.ysu.am/oldpress), Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի (http://careercenter.ysu.am), Մշակույթի կենտրոնի (http://culture.ysu.am), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (http://ijevan.ysu.am/) կայքերը գործում են բնականոն, դրանցից մի քանիսը ստացել են նոր դիզայն:
- Փոփոխության են ենթարկվել հետևյալ կայքերը՝ «Պատկերասրահ», «Ռետրո պատկերասրահ», «Տեսադարան», «Հարց-պատասխան», «Օրացույց», «Համալսարանականներ»:
- Հաշվետու տարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ նոր կայքերը՝
  - ✓ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն
  - ✓ «Երևանի համալսարան» ամսաթերթ
  - ✓ Որակի ապահովման կենտրոն
  - ✓ Կիրառական հոգեբանության կենտրոն
  - ✓ Արդիականության մարտահրավերները (միջ. կոնֆ. կայք)
  - ✓ Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա
  - ✓ ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբ
  - ✓ «Մաթեմատիկա և կիրառություններ» ամառային դպրոցի կայք
  - ✓ «Ուսանող» էջը՝ իր 5 առանձին կայքերով
  - ✓ Էլ. հեռախոսագիրք

- Facebook, Google+, Twitter սոցիալական ցանցերում վարվել են Երևանի պետական համալսարանի էջերը, մասնավորապես Facebook-ի (http://www.facebook.com/ysu.am) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել. ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը հասել է 19.000-ի, ընդ որում՝ Facebook սոցցանցի տնօրինությունը պաշտոնապես ճանաչել է ԵՊՀ-ի կողմից վարվող էջը՝ որպես պաշտոնական, և այժմ «Վիքիպեդիա» օնլայն հանրագիտարանի կողմից ավտոմատ բացված էջը և էլի մի քանի էջեր, որոնք այլոց կողմից բացվել են որպես համալսարանի էջեր, նույնացվել ու միացվել են մեկում՝ ԵՊՀ ՀԿԼ վարչության կողմից վարվող էջում: Ընդլայնվել է համագործակցությունը Google ընկերության հետ, ԵՊՀ էջը վերջինիս կողմից նույնպես պաշտոնապես ճանաչվել է:
- Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր օրական երկու անգամ օպերատիվ կերպով տեղադրվել են կայքում, ինչպես նաև զետեղվել են 2014 թ-ին առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունված բոլոր ուսանողների տվյալները:

- 2014 թվականի օգոստոսին «Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակած բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակում ԵՊՀ-ն իր վարկանիշով 2591-րդ տեղում է՝ նախորդ տարվա 3152-ի փոխարեն: Ըստ այդմ՝ առաջխաղացումը կազմել է 561 նիշ: ԵՊՀ-ն միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը, իսկ տարածաշրջանում առաջին եռյակում է:

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ PR նյութերի հրատարակում

- Խմբագրվել, սրբագրվել և տպագրության է պատրաստվել ԵՊՀ 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունը:
- 2013-2014 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 9 համար՝ միջինը 34 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 50-55 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 500-550 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանումներ և այլն):
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:

Լուսանկարների և տեսանյութերի ստեղծում և արխիվացում

- Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 595 լուսանկարահանումներ (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 24.960 լուսանկար:
- Տեսանկարահանված միջոցառումների տևողությունը կազմել է ավելի քան 1000 րոպե: Տեսաշարն ամբողջությամբ թվանշայնացվել և արխիվացվել է DVD սկավառակների վրա:
- Շարունակվել են 70-ական թվականներից մինչև 2006 թ. գունավոր ֆոտոժապավենով լուսանկարահանված նյութերի թվանշայնացման և արխիվացման աշխատանքները:
- Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

Մեթոդական աշխատանքների իրականացում

- Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված հետազոտության իններորդ և տասներորդ փուլերը: Հետազոտությունը շարունակական բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:
- ԵՊՀ արտաքին իմիջին վերաբերող հետազոտության համար ներգրավվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, ովքեր աջակցել են հետազոտության դաշտային և տվյալների մշակման փուլերի աշխատանքներին՝ ստանալով վերջիններիս իրականացման վերաբերյալ համապատասխան մանրամասն գիտելիքներ և հմտություններ:
- ԵՊՀ կարիերայի կենտրոնի հետ համատեղ անցկացվել է կենտրոնի գործառույթների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ հետազոտություն:
- Անցկացվել են մի շարք որակական թեմատիկ հետազոտություններ ԵՊՀ ուսանողների շրջանում:

- Կազմակերպական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԿԳՆ-ի միջոցով ստացված տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններին և հետազոտություններին (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ծխելու դեմ պայքար և այլն):

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ

- Վարչության ներկայացուցիչները մասնակցել են «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության կողմից կազմակերպված «Ակադեմիական ազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում Բոլոնիայի գործընթացի համատեքստում» թեմայով զեկույցի քննարկումներին և ներկայացրել ԵՊՀ հաջողված փորձը:
- Վարչության ներկայացուցիչները մասնակցել են «Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում Բոլոնիայի գործընթացի համատեքստում» թեմայով զեկույցի քննարկմանը:
- Վարչության ներկայացուցիչները ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում մասնակցել են Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում իրականացված գրքերի նվիրատվությանը: Կազմակերպվել է նաև ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված մի շարք գրքերի նվիրատվություն Արցախի պետական համալսարանի, ՀՀ մարզային բուհերի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, ՀՀ ՊՆ ռազմական բուհերի և Երևանի քաղաքային գրադարաններին:
- Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ նախատեսվում է ԵՊՀ գրադարանի մուտքին հարակից տարածքում հիմնել երախտիքի ծառուղի, որի վերաբերյալ պատրաստվել են տեղեկատվական բուկլետներ:
- Հայ արվեստի երախտավորներ Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի հիշատակին նվիրված երեկույթի կազմակերպման գործին ակտիվորեն մասնակցել է նաև ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը:
- Վարչության ներկայացուցիչները մասնակցել են «Կրթություն և կարիերա EXPO-2014» 14-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին, որը միտված է Հայաստանում կրթական ոլորտի զարգացմանը և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տեղեկատվություն է տրամադրվել ԵՊՀ-ում առկա կապի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների, ինչպես նաև ԵՊՀ համակարգչային լսարանների և ինտերնետային ծառայությունների ապահովվածության վերաբերյալ:
- ԵՊՀ-ի տվյալների եռալեզու գրանցման աշխատանքներ են իրականացվել «Արեգ» և «Սփյուռ» տեղեկատուներում:
- ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:
- Վարչությունը մասնակցել է հայաստանյան և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացվել են «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների» ծրագրի դրույթները:
- «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում պարբերաբար տեղադրվել են ԵՊՀ-ին ու անվանի համալսարանականներին վերաբերող տեղեկատվություն ու լուսանկարներ:

ԵՊՀ հանրային կապերի ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ

Գործունեության ոլորտները	2006-2007	2007-2008	2008-2009	2009-2010	2010-2011	2011-2012	2012-2013	2013-2014
www.ysu.am կայքի նորություններ (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	528	570	840	957	1140	1041	1152	1221
www.ysu.am կայքի այցելուների քանակը (ամսական/ տարեկան)	853/10300	974/12000	1320/16000	2185/26220	2866/34392	3500/42000	4500/54000	5200/62400
ԵՊՀ կայքերի քանակը	1	1	1	20	25	32	49	55
www.ysu.am կայքի «Հարց /պատասխան» բաժնի (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)	403	497	511	670	635	1068	1192	936
«Երևանի համալսարան» թերթի թողարկումները և էջերի քանակը	3 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 8-ից 12 էջ)	9 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 12-ից 20 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 16-ից 24 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 16-ից 28 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 16-ից 40 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 22-ից 44 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 28-ից 40 էջ)	9 թողարկում (համարներից յուրաքան-չյուրը՝ 24-ից 44 էջ)
«Երևանի համալսարան» թերթի նյութերի քանակը	53	182	224	239	374	450	465	525
ԵՊՀ-ի մասին տպագիր մամուլում հրապարակված նյութերի քանակը	202	316	295	563	519	540	617	589
ԵՊՀ-ի մասին ինտերնետային կայքերում հրապարակված նյութերի քանակը	298	330	318	521	580	704	901	1872
ԵՊՀ-ում կայացած միջոցառումների վերաբերյալ իրազեկման հայտերի քանակը	-	-	-	-	243	250	230	271
Լուսանկարահանված միջոցառումներ/ լուսանկարների քանակը	165/16899	189/19218	242/17515	262/18720	290/19300	417/26600	582/24134	595/24960
Տեսանկարահանված միջոցառումների քանակը և տեսանկարահանման տևողությունը (բոպեներով)	92/5160	87/1160	91/4965	130/5790	127/5460	100/6000	92/6400	39/1000

«Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի՝ ԵՊՀ-ին վերաբերող թվային տվյալներ

2010 հուլիս	2011 հունվար	2011 հուլիս	2012 հունվար	2012 հուլիս	2013 հունվար	2013 հուլիս	2014 հունվար	2014 հուլիս
4392	4651	2856	1880	2051	2321	3152	2994	2591

Webometrics.info

«Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի բաղադրիչների դինամիկան

Դասակարգիչ	2011 հուլիս	2012 հունվար	2012 հուլիս	2013 հունվար	2013 հուլիս	2014 հունվար	2014 հուլիս
Ներկայություն Presence	3120	1449	850	1692	1272	3097	2256
Ազդեցություն Impact	6183	6977	6599	6196	6043	5959	6301
Թափանցիկություն Openness	9583	7083	1589	2226	4306	3858	1792
Գերազանցություն Excellence	1051	1209	1901	1905	2016	2028	2403

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Հովհաննիսյան Արշալույս Լյովայի*

Հաշվետու ուսումնական տարում վարչությունը շարունակել է աշխատանքներ իրականացնել իր առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 5 հիմնական մասի՝

- տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում,
- համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,
- ներհամալսարանական համակարգչային ցանցի սպասարկում և արդիականացում,
- համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում,
- աջակցություն համալսարանական ստորաբաժանումներին համակարգչային տեխնիկայի շահագործման և նրանց առջև դրված խնդիրների լուծման գործում:

2013-2014 ուսումնական տարում վարչության կողմից մասնավորապես իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Վարչական գործառույթների իրականացում

Վարչությունն առաջարկություններ է ներկայացրել ԵՊՀ տեղեկատվական համակարգերի ոլորտում տարվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ, մասնակցել է ԵՊՀ ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթների իրականացման աշխատանքներին: Վարչության աշխատակիցները ներգրավված են եղել գնումների՝ օրենքով նախատեսված և պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների իրականացման գործում:

Վարչության աշխատակիցները ներգրավված են «Տեմպուս» ծրագրով իրականացվող HEN-GEAR ծրագրում, որի շրջանակում պետք է ստեղծվեն շրջանավարտների տվյալների շտեմարաններ՝ նրանց զբաղվածության և այլ խնդիրների լուծման նպատակով:

Վարչությունը վարել է համակարգչային տեխնիկայի էլեկտրոնային գույքագրման և կանչերի գրանցման շտեմարանը՝ կատարելով ընթացիկ թարմացումներ և էլեկտրոնային գրանցում: Ընդլայնվել և վերամշակվել է էլեկտրոնային փոստի հասցե բացելու, համակարգչային տեխնիկայի վերանորոգման, տպիչ սարքերի քարթրիջների վերալիցքավորման, համակարգիչները ինտերնետ ցանցին միացման և մի շարք այլ վարչական գործառույթների ավտոմատացման համակարգը:

Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում

- Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման են հանձնվել շուրջ 162 նոր համակարգիչներ: Կատարվել են համակարգչային տեխնիկայի ընթացիկ վերանորոգման և

ցանցի սպասարկման աշխատանքներ (ըստ մակագրված զեկուցագրերի՝ վերանորոգվել են շուրջ 600 համակարգիչ և համակարգչային տեխնիկա (անխափան սնուցման սարքեր, մոնիտորներ, տպիչ սարքեր, սկաներներ), այդ թվում՝ նաև տեղադրվել են ծրագրային ապահովումներ):

- Վարչության աշխատակիցների կողմից տեխնիկական աջակցություն է ցուցաբերվել ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից կազմակերպված ավելի քան 35 միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկման և ապահովման աշխատանքներին:
- Պետական և ավարտական քննությունների ընդունման լսարաններում տեղադրված 55 IP տեսախցիկներին ավելացվել է ևս 15-ը, որոնց միջոցով բոլոր ֆակուլտետներում ապահովվել են պետական քննությունների (այդ թվում՝ ավարտական աշխատանքների պաշտպանության) ողջ ընթացքի տեսահեռարձակում ԵՊՀ ներքին ցանցում և սահմանված կարգով քննությունների տեսաձայնագրում:
- ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներում տեղադրվել են 12 ինտերակտիվ (էլեկտրոնային) գրատախտակներ:

Ներհամալսարանական ցանցի սպասարկում, կառավարում և զարգացում

- Ներհամալսարանական ցանցի ընդլայնման շրջանակում ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 190 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է համակարգչային նոր ցանց:
- ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում, գրադարանում, բոլոր մասնաշենքերում, հյուրերի տանը, ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում, Կիևյան ուսումնական մասնաշենքում և Ծաղկաձորի ԵՊՀ ուսումնաարտադրական բազայում ներառված WiFi սարքերի թիվը հասել է 76-ի:
- «Տեմպուս» HEN-GEAR ծրագրի շրջանակում ԵՊՀ կենտրոնական սերվերային սենյակը համալրվել է երկու նոր սերվերներով, սերվերային մոնիտորով, տվյալների պահպանման (back up) և անխափան սնուցման սարքերով: Ապահովվել են սերվերների սպասարկման աշխատանքները: Արդիականացվել է ԵՊՀ համակարգչային ցանցի կառուցվածքը:
- Շահագործվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում տեղադրված և համակարգչային ցանցին միացված հեռուստամոնիտորների աշխատանքը, որոնք տեղեկատվություն են տալիս ԵՊՀ-ում կայանալիք միջոցառումների մասին:
- Համալսարանի ինտերնետ կապի թողունակությունն ավելացել է, և միջինը կազմել է 50Mb/s (օգտվողների թիվը հասնում է շուրջ 2000-ի):
- Ամբողջովին վերազինվել է ԵՊՀ ներքին ավտոմատ հեռախոսակայանը, տարբեր մասնաշենքերում տեղադրվել են 6 ԱՀԿ-ներ, ապահովվել է ԱՀԿ-ների միջև օպտիկամանրաթելային կապուղիների աշխատանքը, ինչպես նաև ԱՀԿ-ների ծրագրային ընթացիկ սպասարկումը: Ստեղծվել է Ծարավ աղբյուր 55ա, Կիևյան 1 և Մաշտոցի 52 հասցեներում գտնվող մասնաշենքերի հեռախոսահամարների սպասարկման կայանք:

Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

- Իրականացվել են մշակումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներում առկա տվյալների շտեմարանների ինտեգրման և միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ (համակցվել են էլ. փոստի և Supervision համակարգերի տվյալների հենքերը):

- Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի www.ysu.am պորտալի շուրջ 47 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը:
- ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվել են շուրջ 150 նոր էլեկտրոնային փոստի հասցեներ ysu.am դոմեյնում: Ապահովվել են ԵՊՀ էլ. փոստի սերվերի աշխատանքները:
- Մեկնարկել է ԵՊՀ ուսանողների էլ. փոստի հասցեների տրամադրման գործընթացը, նախապատրաստվել են անհրաժեշտ սերվերները, կատարվել են համապատասխան ծրագրային կարգավորումներ՝ շուրջ 19000 օգտագործողներին էլ. փոստի հասցե տրամադրելու համար: Փորձնական նպատակով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին տրամադրվել են էլ. փոստի հասցեներ:

Աջակցություն համալսարանական ստորաբաժանումներին համակարգչային տեխնիկայի շահագործման և նրանց առջև դրված խնդիրների լուծման գործում

- Տրամադրվել է համակարգչային ծրագրերի և տեխնիկայի հետ աշխատելու խնդիրներին առնչվող խորհրդատվություն (շուրջ 1200 այցելություն և խորհրդատվություն), տարվել են համակարգչային անվտանգության հետ կապված բացատրական աշխատանքներ:
- Ապահովվել է ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի և համալսարանական այլ դահլիճներում ու սրահներում տեղի ունեցած միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկումը (շուրջ 30 միջոցառում):

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ *Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի*

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

- ✓ մասնակցել գործատուի կողմից Արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,
- ✓ համալսարանի աշխատողների աշխատանքային, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով նախաձեռնել ու գործատուի հետ կնքել կոլեկտիվ պայմանագիր, հսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ,
- ✓ համաձայն գործող օրենսդրության՝ մասնակցել կոլեկտիվի աշխատանքային վեճերի կարգավորմանը,
- ✓ համագործակցել հանրապետության և օտարերկրյա արհեստակցական կազմակերպությունների, միավորումների և այլ կազմակերպությունների հետ, ուսումնասիրել և կիրառել արհեստակցական կազմակերպությունների աշխատանքային փորձը, կազմակերպել արհմիութենական ակտիվի ուսուցում,
- ✓ ստանալ և տարածել Արհեստակցական կազմակերպության անդամների սոցիալ-տնտեսական և աշխատանքային հարցերին առնչվող տեղեկատվությունը,
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
- ✓ մշակել և իրականացնել աշխատողների առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, մշակութային և մարզական միջոցառումների ծրագրեր, ինչպես նաև օժանդակել սոցիալական համագործակցության զարգացմանը,
- ✓ ԵՊՀ վարչակազմի առջև հանդես գալ ներհամալսարանական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ԵՊՀ աշխատակիցների սոցիալական վիճակն ու աշխատանքային պայմանները,
- ✓ ԵՊՀ սոցիալապես անապահով աշխատակիցներին տրամադրել դրամական օգնություն, ինչպես նաև կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով համալսարանի աշխատողների և ուսանողների համար շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած և սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառումները: ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը գործել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ արհեստակցական կազմակերպությունների մասին օրենքի», «ԵՊՀ արհեստակցական կազմակերպության» կանոնադրության և «ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 388 աշխատակիցներին, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական

ակտիվություն ցուցաբերած ուսանողներին հատկացրել է տասնվեց միլիոն հարյուր ութսունվեց հազար դրամի օգնություն:

Հաշվետու տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն աշխատողների և ուսանողների 2200 երեխաների և թոռնիկների համար կազմակերպել և իրականացրել է ամանորյա միջոցառումներ՝ հատկացնելով ամանորյա ներկայացման տոմսեր և նվերներ, իսկ հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության օրվա առթիվ ձեռք է բերվել կրկեսային-երաժշտական ներկայացման 1000 տոմս:

Իրականացվել է նաև Կանանց միջազգային օրվան նվիրված համահամալսարանական միջոցառում 1587 կին աշխատակիցների համար՝ ծախսելով երեք միլիոն դրամ գումար:

Նպատակ ունենալով համալսարանականներին անմասն չթողնել քաղաքային մշակութային կյանքից՝ նշված ժամանակահատվածում ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել համերգային և թատերական տարբեր ներկայացումների 3431 տոմս:

Հաշվետու տարում համալսարանի աշխատակիցների, նրանց ընտանիքի անդամների և ուսանողների հանգիստը կազմակերպվել է միայն Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում, որտեղ հատկացված ուղեգրերով հանգստացել է մոտ 715 մարդ (3035 մարդ-օր): Բյուրականի ուսումնաարտադրական բազայում էլ Ուսանողական խորհրդի աջակցությամբ սեփական ուժերով իրենց հանգիստն են կազմակերպել միայն ուսանողները:

Իրականացվել է հանգստյան մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ՝ սոցիալապես առավել անապահով աշխատակիցների համար կիրառելով ուղեգրերի արժեքը 50 և 100 տոկոսով զեղչելու սկզբունքը:

Շարունակվել է 2010 թվականի հունիսի մեկից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախաձեռնած «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագիրը: Հաշվետու ժամանակահատվածում 55 աշխատակցի ընդհանուր առմամբ հատկացվել է երեք միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումար (21-ը՝ առաջին, 23-ը՝ երկրորդ, 9-ը՝ երրորդ, 1-ը՝ չորրորդ և 1-ը՝ երրորդ զույգ երեխայի համար):

2013-2014 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը մի շարք ֆակուլտետների կոլեկտիվների համար մեկօրյա և բազմօրյա արշավներ է կազմակերպել դեպի Հայաստանի և Արցախի տարբեր տեսարժան վայրեր:

2011 թվականից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործող անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունից հաշվետու տարում օգտվել են ԵՊՀ 113 աշխատակիցներ՝ ստանալով իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնության շնորհիվ հաշվետու տարում ԵՊՀ 183 աշխատակից և ուսանող իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունն իրականացրել են սահմանվածից 10% զեղչով: Սա և՛ ժամանակի, և՛ ֆինանսական խնայողություն է:

2013-2014 ուստարում իր ակտիվ գործունեությունն է շարունակել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արհբյուրոն: Պարբերաբար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ:

2013 թվականի աշնանը ԵՊՀ ֆակուլտետներում և ստորաբաժանումներում իրականացվել են արհբյուրոների անդամների և նախագահների ընտրություններ, որից հետո տեղի է ունեցել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության հերթական՝ 4-րդ համագումարը: Ամփոփվել են նախորդ հինգ տարիներին կատարված աշխատանքները, ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կանոնադրությունը համապատասխանեցվել է ՀՀ գործող օրենքներին: Համագումարից հետո տեղի ունեցած Արհկոմիտեի անդրանիկ նիստում կայացել են ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահի ընտրություններ, վերընտրվել է գործող նախագահը:

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, այնպես էլ Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը 2013 թվականի սեպտեմբերի 11-ից 13-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է Բելառուսի Հանրապետությունում տեղի ունեցած Եվրասիական համալսարանների արհեստակցական կազմակերպությունների ասոցիացիայի (ԵՀԱԿԱ) 26-րդ համագումարին՝ ներկայացնելով ՀՀ Մայր բուհը: Քննարկվել են կրթության ոլորտում պետական քաղաքականությանը, տարբեր արհեստակցական կազմակերպությունների համագործակցությանը վերաբերող հարցեր: Համագումարի հիմնական նպատակներից մեկն էլ եղել է փորձի փոխանակման համար հարթակ ստեղծելը: Համագումարի ընթացքում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանը միաձայն ընտրվել է ԵՀԱԿԱ-ի նախագահության անդամ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհկոմիտեի կազմը

1. Ավետիսյան Արմեն - նախագահ
2. Մամաջանյան Արտաշես - քարտուղար, հաշվապահության և գնումների բաժնի արհբյուրոյի նախագահ
3. Ալիխանյան Մարիամ - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
4. Գրիգորյան Հովիկ - Պատմության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
5. Էլոյան Ռուբիկ - Հայ բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
6. Թորոսյան Միտուշ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
7. Թորոսյան Սվետլանա - ռեկտորատի և կենտրոնական վարչական ապարատի արհբյուրոյի նախագահ
8. Խաչատրյան Մասիս - վարչատնտեսական մասի արհբյուրոյի նախագահ
9. Խաչատրյան Մեդորա - Կենսաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
10. Կարապետյան Արամ - Տնտեսագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
11. Կարապետյան Դավիթ - Ֆիզիկական դաստիարակության և սպորտի համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
12. Կարապետյան Էմիլյա - Ֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
13. Կարապետյան Լիլիթ - Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի արհբյուրոյի նախագահ
14. Հարությունյան Հասմիկ - Քաղաքացիական պաշտպանության համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
15. Հարությունյան Նարինե - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
16. Ղուշչյան Գևորգ - Աստվածաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
17. Մայսուրյան Հասմիկ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
18. Մարգարյան Ալեքսան - Իջևանի մասնաճյուղի արհբյուրոյի նախագահ
19. Միքայելյան Գագիկ - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
20. Մխիթարյան Ռազմիկ - Քիմիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
21. Պետրոսյան Աշոտ - Իրավագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
22. Պետրոսյան Սիմոն - Միջազգային կրթական կենտրոնի արհբյուրոյի նախագահ
23. Ջահուկյան Նարինե - գրադարանի արհբյուրոյի նախագահ

24. Ջիլավյան Հրաչուհի - Արևելագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
25. Սաղոյան Էմմա - Ռուս բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
26. Սարգսյան Անի - Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի արհբյուրոյի նախագահ
27. Սերոբյան Ռուբեն - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
28. Սողոմոնյան Ժաննա - Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական կենտրոնի արհբյուրոյի նախագահ
29. Վարդանյան Եվգինե - Սոցիոլոգիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
30. Վարդանյան Հայկանուշ - Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
31. Քալանթարյան Վիտալի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ

ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տնօրեն՝ *Միրզոյան Եզնիկ Սահակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժին՝ 6

Ընթերցասրահ՝ 7

Հաճախում՝ 322306

Աշխատողների թիվը՝ 73

Գրքային ունեցվածք՝ 2122011

Ընթերցողներ՝ 9237

Գրքատացք՝ 953648

Գրադարանի բաժինների կատարած աշխատանքների ընդհանուր ուղղությունները

2013-2014 ուստարում գրադարանում տարվել են գիտակրթական տեղեկատվությանն ուղղված աշխատանքներ, որոնք հիմնականում միտված են եղել արդի համալսարանական գրադարանի պահանջների հնարավորինս բավարարմանը: Դրանք են՝ գրականության նպատակային համալրումը, ընթերցողների գրանցման և սպասարկման ավտոմատացված գործընթացների ընդլայնումը, հնատիպ և եզակի գրքերի, մեծ պահանջարկ ունեցող ուսումնական գրականության թվայնացումը, էլեկտրոնային քարտարանի շարունակական հարստացումը:

Գրադարանը համագործակցել է հայրենական և արտերկրի այլ կազմակերպությունների հետ, որոնց թվում են՝ հանրապետության տարբեր մարզերի կրթական հաստատությունների և այլ բնույթի գրադարաններ ու գրատներ, հրատարակչություններ, Բոննի, Ռոստոկի, Կալիֆորնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանները, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ը, Միջազգային դրամական ֆոնդը, ՀՀ-ում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատները և այլն:

Պարբերաբար կազմակերպվել են գրքի ցուցահանդեսներ և շնորհանդեսներ:

Մասնագիտական հմտությունների ձեռքբերման, որակավորման բարձրացման և փորձի փոխանակման նպատակով գրադարանային աշխատողները մասնակցել են հանրապետական սեմինարների, այցելել Հայաստանի ազգային և ՀՀ-ում ամերիկյան դեսպանատան գրադարաններ:

Աշխատանքային ցուցանիշներ

ԱԲՈՆԵՄԵՆՏԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Խաչիկօղլյան Քրիստինե Ալիկի*

- ԵՊՀ գրադարանի բաժանորդների (նաև Իջևանի մասնաճյուղի) գրանցում՝ 5974,
- Գեղարվեստական առձեռն ֆոնդի համալրում՝ 1705 միավոր (հայերեն և ռուսերեն),
- Առցանց էլեկտրոնային պատվեր՝ 900,
- Գրականության սպասարկում՝

- առձեռն ֆոնդից՝ 6760 միավոր,
- պահանջաթերթիկով գրապահոցից՝ 830 միավոր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Գրիգորյան Անյուտա Տիգրանի*

- Մասնագիտացված ընթերցասրահների քանակը՝ 5,
- Գրականության առկա ֆոնդի կազմը և տպագիր նյութերի քանակը՝
  - գիրք՝ 42209, ամսագիր՝ 24854, ատենախոսություն՝ 1805, թերթերի կազմեր՝ 512, թերթեր (տարեկան, հատով)՝ 6228, որից՝ բաժանորդագրված՝ 3500, Սփյուռքից՝ 2728,
- Ընթացիկ ուսումնական տարում ֆոնդերի համալրում՝
  - գիրք՝ 523, ամսագիր՝ 850, ատենախոսություն՝ 213, թերթեր՝ 3800 (բաժանորդագրված՝ 3500, Սփյուռքից՝ 300),
- Սպասարկված գրականության քանակը՝ 115031,
- Հաճախումները՝ 201837,
- Պատճենահանված և վերանորոգված գրականություն՝ 344 գիրք և թերթերի կազմեր,
- Ընթերցողի պատվերով գրապահոցից բերված ժամանակավոր օգտագործման գրականություն՝ 346 միավոր,
- Քարտարանային և մատենագրանցման աշխատանքներ:

ԳՐԱՊԱՀՈՑԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մարիա Ալեքսանդրի*

- Ֆոնդերի համալրում՝ 16500 միավոր,
- Ընթերցողական պատվերների քանակը (ըստ պահանջաթերթերի)՝ 1900,
- Սպասարկված պահանջաթերթերի քանակը՝ 830,
- Վերադարձված գրականության ընդունում և վերադարակավորում՝ 1600 միավոր,
- Դասագրքային առձեռն ֆոնդից սպասարկում՝
  - գրքատացք՝ 49442 միավոր, վերադարձ՝ 47757 միավոր,
- Այլ գործընթացների համար տեղահանված և վերադասավորված գրականություն՝
  - մուտքագրման նպատակով՝ 3090 միավոր,
  - թվայնացման նպատակով՝ 300 միավոր,
  - ընթերցասրահների պահանջով՝ 230 գիրք և 20 ատենախոսություն,
- Գրքերի կազմում և վերանորոգում՝ 15500 միավոր:

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Մխիթարյան Անահիտ Մաքսիմի*

- Համալրված գրականության ընդհանուր քանակը՝ 1525 անուն 9126 միավոր, որից՝
  - գիտական՝ 7016, ուսումնական՝ 483 անուն 1702 միավոր, գեղարվեստական՝ 468 միավոր,

- ➢ գիրք՝ 6398, ամսագիր՝ 2470, թերթի տրցակ՝ 52, ատենախոսություն՝ 93, (հայերեն՝ 76, ռուսերեն՝ 5, անգլերեն՝ 12),
- ➢ տեղեկույթի կրիչ (պնակիտ)՝ 3,
- ➢ Ցեղասպանությանը նվիրված օտարալեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն) գրականություն՝ շուրջ 100 միավոր,

- Նվիրատվություն՝ 789 անուն 297 միավոր (3.454.299 դրամի), որից՝
  - ➢ հայերեն՝ 1453, ռուսերեն՝ 447 և այլ լեզուներով՝ 197,
  - ➢ գիտական՝ 1502, ուսումնական՝ 112 անուն 350 միավոր, գեղարվեստական՝ 245,
- Դրամական փոխանցումով՝ 14 անուն 426 միավոր (5.282.105 դրամի), որից՝
  - ➢ գիտական՝ 306, ուսումնական՝ 3 անուն 120 միավոր,
- Գրքափոխանակությամբ՝ 18 անուն 19 միավոր (47102 դրամի), որից՝
  - ➢ գիտական՝ 6, ուսումնական՝ 13,
  - ➢ հայերեն՝ 18, ռուսերեն՝ 1,
- ԵՊՀ պահեստից և հրատարակչությունից՝ 45 անուն 5539 միավոր (9387184 դրամի), որից՝
  - ➢ գիրք՝ 3765, ամսագիր՝ 1774,
  - ➢ գիտական՝ 4914, ուսումնական՝ 5 անուն 625 միավոր,
  - ➢ հայերեն՝ 5199, ռուսերեն՝ 170, օտարալեզու՝ 170,
- ՄԱԿ-ից՝ 55 անուն 83 միավոր (38500 դրամի), որից՝
  - ➢ ամսագիր՝ 43, պնակիտ՝ 3,
  - ➢ գիտական՝ 48, ուսումնական՝ 2335,
  - ➢ հայերեն՝ 37, ռուսերեն՝ 14, օտարալեզու՝ 32,
- Կորցրածի փոխարեն՝ 511 անուն 869 միավոր (895621 դրամի), որից՝
  - ➢ գիտական՝ 87, ուսումնական՝ 327 անուն 559 միավոր, գեղարվեստական՝ 232,
  - ➢ հայերեն՝ 595, ռուսերեն՝ 202, օտարալեզու՝ 72:

Համալրմանն օժանդակած կազմակերպություններն են՝ Բոննի, Ռոստոկի, Կալիֆորնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանները, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ը, Միջազգային դրամական ֆոնդը, ՀՀ-ում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատները:

- Գրադարանից նվիրատվությամբ և գրափոխանակմամբ ելք եղած գրականություն (գիրք, ամսագիր, քարտեզ)՝ 799 անուն 8.753 միավոր (15.097.754 դրամի):

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սարգսյան Միդա Ստեփանի*

- Էլեկտրոնային գրացուցակում մուտքագրված գրականություն՝ 3.090 միավոր,
- Առձեռն ֆոնդերից մուտքագրված գրքեր՝ 9.314,
- Պատվիրված էլեկտրոնային հոդվածներ՝ 4.759,
  - ➢ Ֆրեզնոյի համալսարանի շտեմարաններից՝ 1.800,
  - ➢ SUBITO գերմանական ծառայությունից՝ 183,
- Ուսանողների ընթերցողական տոմսերի պատրաստում՝ 5.974,
- Գրականության թվայնացում և կայքում տեղադրում՝ 1.265 գիրք,
- «KOHA» նոր գրադարանային ծրագրի ներդրման և գրադարանի կայքէջում տարվող աշխատանքներ:

ՀՆԱՏԻՊ, ՀԱՋՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հովսեփյան Մարգարիտա Սաշայի*

- Ռուսերեն հնատիպների գրանցում գրքամատյաններում՝ 3000 գիրք,
- Գրականության մուտքագրում՝ 815,
- Էլեկտրոնային քարտագրում՝ 1700,
- Ֆոնդերի համալրում՝ 17 հնատիպ և 78 նոր ստացված գրքեր,
- Սպասարկում՝ 470 ընթերցող,
- Մատենագիտական-հրատարակչական աշխատանք՝
  - «Երևանի պետական համալսարանում պաշտպանված ատենախոսությունների մատենագիտություն (2010-1012): Պրակ 10»-ի հրատարակում,
  - Նույնի 11-րդ պրակի կազմման աշխատանքներ,
  - Էլեկտրոնային քարտարանում հեղինակավոր գրառումների կազմում և խմբագրական աշխատանք:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Տնօրեն՝ *Գասպարյան Հեղինե Քերոբի*

Պատմության թանգարանի աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- ֆոնդի համալրում,
- արխիվի համալրում,
- գիտահետազոտական աշխատանք,
- մասսայական և այլ աշխատանքներ,
- ԵՊՀ 95-ամյակին նվիրված միջոցառումներ:

Ֆոնդի համալրում

Հաշվետու ժամանակաշրջանում ֆոնդում իրականացվել է համալրում 36 միավորով:

Ներդրվել է թանգարանային առարկաների գույքագրման համակարգչային հատուկ ծրագիր, ըստ որի՝ համակարգվել, լուսանկարվել, կոդավորվել, պիտակավորվել և գույքագրվել է 541 միավոր առարկա:

Կատարվել է ԵՊՀ ուսանողական կյանքը ներկայացնող տարբեր նյութերի հավաքագրական աշխատանք:

Արխիվի համալրում

Հաշվետու ժամանակահատվածում արխիվը համալրվել է ԵՊՀ պատմությանը վերաբերող 764 էջ նոր փաստաթղթերով:

Գիտահետազոտական աշխատանք

Տարբեր պարբերականներից ու լրագրերից (սկսած 2009 թ-ից) ընտրվել, համակարգվել և մուտքագրվել են համալսարանի պատմության կարևորագույն դեպքերին ու միջոցառումներին առնչվող բազմաթիվ նյութեր:

Հաշվետու ուստարում թանգարանում եղած, ինչպես նաև նոր ձեռք բերված փաստաթղթերի և նյութերի հիման վրա կատարվել է գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքում տպագրության է պատրաստվում «Երևանի պետական համալսարան» գիրքը:

Մասսայական աշխատանք

Հաշվետու ժամանակահատվածում թանգարանի մշտական ցուցադրությունը համալրվել է համալսարանի միջազգային համագործակցությանը վերաբերող նոր նյութերով ու լուսանկարներով:

Կատարվել է նյութերի ընտրություն և համակարգում առաջիկայում կազմակերպվելիք նոր ցուցադրության համար:

Ըստ թանգարանում կազմված ժամանակացույցի՝ կազմակերպվել է ԵՊՀ առաջին կուրսեցիների և հանրակրթական դպրոցների աշակերտների այցելություն թանգարան՝ ԵՊՀ պատմությանը

ծանոթացնելու նպատակով: Թանգարան են այցելել նաև հյուրեր արտերկրից: Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանն ունեցել է 2100 այցելու:

ԵՊՀ 95-ամյակին նվիրված միջոցառումներ

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակի միջոցառումների շրջանակում «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի հետ համատեղ թանգարանը կազմակերպել է «Դասը վարում են ազատամարտիկները» խորագրով միջոցառում՝ նվիրված Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձին:

Թանգարանն աջակցություն է ցուցաբերել ԵՊՀ պորտալի ռետրո պատկերասրահի ստեղծման և վարման գործում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Բուդաղյան Արմեն Ստեփանի, ուս. աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ*

2013-2014 ուստարում ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ համատեղ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Որակի ապահովում

- Լրամշակվել և հրատարակվել է ԵՊՀ գիտխորհրդի 2014 թ. հունվարի 30-ի թիվ 4 նիստում հաստատված «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը», որը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի արտոնման, ներքին փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, կիրառվող ընթացակարգերը և համապատասխան ժամանակացույցները: Կարգում տրվում են նաև նոր կրթական ծրագրի ստեղծման հայտի ձևաթերթը և ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի կազմը:
- Լրամշակվել և հրատարակվել է ԵՊՀ գիտխորհրդի 2014 թ. հունվարի 30-ի թիվ 4 նիստում հաստատված «ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը», որով սահմանվում են ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացներին ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, ժամանակացույցները և այլն: Կարգում տրվում է նաև ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթը:
- ՀՀ ԿԳՆ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի «Որակի ապահովման ներբուհական համակարգերի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրով 2012 թ-ից ԵՊՀ-ում իրականացվող «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» նախագծի շրջանակներում հաշվետու ուստարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.
  1. Կազմվել է ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկը, որը ներառում է ԵՊՀ որակի ապահովման քաղաքականությունը, կրթական ծրագրերի որակի ապահովումը և շարունակական բարելավումը, ուսանողների արժանահավատ գնահատման կազմակերպումը, դասախոսական կազմի որակի ապահովումը և շարունակական բարելավումը, ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների որակի ապահովումը, ուսանողների և այլ շահեկիցների հետ հետադարձ կապի ապահովումը, համալսարանի և նրա կրթական ծրագրերի ինքնագնահատումը, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման պետական չափանիշները և կարգերը:
  2. Մշակվել է ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը, որը ներառում է դասախոսի ինքնագնահատման ընթացակարգը և ձևաչափը (դասախոսի ինքնագնահատման տարեկան զեկույցի ձևաթերթի տեսքով), գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից դասախոսի գնահատման ընթացակարգը և ձևաչափը, ինչպես նաև դասախոսի գնահատման չափանիշները՝ ներկայացված երեք հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական

գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն) տարբեր տարակարգերի դասախոսների գնահատման անալիտիկ ռուբրիկի տեսքով:

3. Իրականացվել է ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովների ղեկավարների և դեկանների տեղակալների վերապատրաստում՝ արդյունահեն երկմակարդակ կրթական ծրագրերի և դասընթացների մշակման, արտոնման, փաստաթղթավորման, ներքին փորձաքննության, հաստատման, մոնիթորինգի և վերանայման գործընթացների, ուսանողների և դասախոսական կազմի գնահատման մեթոդաբանության ուսուցման նպատակով:
4. Կազմվել են ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների գործունեության գնահատման ցուցանիշների լրակազմ և միջոցառումների պլան՝ դրանց բարելավմանն ուղղված կոնկրետ գործողություններով և ժամանակացույցով: Այն ներկայացնում է ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների նպատակը և կազմը, դրանց պլանավորումը, այդ ծառայություններին ներկայացվող պահանջները, գնահատումը և գնահատման չափանիշները, ծառայությունների փաստաթղթային փաթեթը:
5. Ստեղծվել է որակի ապահովման և հավատարմագրման Web-հենքով վիրտուալ շտեմարան՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և արտաքին շահեկիցների հետ հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ: Համակարգի հիմնական նպատակը ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմների (ուսանողական հարցումներ և այլն) ապահովումը, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ ԵՊՀ և լայն հանրության իրազեկումն է: Համակարգի խնդիրներն են.
   - առանձին դասընթացների որակի և արդյունավետության առցանց գնահատում ուսանողական հարցումների օգնությամբ,
   - կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատում բաղկացուցիչ դասընթացների գնահատման արդյունքների հիման վրա,
   - դասընթացների և ծրագրերի գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և համապատասխան օգտվողներին առցանց իրազեկում,
   - դասընթացների և ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և/կամ գործողությունների պլանի առցանց կազմում և հրապարակում,
   - ԵՊՀ որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացման համար վիրտուալ ռեսուրս-շտեմարանի տրամադրում:

- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ և ՈԱԿ-ի աջակցությամբ ու մասնակցությամբ աշխատանքային խմբերում մշակվել, այնուհետև համակարգվել և վերջնական տեսքի է բերվել «ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գնահատման երաշխավորությունների իրականացման գործողությունների ծրագիրը», որը հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2014 թ. հունվարի 30-ի նիստում: Ծրագրում, ըստ հավատարմագրման չափանիշների, ներկայացված են համապատասխան փորձագիտական երաշխավորությունները, տվյալ խնդրի ընթացիկ վիճակը, բարելավող գործողությունները/միջոցառումները, վերջիններիս իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները, պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև վերջնարդյունքները և դրանց ձեռքբերման ցուցիչները:

2. Ուսումնական գործընթացի բարելավում

- Վերապատրաստված ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովների ղեկավարները և դեկանների տեղակալները ՈԱԿ-ի աջակցությամբ իրենց ֆակուլտետների կրթական ծրագրերի համար մշակել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրեր և դրանց մասնագրերը (սպեցիֆիկացիաները): Դրանցում ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը: Մշակված մասնագրերը ներկայացվել են ՈԱԿ-ի գնահատմանը՝ հեղինակներին համապատասխան կրեդիտներ հատկացնելու նպատակով:
- ՈԱԿ-ի աջակցությամբ ֆակուլտետներում տպագրվել է համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:
- ՈԱԿ-ի աջակցությամբ հաշվետու ուստարում նույնպես ֆակուլտետներում լրամշակվել են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները: Դրանք տեղադրվել են ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ:

3. Ռազմավարական պլանավորում

- Կատարվել են աշխատանքներ ԵՊՀ ռազմավարական պլանի իրականացման մոնիթորինգի ուղղությամբ: Մասնավորապես կատարվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի մոնիթորինգ, որի արդյունքում նախա-տեսված գործողությունների և միջոցառումների կատարողականը հիմնականում գնահատվել է բավարար:
- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ և ՈԱԿ-ի անմիջական մասնակցությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվել ԵՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝
  1. ԵՊՀ ռեկտորի հրամաններով կազմվել և հաստատվել են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը (Հր. N 92§37, 23.05.2014 թ.) և աշխատանքային խմբերը (Հր. N 94§1, 27.05.2014 թ.):
  2. Մշակվել և ռեկտորի կողմից ս.թ. հուլիսի 3-ին հաստատվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների ժամանակացույցը:
- Լրամշակվել և հաշվետու ուստարում նորից հրատարակվել են «ԵՊՀ գործունեության գնահատ-ման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)» 3-րդ հրատարակության հայերեն և անգլերեն տարբերակները՝ 2008-2013 թթ. համար, որոնք ներառում են ԵՊՀ գործունեության հիմնական յոթ ոլորտների ԳԱՑ-երը:

***

ՈԱԿ-ը մշակել և ԿԳՆ-ի ու ՀՀ մի շարք պետական բուհերի և արտասահմանյան պարտնյոր կազմակերպությունների հետ համատեղ 2014 թ. հունվարից իրականացնում է TEMPUS «ARMENQA» ազգային նշանակության եռամյա ծրագիրը, որն ուղղված է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը ՀՀ-ում: Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից, որի նպատակն է բարձրացնել ՀՀ բուհերի շրջանավարտների զբաղվածությունը և

նպաստել ՀՀ որակավորումների ճանաչմանը աշխատաշուկայում՝ ազգային և միջազգային մակարդակներում: Նախագծի հիմնական խնդիրներն են.

- ՀՀ ՈԱՇ-ի գործնականացում՝ օրենսդրական, կանոնադրական և մեթոդաբանական հենքի ու մի շարք գործիքների ստեղծման և կիրարկման միջոցով,
- ՈԱՇ-ի մասին հիմնական շահեկիցների՝ բուհերի, ուսանողների և շրջանավարտների, գործատուների ու աշխատաշուկայի ներկայացուցիչների, ոլորտը կարգավորող պետական մարմինների ու հանրային գործընկերների կարողությունների զարգացում,
- ՀՀ-ում ՈՈՇ-ների ստեղծման և փորձարկման նպատակով ազգային մոդելի և մեթոդաբանական հենքի մշակում,
- ՀՀ բուհերին ծրագրային կողմնորոշիչների, մեթոդաբանական հենքի և պրակտիկ գործիքների տրամադրում՝ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված բազմամակարդակ կրթական ծրագրերի մշակման համար, որոնք համահունչ են ՀՀ ՈԱՇ-ի, ՈՈՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում (Համաշխարհային բանկի դրամաշնորհային նախագիծ):	Գրիգորյան Ա. Կ.
2. Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում (ՏԵՄՊՈՒՍ-ի ARMENQA նախագիծ):	Բուդաղյան Ա. Ս.

Թեմա 1. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմվել է ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկը:
2. Մշակվել է ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը:
3. Իրականացվել է ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովների ղեկավարների և դեկանների տեղակալների վերապատրաստում:
4. Կազմվել են ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների գործունեության գնահատման ցուցանիշների լրակազմը և միջոցառումների պլանը:
5. Ստեղծվել է որակի ապահովման և հավատարմագրման Web-հենքով վիրտուալ շտեմարան:

Թեմա 2. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի նոր տարբերակը և ներկայացվել ՀՀ ԿԳՆ:
2. Մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի իրականացման ռազմավարությունը:
3. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի հիմնական շահեկիցների համար կազմակերպվել են քննարկումներ և սեմինարներ:

Կենտրոնին կից գործում է 1 բազային լաբորատորիա

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Գրիգորյան Ալեքսանդր Կոնստանտինի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Բուդաղյան Արմեն Ստեփանի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Հարությունյան Նազիկ Կարապետի, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող
3. Աբրահամյան Անի Դավիթի, ավագ լաբորանտ
4. Շաքյան Ստելլա Հարությունի, ավագ լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. ՀՀ բարձրագույն կրթության արդիականացման հիմնախնդիրները եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրման համատեքստում (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Ա. Կ.

Թեմա 1. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Որոշվել են ԵՊՀ գործունեության հիմնական ոլորտները, մշակվել է իրավիճակի և արդյունավետության գնահատման ցուցանիշների լրակազմը, որոշվել են ցուցանիշների արժեքները վերջին 5 տարիների համար, կատարվել են դրանց վերլուծություն և հիմնական միտումների բացահայտում, արվել են համապատասխան եզրահանգումներ: Գործողության արդյունքում հրատարակվել են ԵՊՀ գործունեության գնահատման ցուցանիշների լրակազմը և համապատասխան վերլուծական զեկույցը:
2. Մշակվել են համապատասխան հարցաշարեր, պատրաստվել ու տպագրվել են դրանց հարցաթերթերը, կազմակերպվել և անց են կացվել շրջանավարտների բավարարվածության և զբաղվածության հարցումներ: Արդյունքները մշակվել և վերլուծվել են, կատարվել են համապատասխան եզրահանգումներ, պատրաստվել են ԵՊՀ շրջանավարտների բավարարվածության և զբաղվածության զեկույցներ, որոնք քննարկվել են ԵՊՀ գիտական խորհրդի 2013թ. նոյեմբերի 7-ի թիվ 2 նիստում:
3. Մշակվել են համապատասխան հարցաշարեր, պատրաստվել ու տպագրվել են դրանց հարցաթերթերը, կազմակերպվել և անց են կացվել գործատուների բավարարվածության հարցումներ: Արդյունքները մշակվել և վերլուծվել են, կատարվել են համապատասխան եզրահանգումներ, պատրաստվել է ԵՊՀ շրջանավարտներից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության զեկույց:

4. Ուսումնասիրվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, նրա մակարդակների նկարագրիչները համադրվել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի, Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի և մի շարք եվրոպական երկրների որակավորումների ազգային շրջանակների նկարագրիչների հետ, ինչի արդյունքում գործող նկարագրիչները ամբողջությամբ փոխվել են նորերով, առաջադրվել է նոր շրջանակի նախագիծ: Գործողության արդյունքում կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարությանն է ներկայացվել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի նոր նախագիծը, որը հավանության է արժանացել եվրոպական փորձագետների և բուհական հանրության կողմից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	7	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Գրիգորյան Ա., Սիմոնյան Ա., Վարդանյան Յու., Մարգարով Ա., Եղյան Մ.,* ԵՊՀ համագործակցությունը ձեռնարկությունների հետ, «Փորձը, խնդիրներն ու հեռանկարները, Համալսարան/արդյունաբերություն համագործակցություն՝ նորարարությունների խթանում» գիտակրթական համաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013, էջ 24-29, 62-65:
2. *Գրիգորյան Ա., Հարությունյան Ն.,* Կրթության զարգացման և որակավորման խնդիրներ, «Մանկավարժական միտք», N 1-2, 2013, էջ 5-11:
3. *Գրիգորյան Ա., Սիմոնյան Ա., Գևորգյան Գ., Մարկոսյան Ռ., Բուդաղյան Ա., Սանթուրջյան Մ., Սարգսյան Ա.,* Երևանի պետական համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (2008-2013), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 100 էջ:
4. *Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ.,* Ուսանողների չափանիշահենք գնահատման հիմնախնդիրները, «Մանկավարժություն և հասարակական գիտությունների բանբեր», N 2 /29/, «Լինգվա» հրատ., Երևան, 2013, էջ 12-19:
5. *Григорян А. К., Симонян А. Г., Будагян А. С., Саакян А. К., Мкртчян А. Е., Мартиросян А. Р.,* Проблемы модернизации университетского образования в условиях мирового финансового кризиса, Вестник Волгоградского государственного университета, Мировой опыт университетского образования, приложение к серии 6, Университетское образование, N 2, 2013, с. 2-44.
6. *Григорян А. К., Жамгарян Г. Г., Шукурян С. К.,* Инструментальные средства виртуального обучения, управления и контроля качества, разработанные в Ереванском государственном университете, Материалы международной научной конференции “Образование, спорт и туризм в эпоху могущества и счастья”, Ашхабад, 2013, с. 567-571.
7. *Grigoryan A., Budaghyan A.,* Development of the Internal Quality Assurance System at Yerevan State University (YSU). Proceedings of International Conference “Education in the 21st Century: Problems and Challenges”. Yerevan, 10-13 June, 2014, Yerevan, 2014, pages 12-14.

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Հակոբյան Լիլիթ Տարոնի*

Հաշվետու ժամանակահատվածում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնն իրականացրել է հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

- համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում,
- աջակցություն շրջանավարտների «HEN GEAR» պորտալի ստեղծման աշխատանքներին,
- պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացների կազմակերպում,
- ուսանողների կարիերայի զարգացման նպատակով ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների իրականացում,
- ինտերնշիփների և լրացուցիչ ուսանողական պրակտիկայի կազմակերպում,
- աշխատանքային հնարավորությունների ընձեռում,
- գիտագործնական հանդիպում, համագործակցության ընդլայնում:

Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում

Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության ընդլայնման շրջանակում 2013թ. ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմամբ ստեղծվեց խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահը ԵՊՀ ռեկտորն է, աշխատակազմում ընդգրկված են բոլոր պրոռեկտորները, որոշ ֆակուլտետների դեկաններ, վարչական ենթակառուցվածքների մի շարք ղեկավարներ, ուսանողական կառույցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացվում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից:

Հանձնաժողովի՝ մայիսի 20-ին կայացած առաջին նիստի ընթացքում հաստատվեց 2013-2014թթ. գործողությունների պլանը, ներկայացվեց հանձնաժողովի աշխատակարգի նախագիծը, քննարկվեցին ձեռնարկությունների հետ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնի կողմից մշակվել և հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել աշխատանքային հետևյալ փաստաթղթերը.

- ԵՊՀ-ի և ձեռնարկությունների հետ համագործակցության ռազմավարության նախագիծ,
- Ձեռնարկությունների հետ ԵՊՀ ֆակուլտետի համագործակցության խորհուրդների կանոնակարգի նախագիծ:

Վերոնշյալ փաստաթղթերը հաստատվել են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից: Մշակման փուլում է նաև ԵՊՀ ուսանողների լրացուցիչ պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի նախագիծը:

Աջակցություն շրջանավարտների «HEN GEAR» պորտալի ստեղծման աշխատանքներին

Եվրոպական միության ֆինանսավորմամբ «HEN GEAR» ծրագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել շրջանավարտների գրանցման պորտալ, որն արդյունավետ գործիք է շրջանավարտ-գործատու անմիջական կապի հաստատման և մի շարք վիճակագրական տվյալների ձեռքբերման համար:

Ըստ ծրագրի՝ շրջանավարտն այցելում է համալսարանի ինտերնետային համապատասխան էջ ու լրացնելով համապատասխան տվյալներ՝ գրանցվում այդ համակարգում և պատասխանում հարցաթերթի հարցերին, որոնք վերաբերում են կրթության որակին, ուսմանը, շրջանավարտների հմտություններին, ցանկալի աշխատանքային ոլորտին և այլն: Այս համակարգը նաև գործատուին ինտերնետային համապատասխան CV-ի միջոցով իր աշխատողին ընտրելու հնարավորություն է ընձեռում:

Շրջանավարտների գրանցման և վիճակագրական տվյալների հետազոտական մասը համակարգում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: Համակարգը դեռևս փորձարկման փուլում է, և 2014-2015 ուստարվա ընթացքում նախատեսվում է իրականացնել բոլոր ֆակուլտետների՝ 2014թ. բակալավրիատի շրջանավարտ հանդիսացող և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների փորձնական գրանցումը:

Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներ

Կազմակերպություն	*Դասընթացի անվանում*	*Մասնակիցների թիվ*
▪ Շրջանավարտների և կարիերայի կենտրոն	«CV գրելու և գործատուին ներկայանալու հմտություններ», «Հարցազրույցին պատրաստվելու հոգեբանական քայլեր (ժեստերի լեզու)», «Լիդերություն, կարիերայի առաջընթաց և գենդերային հիմնախնդիրներ», «Պրեզենտացիոն հմտություններ», «Գործարար կապերի հաստատում», «Սեռային մտածողության տարբերություններ»	172
▪ «ԱյՍիթի» ընկերություն	«Մրցույթ կայքերի առաջխաղացման մասնագետների համար»	2
▪ «ՍԻԻԴ» ձեռներեցության զարգացման և ղեկավարների վերապատրաստման կենտրոն	«Նորարարության և ձեռներեցության զարգացման ծրագիր»	30
▪ «Այվազյան ընդ Փարթներս» ընկերություն	«Գործնական մարքեթինգ», «Վաճառքի պրակտիկ հմտությունները Հայաստանում»	105
▪ «Ակադեմիքս Թիմ» բիզնես խորհրդատվական և թրեյնինգ ընկերություն	«Սոցիալական մարքեթինգ»	20

▪ «Մակադամիան ԱՌ» ընկերություն	«C++-ը մոբայլ աշխարհում. Blackberry Cascades MacTalk»	11
▪ «Գոյ» հոգեբանական կենտրոն	«Կառավարման հմտությունների զարգացում»	40
Ընդամենը	*380 մասնակից*	

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ

Կազմակերպություն	*Մասնակիցների թիվ*
▪ «Ինգո Արմենիա» ՍՊԸ	115
▪ «Պրոկրեդիտ բանկ»	30
Ընդամենը	*145 մասնակից*

Ինտերնշիփների և ուսանողական պրակտիկայի կազմակերպում

Կազմակերպություն	*Մասնակիցների թիվ*
▪ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ	*5*
▪ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	*32*
▪ «Լույս» հիմնադրամ	*7*
▪ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ	16
▪ «Վիվա Սել-ՄՏՍ» ընկերություն	32
▪ «Պրոկրեդիտ» բանկ	17
▪ ՀՀ Կառավարություն	5
▪ «Էյ Դի Էր Փարթներս» մեդիացիոն ընկերություն	1
▪ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ	7
Ընդամենը	*122 մասնակից*

Աշխատանքային հնարավորությունների ընձեռում

Կազմակերպություն	Դիմել է	Աշխատանքի է ընդունվել
• «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ	19	2
• ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ	14	1
• ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն ՊՈԱԿ	11	1
• «Ավարայր» ՍՊԸ	33	2
• «ԱմերիաԲանկ» ՓԲԸ	21	3

• «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	12	4
• «Վիվա Սել-ՄՏՍ» ընկերություն	7	1
• «Արփիմեդ» դեղագործական ընկերություն	12	4
• «Սաննի Թոյֆլ» ուսումնական կենտրոն	6	2
• «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ	25	5
Աշխատանքի է ընդունվել	*25 հոգի*	

Գիտագործնական հանդիպում, համագործակցության ընդլայնում

Հաշվետու տարում կենտրոնի կողմից ընդլայնվել են համագործակցության շրջանակները, ինչի արդյունքում կնքվել են փոխգործակցության մի շարք հուշագրեր: 2014թ. մայիսի 26-ին կայացած «Աշխատաշուկայի և բարձրագույն կրթության արդի փոխգործակցության խնդիրները» խորագրով հանրապետական գիտագործնական հանդիպումը եզրափակվել է հայաստանյան 9 բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Երևանի պետական տնտեսագիտական, Հայաստանի պետական ճարտարագիտական, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, Հայաստանի ամերիկյան, Հայաստանի ազգային ագրարային, Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանների՝ կարիերայի հարցերը համակարգող կառույցների միջև համագործակցության հուշագրի ստորագրմամբ:

Համագործակցության հիմնական շրջանակներն են՝ ամենամյա հանրապետական միջբուհական աշխատանքի տոնավաճառի կազմակերպում, գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների իրականացում, տեղեկատվության փոխանակում և այլ ծրագրերի մշակում:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Դավթյան Կարինե Ավետի*

2013-2014 ուստարում Մշակույթի կենտրոնը կազմակերպել է 17 միջոցառում, 15 կինոդիտում-քննարկումներ: «Համալսարանական» թատրոն-ստուդիան բեմադրել է 1 նոր ներկայացում: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են շուրջ 9000 ուսանողներ:

Մշակույթի կենտրոնը հաշվետու ուստարում, բացի ավանդաբար իրականացվող ծրագրերից և միջոցառումներից, իր գործուն մասնակցությունն է ունեցել ԵՊՀ-ում կազմակերպված մի շարք միջոցառումների իրականացման գործում, ինչպես նաև ընդլայնել է համագործակցության շրջանակները:

Ինչպես 2006 թվականից սկսած յուրաքանչյուր ուստարում, այնպես էլ 2013 թվականի սեպտեմբերին կենտրոնի աշխատակազմը հանդիպումներ է ունեցել ԵՊՀ բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիների հետ, որոնց ընթացքում մանրամասն ներկայացվել են կենտրոնի ստեղծման նպատակները, գործունեությունը և կենտրոնում գործող խմբերը: Հանդիպումների ընթացքում բաժանվել են կենտրոնի կողմից նախապես պատրաստված հայտեր՝ խմբերի համալրման և մրցույթներին մասնակցություն ապահովելու նպատակով:

Ավանդական միջոցառումներ

- ✓ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպվել ու անցկացվել է «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողություն» (11.09.2013):
- ✓ Ուսանողության միջազգային օրվա առիթով Ուսանողական խորհրդի և Մշակույթի կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպվել է «Լավագույն ուսանող 2013» համերգ-մրցանակաբաշխությունը (18.11.2013):
- ✓ ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում կազմակերպվել է Հումորի օրվան նվիրված «Կատակում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի ՈՒՀԱ «ԵԳՄ» թիմը» ցերեկույթ (01.04.2014): Ցերեկույթին ներկա էին հայ հումորային աշխարհի հայտնի արվեստագետներ:
- ✓ ՀՀ-ում անցկացվող Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում կազմակերպվել է ֆրանսիական երգի ամենամյա փառատոնը (16.04.2014), որի թեման Ֆրանսիայում ապրող և ստեղծագործող հայ արվեստի ներկայացուցիչներն էին:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված միջոցառումներ

- ✓ «95-ամյա Մայր բուհը» թեմայով ցուցահանդես, որին մասնակցել են ԵՊՀ դասախոսներ, աշխատակիցներ և ուսանողներ: Ներկայացվել են գեղանկարներ, լուսանկարներ, փայտի փորագրություններ, գոբելեն, ձեռքի այլ աշխատանքներ: Ստեղծագործությունները ցուցադրվել են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում և շենքի 3-6-րդ հարկերի կենտրոնական հատվածներում, տրվել է պոեզիայի փառատոնի մեկնարկը (10.06.2014):
- ✓ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում կազմակերպվել է պոեզիայի փառատոնի թատերականացված երեկո՝ նվիրված Համո Սահյանի, Հովհաննես Շիրազի 100 և Պարույր Սևակի 90-ամյակներին: Միջոցառման ընթացքում թատերական կոմպոզիցիայով հանդես են եկել «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաները, իսկ երգչախումբն ու անհատ

կատարողները ներկայացրել են նրանց բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր (10.06.2014):

- ✓ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում կազմակերպվել է ԵՊՀ 95-ամյակին նվիրված ուսանողական տոնական համերգ (11.06.2014):
- ✓ ԵՊՀ հիմնադրման 95-ամյակի և Վ. Շեքսպիրի 450-ամյակի առթիվ ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաները ներկայացրել են «Ռոմեո և Ջուլիետ» երաժշտական ներկայացումը (գեղարվեստական ղեկավար ու ռեժիսոր՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյան) (17.06.2014):

Փառատոների ու մրցույթների մասնակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը մասնակցել է հանրապետական և միջբուհական մրցույթների և փառատոների:

- ✓ Կենտրոնի մեներգիչները մասնակցել են «Խորհրդային երգեր» հանրապետական մրցույթ-փառատոնին, որին ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի մեներգչուհի Մարիցա Թիլիքյանը զբաղեցրել է առաջին պատվավոր տեղը, Գայանե Մանուկյանը, Արփինե Խեչիկյանը՝ երկրորդ հորիզոնականը:
- ✓ Մշակույթի կենտրոնի մեներգիչ Արծրուն Խանգելդյանը մասնակցել է «Հայաստանի ձայն» հեռուստանախագծին և անցել կիսաեզրափակիչ:
- ✓ Մշակույթի կենտրոնի ՈՒՀԱ «ԵԳՄ» թիմը մասնակցել է Ուրախների և հնարամիտների ուսանողական լիգայի Զ կիսաեզրափակչի 2-րդ խաղին և զբաղեցրել 2-րդ հորիզոնականը:

Համագործակցության շրջանակներում անցկացված միջոցառումներ

Մշակույթի կենտրոնը սերտորեն համագործակցում է ինչպես ԵՊՀ ստորաբաժանումների, այնպես էլ ՀՀ նախարարությունների և պետական ու հասարակական հաստատությունների հետ:

- ✓ Մշակույթի կենտրոնի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի համատեղ ջանքերով արդեն 5-րդ անգամ կազմակերպվել է Սբ. Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում: Միջոցառմանը ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, բարձրաստիճան հոգևոր հայրեր, ուսանողներ ինչպես ԵՊՀ-ից, այնպես էլ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանից (27.02.2014):
- ✓ Երգի և երաժշտության միջազգային օրվա առթիվ կենտրոնի մեներգիչները մասնակցել են Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանն անցկացված երգի փառատոնին (21.06.2014):
- ✓ ՀՀ շախմատի ակադեմիայի հրավերով Մշակույթի կենտրոնի երգիչներն ու պարային համույթը մասնակցել են հետևյալ մրցաշարերի բացման (փակման) արարողություններին.
  1. Մարտունիում անցկացված «Սևանա լիճ 2013» միջազգային մրցաշարի փակման արարողությանը (16.09.2013),
  2. Երևանում անցկացված Եվրոպայի շախմատի անհատական առաջնության փակման արարողությանը (14.03.2014),
  3. Մարտունիում անցկացված «Սևանա լիճ 2014» միջազգային մրցաշարի բացման և փակման արարողություններին (26.07.2014- 04.08.2014),
- ✓ ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց» ծրագրի շրջանակում ազգային երգի ու պարի դասընթացներն արդեն 3-րդ տարին է՝ կազմակերպում է Մշակույթի կենտրոնը (07.07.2014-02.08.2014):

Այլ միջոցառումներ

- ✓ Մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի է ունեցել «Ամանորյա հրաշքներ» խորագիրը կրող տոնական համերգ-ներկայացումը՝ կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի, երգչախմբի, անհատ կատարողների և աղջիկների պարային համույթի սաների մասնակցությամբ (27.12.2013):
- ✓ Մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի է ունեցել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հիման վրա մոնոներկայացում՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանի մասնակցությամբ (ներկայացման ռեժիսոր՝ Մշակույթի կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյան) (17.04.2014):
- ✓ Թատրոնի միջազգային օրվա առթիվ կենտրոնի տարբեր խմբերի անդամներ, կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյանի նախաձեռնությամբ, այցելել են ՀՀ գրականության և արվեստի թանգարան, ապա Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայ բեմի հանճարներին (27.05.2014):

Կինոակումբի գործունեություն

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից «Կինոաշուն» փառատոնի շրջանակում յուրաքանչյուր չորեքշաբթի ցուցադրվել են հայկական արտադրության նոր ֆիլմեր, որոնց ցուցադրությունից հետո տեղի են ունեցել քննարկումներ ֆիլմարտադրողների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ):

- ✓ «Գարեգին Նժդեհ» (ռեժ.՝ Հրաչ Քեշիշյան, 2013), (09.10.2013)
- ✓ «Ապակե կախազարդ» (ռեժ.՝ Արսեն Ազատյան, 2013), (16.10.2013)
- ✓ «Փարաջանով» (ռեժ.՝ Ս. Ավետիքյան, Ալ. Ֆետիսովա, 2013), (23.10.2013)
- ✓ «Փուշը» (ռեժ.՝ Ս. Բաբայան 2013), (30.10.2013)
- ✓ Փառատոնի շրջանակում կազմակերպվել են Սոս Սարգսյանի կինոյի ժառանգությանը նվիրված կինոդիտումներ: Ցուցադրվել են նրա մասին և իր իսկ մասնակցությամբ ֆիլմեր (20.11.2013):
- ✓ «Սպիտակ վագր» (ռեժ.՝ Կարեն Շահնազարով) (27.11.2013)
- ✓ «Երկու աշխարհներից ի հիշատակ» (ռեժ.՝ Նիկա Շեկ, 2013), (04.12.2013)
- ✓ «Այդ ես չեմ» (ռեժ.՝ Մարիա Սահակյան, 2012), (11.12.2013)

Փառատոնի ավարտից հետո ցուցադրվել են հայկական, արտասահմանյան հայտնի ֆիլմեր, որոնց քննարկման ժամանակ հրավիրվել են կինոգետներ:

- ✓ «Ալիանս ֆրանսեզի» և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից արդեն երկրորդ տարին անընդմեջ անցկացվող ֆրանսիական «Ամենակարճ օրը» կարճամետրաժ ֆիլմերի փառատոնի շրջանակում ցուցադրվել են ֆրանսիական կարճամետրաժ ֆիլմեր (18.12.2013):
- ✓ Ֆրանկոֆոնիայի շրջանակում կազմակերպվել է ֆրանսիական ֆիլմերի ցուցադրություն՝ «Այսօր կիրակի է» (ռեժ.՝ Սամիր Կեսմի), «Առագաստներ Լյուքսեմբուրգից» (ռեժ.՝ Նիկոլա Էնջլ), «Ալան» (ռեժ.՝ Ֆրեդերի Ազար) (19.03.2014):
- ✓ Արսեն Հակոբյանի և Արտակ Ավդալյանի «Արարատից Եվրոպա» ֆիլմը (26.03.2014):
- ✓ Ջիվան Ավետիսյանի «Ընդհատված մանկություն» ֆիլմը (02.04.2014):
- ✓ Հ. Պապիկյանի և Շ. Սահակյանի «Էն ուրիշ Ֆրունզիկը» ֆիլմը (09.04.2014):
- ✓ Հայոց եղեռնին նվիրված ցուցադրվել է «Մեկ ազգի մոռացված մեկ էջ» ֆիլմը (ռեժ.՝ Ա. Ավդալյան) (23.04.2014):

- ✓ «Թափառում» հայկական առաջին ռոք-ֆիլմի ցուցադրություն (ռեժ.՝ Ա. Հարությունյան, երաժշտության հեղինակ, պրոդյուսեր Ա. Սուքիասյան, գլխավոր դերակատարներ՝ Ա. Հարությունյան, Ա. Սուքիասյան, Ա. Էլբերտ), (30.04.2014):

Կենտրոնում գործող խմբեր

Խմբեր	Ղեկավար/պատասխանատու	Ներգրավված ուսանողներ
Երգչախումբ	ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան (գեղ. ղեկավար), Ռուբեն Կարասեֆերյան (խմբավար)	35
Աղջիկների պարային համույթ	Իռեն Ուլիխանովա	48
«Համալսարանական» թատրոն-ստուդիա	Կարինե Դավթյան	25
Գրական ստեղծագործողների ակումբ	Սարգիս Մխիթարյան	25
Կինոակումբ	Գրիգոր Էլիզբարյան	65
«Նիկե» (նախաձեռնող, իրագործող, կամավոր երիտասարդներ)	Արևիկ Պռազյան	25
Նվագախումբ	Կարեն Սարգսյան	13
ՈՒՀԱ (Ուրախների և հնարամիտների ակումբ)	Ալեքսանդր Առաքելով	15
Ընդհանուր՝ 8 խումբ		**251 ուսանող**

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հարությունյան Էդգար Վիլիկի, քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Երևանի պետական համալսարանը հաշվետու ուսումնական տարում արդյունավետ գործունեություն է ծավալել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բազմաթիվ համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում, մրցույթով շահել տարբեր դրամաշնորհներ:

2013-2014 ուստարում ԵՊՀ-ում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: ԵՊՀ նոր ձեռքբերումներից էր բազային ծրագրերի ոլորտում 2 նոր գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծումը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ գիտական ստորաբաժանումներում կատարված աշխատանքների գիտական արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1862 հոդվածներում, 86 մենագրություններում: Ավելի քան 486 թեզիսներ ներկայացվել են միջազգային և տեղական տարբեր գիտաժողովներում:

Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող պետական բազային ֆինանսավորմամբ գիտահետազոտական ստորաբաժանումներում, որոնց թվում՝ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտում, 10 գիտահետազոտական կենտրոններում և 26 գիտահետազոտական լաբորատորիաներում:

2013-2014 ուստարում դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի հաշվետվությունները տրվել են գիտական փորձաքննության, ինչի շրջանակներում գնահատվել են եզրափակիչ հաշվետվության գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբերի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը:

Երևանի պետական համալսարանում 2014թ. փետրվարից գործում են նոր՝ 3 (հայ-ռուսական), մարտից՝ 1 (հայ-ֆրանսիական) և 8 («Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013») դրամաշնորհային ծրագրերը:

Անցած ուսումնական տարում կազմակերպվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար մրցույթներ: Մրցութային գործընթացը շարունակվում է:

Հաշվետու ժամանակաշրջանում Գիտակազմակերպական բաժնի անմիջական աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում են ստացել 4 արտոնագիր, որոնցից 2-ը՝ քիմիայի բնագավառում, 1-ը՝ ռադիոֆիզիկայի, 1-ը՝ երկրաբանության: Բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրած գյուտերի մեթոդական նկարագրությունները և օրենսդրական ակտերը: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ-ի գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Անցած ուսումնական տարին հարուստ է եղել նաև տարբեր գիտական միջոցառումներով: Դրանցից պետք է առանձնացնել տարբեր բնագավառներին վերաբերող մի շարք գիտաժողովներ, մասնավորապես՝

«Մաթեմատիկան Հայաստանում: Ձեռքբերումները և հեռանկարները», II (նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին), օգոստոսի 31-սեպտեմբերի 7, 2013թ., ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ, ՀՀ մաթեմատիկական ասոցիացիա, «Գրավիտացիայի տեսություն և ռելյատիվիստական աստղաֆիզիկա» գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի ծննդյան 100-ամյակին, սեպտեմբերի 22-26, 2013թ., ՀՀ ԿԳՆ ԵՊՀ, «Լեռնային շրջանների գեոմորֆոլոգիայի և երկրաբանության կիրառական հիմնախնդիրներ», հոկտեմբերի 1-ին, ՀՀ ԿԳՆ ԵՊՀ, «Իրավագիտության արդի հիմնախնդիրները» վերտառությամբ գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյա հոբելյանին, նոյեմբեր, 2013թ., ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, «Եվրոպա և Կովկաս, միջտարածաշրջանային կապերն ու ինքնության հարցը», 7-8 մայիսի, 2014թ., ՀՀ ԿԳՆ ԵՊՀ, «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», 14-18 մայիսի, 2014թ., ՀՀ ԿԳՆ ԵՊՀ, «Քիմիան այսօր՝ 2014», 18-22 օգոստոսի, 2014թ., ՀՀ ԿԳՆ ԵՊՀ:

2013-2014 ուստարում Գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Վարագյան Վահագն Մանվելի, կենս. գիտ. թեկնածու*

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է ուսանողական, հասարակական և մշակութային առօրյայի ակտիվացմանը, ուսանողների ինտելեկտուալ զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Բաժնի աշխատանքներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու հիմնական մասի.

- Աջակցություն համալսարանի ուսանողական կազմակերպությունների նախաձեռնություններին և ծրագրերին (ՈՒԽ և ՈՒԳԸ),
- Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում:

Աջակցություն ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների ծրագրերին և նախաձեռնություններին

- Այցելություն ԼՂՀ, ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին նվիրված հուշ-ցերեկույթ Կովսականում, ԵՊՀ ՈՒԽ և ԱրՊՀ ՈՒԽ միջև համագործակցության հուշագրի ստորագրում և ծառատունկ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի համալսարանական պուրակում (07-10.11.2013, ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Ամանորյա տարեմուտի միջոցառում, որին մասնակցել են շուրջ 700 համալսարանականներ (29.12.2013, ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանին նվիրված հուշ-ցերեկույթի կազմակերպում Շահումյանի շրջանի Եղեգնուտ գյուղում և Պետրոս Ղևոնդյանի անվան զորամասում (Սրխավենդ), զինադադարի 20-ամյակին նվիրված գիտաժողով Ստեփանակերտում (25-27.04.2014, ՈՒԳԸ, ՈՒԽ),
- Ուսանողների ամառային հանգստի կազմակերպում Բյուրականի ուսումնաարտադրական բազայում (01.07-20.08.2014, ՈՒԽ),
- Ուսանողական բանակում Արցախում (27.07-02.08.2014, ՈՒԽ),
- Ուսանողների ամենամյա գիտական հոդվածների ժողովածուի հրատարակում (ՈՒԳԸ),
- Սոցիալապես անապահով շուրջ 150 ուսանողների վարձավճարների զեղչերի հատկացում (ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ուսանողական բազմաթիվ արշավներ դեպի պատմամշակութային վայրեր:

Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում

- Ուսանողական կառույցների նախագահությունների հանդիպում ԵՊՀ ռեկտորի և պրոռեկտորների հետ,
- Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում եռօրյա արտագնա սեմինարներ ԵՊՀ կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների մասնակցությամբ՝ այդ մարմիններում ուսանողների մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կազմակերպվել են նաև մի շարք հանդիպումներ գիտության, արվեստի և սպորտի հայտնի գործիչների հետ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ *Քարամյան Ռաֆֆի Արայի, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ասպիրանտ*

Հաշվետու ուստարում ԵՊՀ ուսանողական խորհուրդը հետևողականորեն իրականացրել է իր կանոնադրական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, խթանելով ուսանողների ակտիվ մասնակցությունը համալսարանի կառավարմանը, վեր հանելով ուսանողությանն առնչվող տարբեր հարցեր: ՈՒԽ-ն մասնակցել է ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսանողներին իրազեկել է իրենց իրավունքների և պարտականությունների մասին, միավորել է համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արտալսարանային արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսխորհուրդների և հանձնաժողովների նպատակային ու կանոնակարգված աշխատանքի արդյունքում խթանել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, իր մասնակցությունն է ցուցաբերել ԵՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանման գործում, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով:

2013-2014 ուստարվա ընթացքում ՈՒԽ-ն անցկացրել է նախագահության 20 նիստ:

Համագործակցություն ՀՀ տարբեր կառույցների և կազմակերպությունների հետ

Հաշվետու տարում ԵՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի հետ:

Շարունակվել է համագործակցությունը նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ, որի շրջանակում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ հոգևորականների հետ, այցելություններ Հայաստանի հոգևոր, պատմական և մշակութային վայրեր:

Հաշվետու ուստարում ԵՊՀ ՈՒԽ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների հետ կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ, ՀՀ բարձրագույն կրթության որակի վերաբերյալ քննարկումներ և այլն:

Հանձնաժողովներ

ԵՊՀ արտաքին կապերի հանձնաժողովը զարգացրել է կապերը հայաստանյան և արտասահմանյան իր գործընկերների հետ: 2013-2014թթ. ԵՊՀ ՈՒԽ նախագահ Ռ. Քարամյանը մասնակցել է ԱՊՀ երկրների երիտասարդական հավաքներին: Ուսանողական խորհրդի օժանդակությամբ մի շարք ուսանողներ մեկնել են արտերկիր (Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Լեհաստան, Հունգարիա և այլն)՝ մասնակցելու գիտաժողովների, ֆորումների, ինտելեկտուալ խաղերի, մրցումների և այլն:

ԵՊՀ ՈՒԽ իրավական հանձնաժողովը կազմակերպել է քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՊՀ ուսանողներին, հատկապես 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու համար: Հանձնաժողովը մշակել է ֆակուլտետային ՈՒԽ-ների և հանձնաժողովների օրինակելի աշխատակարգը, ինչպես նաև վերամշակել է ԵՊՀ ՈՒԽ կանոնադրությունը:

ԵՊՀ ՈՒԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես ՈՒԽ-ի աջակցությամբ գրեթե 1000 ուսանողների տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, ինչպես նաև ցուցաբերվել է այլ աջակցություն:

ԵՊՀ ՈՒԽ մշակույթի հանձնաժողովը կազմակերպել է մի շարք հանդիպումներ մշակույթի և արվեստի գործիչների հետ, կինոդիտումներ, համերգներ, ցուցահանդեսներ և այլն: Հանձնաժողովը կյանքի է կոչել համալսարանական այնպիսի մրցույթներ, ինչպիսիք են «Երգող համալսարանականը» և «Ասմունքող համալսարանականը»: Այս մրցույթներում հաղթողները հնարավորություն են ստացել ԵՊՀ ուսանողական խորհուրդը ներկայացնելու Արցախում կազմակերպված մի շարք մշակութային միջոցառումների շրջանակներում: Այս ամենից զատ՝ հանձնաժողովին կից սկսել են գործել Երիտասարդ ստեղծագործողների ակումբը, Ազգագրական պարի համույթը:

Հաշվետու ժամանակահատվածում բավականին ակտիվ է եղել նաև ԵՊՀ ՈՒԽ սպորտի հանձնաժողովը: Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի մրցումներ:

Գիտակրթական հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է մի շարք միջոցառումներ: Հանձնաժողովն անցկացրել է ԵՊՀ բանավեճի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի, «Կինոմանիա»-յի և այլ ինտելեկտուալ խաղերի առաջնություններ: Հաղթողներին տրվել են գրքեր և պատվոգրեր: 2013 թվականի նոյեմբերի 17-ին՝ Ուսանողության միջազգային օրը, կազմակերպվել է «Ուսանող-2013» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ԵՊՀ ուսանողական խորհրդի մշակույթի հանձնաժողովի ջանքերով կազմակերպվել է համերգ, և հասարակական ակտիվություն դրսևորած ու ԵՊՀ պատիվը բարձր պահած ուսանողները պարգևատրվել են ԵՊՀ ՈՒԽ մեդալով: Նույն օրը կայացել է նաև ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը: Գիտակրթական հանձնաժողովը նաև կազմակերպել է «Բոլոնիայի գործընթացը Հայաստանում» խորագիրը կրող դասընթացներ, որոնց մասնակցած ուսանողները ծանոթացել են Բոլոնիայի համակարգին:

Լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովը ակտիվորեն շարունակել է իր գործունեությունը և կապեր հաստատել հայկական մի շարք ԶԼՄ-ների հետ: Աշխատանքներ են տարվել ՈՒԽ կայքի վերջնական կայացման և նրա հիմնական գործառույթները խթանելու համար:

Ֆինանսատնտեսական հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել ԵՊՀ ՈՒԽ բյուջեի, միջոցների օգտագործման վերստուգման ուղղությամբ, ինչպես նաև ՈՒԽ մի շարք միջոցառումներ ֆինանսավորելու նպատակով պայմանավորվածություններ է ձեռք բերել ձեռնարկատերերի հետ:

Հաշվետու ուստարում հեռակա համակարգում սովորող ուսանողների հետ ակտիվորեն աշխատել է ԵՊՀ ՈՒԽ հեռակա բաժնի ուսանողների հետ տարվող աշխատանքների հանձնաժողովը:

ԵՊՀ ՈՒԽ նախագահության կազմը

1. Քարամյան Ռաֆֆի (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
2. Ղափլանյան Վարդան (Արևելագիտության ֆակուլտետ)
3. Ջուլհակյան Գոհար (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ)
4. Սահակյան Լուսինե (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
5. Հարությունյան Սյուզաննա (Սոցիոլոգիայի ֆակուլտետ)

6. Ազարյան Արսեն (Աստվածաբանության ֆակուլտետ)
7. Բագրատունյան Անահիտ (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ)
8. Ալավերդյան Ռոզա (Տնտեսագիտության ֆակուլտետ)
9. Թորոսյան Դավիթ (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
10. Հովհաննիսյան Նարեկ (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
11. Սարգսյան Լևոն (Քիմիայի ֆակուլտետ)
12. Ղազարյան Տիգրան (Իրավագիտության ֆակուլտետ)
13. Գալստյան Հայկուհի (Կենսաբանության ֆակուլտետ)
14. Կարապետյան Աննա (Արևելագիտության ֆակուլտետ)
15. Սինորյան Նատալյա (Ռուս բանասիրության ֆակուլտետ)
16. Հարությունյան Ռիտա (Պատմության ֆակուլտետ)
17. Աշրաֆյան Յուրի (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)
18. Սարգսյան Հայկ (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
19. Աբգարյան Գևորգ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
20. Տիգրան Ղազարյան (Իրավագիտության ֆակուլտետ)
21. Շահնազարյան Դավիթ (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)

ԵՊՀ ֆակուլտետների ՈՒԽ նախագահներ

1. Նարեկ Հովհաննիսյան (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
2. Վահան Կոստանյան (Արևելագիտության ֆակուլտետ)
3. Նազելի Հայրապետյան (Աստվածաբանության ֆակուլտետ)
4. Գարիկ Հարությունյան (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ)
5. Մարիամ Հարությունյան (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ)
6. Սիլվի Վարդանյան (Իրավագիտության ֆակուլտետ)
7. Աստղիկ Աբրահամյան (Կենսաբանության ֆակուլտետ)
8. Անի Աբրահամյան (Հայ բանասիրության ֆակուլտետ)
9. Դավիթ Շահնազարյան (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)
10. Հայկ Սարգսյան (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
11. Նուշիկ Մխիթարյան (Պատմության ֆակուլտետ)
12. Գևորգ Աբգարյան (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
13. Մարիամ Պարսամյան (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ)
14. Հայարփի Ղազարյան (Ռուս բանասիրության ֆակուլտետ)
15. Արամ Առաքելյան (Սոցիոլոգիայի ֆակուլտետ)
16. Ռոզա Ալավերդյան (Տնտեսագիտության ֆակուլտետ)
17. Դավիթ Թորոսյան (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
18. Ամալյա Սեդրակյան (Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ)
19. Նարինե Մարտիրոսյան (Ֆիզիկայի ֆակուլտետ)

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ *Մալխասյան Միքայել Արմենի, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ*

2013-2014 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈԻԳԸ) իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողության գիտական, կրթական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: 2013թ. դեկտեմբերի 20-ին ընդունվել է ՈԻԳԸ նոր աշխատակարգը, որով լրամշակվել են որակի ապահովման մեխանիզմները, և հստակեցվել կառույցի ներքին աշխատանքային սկզբունքները, մասնավորապես՝ ՈԻԳԸ անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի գնահատման համակարգը:

2014թ. հունվարի 31-ին ՈԻԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը 2012-2013թթ. ուստարում ՈԻԳԸ գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությամբ է հանդես եկել ԵՊՀ գիտական խորհրդում:

ՈԻԳԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ ՈԻԳԸ ղեկավար մարմինը Գիտական խորհուրդն է, որի կազմում են ԵՊՀ ՈԻԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, աշխատակազմի ղեկավարը, տեղեկատվական և արտաքին կապերի հանձնաժողովների ղեկավարները, Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ նախագահը և ֆակուլտետային 19 ՈԻԳԸ-ների նախագահները:

ՈԻԳԸ գիտական խորհրդի կազմը.

1. Մալխասյան Միքայել (նախագահ)
2. Շահինյան Գրիգոր (նախագահի տեղակալ մինչև 2014թ. ապրիլը, այնուհետև՝ ՈԻԳԸ ներկայացուցիչ ԵՊՀ գիտական խորհրդին առընթեր հանձնաժողովներում)
3. Ղանալանյան Տիգրան (քարտուղար)
4. Հակոբյան Մհեր (աշխատակազմի ղեկավար, 2014թ. ապրիլից՝ նախագահի տեղակալ)
5. Ծատրյան Հարություն (տեղեկատվական հանձնաժողովի ղեկավար)
6. Բալդրյան Ռուզաննա (արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավար)
7. Նավասարդյան Ամալյա (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
8. Մելքոնյան Սարգիս (Աստվածաբանության ֆակուլտետ)
9. Գևորգյան Արշակ (Արևելագիտության ֆակուլտետ)
10. Սարգսյան Լուսինե (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ)
11. Խաչատրյան Հրանտ (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ)
12. Հովսեփյան Մարիամ (Իրավագիտության ֆակուլտետ)
13. Աղաջանյան Լուսինե (Կենսաբանության ֆակուլտետ)
14. Պողոսյան Թամարա (Հայ բանասիրության ֆակուլտետ)
15. Խուրշուդյան Ասատուր (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)
16. Հարությունյան Ժաննա (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
17. Բաղդասարյան Գոհար (Պատմության ֆակուլտետ)
18. Երանյան Լիլիթ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
19. Հովակիմյան Նազենի (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ)

20. Խիզանցյան Աննա (Ռուս բանասիրության ֆակուլտետ)
21. Գրիգորյան Օֆելյա (Սոցիոլոգիայի ֆակուլտետ)
22. Ղուկասյան Միքայել (Տնտեսագիտության ֆակուլտետ)
23. Նիկոյան Վարսիկ (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
24. Վարդանյան Գայանե (Քիմիայի ֆակուլտետ)
25. Սարգսյան Հայկ (Ֆիզիկայի ֆակուլտետ)
26. Հովսեփյան Արա (Իջևանի մասնաճյուղ)

Հաշվետու ուստարում 16 անգամ գումարվել է ՈՒԳԸ ԳԽ նիստ, 3 անգամ էլ՝ ՈՒԳԸ ընդլայնված կազմով նիստ՝ ՈՒԳԸ անդամների մեծ մասի մասնակցությամբ: Հարկ է առանձնացնել 2013թ. նոյեմբերի 22-24-ը ՈՒԳԸ գիտական խորհրդի՝ Ծաղկաձորում տեղի ունեցած արտագնա նիստը, որտեղ ժամանակակից մոտեցումներով համալրվել են ՈՒԳԸ զարգացման ռազմավարությունը և մարտավարական դրույթները, որոշվել է ՈՒԳԸ միջոցառումները տեսակավորել ըստ երկու խոշոր խմբերի՝ նեղ, զուտ մասնագիտական և գիտության հանրայնացման միջոցառումներ:

ՈՒԳԸ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներում ընդգրկված ուսանողների և ասպիրանտների նոմինալ թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, կրճատվել է 8,8%-ով, ինչը պայմանավորված է հաշվարկային մեխանիզմի ճշգրտմամբ[1]:

ՈՒԳԸ ստորաբաժանումները և անդամների թիվը 2014թ. հունիսի 20-ի դրությամբ

Ստորաբաժանումը	*Անդամների թիվը*
Գիտական խորհուրդ	26
Հանձնաժողովներ և աշխատակազմ	88
Ֆակուլտետային ՈՒԳԸ-ներ	271
Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ	20
Ընդամենը	***353[1]***

ՈՒԳԸ աշխատանքներին ուստարվա ընթացքում մասնակցել է Մայր բուհի շուրջ 1400 սովորող՝ մոտ 200-ով ավելի, քան նախորդ ուստարում: Այլ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից մասնակիցների թիվը շուրջ 400 է:

Հետաքրքրական է, որ ՈՒԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցած (գիտական հոդվածների ղեկավարում կամ գրախոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն) դասախոսների թիվը ևս ավելացել է՝ հասնելով 500-ի, ինչը 200-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

[1] ՈՒԳԸ կառուցվածքային 23 ստորաբաժանումների անդամների թվի հանրագումարը 405 է, մինչդեռ այդ թվից նվազեցվել է ստորաբաժանումների ղեկավարների թիվը (որոնք կրկնվում են ՈՒԳԸ գիտական խորհրդի և իրենց ղեկավարած ստորաբաժանման պարագայում) և հանձնաժողովներում/աշխատակազմում ու ֆակուլտետային ՈՒԳԸ-ներում միաժամանակ ընդգրկված ուսանողների թիվը (29):

ՈՒԳԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված միջոցառումների ընդհանուր թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, նվազել է 10,5%-ով, ինչը պայմանավորված է ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի (28-30.04.2014թ.) և նույն հոբելյանի առթիվ «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» խորագրով գիտապրակտիկ դասընթաց-ծրագրի (Ծաղկաձոր, 14-16.03.2014) կազմակերպման աշխատանքների համար ուժերի կենտրոնացմամբ:

2013-2014 ուստարում ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված միջոցառումների տեսակային ցանկը

Միջոցառման բնույթը	*Քանակը*
Միջազգային, հանրապետական և համահամալսարանական գիտաժողով	21
Ներֆակուլտետային գիտաժողով	10
Ուսուցողական ծրագիր-դասընթաց	2
Սեմինար-քննարկում, կլոր սեղան, հանդիպում-դասախոսություն, ֆիլմի դիտում	304
Օլիմպիադա	5
Գիտաճանաչողական էքսկուրսիա	48
Դասախոսություն (բաց դաս) դպրոցներում	22
Բանավեճ, դատախաղ, ինտելեկտուալ խաղ և մրցութային այլ միջոցառումներ	53
Այլ (ցուցահանդես, դպրոցականների այց ԵՊՀ և այլն)	19
Ընդամենը	***484***

Ստորև ներկայացված է ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված միջոցառումների մի մասը.

ա) Միջազգային, հանրապետական և համահամալսարանական գիտաժողովներ

- «IONS Armenia» միջազգային գիտաժողով (Ֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ, «Optical Society of America» ու «SPIE Armenian Student Chapter» կազմակերպություններ, 11-14.09.2013),
- Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ աշնանային նստաշրջան (Հայ բանասիրության ֆակուլտետ, 11-15.11.2013),
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 9-ամյակին նվիրված գիտաժողով (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 12.11.2013),
- Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 95-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով (Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ, ՀՊՄՀ ՈՒԳԸ և ՀՀ ԳԱԱ ՈՒԽ, 13.11.2013),
- ՄԱԿ-ի մոդել-կոնֆերանս (ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհուրդ, ՀՀ-ում ՄԱԿ-ի ներկայացուցչություն, ԵՊԼՀ և ՀՌ(Ս)Հ կարիերայի կենտրոններ, 15-16.11.2013),
- «Երիտասարդության արդի հիմնախնդիրները» խորագրով գիտապրակտիկ կոնֆերանս՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան (ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհուրդ և «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբ, 19.11.2013),
- «Տեխնոլոգիաներ. բարի՞ք, թե՞ չարիք» խորագրով հանրապետական գիտաժողով (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 02-03.12.2013),
- Պատմաբանի օրվան (Մ. Չամչյանի ծննդյան տարեդարձին) նվիրված հանրապետական գիտաժողով (Պատմության ֆակուլտետ, 03-05.12.2013),

- «Իրավական կարգավորման կատարելագործման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով միջբուհական գիտաժողով՝ նվիրված Իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին (Իրավագիտության ֆակուլտետ, 04.12.2013),
- «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն. օգուտներ և մարտահրավերներ» խորագրով հանրապետական գիտաժողով (Իրավագիտության ֆակուլտետ, 05.12.2013),
- «Պետականաշինություն. հայոց և համաշխարհային փորձը» խորագրով միջբուհական գիտաժողով (Պատմության ֆակուլտետ, 11.02.2014),
- «Տնտեսագիտության զարգացման հիմնահարցեր» միջազգային 2-րդ գիտաժողով (Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ և ԵԳՄ, 20-23.02.2014),
- «Հայոց զորավարի հավերժական կյանքն ու գործունեությունը» խորագրով Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ հոբելյանական նստաշրջան՝ նվիրված Զորավար Անդրանիկի ծննդյան 149-ամյակին (Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ և «Անդրանիկ օգնություն» ՀԿ, 25.02.2014),
- «Հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջբուհական գիտաժողով (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 03.04.2014),
- Բիշքեկի հրադադարի կնքման 20-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով (ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհուրդ, ԱրՊՀ և ԳՊՀ ՈՒԳԸ-ներ, 25-27.04.2014),
- ***ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան (ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհուրդ, 28-30.04.2014),***
- «Ֆիզիկայի արդի հիմնախնդիրները» խորագրով ուսանողական հանրապետական դպրոց-կոնֆերանս (Ֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ, ԵԳՄ, «Optical Society of America» և «SPIE Armenian Student Chapter» կազմակերպություններ, 16.05.2014) և այլն:

բ) Ներֆակուլտետային գիտաժողովներ

- «ՀՀ կայուն զբոսաշրջության ձևավորման հիմնախնդիրները» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 30.09.2013),
- «Լրագրության արդի հիմնախնդիրները» (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, 10.10.2013),
- «Երիտասարդ քիմիկոս» (Քիմիայի ֆակուլտետ, 03.12.2013, 09.12.2013) և այլն:

ԵՊՀ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 1000 գիտական զեկուցում: Զեկուցումների թիվը, նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ, գրեթե անփոփոխ է մնացել, ինչը պայմանավորված է նախորդ ուստարվա Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի օրինակով (որտեղ ներկայացվել էր 350 զեկուցում) այս ուստարում ԵՊՀ հիմնադրման 95-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջանի անցկացմամբ (ներկայացվել է մոտ 400 զեկուցում, որից շուրջ 120-ը՝ ՀՀ և ԼՂՀ շուրջ 20 բուհերից ու ԳԱԱ-ից):

գ) Ուսուցողական ծրագիր-դասընթացներ

1. «Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցում».

- «Գիտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» խորագրով ֆակուլտետային սեմինարներ (18 սեմինար, սեմինարավար՝ համապատասխան ֆակուլտետի մասնագետ, սեպտեմբեր-մայիս, 2013-2014),
- ***«Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» խորագրով գիտապրակտիկ դասընթաց-ծրագիր՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին (Ծաղկաձոր, 14-16.03.2014). դասընթացներ՝***

1. Ներածական դասընթաց (վարող՝ ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ., պրոֆ. Գ. Գևորգյան),
2. Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը (վարող՝ ԵՊՀ բակալավրիատի բաժնի վարիչ, աշխ. գ.թ., դոց. Գ. Հովհաննիսյան),
3. Փաստարկման ընդհանուր մեթոդաբանությունը գիտահետազոտական աշխատանքում (վարող՝ ԵՊՀ գիտական քարտուղար, պատմ. գ.թ., ասիստ. Մ. Սողոմոնյան),
4. Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները և դասակարգումը (վարողներ՝ ԵՊՀ բակալավրիատի բաժնի վարիչ, աշխ. գ.թ., դոց. Գ. Հովհաննիսյան և ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ, ասպիրանտ Մ. Մալխասյան),
5. Հղումներ կատարելու կարգը (վարող՝ «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, քաղ. գ.թ., դոց. Ն. Գալստյան):

2. Ենգիբարյան Վահե Գուրգենի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հարությունյան Արմեն Ռազմիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ղուկասյան Հրայր Հովհաննեսի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Համատեղողներ

1. Ղազինյան Գագիկ Սերգեյի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Թաթոյան Արման Հակոբի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հարությունյան Արմեն Ռազմիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ղուկասյան Հրայր Հովհաննեսի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մելիքյան Ռուբեն Նորայրի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Չախոյան Արթուր Սամվելի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Խաչատուրյան Դավիթ Միհերի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Սուջյան Տաթևիկ Հովհաննեսի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Հովհաննիսյան Իրինա Ասքանազի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Աղաբաբյան Նելլի Խաչատուրի, ավագ լաբորանտ
3. Ավագյան Էմմա Ղևոնդի, ավագ լաբորանտ
4. Վարդանյան Աստղիկ Արտյոմի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013-2014 ուստարում ամբիոնում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնական ծրագրերի փոփոխմանը՝ մասնավորապես դրանց տալով պրակտիկ ուղղվածություն, ինչպես նաև աշխատանքների կազմակերպմանը, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների կատարմանը:

Կատարվել են զգալի աշխատանքներ՝ կապված ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման և վերահրատարակման հետ:

Ամբիոնի առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով զգալի աշխատանքներ են կատարվել ինչպես ուսումնական ձեռնարկներում, այնպես էլ դասագրքերում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները մտցնելու ուղղությամբ: Ֆակուլտետի հեռակա զարգացման ծրագրային խնդիրներով պայմանավորված՝ ամբողջությամբ վերանայվել է մագիստրոսական և ավարտական աշխատանքների թեմատիկան՝ դրանց տալով առավելագույնս պրակտիկ ուղղվածություն:

Ամբիոնում քննարկվել և հրատարակվել են հինգ մենագրություն, երկու ուսումնական ձեռնարկ, երկու ուսումնամեթոդական ձեռնարկ և 18 գիտական հոդված, 5 զեկուցումների թեզիս: Մեծ ուշադրություն է դարձվել նաև ուսումնական դատախաղերի և ՈՒԳԸ աշխատանքների կազմակերպմանը և պաշտպանությանը:

Ամբիոնը կազմակերպել է ուսանողների հանդիպում դատական համակարգի և իրավապահպան մարմինների աշխատակիցների հետ, ինչպես նաև վերջիններս քրեական դատավարության վիճահարույց հարցերի վերաբերյալ կարդացել են դասախոսություններ: Ամբիոնը մասնակցում է ՀՀ Սահմանադրական բարեփոխումների գործընթացին, մասնավորապես ներկայացվել է դատական իշխանության բարեփոխումների հայեցակարգային նախագիծ: Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին: Այդ կապակցությամբ կազմակերպվել են մի քանի գիտական կոնֆերանսներ և հանդիպումներ արտասահմանյան մասնագետների հետ:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների և հանդես եկել զեկույցներով, մասնավորապես.

1. *Ղազինյան Գ. Ս.,* «Հայաստանի իրավական համակարգը և իրավունքի աղբյուրները 4-9-րդ դարերում», «Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» (Երևան, 2013թ.):

2. *Ղազինյան Գ. Ս.,* «Необходимость внедрения в образовательные стандарти элементов антикоррупционного образования» զեկուցմամբ, «Կոռուպցիայի դեմ պայքարը. օրենսդրական բարեփոխումներ» խորագրով գիտաժողով, Մոսկվա:

3. *Ենգիբարյան Վ. Գ.,* «ՀՀ դատական համակարգի հիմնախնդիրները, կատարելագործման հեռանկարները» զեկուցմամբ, Դատավորների եվրոպական համաժողով (Մալթա, 2014թ., մայիս 13-15):

4. *Ենգիբարյան Վ. Գ.,* «ՀՀ-ում ՄիԵԴ-ի նախադեպային պրակտիկայի ուսուցման հիմնախնդիրները» զեկուցմամբ, «Help» տարեկան կոնֆերանս (Ստրասբուրգ, Ֆրանսիա, 2014թ., հունիսի 16-17):

5. *Енгибарян В. Г.,* “150 лет Уставу Уголовному судопроизводству России. современное состояние и перспективы развития Уголовно-процессуального законодательства”, Академия Управления МВД России, международная научно-практическая конференция, “Новые подходы судебной экспертизы по новому проекту ПК РА” (Մոսկվա, 2014թ., ապրիլի 9-10):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	4	2	2	18	5

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ավետիսյան Դ. Զ., Ենգիբարյան Վ. Գ., Սարգսյան Հ. Վ., Թորոսյան Գ. Գ., Ֆերոյան Ա. Գ.,* Արդարադատության հրատապ հիմնախնդիրներ: Դատական պատճառաբանում և դատական ակտի կազմում, «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, 378 էջ:
2. *Ավետիսյան Դ. Զ., Մելիքյան Ռ. Ն.,* Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 2, «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, 488 էջ:
3. *Енгибарян В. Г.,* Криминалистическая теория расследования массовых беспорядков, “Юрлитинформ”, Москва, 2014, 328 с.
4. *Енгибарян В. Г.,* Теория и практика расследования массовых беспорядков, LAP /LAMBERT Academic Pablishing/, Москва, 2014, 132 с.

Ուսումնական ձեռնարկ

1. *Ենգիբարյան Վ. Գ.,* Հանցագործությունների քննության մեթոդիկա, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 504 էջ:
2. *Ղազինյան Գ. Ս.,* Հասարակագիտություն, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2013, 96 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Դիլբանդյան Ս. Ա.,* Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն դասընթացի խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 102 էջ:
2. *Ավետիսյան Դ. Զ.,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու, գիրք իններորդ, «Անտարես» հրատ., Երևան, 2013, 360 էջ:

Հոդված

1. *Դիլբանդյան Ս. Ա.,* Անչափահաս կասկածյալների և մեղադրյալների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները, «Պետություն և իրավունք», No 2-3 (60-61), Երևան, 2013, էջ 10-16:

2. *Ավետիսյան Դ. Զ.,* Հիմնավոր կասկածը՝ որպես խափանման միջոցների կիրառման իրավաչափության պայման՝ ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի, «Դատական իշխանություն», թիվ 4-5, Երևան, 2014, էջ 14-21:
3. *Սուջյան Տ. Հ.,* Վճռաբեկության սահմանները հանրային և մասնավոր շահեր համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 249-268:
4. *Հարությունյան Ա. Գ.,* Փաստաբանական էթիկայի սկզբունքների իրացումը քրեական պաշտպանության ընթացքում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 282-296:
5. *Աղաբաբյան Ն. Խ.,* Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի միջազգային իրավական կարգավորումը, «Պետություն և իրավունք», թիվ 2-3 (60-61), Երևան, 2013, էջ 28-36:
6. *Աղաբաբյան Ն. Խ.*, Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթում ապացուցման ենթակա հանգամանքների առանձնահատկությունները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 297-314:
7. *Սարգսյան Հ. Վ.,* Դատական քննության սահմանները մրցակցության և ի պաշտոնե քննության մոդելներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 268-281:
8. *Енгибарян В. Г.*, Основные формы механизма (технологии) массовых беспорядков, “Образование. Наука”, No 06/13, Москва, 2013, стр. 45-48.
9. *Енгибарян В. Г.*, Криминалистическое значение первичных данных при расследовании массовых беспорядков, “Закон и право”, No 2/ 14, Москва, 2014, стр. 100-104.
10. *Енгибарян В. Г.,* Концепция судебных экспертиз по новому проекту УПК Республики Армении, “Образование. Наука”, No 01/14, Москва, 2014, с. 83-87.
11. *Енгибарян В. Г.,* Проблемы организации оперативно-розыскной деятельности при расследовании массовых беспорядков по законодательству Республики Армения, Вестник Московского университета МВД России, № 1, Москва, 2014, с. 94-97.
12. *Енгибарян В. Г.,* Особенности возбуждения уголовных дел о массовых беспорядков, Труды Академии управления МВД России, № 1 (29), Москва, 2014, с. 66-69.
13. *Енгибарян В. Г.,* Новые правовые подходы к расследованию массовых беспорядков по законодательству Республики Армения, “Закон и право”, № 3/14, Москва, 2014, с. 116-118.
14. *Енгибарян В. Г.,* Современное развитие криминалистических знаний о расследовании массовых беспорядков, “Закон и право”, № 4/14, Москва, 2014, с. 109-113.
15. *Енгибарян В. Г.,* Основы одержания и структуры криминалистической методики расследования преступлений, “Закон и право”, № 5/14, Москва, 2014, с. 122-126.
16. *Енгибарян В. Г.,* Проблемы классификации методик расследования массовых беспорядков, “Закон и право”, № 7/14, Москва, 2014, с. 128-130.
17. *Енгибарян В. Г., Аракелян С. В.,* Доктринальное понятие насилия по УК РА при совершении массовых беспорядков, “Образование. Наука. Научные кадры”, № 03/14, Москва, 2014, с. 63-66.
18. *Гукасян Г. О.,* Основные тенденции развития уголовно-процессуального законодательства Республики Армения, Сборник материалов международной научно-практической конференции, посвященной 80-летию создания юридического факультета ЕГУ, изд. “Тигран Мец”, Ереван, 2013, с. 289-299.

Զեկուցումների թեզիս

1. *Ղազինյան Գ. Ս.,* Հայաստանի իրավական համակարգը և իրավունքի աղբյուրները 4-9-րդ դարերում, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 307-308:
2. *Ենգիբարյան Վ. Գ.,* ՀՀ դատական համակարգի հիմնախնդիրները, կատարելագործման հեռանկարները, Դատավորների եվրոպական համաժողով, Մալթա, 2014, էջ 214-220:
3. *Ենգիբարյան Վ. Գ.,* ՀՀ-ում ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի ուսուցման հիմնախնդիրները, «Help» տարեկան կոնֆերանս, Ստրասբուրգ, 2014, էջ 184-187:
4. *Казинян Г. С.,* Необходимость внедрения в образовательные стандарти элементов антикоррупционного образования, материалы международной научной конференции “Правовые проблемы противодействия коррупции”, институт Законодательства и сравнительного правоведения при правительстве РФ, изд. “Юриспруденция”, Москва, с. 77-79.
5. *Енгибарян В. Г.,* 150 лет Уставу Уголовного судопроизводства России. современное состояние и перспективы развития Уголовно-процессуального законодательства, Академия Управления МВД России, международная научно-практическая конференция, “Новые подходы судебной экспертизы по новому проекту ПК РА”, Москва, 2014, с. 47-52.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Քոչարյան Վիգեն Վլադիմիրի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գևորգյան Կարեն Ալբերտի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Սարգսյան Արման Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Սարգսյան Լիաննա Լյուդվիգի, դասախոս
4. Սիմոնյան Անի Արամի, դասախոս

Համատեղողներ

1. Հովհաննիսյան Վոլոդյա Համբարձումի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ղազինյան Արթուր Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Գևորգյան Լևոն Սասունի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Թորոսյան Գոռ Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Մարուխյան Արմեն Վոլոդյայի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Սարգսյան Նորա Վաչագանի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Վարդանյան Վլադիմիր Դավթի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Սահակյան Սիրանուշ Ստեփանի, դասախոս
9. Վարդանյան Քնարիկ Հակոբի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Վարդանյան Քնարիկ Հակոբի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

«Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակում կատարված հետազոտությունները վերաբերում են ժամանակակից միջազգային իրավունքի արդիական ոլորտներից մեկին՝ Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրներին:

Թեմային առնչվող հիմնահարցերի ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվել են ինչպես միջազգային իրավունքի տեսության ենթատեքստում՝ օգտագործելով առկա դոկտրինալ աղբյուրները, այնպես էլ ուսումնասիրվել են միջազգային իրավական գործիքները և նրանց կիրառման միջազգային իրավական պրակտիկան, միջազգային հարաբերություններում առկա նախադեպերն ու դատական որոշումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան դատական ատյանների իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնախնդիրների լուծման համար, հետազոտության առարկա է հանդիսացել վերջին տասնամյակներում ձևավորված միջազգային դատական ատյանների գործունեությունը՝ կապված ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվության հարցերի հանգուցալուծման հետ:

Կատարված հետազոտության արդյունքները ամփոփվել են Հայոց ցեղասպանության միջազգային իրավական փաստաթղթերի վերաբերյալ առանձին ժողովածուում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին: 2013-2014 ուստարվա ընթացքում ամբիոնի անդամները մասնակցել են հետևյալ գիտաժողովներին.

1. ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի և ՀՀ Փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպված «Փախստականների իրավունք» թեմայով դասընթաց (Երևան, հունիս-հոկտեմբեր, 2013թ.):
2. Ասիական երկրների սահմանադրական դատարանների երկրորդ միջազգային կոնգրես (Ստամբուլ, Թուրքիա, ապրիլ, 2014թ.):
3. Արիզոնայի պետական համալսարանում «Զարգացման իրավունքի հիմնախնդիրները միջազգային իրավունքում» թեմայով զեկուցում (ԱՄՆ, Արիզոնա, հունվար, 2014թ.):
4. Բաց հասարակության հիմնադրամի «Academic Fellowship Program» կրթաթոշակային ծրագրի շրջանակներում «Ակադեմիական գրագրություն» թեմայով սեմինար-քննարկում (Երևան, դեկտեմբեր, 2013թ.):
5. Հայկական կարմիր խաչի ընկերության և Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի կողմից կազմակերպված միջազգային մարդասիրական իրավունքի մրցույթ (Ծաղկաձոր, նոյեմբեր, 2013թ.):
6. «Սահմանադրական արդարադատությունում կիրառվող միջազգային իրավական փաստաթղթերի իրավական ուժի հիմնախնդիրը» թեմայով զեկուցում (Բելգրադ, Սերբիա, հոկտեմբեր, 2013թ.):
7. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջազգային գիտագործնական

կոնֆերանս «Իրավական կարգավորման կատարելագործման արդի հիմնախնդիրների ազգային և միջազգային իրավական ասպեկտները» թեմայով (Դիլիջան, սեպտեմբեր, 2013թ.):

8. ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպված Ամառային դպրոց 3 (Երևան, սեպտեմբեր, 2013թ.):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	5	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Քոչարյան Վ. Վ.,* Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում /Ժողովածու/, Հեղինակային հրատարակչություն, Երևան, 2014, 208 էջ:

Հոդված

1. *Վարդանյան Ք. Հ.,* Փախստականների պաշտպանության և մարդու իրավունքների հարաբերակցությունը միջազգային իրավունքում, «Դատական իշխանություն», թիվ 6 (180), Երևան, 2014, էջ 26-35:
2. *Վարդանյան Ք. Հ.*, Փախստականի հասկացության սահմանման արդի հիմնախնդիրները, «Պետություն և իրավունք», թիվ 1 (63), Երևան, 2014, էջ 133-145:
3. *Վարդանյան Ք. Հ.,* Փախստականների ինտեգրման իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 315-334:
4. *Քոչարյան Վ. Վ., Մեղրյան Ջ. Շ.,* Ժողովուրդների ինքնորոշման և ուժի չգործադրման միջազգային իրավական սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրը, «Օրինականություն», N 80, Երևան, 2013, էջ 53-58:
5. *Кочарян В. В.,* Значение практики Европейского суда по правам человека в контексте защиты прав национальных меньшиств, «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն», 141.3, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 56-65:

Զեկուցումների թեզիս

1. *Кочарян В. В.,* Проблемы формирования европейских стандартов в области борьбы с дискриминацией и нетерпимостью, Современные проблемы совершенствования правового регулирования: национальные и международные правовые аспекты, Сборник материалов международной научно-практической конференции, посвященной 80-летию создания юридического факультета ЕГУ, Изд. дом “Тигран Мец”, Ереван, 2013, էջ 145-159.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ *Իսկոյան Աիդա Բագրատի, իրավ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մարկոսյան Տիգրան Արթուրի, իրավ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
2. Ալումյան Հայկ Ռուբենի, կրտսեր գիտաշխատող
3. Ավագյան Նարինե Աշոտի, կրտսեր գիտաշխատող
4. Հախվերդյան Հեղինե Սոկրատի, կրտսեր գիտաշխատող
5. Հայրապետյան Արփինե Արծրունու, կրտսեր գիտաշխատող
6. Պետրոսյանց Լաուրա Տիգրանի, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են գիտահետազոտական աշխատանքներ ՀՀ էկոլոգիական իրավունքի, ԵՄ էկոլոգիական իրավունքի և ՀՀ հողային իրավունքի արդի որոշ հիմնախնդիրների ուղղությամբ:

Պատրաստվում են երկու թեկնածուական ատենախոսություններ «ՀՀ-ում էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական ասպեկտները» և «Ընդերքի օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը ՀՀ-ում» թեմաներով:

Աշխատանքներ են կատարվել նաև տարբեր շահագրգիռ խմբերի (քաղաքացիական ծառայողներ, դատավորներ և դատավորի պաշտոնի թեկնածուներ, ՀՀ պաշտպանության նախարարության սպայական կազմ, հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկություններ, ՀԿ-ներ և այլն) համար անցկացվող դասընթացները համապատասխան նյութերով ապահովելու ուղղությամբ:

Կենտրոնի աշխատակիցները ներգրավված են շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտին վերաբերող տարբեր իրավական ակտերի մշակման գործընթացներին ինչպես աշխատանքային խմբերի կազմում, այնպես էլ դիտողությունների և առաջարկների մշակման եղանակով: ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ինչպես նաև ՀՀ ազգային ժողովի հետ համագործակցության շրջանակներում անցկացվել են մի շարք իրավական ակտերի հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

2013-2014 ուստարում անցկացվել են շուրջ 10 դասախոսություններ էկոլոգիական իրավունքի տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ, կազմակերպվել է նաև միջբուհական ուսանողական գիտաժողով՝ «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն. օգուտներ և մարտահրավերներ» խորագրով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	6	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Искоян А. Б. и др.,* Антология интерэкоправа: учебное пособие, тематический каталог, ссылки на скачивание полных текстов, инсточниковедческие обзоры, интервью и статьи, 2-е изд., М.-Уфа: МИРмпОС, Центр интерэкоправа ЕврАзНИИПП, 2014, 678 стр.

Հոդված

1. *Հախվերդյան Հ. Հ.,* Պարտադիր էկոլոգիական ապահովագրության կիրառման որոշ հարցերի շուրջ, «Պետություն և իրավունք», թիվ 4 (62), Երևան, 2013, էջ 95-110:
2. *Հախվերդյան Հ. Հ.,* Պարտադիր էկոլոգիական ապահովագրության համակարգ ՀՀ-ում. իրավական կարգավորման որոշ խնդիրներ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 111-123:
3. *Искоян А. Б.,* Роль права в охране окружающей природной среды и участие общественности. Опыт США, “Банбер ереванского университета”, N 3 (139), Ереван, 2013, стр. 46-53.
4. *Искоян А. Б.,* Процессуальная правосубьектность общественных организаций (Конституционно-правовой анализ), Современные проблемы совершенствования правового регулирования: национальные и международные правовые аспекты, Сборник материалов международной научно-практической конференции, посвященной 80-летию создания юридического факультета Ереванского государственного университета, “Тигран Мец”, Ереван, 2013, стр. 33-50.
5. *Iskoyan A. B., Movsisyan G. S., Hakhverdyan H. S., Petrossiantz L. T.,* Risk-Based Environmental Control and Locus Standi Jurisprudence, IUCN E-Journal, Issue 4, Ottawa, 2013, pp. 43-49.
6. *Iskoyan A. B., Hakhverdyan H. S., Petrossiantz L. T., Hovsepyan M. V.,* New Draft Legislation of RA on Use of GMOs, IUCN E-Journal, Issue 6, Ottawa, 2014, pp. 38-43.

Զեկուցումների թեզիս

1. *Hakhverdyan H. S.,* “Bona Fides” Principle in Environmental Law: a New Dimension for Purely Civil Category, USG Alumni and Scholars Conference: “Integrity in Action: Education, Social Accountability and Development” Abstracts and Articles, “Edit Print” pub., Yerevan, pp. 179-180.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալներ՝ *Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ*

Սեմերջյան Հենրիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր՝	**Մասնագիտություններ՝**
020200	Կենսաբանություն
021200	Կենսաֆիզիկա
021300	Կենսաքիմիա
021500	Կենսաինֆորմատիկա

Մասնագիտացումներ՝	Գենետիկա և բջջաբանություն
(մագիստրոսական ծրագրեր)	Էկոլոգիա և բնության պահպանություն
	Կիրառական կենսաբանություն
	Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա
	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա
	Կենսաբազմազանության հետազոտություն և պահպանում
	Կենսաֆիզիկա
	Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա
	Կենսաինֆորմատիկա

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ

1. Դավթյան Միսակ Արշամի
2. Օսիպյան Լիա Լևոնի
3. Գևորգյան Էմիլ Սոսի (թղթակից անդամ)
4. Թռչունյան Արմեն Համբարձումի (թղթակից անդամ)
5. Հարությունյան Ռուբեն Միքայելի (թղթակից անդամ)

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Դավթյան Միսակ Արշամի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
2. Փանոսյան Գերասիմ Հարությունի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
3. Օսիպյան Լիա Լևոնի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
4. Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
5. Թռչունյան Արմեն Համբարձումի, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 485*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Կենսաբանություն	7	36	10	32	10	10	12	36
Կենսաֆիզիկա	4	26	3	11	-	-	8	6
Կենսաքիմիա	4	31	6	27	-	-	9	35
Կենսաինֆորմատիկա	3	10	4	14	-	-	5	11
Ընդամենը	**18**	**103**	**23**	**84**	**10**	**10**	**34**	**88**
Մագիստրատուրա								
Կենսաբանություն	6	14	6	45	-	-	-	-
Կենսաֆիզիկա	3	2	3	2	-	-	-	-
Կենսաքիմիա	3	11	4	7	-	-	-	-
Կենսաինֆորմատիկա	1	4	1	3	-	-	-	-
Ընդամենը	**13**	**31**	**14**	**57**	-	-	-	-

Հեռակա ուսուցում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 125*				
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս
Բակալավրիատ					
Կենսաբանություն	8	33	19	30	22
Մագիստրատուրա					
Կիրառական կենսաբ.	5	8	-	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
1-ին	43	-	24	-	44
2-րդ	42	-	16	2	62
3-րդ	20	2	2	1	80
4-րդ	48	-	9	9	81
Կենսաֆիզիկա					
1-ին	30	-	15	-	50
2-րդ	14	-	5	-	64
3-րդ	-	-	-	-	-
4-րդ	14	-	4	4	71

Կենսաքիմիա					
1-ին	35	-	23	-	34
2-րդ	33	-	5	1	85
3-րդ	-	-	-	-	-
4-րդ	44	-	4	8	91
Կենսաինֆորմատիկա					
1-ին	13	1	5	-	54
2-րդ	18	-	5	1	72
3-րդ	-	-	-	-	-
4-րդ	16	-	-	3	100
Ընդամենը	**370**	**3**	**117**	**29**	68
Մագիստրատուրա					
Կենսաբանություն					
1-ին	20	1	3	6	80
2-րդ	51	-	1	28	98
Կենսաֆիզիկա					
1-ին	5	-	-	2	100
2-րդ	5	-	-	3	100
Կենսաքիմիա					
1-ին	14	-	-	2	100
2-րդ	11	-	-	3	100
Կենսաինֆորմատիկա					
1-ին	5	-	-	5	100
2-րդ	4	-	-	-	100
Ընդամենը	**115**	**1**	**4**	**49**	96

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
1-ին	43	-	18	2	58
2-րդ	41	-	14	1	66
3-րդ	21	-	3	1	86
Կենսաֆիզիկա					
1-ին	30	-	11	-	63
2-րդ	12	-	4	-	67
3-րդ	-	-	-	-	-
Կենսաքիմիա					
1-ին	35	-	19	-	46
2-րդ	33	-	2	5	94
3-րդ	-	-	-	-	-
Կենսաինֆորմատիկա					
1-ին	11	-	5	-	55
2-րդ	17	-	5	-	71
3-րդ	-	-	-	-	-
Ընդամենը	**243**	**-**	**81**	**9**	67

Մագիստրատուրա					
Կենսաբանություն 1-ին	20	-	1	11	95
Կենսաֆիզիկա 1-ին	5	-	-	2	100
Կենսաքիմիա 1-ին	12	-	-	9	100
Կենսաինֆորմատիկա 1-ին	5	-	-	3	100
Ընդամենը	42	-	1	25	98

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 213 (46), այդ թվում նախորդ տարիներից՝ 1*		
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)		մագիստրատուրա
	առկա	հեռակա	
Կենսաբանություն	47 (5)	22 (1)	51 (25)
Կենսաֆիզիկա	14 (2)	-	5 (2)
Կենսաքիմիա	44 (5)	-	11 (4)
Կենսաինֆորմատիկա	16 (1)	-	3 (1)
Ընդամենը	**121 (13)**	**22 (1)**	**70 (32)**

2013-2014 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	**Մենագրություն**	**Ուսումնական ձեռնարկ**	**Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ**	**Հոդված**	**Զեկուցումների թեզիս**
3	**3**	**3**	**11**	**161**	**56**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 8

Տ. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գրիգորյան Վիլենա Հրանտի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Մինասյան Սիրուշ Մինասի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ադամյան Ծովինար Իշխանի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ադամյան Նոնա Յուրիկի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Գևորգյան Էմմա Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

6. Սահակյան Սուսաննա Գարեգինի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Սարգսյան Նելլի Վազգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Աղաբաբյան Հասմիկ Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Առաքելյան Անահիտ Նորայրի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ղազարյան Աշխեն Ղազարի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Հովհաննիսյան Կարինե Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Աբրահամյան Հերմինե Տիգրանի, ավագ լաբորանտ
4. Բաղդասարյան Կարինե Վահանի, ավագ լաբորանտ
5. Զուրաբյան Քրիստինե Սերժիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

«Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավորման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում» (ղեկ.՝ Մինասյան Ս. Մ.) թեմայի շրջանակներում հաշվետու ուստարում, ըստ ներկայացված գիտական պլանի, կատարվել են ներքոբերյալ հետազոտությունները:

Ալբինոս ցեղի առնետների վրա ուսումնասիրվել է ստորին անդաստակային կորիզի (ՍԱԿ) նեյրոնային ակտիվությունը ենթատեսաթմբի հարփորոքային և վերտեսողական կորիզների բարձրահաճախ էլեկտրական խթանման, թրթռահարման և PRP-1-ի կիրառման պայմաններում:

Համակարգչային մաթեմատիկական մշակված ծրագրերի կիրառմամբ բացահայտվել է, որ էլեկտրական խթանմանը ՍԱԿ-ի նեյրոններում գրանցվել է տետանիկ պոտենցիացիա, իսկ թրթռահարման պայմաններում՝ գլխավորապես հետտետանիկ պոտենցիացիա: PRP-1-ի ներարկման պայմաններում գրանցվել են դրդման և արգելակման հավասարակշռված ռեակցիաներ, նյարդամիջնորդանյութերի ակտիվության հարմարողական փոփոխություններ ու ՍԱԿ-ի նեյրոնների ապրելունակության բարձրացում, թթվային ֆոսֆատազի ակտիվության բարձրացում երկարատև թրթռահարման պայմաններում:

Հետազոտությունների երկրորդ տարբերակում ուսումնասիրվել է գլխուղեղի տարբեր գոյացությունների (կեղևի զգայաշարժիչ շրջան, ենթատեսաթմբի հետին (NHP) և հարմիջային (HDM) կորիզների նեյրոնային ակտիվության վրա կարմիր երեքնուկի ազդեցությունը թթվածնաքաղցի դինամիկայում: Փորձարարական տվյալները վկայում են, որ թթվածնաքաղցի ազդեցության դինամիկայում (I փուլ՝ 4000-5000 մ և II փուլ՝ 7500-8000 մ) առավել շուտ արգելակվում է կեղևի զգայաշարժիչ շրջանի նեյրոնների ազդակային ակտիվությունը: Ենթատեսաթմբի NHP և HDM կորիզների նեյրոնային ակտիվության անկում հիմնականում դիտվել է թթվածնաքաղցի ծանր փուլում (7500-8000 մ): Ինչ վերաբերում է կոճղեզային շնչառական կենտրոնի նեյրոններին, ապա ներշնչական նեյրոններն առավել կայուն են թթվածնաքաղցի նկատմամբ արտաշնչական նեյրոնների համեմատությամբ:

Երեքնուկի օգտագործումը նշված բոլոր գոյացությունների ազդակային ակտիվության վրա թողնում է շտկող ազդեցություն: Դրական ազդեցությունն առավել դրսևորվել է կեղևի նեյրոններում թթվածնաքաղցի I և II փուլերում: Ենթատեսաթմբի կորիզների և շնչառական կենտրոնի նեյրոնային ակտիվության վրա երեքնուկի դրական ազդեցությունն առավել նկատելի է թթվածնաքաղցի ծանր՝ 7500-

8000 մ փուլում: Ստացված արդյունքները վկայում են, որ երեքնուկը հակաթթվածնաքաղցային ազդեցություն է թողնում գլխուղեղի ուսումնասիրված գոյացությունների վրա:

Հետազոտությունների հաջորդ տարբերակում ուսումնասիրվել է ֆիզիկական ծանրաբեռնվածության ազդեցությունը վելոէրգոմետրի (3-րդ մակարդակի ուժգնությամբ) վրա աշխատելուց հետո և վերականգնողական շրջանի 15-րդ րոպեին: Սրտի ռիթմը կարգավորող մեխանիզմների գնահատման համար հաշվարկվել են սրտի ռիթմի տատանողականության սպեկտրային, վիճակագրական և հիստոգրաֆիկական ցուցանիշները, ինչպես նաև գրանցվել են հոգեֆիզիոլոգիական վիճակը բնութագրող թեստեր: Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո դիտվել են ուսանողների անհանգստության մակարդակի իջեցում և տրամադրության ցուցանիշի բարձրացում, կենտրոնական հեմոդինամիկայի և սրտի կարգավորման սիմպաթիկ օղակի ինտեգրալային և սպեկտրային ցուցանիշների արտահայտված աճ: Նկատված տեղաշարժերը պահպանվել են վերականգնման շրջանի 15-րդ րոպեին: Հետծանրաբեռնվածության շրջանում ուսումնասիրված ցուցանիշների դիտված համեմատաբար բարձր մակարդակը վկայում է հետազոտվող ուսանողների օրգանիզմի գործառական ցածր հնարավորությունների մասին, որոնք պայմանավորված են հոգեհուզական լարվածությամբ, հոգնածությամբ և երկարատև թերշարժունությամբ:

Միաժամանակ ուսումնասիրվել են նաև Ա. Շիրակացու անվան կրթահամալիրի XI դասարանում սովորող աշակերտների հեմոդինամիկայի և սրտի ռիթմի կարգավորման հիմնական ցուցանիշները հոգեհուզական լարվածության պայմաններում: Հետազոտությունները կատարվել են համակարգչային հատուկ մշակված ծրագրերով:

Կիրառվել են նաև հոգնածության մակարդակը գնահատող հոգեբանական թեստեր: Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ քննական սթրեսի պայմաններում գրանցվում են սրտի կծկումների հաճախության, արյան զարկերակային սիստոլային և դիաստոլային ճնշումների, արյան սիստոլային և րոպեական ծավալների, ինչպես նաև լարվածության ցուցչի, Am₀-ի, ՌՎՑ-ի, ԿԳԱՑ-ի, VLF-ի ու այլ ցուցանիշների փոփոխություններ, որոնք վկայում են քննական սթրեսի պայմաններում աշակերտների լարվածության և հոգնածության գործընթացների զարգացման մասին:

Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվել են № 72 մանկապարտեզում նախադպրոցական տարիքի գրիպով և անգինայով հաճախակի հիվանդացող երեխաների (փորձնական խումբ) արյան սիստոլային և դիաստոլային ճնշումներն ու սրտի կծկումների հաճախությունը: Փորձնական խմբի հետազոտվողների 45,5%-ի մոտ սիստոլային զարկերակային ճնշումը գերազանցում է տարիքային նորմայի սահմանները, իսկ 55%-ի մոտ դիտվել է դիաստոլային զարկերակային ճնշման ցուցանիշների շեղում նորմայից: Դիտվել է նաև սրտի կծկումների հաճախության ցուցանիշների աճ առողջ երեխաների (ստուգիչ խումբ) համեմատությամբ:

Որպես գրիպի կանխարգելիչ փորձնական խմբի երեխաների քթանցքերում երկարատև կաթեցվել է 0,9% NaCl-ի լուծույթի 3-4 կաթիլ, իսկ անգինայով հիվանդացողների բերանը ողողվել է լորենու ծաղիկներից պատրաստված թուրմով և «Ակվալորով»: Ստացված արդյունքները գտնվում են մշակման փուլում:

Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվել է 30 օր (օրական 2 ժամ) աղմկահարված ճագարների արյան թթվածնային տարողությունը (ըստ շրջանառու արյան հեմոգլոբինի պարունակության և էրիթրոցիտների քանակի) մատուտակի արմատներով կերակրելու դեպքում: Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ աղմկահարված ճագարների մոտ նկատվում է սակավարյունություն, որի ժամանակ 23%-ով նվազում են արյան էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակը ու թթվածնային տարողությունը: Աղմուկի և մատուտակի համակցված ազդեցության պայմաններում ավելանում են էրիթրոցիտների ընդհանուր քանակը, հեմոգլոբինի պարունակությունը, որի արդյունքում թթվածնային տարողությունն ավելանում է 22,8%-ով: Ստացված արդյունքներից հետևում է, որ

երկարատև աղմուկի ազդեցության պայմաններում մատուտակի արմատներով կերակրումը զգալիորեն բարելավում է աղմկահարված ճագարների արյան թթվածնային տարողությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում ուսումնասիրվել է նաև ճագարների արյան գլյուկոզի պարունակության և պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության փոփոխությունների բնույթը մեղրախոտի և իմմոբիլիզացիոն սթրեսի ազդեցության պայմաններում: Կատարված հետազոտությունների արդյունքներից պարզվել է, որ սթրեսի ազդեցության սկզբնական շրջանում դիտվում է արյան գլյուկոզի պարունակության ավելացում, իսկ երկարատև ազդեցության դեպքում՝ արտահայտված հիպոգլիկեմիա: Սթրեսի ենթարկված կենդանիների մոտ պրոլինի կենսասինթեզի ակտիվության բարձրացում դիտվել է սրտում, ուղեղում և երիկամներում: Մեղրախոտի և իմմոբիլիզացիոն սթրեսի համակցված ազդեցության դեպքում մեղրախոտում պարունակվող գլյուկոզիդները վերականգնում են թիրախ բջիջների ինսուլինառեզիստենտությունը, որի արդյունքում վերականգնվում է գլյուկոզի բնականոն մակարդակը:

Հետազոտությունների հաջորդ տարբերակում ուսումնասիրվել է պոլիվալենտ հակաթույնի կիրառման արդյունավետ ազդեցությունը գյուրզայի թույնի ազդեցությամբ առաջացած արյան ձևաբանական ցուցանիշների շեղումների նկատմամբ: Փորձերի արդյունքները վկայում են, որ բազմավալենտ հակաթույնի կիրառումը որոշակիորեն մեղմացնում է թույնի ազդեցությունը, սակայն նրա արդյունավետությունը այնքան էլ մեծ չէ, որը, ըստ երևույթին, պայմանավորված է տվյալ հակաթույնում համապատասխան հակամարմինների բացակայությամբ:

Առանձին տարբերակով ուսումնասիրվել է ԷՈՒԳ-ի ցուցանիշների փոփոխությունների բնույթը մտածողական գործունեության ընթացքում: Հետազոտության արդյունքներից պարզվել է, որ կանանց խմբում կոնվերգենտ մտածողության ժամանակ դիտվում է հիմնականում ձախ կիսագնդային գերիշխում, իսկ տղամարդկանց մոտ՝ աջ կիսագնդային: Ստեղծագործական գործընթացից հետո և՛ կանանց, և՛ տղամարդկանց խմբում դիտվել է միջկիսագնդային տարբերություն երկու հետազոտվող բաղադրիչներով: Ինչպես աջ, այնպես էլ ձախ կիսագնդի ազդեցության փաստը վկայում է այն մասին, որ ստեղծագործական գործընթացը իրականանում է ուղեղի երկու կիսագնդերի ակտիվ մասնակցության շնորհիվ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	17	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Ադամյան Ծ. Ի., Գևորգյան Է. Ս., Ադամյան Ն. Յու., Սահակյան Ս. Գ.,* Առաջադրանքներ և իրավիճակային խնդիրներ ֆիզիոլոգիայից, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 176 էջ:

Հոդված

1. *Ադամյան Ծ. Ի., Գևորգյան Է. Ս., Հովհաննիսյան Լ. Է., Ասլանյան Ա. Վ., Քսաջիկյան Ն. Ն.,* Սակավաշարժունության ազդեցությունը լեյկոպոեզի ցուցանիշների վրա, «Կենսաբանական հանդես», LXV, թ. 4, 2013, էջ 26-30:

2. *Գևորգյան Է. Ս., Մինասյան Ս. Մ.,* Ուսանողների սիրտ-անոթային համակարգի ակտիվության և ֆիզիկական աշխատունակության հարաբերական կապերը, «Հայաստանի բժշկագիտություն», LIV, N 1, 2014, էջ 107-115:
3. *Մինասյան Ս. Մ., Գևորգյան Է. Ս., Աբրահամյան Հ. Տ.,* Ուսանողների կենտրոնական հեմոդինամիկայի ռեակցիայի առանձնահատկությունները վելոէրգոմետրիական ծանրաբեռնվածության պայմաններում, «Կենսաբանական հանդես», LXVI, թ. 1, 2014, էջ 6-11:
4. *Ղուկասյան Լ. Է., Մինասյան Ս. Մ., Գևորգյան Է. Ս., Ադամյան Ծ. Ի.,* Աշակերտների սիրտ-անոթային համակարգի հարմարողական մեխանիզմները ոչ ավանդական ռեժիմով դասավանդվող դպրոցներում, «Բժշկություն, Գիտություն, Կրթություն», թ. 15, 2013, էջ 124-128:
5. *Ղուկասյան Լ. Է., Մինասյան Ս. Մ., Գևորգյան Է. Ս., Քսաջիկյան Ն. Ն.,* Աշակերտների հեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխություններն ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում, «Բժշկություն, Գիտություն, Կրթություն», թ. 15, 2013, էջ 113-117:
6. *Քսաջիկյան Ն. Ն., Մինասյան Ս. Մ., Գևորգյան Է. Ս., Բաբայան Բ. Ա.,* Տարբերակված ուսուցմամբ դպրոցների աշակերտների հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները քննաշրջանի ընթացքում, «Բժշկություն, Գիտություն, Կրթություն», թ. 15, 2013, էջ 108-112:
7. *Геворкян Э. С., Минасян С. М., Адамян Ц. И, Абраамян Э. Т.,* Роль музыки в процессе адаптации студентов к экзаменационному стрессу, ж. “Валеология”, 2, Ростов-на-Дону, 2013, с. 76-85.
8. *Геворкян Э. С., Минасян С. М., Адамян Ц. И., Абраамян Э. Т.,* Корригирующее влияние музыки на функциональное состояние студентов, “Гигиена и Санитария”, 3, Москва, 2013, с. 85-89.
9. *Геворкян Э. С., Минасян С. М., Абраамян Э. Т.,* Изучение степени толерантности сердечно-сосудистой системы студентов к велоэргометрической нагрузке, ж. “Валеология”, 3, Ростов-на-Дону, 2013, с. 61-67.
10. *Геворкян Э. С., Ксаджикян Н. Н., Адамян Ц. И.,* Влияние ароматерапии на функциональное состояние студентов после физической нагрузки, II Всероссийская научная Интернет-конф. с межд. уч., “Спорт и здоровье. Новые подходы и перспективы”, Казань, ноябрь, 2013, с. 23-24.
11. *Минасян С. М., Геворкян Э. С.,* Электрическая активность коры головного мозга студентов при экзаменационном стрессе, “Мед. наука Армении”, LIII, N 4, 2013, с. 146-154.
12. *Саркисян С. Г.,* Изучение пластичности вестибулярного ядерного комплекса в условиях вибрации, делабиринтации и протекторного эффекта гипоталамического нейропептида, Автореферат докт. дисс., 2013, с. 47.
13. *Туманян Л. Р., Никоян А. А., Саркисян С. Г., Давтян М. А.*, Активность аргиназы различных органов крыс, подвергнутых правосторонней лабиринтэктомии, Биолог. журн. Армении, 4 (65), 2013, с. 35-38.
14. *Карапетян М. А., Адамян Н. Ю.,* Влияние раздражения некоторых ядер гипоталамуса на импульсную активность дыхательных нейронов при гипоксии, Авиокос. и эколог. Медицина, т. 48, N 2, 2014, с. 30-38.
15. *Adamyan Ts. I., Gevorkyan E. S., Kalantaryan V. P.,* The impact of vibration and electromagnetic fields on activity changes of proline biosynthesis enzymes. BioEM 2013 Joint Meeting of The Bioelectromagnetics Society and the European BioElectromagnetics Association Thessaloniki, Greece, 2013, p. 63.
16. *Gevorkyan E. S., Ksadjikyan N. N., Adamyan Ts. I.,* Correction of functional status of students with pine oil durind physical exertion, Third jubilee internacional conference of Neuroscience and biological psychiatry, Yerevan, 2013, p. 50-51.
17. *Minasyan S. M., Abrahamyan H. T.,* Changes of heart rate spectral parameters in condition of examination stress and the influence of music therapy Third jubilee international conference of Neuroscience and Biological Psychiatry, 2013, p. 66-67.

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Կառլեն Վաղարշակի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Կարաքեշիշյան Հենրիետա Մաթևոսի, գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Մովսեսյան Հասմիկ Սեդրակի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Վասիլյան Անահիտ Վելլերի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Համբարյան Լուսինե Ռաֆայելի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Ղազարյան Կարեն Արամայիսի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Գրիգորյան Կարեն Կառլենի, դասախոս

Համատեղողներ

1. Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Փարսադանյան Գայանե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Վարագյան Վահագն Մանվելի, կենս. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ (համատեղության կարգով)
2. Ղարիբյան Նարինե Գրիգորի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Փարսադանյան Գայանե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
4. Զաքարյան Հասմիկ Ներսեսի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. ՀՀ Սյունիքի մարզի հանքարդյունաբերական շրջանների էկոլոգիապես խոցելի հողատարածքների աղտոտվածության գնահատումը կենսաբանական մեթոդներով և բարելավման ուղիները (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Կ. Վ.
2. Արենի քարանձավային համալիրում հայտնաբերված հնագույն խաղողի մնացորդների համեմատական հնէագենետիկական ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Հովհաննիսյան Ն. Ա.

Թեմա 1. Ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են ՀՀ Սյունիքի մարզի հանքարդյունաբերական շրջանների էկոլոգիապես խոցելի տարածքների հողերի ֆիզիկաքիմիական և որոշ կենսաբանական պարամետրեր: Ինչպես նաև որոշվել է հողերի ծանր մետաղներով աղտոտման աստիճանը, բացահայտվել են աղտոտման հիմնական աղբյուրները, և ուսումնասիրվել է ծանր մետաղներով հողերի աղտոտվածության ազդեցությունը հողի որակը պայմանավորող հիմնական ցուցանիշների՝ ֆերմենտային ակտիվության մակարդակի և մանրէների կենսազանգվածի վրա:

Թեմա 2. Ծրագրի հիմնական նպատակն է ուսումնասիրել Արենի-1 քարանձավում հայտնաբերված հնագույն խաղողի մնացորդները՝ դրանք համեմատելով Հայաստանում առկա խաղողի սորտերի բազմազանության հետ՝ կիրառելով գենետիկական և հնագիտական արդի մեթոդները: Կատարված աշխատանքների արդյունքում 22 միկրոսատելիտային ԴՆԹ մարկերների և 48 SNP մարկերների կիրառմամբ գենետիկորեն ուսումնասիրվել են Հայաստանի խաղողների 40 սորտ, բացահայտվել են դրանց համանունները և կատարվել են համեմատական գենետիկական վերլուծություններ՝ համեմատելով ստացված տվյալները միջազգային գենետիկական բանկերի հետ: Իրականացվել է Արենի քարանձավային համալիրից հայտնաբերված խաղողի հնագույն մնացորդների իդենտիֆիկացում և դրանց նկարագրման աշխատանքներ: Խաղողի հնագույն մնացորդներից անջատվել է գենոմային ԴՆԹ-ն, և ներկայումս իրականացվում են դրա մանրամասն գենետիկական ուսումնասիրությունները, որոնք հետագայում պետք է համեմատվեն ժամանակակից խաղողների արդեն իսկ ստեղծված բազայի հետ:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. East-West Collaboration for Grapevine Diversity Exploration and Mobilization of Adaptive Traits for Breeding. COST Action FA1003.	Osvaldo Faila (University of Milano)
2. Evaluation of soil pollution level of ecologically vulnerable areas of mining territories in Lori Marz of the Republic of Armenia by biological methods and suggestion of ways for their improvement. NFSAT YSSP-13-47.	Ghazaryan K. A.

Թեմա 1. Ծրագրի շրջանակում իրականացվել է Հայաստանի խաղողների տեխնիկական և հազվադեպ հանդիպող աբորիգեն սորտերի ամպելոգրաֆիկ և գենետիկական ուսումնասիրություն:

Թեմա 2. Ծրագրի շրջանակում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի հանքարդյունաբերական շրջանների էկոլոգիապես խոցելի տարածքների հողերի աղտոտվածության (հիմնականում՝ ծանր մետաղներով/մետաղանմաններով) աստիճանի գնահատում Igeo, Cf, Cd, PLI ինդեքսների միջոցով և կենսաինդիկացիոն մեթոդի օգնությամբ, ինչպես նաև հողերի ֆրեմենտատիվ ակտիվության և մանրէաբանական ընդհանուր կենսազանգվածի ուսումնասիրություններ:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

«Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի ստեղծում» (Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ) (ղեկ.՝ Հովհաննիսյան Ն. Ա.) ծրագրի նպատակն է ԵՊՀ-ում ստեղծել արդյունավետորեն գործող կենտրոն, որը կխթանի ԵՊՀ-ի, այլ բուհերի, գործարար և գիտական ոլորտների ազգային և միջազգային համագործակցությունը, կրթական, գիտահետազոտական գործունեության և նորարարությունների զարգացումը կիրառական կենսաբանության արդիական և մեծ պահանջարկ ունեցող ոլորտներում: Ծրագրի շրջանակներում մշակվել է և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի կանոնադրությունը: Արդիական և Հայաստանում եզակի սարքավորումներով վերազինվում են կենտրոնի

լաբորատորիաները: Արդեն իսկ աշխատանքային վիճակում են սկանավորող էլեկտրոնային մանրադիտակը և ինֆրակարմիր ճառագայթների տիրույթում աշխատող սպեկտրոսկոպը: Մշակման փուլում են մագիստրոսական ծրագրերի նոր կառուցվածքը և բովանդակությունը՝ արտադրական կամ հետազոտական ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

Առաջին անգամ իրականացվել են Աղստև գետի և դրա ջրահավաք ավազանի տարածքում համալիր էկոլոգիական ուսումնասիրություններ, որոնց հիման վրա բացահայտվել են կենսաերկրացենոզների աղտոտման հիմնական աղբյուրները, և տրվել է տարածքի էկոլոգիական վիճակի գնահատականը:

- Իրականացվել են Աղստև գետի ու դրա Գետիկ վտակի ջրերի ջրաֆիզիկական, ջրաքիմիական և ջրակենսաբանական տարբեր ցուցանիշների ուսումնասիրություններ, վերլուծվել են դրանց փոփոխությունների օրինաչափություններն ըստ տարիների, սեզոնների և գետերի հոսքի, և տրվել է ջրերի որակն ըստ ուսումնասիրված որոշ ցուցանիշների:
- Աղստև գետի ավազանում ոռոգվող հողերի ֆիզիկական, ֆիզիկաքիմիական, քիմիական և ագրոքիմիական հատկությունների վրա ավազանի ջրերի ունեցած ազդեցության հետևանքները պարզելու համար որոշել ենք դրանց ոռոգելի հատկությունները: Նմանատիպ ուսումնասիրություններն ունեն կարևոր բնապահպանական և տնտեսական նշանակություն:
- Աղստև գետի և դրա Գետիկ վտակի ջրերում առաջին անգամ ուսումնասիրվել է ընդհանուր (աերոբ) և E. coli բակտերիաների զարգացման սեզոնային դինամիկան ըստ գետերի հոսքի:

Մեր կողմից կատարված հաշվարկների և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի մարզային գործակալության տվյալների հիման վրա բացահայտել ենք մարդու կենցաղային և գյուղատնտեսական գործունեության, մասնավորապես անասնապահության ազդեցության չափն Աղստև գետի ջրահավաք ավազանների կենսաերկրացենոզների վրա:

Ամբիոնում պաշտպանվել է չորս ատենախոսություն.

1. Մոհամադ Գոդարզինիկ՝ «Սնդիկով աղտոտված հողերի և նստվածքների էկոլոգիական գնահատականը ու վերականգնման ուղիները» (Գ.00.11, գիտական ղեկավար՝ Կառլեն Գրիգորյան),

2. Ալի Բեհմանեշ՝ «Բաբուլռուդ գետի (Իրան) էկոլոգիական բնութագիրը» (Գ.00.11, գիտական ղեկավար՝Կառլեն Գրիգորյան),

3. Գրիգորյան Կարինե Աշիկի՝ «ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի շրջակա միջավայրի և Արփի լճի վրա մարդածին գործոնի ազդեցության գնահատականը» (Գ.00.11, գիտական ղեկավար՝ Կառլեն Գրիգորյան),

4. Խաչատրյան Սոնա Ժիրայրի՝ «Աղստև գետի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական բնութագիրը» (Գ.00.11, գիտական ղեկավար՝ Կառլեն Գրիգորյան):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	4	15	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Անտոնյան Ա. Պ., Գրիգորյան Կ. Վ., Եսայան Ա. Հ., Փարսադանյան Գ. Ա. և ուրիշներ,* Կենսաբանություն. 2013թ. Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 4, «Աստղիկ» գրատուն, Երևան, 2014, 346 էջ:
2. *Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Հ., Հովհաննիսյան Ն. Ա., Նանագյուլյան Ս. Գ.,* Կենդանի օրգանիզմների բազմազանություն, 7-րդ դասարանի դասագիրք, «Աստղիկ» գրատուն, Երևան, 2013, 256 էջ:
3. *Ամիրյան Ս. Վ., Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Հ., Հովհաննիսյան Ն. Ա., Նանագյուլյան Ս. Գ.,* Կենսաբանություն (կենդանի օրգանիզմների բազմազանությունը: Կենսաբանություն: Մարդ), Ուսուցչի ձեռնարկ, «Աստղիկ» գրատուն, Երևան, 2013, 320 էջ:
4. *Հովհաննիսյան Ն. Ա., Եսայան Ա. Հ., Դանիելյան Ա. Ա.,* Ագրոկենսաբազմազանություն: Կրթական ծրագրերի և դասընթացների մշակման մեթոդական ուղեցույց, «Աստղիկ» գրատուն, Երևան, 2013, 64 էջ:

Հոդված

1. *Բաբայան Է. Ա., Կարաքեշիշյան Հ. Մ.,* Պետական բնապահպանական քաղաքականության տնտեսագիտաէկոլոգիական խնդիրների մասին, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, N 1, 21, Երևան, 2014, էջ 116-121:
2. *Գրիգորյան Կ. Ա., Գևորգյան Գ. Ա., Գրիգորյան Կ. Վ.,* Արփի լճի ջրի որակի գնահատումը մանրէաբանական ցուցանիշներով, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, հ. 10, N 3, 2013, էջ 590-593:
3. *Գրիգորյան Կ. Ա., Գևորգյան Գ. Ա., Գրիգորյան Կ. Վ.,* Արփի լճի ջրի ոռոգիչ հատկությունների գնահատումն ըստ իոնական կազմի, Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, N 8, 2013, էջ 28-31:
4. *Խաչիկյան Թ. Գ., Համբարյան Լ. Ռ., Հովհաննիսյան Ռ. Հ., Մկրտչյան Ժ. Հ.,* Սևանա լճի հիմնական վտակների պլանկտոնային ջրիմուռների տեսական բազմազանությունն ու էկոլոգիական բնութագիրը, Հայաստանի կենսաբանական հանդես, Հ. 65, N 3, 2013, էջ 23-28:
5. *Խաչատրյան Ս. Ժ., Ղազարյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Վ.,* Աղստև և Գետիկ գետերի ջրերի հիդրոքիմիական բնութագիրը և ոռոգելի հատկությունները, «Կրթությունը և գիտությունը Արցախում», № 1-2, 2013, էջ 89-95:
6. *Խաչատրյան Ս. Ժ., Ղազարյան Կ. Ա.,* E. coli բակտերիաների պարունակությունը Աղստև և Գետիկ գետերի ջրերում որպես ֆեկալ աղտոտման ինդիկատոր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, № 3, 2013, էջ 594-597:
7. *Շալունց Շ. Վ., Ղազարյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Վ.,* Որոտան գետի և նրա հիմնական վտակների ջրերի հիդրոքիմիական բնութագիրը և ոռոգելի հատկությունները, Հայաստանի կենսաբանական հանդես, Հ. 65, N 3, 2013, էջ 99-106:
8. *Շալունց Շ. Վ., Ղազարյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Վ.,* Ընդհանուր (աերոբ) և E. coli բակտերիաների պարունակությունը Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերում որպես մարդածին աղտոտման ինդիկատոր, «Կրթությունը և գիտությունը Արցախում», № 3-4, 2013, էջ 116-120:
9. *Dallakyan M. V., Yesayan A. H., Yesoyan S. S., Melyan G. H., Hovhannisyan N. A.,* Armenian grape varieties SSR fingerprintingby using Qiaxcel DNA fragment analyses system, Biological Journal of Armenia, 65, 2, 2013, pp. 85-90.
10. *Dallakyan M. V., Yesoyan S. S., Harutyunyan F. A., Melyan G. H., Yesayan A. H., Hovhannisyan N. A.,* Application of microsatellite markers for varietal identification grape rootstocks: Preliminary analysis, Biological Journal of Armenia, 65 (3), 2013, pp. 136-138. ISSN 0366-5119.

11. *Dallakyan M. V., Yesayan A. H., Hovhannisyan N. A.,* Armenian aborigene grape varieties identification and genetic diversity assessment by 48 SNP markers set for grapevine, Biological Journal of Armenia, 66 (2), 2014, pp. 84-86. ISSN 0366-5119.
12. *Ghazaryan K. A., Movsesyan H. S., Ghazaryan N. P., Gevorgyan G. A., Grigoryan K. V.,* General characteristic of soils of Kajaran town surroundihgs, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Քիմիական և կենսաբանական գիտություններ, 3, 2013, էջ 44-51.
13. *Ghazaryan K. A., Gevorgyan G. A., Grigoryan K. V.,* Monitoring of the soils of the ecological vulnerable areas around Qajaran town, Armenia, Academic Journal of Science, CD-ROM. ISSN: 2165-6282, 2 (2), 2013, p. 235-243.
14. *Hayrapetyan A. G., Grigoryan K. K., Petrosyan R. G., Fritzsche S.,* Propagation of sound waves through a spatially homogeneous but smoothly time-dependent medium, Annals of Physics, Volume 333, June, 2013, p. 47-65.
15. *Movsesyan H. S., Aroutounian R. M., Shakyan L. V., Asmaryan Sh. G., Galstyan H. M., Bazikyan G. M., Martirosyan H. A., Saghatelyan A. K.,* Studying cancer incidence in kids and juveniles in Yerevan in relationship with air and soil pollution on their dwelling sites, Biological journal of Armenia, 65, N 3, 2013, p. 69-75.

Զեկուցումների թեզիս

1. *Սարգսյան Մ. Ա., Մովսեսյան Հ. Ս., Ղազարյան Ն. Փ., Սարգսյան Ա. Մ., Մեսրոպյան Հ. Ռ., Ավագյան Ա. Մ.,* Հողաբնակ ամոնիֆիկատորների թվաքանակը անտառային դարչնագույն հողերում բակտերիական միջատասպանների ներմուծումից հետո, Հայաստանի կենսաբանական հանդես, հ. 65, N 4, 2013, էջ 121-123:

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԷՆԵՐԻ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Թոչունյան Արմեն Համբարձումի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ազարյան Կետի Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Փանոսյան Հովիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Բազուկյան Ինգա Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Սեմերջյան Ինեսա Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Մարգարյան Արմինե Արմենի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Սեմերջյան Ինեսա Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Բաբայան Անուշ Մարտինի, ավագ լաբորանտ
3. Բլբուլյան Սյուզաննա Սուրենի, ավագ լաբորանտ
4. Հովսեփյան Լուսինե Գաբրիելի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Քեմոտրոֆ և ֆոտոտրոֆ բակտերիաների կողմից H_2-ի արտադրության կենսատեխնոլոգիայի կատարելագործման ուղիները (պետական ֆինանսավորում):	Թոչունյան Ա. Հ.
2. Բակտերիաների F_0F_1_ԱԵՖ-ազի դերը էներգիայի ձևափոխության գործընթացներում C_2-ի տարբեր աղբյուրների խմորման ընթացքում (պետական ֆինանսավորում):	Բլբուլյան Ս. Ս.

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ածխածնի խառը աղբյուրների՝ գլիցերոլի և մրջնաթթվի խմորումը *Escherichia coli* բակտերիայի վայրի տիպի և հիդրոգենազ 1-4 (Հիդ) ֆերմենտների խաթարումներով մուտանտներում միջավայրի pH-ի 5.5-7.5 արժեքներում: Փորձերն իրականացվել են մրջնաթթվի տարբեր կոնցենտրացիաներով՝ 10 մՄ, 30 մՄ և 50 մՄ, որոնցից 10 մՄ-ն օպտիմալ կոնցենտրացիա է: *E. coli* բակտերիայի վայրի տիպի գլիցերոլի և մրջնաթթվի առանձին և համատեղ խմորման պայմաններում բակտերիաների աճի լոգարիթմական փուլի սկզբնամասում նկատվում է օքսիդավերականգնողական պոտենցիալի (ՕՎՊ) անկում մինչև 450 մՎ, ինչը վկայում է H_2-ի առկայության մասին: Ուսումնասիրվել է բակտերիաների աճը և ՕՎՊ-ի կինետիկան գլիցերոլի և 10 մՄ մրջնաթթվի համատեղ յուրացման պայմաններում, pH-ի 6.5 և 7.5 արժեքներում հիդրոգենազային ակտիվության բացակայությամբ մուտանտներում:

H_2 արտադրման կարգավորումն ուսումնասիրվել է *E. coli* վայրի տիպի և Հիդ 1-ի և Հիդ 2-ի ակտիվության բացակայությամբ կրկնակի մուտանտում (MW1000) գլյուկոզի խմորման պայմաններում, ՕՎՊ-ի արժեքի փոփոխմամբ օքսիդավերականգնման ռեագետների, ինչպիսիք են օքսիդիչ կալիումի ֆերրիցիանիդի և վերականգնիչ ԴԹՏ-ի օգնությամբ: Հետազոտվել են տարբեր ածխածնի աղբյուրների խառնուրդի խմորումը՝ համեմատելով ածխածնի մեկ աղբյուրի հետ, *E. coli*-ի կողմից և H_2-ի արտադրման առանձնահատկությունները միջավայրի տարբեր պայմաններում: Մասնավորապես ուսումնասիրվել է գլյուկոզի և գլիցերոլի համատեղ խմորման ընթացքում H_2-ի արտադրությունը միջավայրի pH-ի տարբեր արժեքների դեպքում: Նկատվել է *E. coli*-ի վայրի տիպի նախնու կողմից H_2-ի արտադրության նվազում միջավայրի pH 7.5 և 6.5 արժեքների, բայց ոչ pH 5.5-ի դեպքում, երբ գլյուկոզի կոնցենտրացիան աճում է 0.05 %-ից մինչև 0.2 %:

Ուսումնասիրվել են նաև Հայաստանի Ջերմուկ հանքային աղբյուրներից անջատված *R. sphaeroides* ծիրանագույն բակտերիաների MDC6522 շտամի աճման և H_2-ի արտադրության առանձնահատկությունները հիդրոգենազների արգելակիչ՝ դիֆենիլենյոդոնիումի (ԴՖՅ) և

նիտրոգենազների արգելակիչ՝ մետրոնիդազոլի ցածր կոնցենտրացիաների ազդեցությամբ: Ուսումնասիրվել է *R. sphaeroides* բակտերիաների աճման տեսակարար արագությունը տվյալ միացությունների ազդեցությամբ: Երկու միացություններն էլ արգելակում են աճման տեսակարար արագությունը. 1-2 մկՄ ԴՖՑ-ն արգելակում է աճման տեսակարար արագությունը 6-12 անգամ, իսկ 1 մՄ մետրոնիդազոլը՝ 5 անգամ:

Թեմա 2. Հաշվետու ժամանակահատվածում գլիցերոլի խմորման պայմաններում պրոտոնային ԱԵՖ-ազի և տարբեր հիդրոգենազների կապը պարզաբանելու համար ուսումնասիրվել է *E. coli* բակտերիայի վայրի տիպի և տարբեր հիդրոգենազներում խանգարումներով մուտանտների թաղանթային բշտիկների դիցիկլոհեքսիլկարբոդիիմիդի նկատմամբ զգայուն F_oF_1-ԱԵՖ-ազային ակտիվությունը pH-ի 5.5, 6.5 և 7.5 արժեքների դեպքում: Ցույց է տրվել, որ գլիցերոլի խմորման պայմաններում F_oF_1-ԱԵՖ-ազի ակտիվության համար առավել օպտիմալ է pH 7.5-ը: Բոլոր չորս հիդրոգենազների բացակայությամբ *hypF* մուտանտի թաղանթային բշտիկների ԱԵՖ-ազային ակտիվության ուսումնասիրումը հիմք է տալիս առաջարկելու հիդրոգենազների և F_oF_1-ԱԵՖ-ազի փոխկապվածությունը նաև գլիցերոլի խմորման պայմաններում:

Ցույց է տրվել, որ pH-ի 5.5-ի դեպքում նախնու և *hypF* մուտանտի ԴՑԿԴ-զգայուն F_oF_1-ԱԵՖ-ազային ցածր է՝ համեմատած pH 7.5-ի հետ: *hyaB hybC selC* եռակի մուտանտի ԱԵՖ-ազային ցածր ակտիվությունը pH 7.5-ի դեպքում ցույց է տալիս տարբեր ֆերմենտների՝ 1-ին և 2-րդ հիդրոգենազների, մրջնաթթուջրածին լիազի և F_oF_1-ԱԵՖ-ազի փոխազդեցությունը գլիցերոլի խմորման պայմաններում:

Սկսվել է նաև *E. Coli*-ի նախնու և հիդրոգենազային տարբեր մուտանտների F_oF_1-ԱԵՖ-ազի ակտիվության ուսումնասիրությունը գլիցերոլի և գլյուկոզի խառնուրդի խմորման պայմաններում:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Հետճառագայթային ժամանակահատվածում շրջակա միջավայրի գնահատման արդյունավետ մեթոդ (Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի A-2089 նախագիծ, մանրէաբանների ենթախումբ, 2014-2016):	Թռչունյան Ա. Հ.
2. Էկոլոգիական մանրէաբանության բնագավառում համագործակցություն Հայաստանի և Նորվեգիայի միջև (CPEA - 2011/10081 դրամաշնորհային ծրագիր, 2011-2014):	Փանոսյան Հ. Հ.
3. Հայաստանի երկրաջերմային աղբյուրներից մեկուսացված թերմոֆիլ աերոբ էնդոսպոր առաջացնող բակտերիաների բնութագրումը ըստ փ-ՌՆԹ-ների մոդիֆիկացիաների պրոֆիլի (DAAD հետազոտական դրամաշնորհ A/13/03781, 2013):	Փանոսյան Հ. Հ.
4. Էկոլոգիական մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում գիտական հետազոտությունների և բարձրագույն կրթության Եվրասիական-Նորվեգական ցանց (CPEALA-2013/10107 դրամաշնորհային ծրագիր, 2013-2014):	Փանոսյան Հ. Հ. Բիրկելանդ Ն. Կ. (Բերգենի համալսարան)
5. *Escherichia coli* բակտերիայում գլիցերոլի նյութափոխանակության էլեկտրաքիմիական ուսումնասիրությունը միջավայրի pH-ի տարբեր պայմաններում. ռեդոքս միացությունների և ծանր մետաղների ազդեցությունը (ANSEF NS-Microbio-3212 հետազոտական դրամաշնորհ, 2013):	Փոլադյան Ա. Ա.

6. Հայաստանի երկրաջերմային աղբյուրների թերմոֆիլ մանրէները և դրանց կենսատեխնոլոգիական ներուժը (ANSEF NS-microbio 3362 հետազոտական դրամաշնորհ, 2014):	Փանոսյան Հ. Հ.
7. Ոչխարի և մատակի կաթից ստացված հայկական կաթնամթերքներից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների հակասնկային ակտիվության ուսումնասիրությունը (ANSEF-N biotech-3474 հետազոտական դրամաշնորհ, 2014):	Բազուկյան Ի. Լ.

Թեմա 1. Դրամաշնորհի շրջանակում որոշվել են հողային տարբեր խմբերի բակտերիաների (*Escherichia coli, Pseudomonas aeruginosa, Bacillus subtilis*) բաշխվածությունը, ճառագայթահարման թիրախները և դրա բջջային մեխանիզմները, որոնք ներառում են թաղանթով պրոտոնների և այլ իոնների հոսքերի գնահատումը, ինչպես նաև ԱԵՖ-ազային և այլ ֆերմենտային ակտիվությունների և թաղանթակապ այլ հատկանիշների որոշումը: Ուսումնասիրվում են նաև ռենտգենյան ճառագայթահարման նկատմամբ նշված բակտերիաների զգայունությունը, կառուցվածքային փոփոխությունները, որոշվում են ռենտգեն ճառագայթահարված բակտերիական թաղանթների բյուրեղացման աստիճանը: Հետազոտությունները ներառում են նաև ճառագայթահարված բակտերիաների վրա տարբեր ծանր մետաղների ազդեցության ուսումնասիրություններ:

Թեմա 2. Հաշվետու տարում ծրագրի շրջանակում նմուշահանման նպատակով իրականացվել են գիտարշավներ ԼՂՀ-ի տարածքում. աճեցման և մոլեկուլային գենետիկական մեթոդներով ուսումնասիրվել է Քարվաճառի և Զուառի երկրաջերմային հանքային աղբյուրների ջրային և տղմային նմուշներում բակտերիական համակեցությունների կենսաբազմազանությունը: 16S ռՌՆԹ-ի գենի գենադարանների ստեղծման և դենատուրացնող գրադիենտային ժել էլեկտրաֆորեզային վերլուծությամբ ցույց է տրվել այդ համակեցություններում *Proteobacteria, Cyanobacteria, Bacteroidetes, Planctomycetes, Verrucomicrobia, Chloroflexi* ֆիլումներին և դեռևս չդասակարգված ֆիլոտիպերին պատկանող ներկայացուցիչների լայն տարածվածությունը: Ստացված հաջորդականությունների մեծամասնության վերլուծությունը վկայում է մանրէների չկուլտիվացվող ձևերի առկայության մասին, իսկ դրանց 89-96% նմանությունը GenBank-ի հաջորդականություններին հաստատում է ուսումնասիրված համակեցության կառուցվածքի մենահատկությունը: Քարվաճառի երկրաջերմային աղբյուրից մեկուսացվել է աերոբ ասպորոգեն բակտերիական կուլտուրա, որն ըստ ֆենոտիպական հատկանիշների և 16S ռՌՆԹ գենի հաջորդականությունների վերլուծության նույնականացվել է որպես *Thermus scotoductus* (99% նմանությամբ):

Ամբիոնի ուսումնական լաբորատորիան համալրվել է սառեցման համակարգ ունեցող կենտրոնախուսակով, դյուրակիր մեխանիկական ֆիլտրման ապարատով և քիմիական ռեակտիվներով: Շարունակվում է իրականացվել նաև դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների վերապատրաստում Բերգենի համալսարանում. Բերգենի համալսարան են գործուղվել մեկ ասպիրանտ և մագիստրատուրայի մեկ ուսանող:

Թեմա 3. Հեղուկ քրոմատոգրաֆային-մասսպեկտրաչափական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել է աերոբ էնդոսպոր առաջացնող բակտերիաների փ-ՌՆԹ-ների մոդիֆիկացիաների պրոֆիլը: Ուսումնասիրության նյութ են ծառայել Հայաստանի երկրաջերմային աղբյուրներից մեկուսացված *Anoxybacillus gonensis* J-18, *Anoxybacillus* sp. H-69, *Anoxybacillus flavithermus* K-97, *Geobacillus thermodenitrificans* Arz-6, *Geobacillus stearothermophilus* Ara-3-1, *Geobacillus toebii* Arz-33, *Geobacillus pallidus* Akh-115, *Geobacillus* sp. Arz-7, *Bacillus amyloliquefaciens* G-35, *Bacillus aestuarii* B-123A, *Bacillus licheniformis* Akh-14a, *Brevibacillus* sp. H-65, *Ureibacillus sp.* B-119, *Paenibacillus xylanilyticus* Arz-3 աերոբ էնդոսպոր առաջացնող բացիլների շտամները: Փորձերում կիրառվել են 16 մոդիֆիկացված

փՌՆԹ-ներ (m^1A, m^6A, Am, t^6A, i^6A, ms^2i^6A, Q, m^1G, $m^6{}_2A$, m^2G, $m^2{}_2G$, Gm, m^2A, m^7G, m^5C, Cm) և դրանց իզոտոպային նշակիր տարբերակները: Ցույց է տրվել, որ m^6A, i^6A $m^6{}_2A$ և Cm մոդիֆիկացիաները հազվադեպ են ուսումնասիրված շտամներում, իսկ mG մոդիֆիկացիան հաճախ է հանդիպում թեմոֆիլ *Geobacillus* and *Anoxybacillus* ցեղերի տեսակներում: Թեև i^6A մոդիֆիկացիան հայտնաբերվել է բոլոր ուսումնասիրված շտամներում, դրա ածանցյալները, օրինակ՝ ms^2i^6A, որը լայն տարածում ունի հետազոտված բացիլների թերմոֆիլ տեսակներում, չի հայտնաբերվել *Ureibacillus* ցեղի տեսակներում: m^1G մոդիֆիկացիան բնորոշ է եղել միայն *Brevibacillus* տեսակներին. m^2A և m^7G մոդիֆիկացիաների շատ բարձր հանդիպման հաճախականությունը վկայում է էնդոսպոր առաջացնող բակտերիաների վաղ էվոլյուցիայի ընթացքում այդ մոդիֆիկացիաների ի հայտ գալը: Թե՛ մեզոֆիլ, թե՛ թերմոֆիլ տեսակներում հանդիպում են Gm, m^1G և ms^2i^6A մոդիֆիկացիաներ, թեպետ Gm մոդիֆիկացիան հայտնաբերվել է միայն թերմոֆիլ տեսակներում: Այս վերլուծության արդյունքները հիմք կարող են հանդիսանալ բացիլների տարբեր ցեղերի տեսակները միմյանցից, ինչպես նաև բացիլների մեզոֆիլ և թերմոֆիլ ձևերի տարբերակման համար:

Թեմա 4. Դրամաշնորհային ծրագիրը իրականացվող «Էկոլոգիական մանրէաբանության բնագավառում համագործակցություն Հայաստանի և Նորվեգիայի միջև» (CPEA - 2011/10081) դրամաշնորհային ծրագրի ընդլայնումն է միջինասիական համագործակից բուհերի ընդգրկմամբ: Ծրագիրը միտված է հեռանկարում ստեղծելու Հայաստանի, Նորվեգիայի Ուզբեկստանի և Տաջիկստանի միջև կրթական և գիտահետազոտական ցանց էկոլոգիական մանրէաբանության ու կենսատեխնոլոգիայի բնագավառում բարձրագույն կրթության զարգացման և արդիականացման համար: Նախատեսվում է ծրագրի շրջանակում դասախոսների, ասպիրանտների և մագիստրանտների վերապատրաստում համագործակից բուհերում:

Թեմա 5. Ուսումնասիրվել են *Escherichia coli* բակտերիաների վայրի տիպի և 1-ին և 2-րդ հիդրոգենազների խախտումներով մուտանտի աճի և մոլեկուլային ջրածնի արտադրության վրա 0.01 - 0.3 մՄ ծանր մետաղների իոնների Mo6+, Ni2+, Fe2+, Fe3+ ազդեցությունները: Բոլոր իոնները ունեցել են 1.2 - 1.4 անգամ խթանիչ ազդեցություն բակտերիաների աճի վրա և՛ գլյուկոզի, և՛ գլիցերոլի խմորման պայմաններում: Առավելագույն խթանում դիտվել է 0.2 մՄ $NiCl_2$-ի առկայությամբ հիմնային pH-ի պայմաններում: Մինչդեռ 0.05-0.1 Cu^{2+} իոնները ունեցել են ճնշիչ ազդեցություն մոլեկուլային ջրածնի արտադրության վրա: Ստացված արդյունքները կարևոր են վերջինիս կարգավորման նպատակով դրա կենսատեխնոլոգիայի մշակման համար:

Թեմա 6. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներից մեկուսացվել են լիպազ և ամիլազ արտադրող ջերմասեր բացիլների շտամներ: Մեկուսացված բացիլները ֆենոտիպական հատկանիշների և ըստ 16S ռՌՆԹ-ների հաջորդականությունների վերլուծության հիման վրա նույնականացվել են որպես *Bacillus, Geobacillus, Brevibacillus, Anoxybacillus, Ureibacillus, Paenibacillus,* և *Thermoactinomyces* ցեղի տեսակներ: Ցույց են տրվել *Geobacillus* sp. Tatev N5 և Tatev N6 շտամների չմաքրված ամիլազ ֆերմենտների ակտիվությունները. օպտիմալ ջերմաստիճանի և pH-ի պայմաններում (65՛C, pH 7) կազմել են 70.3 և 80.7 Մ/մլ համապատասխանաբար: *Bacillus licheniformis* Akhourik 106 and *B. aestuarii* Akhourik 107 շտամների լիպազային առավելագույն ակտիվությունը դիտարկվել է pH 6.5-7, 56˚C ջերմաստիճանային և 0.5 % NaCl-ի պայմաններում: Լիպազի առավելագույն ակտիվությունը նշված շտամներում դիտվել է աճի ուշ էքսպոնենցիալ փուլում՝ կազմելով 0.03 Մ $մլ^{-1}$ $ր^{-1}$ և 0.027 Մ $մլ^{-1}$ $ր^{-1}$ համապատասխանաբար *B. licheniformis* Akhourik 106 և *B. aestuarii* Akhourik 107 շտամների համար:

Թեմա 7. Հետազոտվել է Հայաստանի տարբեր շրջանների կաթնամթերքի նմուշներից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների 32 շտամների հակասնկային ակտիվությունը 6 տարբեր ցեղերին պատկանող բորբոսասնկերի նկատմամբ: Հաստատվել է *Lactobacillus rhamnosus* R-2002-ի

հակասնկային ակտիվությունը *Penicillum aurantio-violaceum* և *Mucor plumbeus* նկատմամբ: *Lactobacillus delbrueckii* subsp. *lactis* INRA-2010-4.2 և *Lactobacillus acidophilus* JM-2012 շտամներն օժտված են հակասնկային ակտիվությամբ *Debaryomyces hansenii* խմորասնկի նկատմամբ: *L. rhamnosus* R-2002-ի հակասնկային ակտիվությունը դիտվում է pH լայն տիրույթում (pH 3-9): Դա կորցնում է իր ակտիվությունը 45°C պայմանում 15 րոպե մշակելիս *M. plumbeus* նկատմամբ և 55°C պայմանում 15 րոպե մշակելիս *P. aurantio-violaceum* նկատմամբ: Հակասնկային ակտիվությամբ օժտված նյութերը համակցված են *L. rhamnosus* R-2002-ի բջջապատի հետ: Ցույց է տրվել, որ հակասնկային ակտիվությունը ամբողջովին արգելակվում է պրոտեինազ K-ով և պեպսինով մշակելիս, մինչդեռ տրիպսինով մշակումը չի թողնում որևէ ազդեցություն: Դա վկայում է հակասնկային ակտիվությամբ օժտված նյութի սպիտակուցային բնույթի մասին, այն էլ նրա բաղադրության մեջ կա՛մ բացակայում են լիզինն ու արգինինը, կա՛մ նշված երկու ամինաթթուները ծայրային դասավորվածության են:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու տարում մշակվել են թերապևտիկ բարձր արժեք ունեցող, բարդածաղկավորների ցեղին պատկանող և *S. balsamita* և Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված (ոչնչացման սպառնալիքի ենթակա կարգավիճակով) *A. sosnovskyi* բույսերի մեկուսացված կուլտուրաների ստացման, միկրոբազմացման պայմանները, և ուսումնասիրվել են ստացված կուլտուրաների աճի և նյութափոխանակության առանձնահատկությունները: *A. sosnovskyi* բույսը հավաքվել է ծաղկման շրջանում Սուրենավանի տարածքից (Արարատի մարզ) (բարձրությունը ծովի մակերևույթից՝ 815 մ): *S. balsamita* բույսը հավաքվել է ծաղկման շրջանում Երևանի տարածքից (ծովի մակարդակից մոտ 1000 մ բարձրություն): *S. balsamita* բույսը հավաքվել է ծաղկման շրջանում Երևանի տարածքից (ծովի մակարդակից մոտ 1000 մ բարձրություն): Կալուսային կուլտուրան ստացվել է բաժակաթերթերից փորձարկված սննդամիջավայրերից միայն Մուրասիգե-Սկուգի սննդամիջավայրի վրա:

Կալուսային կուլտուրաները ստացվել են փորձարկված սննդամիջավայրերից միայն Մուրասիգե-Սկուգի սննդամիջավայրի վրա:

S. balsamita և *A. sosnovskyi* բույսի կալուսի աճի առանձնահատկությունների ուսումնասիրման համար որոշվել են աճի ինդեքսը և չոր նյութերի կուտակումը՝ աճեցման մեկ փուլում՝ 5, 10, 15, 20, 30 օրերի ընթացքում: S. *balsamita* և *A. sosnovskyi* կալուսի աճեցման 30-րդ օրը աճի ինդեքսը հասել է առավելագույնի՝ համապատասխանաբար կազմելով 3.5 և 4.0: *S. balsamita* կալուսային հյուսվածքի չոր նյութի առավելագույն քանակը դիտվել է միայն աճեցման 15-րդ օրը՝ հասնելով 7 %, մինչդեռ *A. sosnovskyi* կալուսային հյուսվածքինը՝ 25-րդ օրը՝ հասնելով 4.5 %:

Ուսումնասիրվել է նաև *A. sosnovskyi* և *S. balsamita* կուլտուրաների հակաօքսիդանտային ակտիվությունը, որը կալուսի աճի մեկ ցիկլի ընթացքում փոփոխվել է՝ ցիկլի վերջում հասնելով առավելագույնի՝ համապատասխանաբար 29.22 % և 41.89 %: Այսպիսով՝ ստացվել են *A. sosnovskyi* և *S. balsamita* բույսերի նյութափոխանակության բարձր ակտիվությամբ օժտված մեկուսացված կուլտուրաներ, որոնք կարելի է առաջարկել որպես կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացման այլընտրանքային աղբյուր:

Ուսումնասիրվել են Հայաստանի բազմամետաղյա հանքապարներից մեկուսացված մետաղակայուն թերմոֆիլ բացիլների ամիլազային և լիպազային ակտիվությունները Cu(II), Ni(II), Zn(II) և Cd(II) ծանր մետաղների իոնների ինչպես առանձին, այնպես էլ համակցված ազդեցության պայմաններում: Ցույց է տրվել, որ *Bacillus subtilis* AG4 և *B. licheniformis* AS1 շտամների ամիլազային ակտիվությունը հասնում է իր առավելագույն արժեքին ինչպես առանձին, այնպես էլ համակցված Zn(II) և Cd(II) իոնների 5 մգ/լ կոնցենտրացիաների դեպքում, մինչդեռ Cu(II) և Ni(II) իոնները ճնշում են շտամների ամիլազային ակտիվությունը: *Geobacillus toebi* AD5 շտամի լիպազային ակտիվությունը առավելագույնս

դրսևորվել է Cu(II), Ni(II) և Cd(II) 20, 15, 20 մգ/լ կոնցենտրացիաների պայմաններում, իսկ Zn(II) իոնները արգելակում են ֆերմենտի ակտիվությունը:

Ուսումնասիրվել է նաև դեղաբույսերի լուծամզվածքների ազդեցությունը կաթնամթերքի մերանների թթվառաջացման և հակաբակտերիական ակտիվության վրա: Հալվե իրականի (*Aloe vera* L.) լուծամզվածքի հավելումը բոլոր ուսումնասիրված համակեցությունների վրա թողնում է դրդող ազդեցություն: Սրոհունդ ծակոտկենի (*Hypericum perforatum* L.), ուրց սողացողի (*Thymus serpyllum* L.), անանուխ պղպեղայինի (*Mentha piperia* L.) լուծամզվածքի հավելումը բոլոր ուսումնասիրված համակեցությունների վրա թողնում է արգելակող ազդեցություն: Մեղրախոտի (*Stevia rembaudiana* Bertoni), հազարատերև սովորականի (*Achillea millefolium* L.) և ռեհան մշակովիի (*Ocimum basilicum* L.) լուծամզվածքի հավելումը թթվասերի պատրաստման համար նախատեսված համակեցության վրա թողնում է արգելակող ազդեցություն: Բոլոր ուսումնասիրված բույսերի լուծամզվածքների խառնուրդի հավելումը կաթին արգելակում է համակեցություններում մանրէների աճը: Ռեհան մշակովիի (*Ocimum basilicum* L.), հալվե իրականի (*Aloe vera* L.) և սրոհունդ ծակոտկենի (*Hypericum perforatum* L.) լուծամզվածքներով դեղաբույսերով պատրաստված յոգուրտը, մածունն ու թանը դրսևորում էին հակաբակտերիական ակտիվություն գրամդրական *S. aureus* WDCM 5233 շտամի նկատմամբ: Հալվե իրականի և սրոհունդ ծակոտկենի լուծամզվածքների հավելումը դրդում է յուգուրտի պատրաստման համար նախատեսված համակեցության հակամանրէային ակտիվությունը *E. coli* VKMB-M17-ի նկատմամբ: Առաջարկվող համակեցություններով պատրաստված սննդամթերքի սպիտակուցային կազմում զգալի փոփոխություններ չեն դիտվել:

Մշակվել է մանրէների ամբողջական բջիջներում գլյուկոզիլտրանսֆերազի հայտնաբերման մեթոդ: Բոլոր ուսումնասիրված կաթնաթթվային բակտերիաները չեն դրսևորում գլյուկոզիլտրանսֆերազի ակտիվություն: Սակայն հաստատվել է Բջնի 127, Ախուրիկ 115 և Բջնի 123A ջերմասեր էնդեսպոր առաջացնող բացիլների գլյուկոզիլտրանսֆերազի ակտիվություն: Ուսումնասիրված շտամների գլյուկոզիլտրանսֆերազի ակտիվության դրսևորման համար սախարոզի խտությունը սննդամիջավայրում պետք է լինի 1 %:

Շարունակվել են Հայաստանում առաջին անգամ արտադրողների կողմից տրամադրված որոշ կենսապատրաստուկների փորձարկումները դաշտային և դեկորատիվ մշակաբույսերի վրա: Կատարվել է 2012թ. Երկրագործության կենտրոնի դաշտում աշնանը ցանած սիսեռի բերքահավաքը, որը ցույց տվեց Գումատ+7 կենսապարարտանյութի խթանիչ ազդեցությունը սիսեռի բերքային ցուցանիշների վրա սերմերի նախացանքային թրջման և ծաղկման փուլում սածիլների ցողման տարբերակներում: Պատրաստուկը խթանել է բույսերի ինչպես աճը, այնպես էլ պտղագոյացումը, որի արդյունքում ձևավորվել են ստուգիչից 20-45%-ով ավելի շատ և խոշոր սերմեր, ինչն ի վերջո բերել է բերքի ավելի մեծ չափով բարձրացմանը /մինչև 50%/ ցողման տարբերակում:

Բանջարաբոստանային մշակաբույսերի կենտրոնի փորձադաշտում կատարվել է վարունգի Մանե և Հայարփի սորտերի ամառացանք, որի ընթացքում կիրառված 3 պատրաստուկներից առավել բարձր արդյունավետություն է դրսևորել Միցեֆիտ ռուսաստանյան պատրաստուկը: Սերմերի նախացանքային թրջման դեպքում ձևավորվել են բազմաթիվ խոշոր սերմեր, և բերքի բարձրացումը հասել է մոտ 20%-ի, և այդ պատրաստուկի փորձարկումը շարունակվում է նաև այս տարի:

Շարունակվել է նաև որոշ թփերի կտրոնների արմատակալման վրա ստացված մի շարք պատրաստուկների փորձարկումը, որի ընթացքում առավել բարձր արդյունավետություն է ցուցաբերել, ինչպես և վարունգի փորձում Միցեֆիտը, փքապտուղ թփի կտրոնների վրա: Նման խթանում է արձանագրված նաև որոշ դեկորատիվ խոտաբույսերի սերմերի և սածիլների մշակման արդյունքում հնդկական Մայկոնետ և գերմանական Միկոպլանտ պատրաստուկների կիրառման դեպքում:

Ուսումնասիրվել է ջրածնի պերօքսիդ պարունակող առանձին բիոցիդային պատրաստուկների հակասնկային ազդեցությունը *Saccharomyces cerevisiae* և *Rhodotorula rubra* խմորասնկերի ցեղերի տեսակների վրա, որոնք անջատվել են հյութերի արտադրության գործարանների սարքավորումներից և արտադրական մակերեսներից: Ցույց է տրված խմորասնկերի ճնշման աստիճանը՝ կախված պատրաստուկի կոնցենտրացիայից, շփման ժամանակից և շտամների բնույթից: Իրականացվել է ՀՀ երկու մարզերի՝ Կոտայքի և Մեղրիի մեղուների փեթակներից վերցված քսուկների մանրէաբանական վերլուծություն: Անջատվել և նույնականացվել են միցելիալ և կոլիֆորմ բակտերիաների տեսակները՝ *Hafnia alvei, Serratia mascerans*, *Penicillium aurantiogriseum*, *P. brevi-compactu,* որոնք բնութագրվում են հանդիպման բարձր հաճախականությամբ: Կոլիֆորմ բակտերիաների նույնականացման համար օգտագործվել է API 20E թեստը: *Penicillium* ցեղի տեսակներով բարձր աղտոտվածություն ունեցող փեթակներում նկատվում էր կոլիֆորմ բակտերիաներով աղտոտման ցածր մակարդակ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	-	4	41	16

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Ղազարյան Է. Մ., Թոչունյան Ա. Հ., Մելիքյան Գ. Ա., Վարդանյան Թ., Խաչատրյան Հ.,* Բնագիտություն-5, Դասագիրք դպրոցի 5-րդ դասարանի համար, «Աստղիկ» հրատ., Երևան, 2013, 160 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Անտոնյան Ա. Պ., Արծրունի Գ. Գ., Գրիգորյան Կ. Վ., Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Գ., Թոչունյան Ա. Հ. և ուրիշներ,* Կենսաբանություն. Թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 1, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 316 էջ:
2. *Անտոնյան Ա. Պ., Արծրունի Գ. Գ., Գրիգորյան Կ. Վ., Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Գ., Թոչունյան Ա. Հ. և ուրիշներ,* Կենսաբանություն. Թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 2, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 272 էջ:
3. *Անտոնյան Ա. Պ., Արծրունի Գ. Գ., Գրիգորյան Կ. Վ., Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Գ., Թոչունյան Ա. Հ.* և ուրիշներ, Կենսաբանություն. Թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 3, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 340 էջ:
4. *Ղազարյան Է. Մ., Թոչունյան Ա. Հ., Մելիքյան Գ. Ա., Վարդանյան Թ., Խաչատրյան Հ.,* Բնագիտություն-5, Ուսուցչի ձեռնարկ, «Աստղիկ» հրատ., Երևան, 2013, 116 էջ:

Հոդված

1. *Բազուկյան Ի., Մաթևոսյան Լ., Թոչունյան Ա.,* Կաթնաթթվային բակտերիաները՝ XXI դարի բուժարարներ, «Գիտության աշխարհում», N 4, 2013, էջ 44-48:

2. *Գաբրիելյան Լ., Փոլադյան Ա., Թռչունյան Ա.,* Համակարգչային տեխնոլոգիաների կիրառման առավելությունները և փորձը բուհական կենսաբանության դասավանդման գործընթացում, Համահայկական 4-րդ կրթական գիտաժողով. «Բնագիտությունը 21-րդ դարում. Ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ», «Բնագետ», 2014, էջ 139-141:
3. *Գուրզոլյան Մ. Մ., Փանոսյան Հ. Հ.,* Գավառագետի ջրի աերոբ քեմոօրգանոտրոֆ բակտերիաների թվաքանակի որոշումը և սանիտարական-մանրէաբանական վիճակի գնահատումը, Երիտասարդ գիտնականների ձեռքբերումներն ու հեռանկարները, Երիտասարդ գիտնականների II համաժողով, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 40-45:
4. *Թռչունյան Ա. Հ.,* Ի՞նչ գիտենք Հայաստանի մանրէների և նրանց բազմազանության մասին, «Բնագետ», 3, 2013, էջ 44-50:
5. *Թռչունյան Ա. Հ.,* Մանրէաբանությունը 21-րդ դարում. Միկոպրլազմները, նանոբակտերիաները և արհեստական կենդանի բջիջները, «Բնագետ», 1, 2014, էջ 47-54:
6. *Հակոբյան Լ. Հ., Մելիք-Անդրեասյան Գ. Գ., Հարությունյան Ն. Մ., Հարությունյան Կ. Վ., Հարությունյան Մ. Վ., Թռչունյան Ա. Հ.,* Կենսաբանական բարձր հատկություններով օժտված պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների ստացումը, Համաճարակաբանության արդիական հարցերը, Ա. Բ. Ալեքսանյանի անվան ՀՎ և ԲՄ ԳՀԻ, 2013, էջ 22-26:
7. *Փանոսյան Հ. Հ., Բազուկյան Ի. Լ., Մարգարյան Ա. Ա., Պոպով Յու.Գ., Թռչունյան Ա. Հ.,* Բուհական կրթական համակարգում լաբորատոր աշխատանքների իրականացման ժամանակակից մոտեցումները, Համահայկական 4-րդ կրթական գիտաժողով. «Բնագիտությունը 21-րդ դարում. Ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ», «Բնագետ», 2014, էջ 145-146:
8. *Պետրոսյան Մ. Թ., Սահակյան Ն. Ժ., Թռչունյան Ա. Հ.,* Ինքնուրույն ուսուցման և հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացումը կենսաբանության մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում, Համահայկական 4-րդ կրթական գիտաժողով. «Բնագիտությունը 21-րդ դարում. Ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ», «Բնագետ», 2014, էջ 147-149:
9. *Арутюнян Н. М., Алексанян Ю. Т., Мелик-Андреасян Г. Г., Акопян Л. Г., Арутюнян К. В., Арутюнян М. В., Трчунян А. А.,* Способность адгезии и приживаемости пробиотика *L.acidophilus* Ep 317/402 “Наринэ” в пищеварительном тракте и слизистой оболочке толстого кишечника, Актуальные вопросы эпидемиологии, РА МЗ, 2013, с. 58-60.
10. *Мурадян М. Ш., Петросян М. Т.,* Антимикробное действие изолированной культуры *Alkanna orientalis*, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված երիտասարդական գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 80-87:
11. *Akopyan K., Trchounian A.,* Proton cycles through membranes in bacteria: relationship between proton passive and active fluxes and their dependence on some external physico-chemical factors under fermentation, Biophysics, 58, 2013, pp. 624-639, DOI: 10.1134/S0006350913050023.
12. *Azaryan K. G., Popov Yu. G., Hovsepyan A. S., Avetisyan S.V.,* Perspectives of natural stimulators' application in plant cultivation, Acta Horticulture (ISHS), 1033, 2014, p. 65-75.
13. *Blbulyan S., Trchounian A.,* Role of *Escherichia coli* hydrogenases in the F_oF_1 ATPase activity under mixed carbon fermentation at different pHs, Biochim. Biophys. Acta-Bioenergetics, V. 1817, July 2014, e107-e108, DOI: 10.1016/j.bbabio.2014.05.257.
14. *Gasparyan G., Balayan M., Grigoryan A., Hakopyan A., Manvelyan A., Mirzabekyan S., Trchounian A. et al.,* Growth peculiarities of commensal *Escherichia coli* isolates from the gut microflora of the Crohn’s disease patients, Biophysics, 58, 2013, pp. 537-542, DOI: 10.1134/S0006350913040064.

15. *Ghazaryan A., Poladyan A., Panosyan H., Trchounian A.*, Oxidative and reductive routes investigation in thermophilic bacilli strain *Geobacillus toebii* ArzA-8 under influence of oxidizing and reducing reagents, The FEBS J. 280, 2013, pp. 243, DOI: 10.1111/febs.12340.
16. *Grigoryan K., Badalyan G., Martiryan M. I., Al-Fageeh M. B., Agabekov V. E., Tavadyan L., Nersesyan L.,* Antifungal activity of hydrogen peroxide based disinfectant Bioxil, J Microbiol Biotech Food Sci, 3 (6), 2014, pp. 519-521.
17. *Du P., Viswanatham U. M., Khairan K., Buric T., Saidu N. E. B., Xu Z., Han B., Bazukyan I., Trchounian A., Hannemann F., Bernhard I., Burkholz T., Diesel B., Kiemer A. K., Schifer K. H., Montenarh M., Kirsch G., Jacob C.,* Synthesis of amphiphilic, chalcogen-based redox modulators with *in vitro* cytotoxic activity against cancer cells, macrophages and microbes, Med. Chem. Comm. 5, 2014, pp. 25-31, DOI: 10.1039/C3MD00204G.
18. *Hakobyan A., Panosyan H., Trchounian A.*, Production of cellulose by the haloalkaliphilic strains of *Streptomyces* isolated from saline-alkaline soils of Ararat Plain, Armenia. Electronic Journal of NAS RA, Natural Science, Biotechnology, 2 (21), 2013, pp. 44-46.
19. *Hakobyan L., Gabrielyan L., Trchounian A.,* Role of proton motive force and ATPase activity in biohydrogen production by Rhodobacter sphaeroides, Eur. Biophys. J. 42, 2013, Suppl. S39. DOI 10.1007/s00249-013-0917-x.
20. *Keryan A. G., Bazukyan I. L., Popov Yu. G., Trchounian A. H.,* Phenotypic characteristics of the new lactobacilli strain isolated from matsoun, the Armenian traditional sour-milk product, *Sci.* Med. J. 9, 2014, pp. 18-23 (ISSN: 1829-0418).
21. *Keryan A. G., Simonyan Y. A., Bazukyan I. L., Trchounian A. H.,* Inhibitationof growth and antimicrobial activity of new Lactobacilli strains isolated from Armenian dairy product matsoun with EDTA in low concentrations: comparative study with Gram-positive and Gram-negative bacteria, Reports Nat. Acad. Sci. Armenia, V. 114, N 2, 2014, p. 149-155.
22. *Ligaba A., Dreyer I., Margaryan A., Schneider D. J., Kochian L., Piperos M.,* Functional, structural and phylogenetic analysis of domains underlying the Al sensitivity of the aluminum-activated malate/anion transporter, TaALMT1, The Plant Journal, V. 76, Issue 5, 2013, pp. 766-780.
23. *Margaryan A. A., Panosyan H. H., Birkeland N.-K., Trchounian A.,* Heavy metal accumulation and the expression of the *copA* and *nikA* genes in *Bacillus subtilis* AG4 isolated from the Sotk Gold Mine in Armenia, Biological Journal of Armenia, 3 (65), 2013, pp. 51-57.
24. *Margaryan A., Birkeland N., Panosyan H., Popov Yu., Trchounian A.,* The effect of combined heavy metal ions on *copA, nikA* and *czcD* genes expression of metal-resistant bacilli, The FEBS J. 280, 2013, 231. DOI: 10.1111/febs.12340.
25. *Panosyan H.,* Distribution of *Geobacillus* species in Arzakan (Armenia) geothermal mineral spring, Transactions of Gavar State University, Iravunq, N 15, Yerevan, 2013, pp. 95-98.
26. *Panosyan H., Birkeland N. K.,* Microbial diversity in an Armenian geothermal spring assessed by molecular and culture-based methods, J. Basic Microbiol., 54, 2014, DOI 10.1002/jobm.201300999.
27. *Poladyan A., Abrahamyan V., Trchounian A.,* Formate and growth medium composition influence on *Escherichia coli* growth and molecular hydrogen production under glycerol fermentation at different pHs, The FEBS J. 280, 2013, 601. DOI: 10.1111/febs.12340.
28. *Poladyan A., Abrahamyan V., Vassilian A., Trchounian A.,* Hydrogen production during glucose fermentation by Escherichia Coli: Effects of oxidative and reductive routes on the strain lacked of hydrogen oxidizing hydrogenases 1 and 2, Proc. 13th Int. Conf. Clean Energy (eds. I. Dincer, C.O. Colpan, O.Kizilkan et al.), Istanbul (Turkey), 2014, pp. 1087-1092. ISBN: 978-605-64806-0-7 www.icce-2014.net
29. *Poladyan A., Trchounian K., Sawers G., Trchounian A.,* Hydrogen-oxidizing hydrogenases 1 and 2 of *Escherichia coli* regulate the onset of hydrogen evolution and ATPase activity, respectively, during glucose

fermentation at alkaline pH, FEMS Microbiol. Lett., V. 348, 2013, pp. 143-148; DOI: 10.1111/1574-6968.12281.

30. *Poladyan A., Vardanyan Z., Petrosyan M., Trchounian A.,* Oriental plant *Alkanna orientalis* extracts effects on enterococcal membrane-associated properties, Biophys. J., 106 (2), 2014, 586a.
31. *Sargsyan H., Gabrielyan L., Trchounian A.,* Concentration-dependent effect of metronidazole, inhibitor of nitrogenase on hydrogen photoproduction by *Rhodobacter sphaeroides,* 5th World Hydrogen Technologies Convention, 14th China Hydrogen Energy Conference and 6th Mainland, Taiwan and Hongkong Symposium on Hydrogen Energy. Proc., Shanghai (China), 2013, pp. 46-47.
32. *Sargsyan H., Gabrielyan L., Trchounian A.,* Concentration-dependent effects of metronidazole, inhibiting nitrogenase, on hydrogen photoproduction and proton-translocating ATPase activity of *Rhodobacter sphaeroides,* Int. J. Hydrogen Energy, V. 39, 2014, pp. 100-106; DOI: 10.1016/j.ijhydene.2013.10.049.
33. *Soghomonyan D., Trchounian A.,* Comparable effects of low-intensity electromagnetic irradiation at the frequency of 51.8 GHz and 53 GHz and antibiotic ceftazidime on *Lactobacillus acidophilus* growth and survival, Cell Biochem. Biophys., V. 67, 2013, pp. 829-835; DOI: 10.1007/s12013-013-9571-2.
34. *Torgomyan H., Ohanyan V., Blbulyan S., Trchounian A.,* Changes in ion transport through the membranes, atpase activity and antibiotics effects on *Enterococcus hirae* after low intensity electromagnetic irradiation of the frequencies of 51.8 and 53 Ghz, Biophysics, V. 58, 2013, pp. 524-529; DOI: 10.1134/S0006350913040167.
35. *Torgomyan H., Trchounian A.,* Low intensity 70.6 and 73 GHz frequencie electromagnetic irradiation and different antibiotics effects on *E. coli* ions transports properties, The FEBS J. 280, 2013, pp. 206-207. DOI: 10.1111/febs.12340.
36. *Trchounian A.,* Mechanisms for hydrogen production by different bacteria during mixed-acid and photo-fermentation and perspectives of hydrogen production biotechnology, Crit. Rev. Biotechnol. Epub Jul 29, 2013. DOI: 10.3109/07388551.2013.809047.
37. *Trchounian A.,* Hydrogenases and interaction between hydrogen and proton cycles during fermentation in bacteria, 5th World Hydrogen Technologies Convention, 14th China Hydrogen Energy Conference and 6th Mainland, Taiwan and Hongkong Symposium on Hydrogen Energy. Proc., Shanghai (China), 2013, p. 210.
38. *Trchounian A., Sawers R. G.,* Novel insights into the bioenergetics of mixed-acid fermentation: can hydrogen and proton cycles combine to help maintain a proton motive force?, IUBMB Life, V. 66, 2014, pp. 1-7; DOI:10.1002/iub.1236.
39. *Trchounian K., Sargsyan H., Trchounian A.,* Hydrogen production by *Escherichia coli* depends on glucose concentration and its combination with glycerol at different pHs, Int. J. Hydrogen Energy, V. 39, 2014, pp. 6419-6423; DOI: 10.1016/j.ijhydene.2014.02.050.
40. *Trchounian K., Trchounian A., Escherichia coli* multiple [Ni-Fe]-hydrogenases are sensitive to osmotic stress during glycerol fermentation but at different pHs, FEBS Lett., V. 587, 2013, pp. 3562-3566; DOI: 10.1016/j.febslet.2013.09.016.
41. *Trchounian K., Trchounian A.,* Clean energy technology development: hydrogen production by *Escherichia coli* during glycerol fermentation, Proc. 13th Int. Conf. Clean Energy (eds. I. Dincer, C.O. Colpan, O.Kizilkan et al.), Istanbul (Turkey), 2014, pp. 1322-1328. ISBN: 978-605-64806-0-7 www.icce-2014.net

Զեկուցումների թեզիս

1. *Керян А. Г., Базукян И. Л., Попов Ю. Г., Трчунян А. А.,* Влияние Ca^{2+} и Co^{2+} на антибактериальную активность молочнокислых бактерий, 18-ая межд. Пущинская школа-конф. мол. ученых “Биология-наука XXI века”, Сб. тез., 2014, с. 23-24.
2. *Оганесян П. А., Варданян Г. Г., Маргарян А. А., Паносян О. А., Трчунян А. А.,* Термофильные бациллы,

выделенные из геотермальных источников Армении, как продуценты гидролитических ферментов, 18-ая межд. Пущинская школа-конф. мол. ученых “Биология-наука XXI века”, Сб. тез., 2014, с. 221.

3. *Сагателян А. Р., Маркарян А. А., Паносян О. А., Трчунян А. А., Thermus scitoductus* изолированный из горячего источника Карвачар, 18-ая межд. Пущинская школа-конф. мол. ученых “Биология-наука XXI века”, Сб. тез., 2014, с. 223-224.
4. *Babayan A., Petrosyan M. T., Sahakyan N. Zh., Trchounian A. H.,* Evaluation of antimicrobial and antioxidant activity of isolated culture of St.-John’s Wort elongated (*Hypericum elongatum* Ledeb.), 18-ая межд. Пущинская школа-конф. мол. ученых “Биология-наука XXI века”, Сб. Тез., 2014, с. 3.
5. *Galstyan A. S., Shirinyan E. A., Bazukyan I. L.,* Novel potential biologically active of sulfur-containing vicinal amino alcohols: Synthesis and activity, In proceeding of: Conference “Frontiers in Chemistry 2013”, Yerevan, Armenia, p. 1.
6. *Gabrielian L., Sargsyan H., Trchounian A.,* Redox sensing by *Rhodobacter sphaeroides*: effects of oxidizer ferricyanide on bacterial growth and hydrogen photoproduction, ASM 114th General Meeting. Abstracts, Boston (USA), 2014, N. 745.
7. *Haroutoiunian K., Hakobyan L., Trchounian A.,* The Adhesive Properties and Hemolytic Activity of Probiotic Lactic Acid Bacteria, 2nd Int. Conf. Young Sci. “Contribution of young generation in the development of biotechnology”, Yerevan, 2013, P. 73.
8. *Ohanyan V., Vardanyan Z., Trchounian A.,* Effects of electromagnetic irradiation and heavy metal ions on *Enterococcus hirae,* ASM 114th General Meeting. Abstracts, Boston (USA), 2014, N. 2651.
9. *Panosyan H., Birkeland N. K.,* Phylogenetic diversity of endospore-forming thermophilic bacilli isolated from geothermal springs in Armenia. Abstract book of 12th Intern. Meeting Thermophiles, Regensburg, Germany, 2013, p. 86.
10. *Panosyan H. H., Dodsworth J. A., Cole J. K., Hedlund B. P.,* Archaeal diversity in Armenian geothermal springs detected by molecular and culture-based approaches. Abstract book of 12th Intern. Meeting Thermophiles, Regensburg, Germany, 2013, p. 85.
11. *Poladyan A., Abrahamyan V., Vassilian A., Trchounian A.,* Hydrogen production during glucose fermentation by Escherichia Coli: Effects of oxidative and reductive routes on the strain lacked of hydrogen oxidizing hydrogenases 1 and 2, 13th Int. Conf. Clean Energy, Abtracts, Istanbul (Turkey), 2014, P. 429.
12. *Soghomonyan D., Trchounian A.,* Proton-translocating f_0f_1 atpase as a target for combined effects of low-intensity electromagnetic irradiation and antibiotics on *Lactobacillusacidophilus*, ASM 114th General Meeting. Abstracts, Boston (USA), 2014, N. 754.
13. *Trchounian K., Abrahamyan V., Trchounian A.,* Role of formate transport coding *focA* and *focB* genes in H_2 production activity by *Escherichia coli* during glycerol fermentation at slightly alkaline pH, ASM 114th General Meeting. Abstracts, Boston (USA), 2014, N. 748.
14. *Trchounian K., Sawers R. G., Trchounian A.,* Proton motive force generation during glycerol fermentation: an important factor for reversibility of *Escherichia coli* hydrogenases, FEMS 2013, 5th Cong. Eur. Microbiologists, Leipzig (Germany), 2013, 1677.
15. *Trchounian K., Trchounian A.,* Glucose or Glycerol: Which Fermentation Substrate is better for H_2 Production by Bacteria?, 2nd Int. Conf. Young Sci. “Contribution of young generation in the development of biotechnology”, Yerevan, 2013, P. 9.
16. *Trchounian K., Trchounian A.,* Clean energy technology development: hydrogen production by *Escherichia coli* during glycerol fermentation, 13th Int. Conf. Clean Energy, Abstracts, Istanbul (Turkey), 2014, P. 324.

ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՋՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հարությունյան Ռուբեն Միքայելի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հովհաննիսյան Գալինա Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր, դոցենտ
2. Ազարյան Նորա Հրաչիկի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Գևորգյան Անի Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Զալինյան Գայանե Գեորգիի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Բաբայան Նելլի Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Մաթևոսյան Մարգարիտա Բենիամինի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Նեբիշ Աննա Անդրեյի, կենս. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Մաթևոսյան Մարգարիտա Բենիամինի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Խուդոյան Արմինե Ցոլակի, ավագ լաբորանտ
4. Հարությունյան Տիգրան Աշոտի, ավագ լաբորանտ
5. Վարժապետյան Աննա Սահակի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մարդու բջիջներում մակածված քրոմոսոմային խաթարումների տեղայնացման ուսումնասիրությունը տարածական եռաչափ մոլեկուլային բջջագենետիկական մոտեցումների օգնությամբ (պետական ֆինանսավորում):	Հովհաննիսյան Գ. Գ.
2. ԴՆԹ-ի վնասվածքների ուսումնասիրությունը Հայաստանի աղտոտված տարածքներում բնակվող մողեսների կենսացուցիչ տեսակների մոտ (պետական ֆինանսավորում):	Սիմոնյան Ա. Է.
3. Միկոտոքսինների գենաթունային էֆեկտների մոլեկուլային-բջջագենետիկական ուսումնասիրումը մարդու բջիջներում և դրանց կանխարգելումը (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Տ. Ա.

Թեմա 1. FISH մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել է միկրոկորիզներում 8, 15 և 20 քրոմոսոմների հանդիպման հաճախականությունը մարդու արյան բջիջներում: Կիրառվել են ցենտրոմերային և ամբողջական քրոմոսոմային զոնդեր՝ ամբողջական քրոմոսոմների և քրոմոսոմային ֆրագմենտների առկայությունը միկրոկորիզներում հայտնաբերելու համար: Որպես քրոմոսոմների վնասման գործոն կիրառվել է դասական կլաստոգեն միտոմիցին C-ն: Բացահայտվել է, որ 8-րդ և 15-րդ քրոմոսոմները վնասվում են կրկնակի բարձր հաճախականությամբ՝ 20-րդ քրոմոսոմի համեմատ, ինչը ապացուցում է գենոմում մուտագեններով մակածված վնասվածքների անհամաչափ բաշխումը:

Թեմա 2. Կատարվել են էկոգենոթունաբանական ուսումնասիրություններ՝ օգտագործելով մողեսներին որպես արտաքին միջավայրի աղտոտվածության կենսաինդիկատոր: ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակը գնահատվել է Քաջարանից բռնված D. raddei երկսեռ ժայռային մողեսների և Ստեփանավանից բռնված D. armeniaca կուսածին մողեսների էրիթրոցիտներում ԴՆԹ-կոմետ մեթոդով: Իրականացվում է տվյալների վիճակագրական վերլուծություն:

Թեմա 3. Մոլեկուլային բջջագենետիկայի մեթոդների կիրառմամբ ուսումնասիրվել են 6, 8, 15 և 17 քրոմոսոմներում միկոտոքսիններով մակածված ԴՆԹ-ի կրկնողությունների վարիացիաները (CNV) մարդու արյան բջիջներում: Կիրառվել են ամբողջական քրոմոսոմային, ցենտրոմեր-սպեցիֆիկ և BAC զոնդեր: Մետաֆազային քրոմոսոմների պատկերները գրանցվել են ISIS, իսկ CNV ֆլյուորեսցենցիան չափվել է Scion ծրագրերի միջոցով: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ աֆլատոքսին B1-ը հավաստիորեն փոփոխում է CNV հաճախականությունը մարդու արյան բջիջներում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Բաժին 1.01. Հետազոտվել են հայտնի հակաքաղցկեղային դեղամիջոցների՝ ցիսպլատինի և դոքսորուբիցինի հիման վրա սինթեզված նանոկոմպլեքսների բջջաթունային հատկությունները *in vitro* պայմաններում: Բացահայտվել է ցինկ-օքսիդային շերտի օպտիմալ հաստությունը՝ նանոկոմպլեքսի առավելագույն հակաքաղցկեղային ակտիվությունն ապահովելու համար:

Բաժին 1.02. Իրականացվել է Հայկական խաղողի որոշ սորտերի (Սեյրակ Արենի, Թոզոտ, Արենի կլոն, Արարատ, Սև խարջի, Էրեբունի, Հայաստան, Մուսկատ Երևանի, Վանի և Փարվանա) բջջասաղմնաբանական հետազոտությունը: Մեկ ծաղկում չորս զարգացած սերմնաբողբոջների փոխարեն նկատվել է 1-ից մինչև 2,8: Հայտնաբերվել է, որ մակրոգամետոգենեզի խախտումների մակարդակը սերմնաբողբոջներում ավելի բարձր է աբորիգեն սորտերում: Սերմերի ձևավորման խախտումների քանակը գերակշռում է նոր սելեկցիոն սորտերում:

Բաժին 1.03. Ուսումնասիրվել են բետայինի և աֆոբազոլի հակագենաթունային հատկությունները արյան քրոնիկ միելոիդ լեյկոզի KCL22 բջիջներում ԴՆԹ-կոմետ մեթոդով: Իրականացվել է N-ացետիլցիստեինի հակամուտագեն հատկությունների գնահատում KCL22 բջիջներում միկրոկորիզային թեստով: Ցույց է տրվել, որ բոլոր ուսումնասիրված միացությունները հավաստի իջեցնում են միտոմիցինով մակածված ԴՆԹ-ի և քրոմոսոմների վնասվածքների մակարդակը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	14	14

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Փարսադանյան Գ. Գ., Զալինյան Գ. Գ., Ներսեսյան Ս. Կ.,* Միկրոկորիզների մակարդակի գնահատումը Երևան քաղաքի և Հայաստանի գյուղական շրջանների ծնողկանների մոտ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի տարեկան հաշվետու գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու, N 1, Երևան, 2013, էջ 183-188:
2. *Небиш А. А., Торосян А. Б.,* Морфогенетические особенности некоторых армянских сортов винограда, Երիտասարդական գիտաժողով «Բույսերի արտադրության ինովացիոն տեխնոլոգիաների ժամանակակից հիմնախնդիրները», Երևան, 2013, էջ 17-22:
3. *Агаджанян Э. А., Авалян Р. Э., Атоянц А. Л., Геворкян А. Л., Минасян С. Г., Симонян А. Э., Арутюнян Р. М.,* Скрининг генотоксических эффектов вод рек бассейна оз. Севан с помощью растительной тест-системы - традесканции, Биолог. Журн. Армении, 1 (66), 2014, с. 31-35.
4. *Мулюкина Н. А., Ковалева И. А., Герус Л. В., Карастан О. М., Небиш А. А., Маргарян К. С., Мелян Г. Г., Арутюнян Р. М.,* Фенотипическая и генотипическая характеристика межвидовых сортов винограда Опаловый и Бурмунк, для получения перспективных гибридных форм, Биолог. Журн. Армении, 1 (66), 2014, с. 103-107.
5. *Arakelova E. R., Farmazyan Z. M., Khachatryan A. M., Avjyan K. E., Babayan N. S., Grigoryan R. M., Sarkisyan N. K., Singh Sh. R., In vitro* study of anticancer activity of polymer-based DOX-ZnO compositions: the case of vinyl alcohol (co)polymers, Journal of Nanogenomics and Nanomedicine, North America, 2, apr., 2014, p. 1-11.
6. *Arakelova E. R., Grigoryan S. G., Arsenyan F. G., Babayan N. S., Grigoryan R. M., Sarkisyan N. K., In vitro* and *in vivo* Anticancer Activity of Nanosize Zinc Oxide Composites of Doxorubicin, International Journal of Medical, Pharmaceutical Science and Engineering, Vol: 8, No:1, 2014, p. 33-38.
7. *Fan X., Sangpakdee W., Tanomtong A., Chaveerach A., Pinthong K., Pornnarong S., Supiwong W., Trifonov V., Hovhannisyan G., Loth K., Hensel Ch., Liehr Th., Weise A.,* Comprehensive molecular cytogenetic analysis of Barbary macaque (*Macaca sylvanus*), Biolog. Journal of Armenia, 1 (66), 2014, p. 98-102.
8. *Fan X., Sangpakdee W., Tanomtong A., Chaveerach A., Pinthong K., Pornnarong S., Supiwong W., Trifonov V., Hovhannisyan G., Aroutionian R. M., Liehr Th., Weise A.,* Molecular cytogenetic analysis of thai southern pig-tailed macaque (Macaca nemestrina) by multicolor banding, Proceedings of the Yerevan State University, № 1, 2014, p. 46-50.
9. *Harutyunyan T., Karapetyan A., Hovhannisyan G., Aroutiounian R.,* Combined genotoxic effects of aflatoxin B1, ochratoxin A and zearalenone in rat bone marrow and blood leukocytes. Korean Journal of Environmental Biology, v. 31, N 3, 2013, p. 189-191.
10. *Margaryan K., Aroutiounian R.,* Phenolic composition of Armenian grape varieties. Proceedings of young scientists conference dedicated to the 70 th anniversary of NAS RA "Modern problems of innovation technologies in plant production", Yerevan, 2013, p. 23-29.
11. *Margaryan K., Aroutiounian R., Melyan G., Failla O.,* Polyphenolic profiles detected in Armenian wine and table grape varieties. Cultivars Acta Horticulturae books, 1032, ISHS, 2014, p. 139-144.
12. *Movsesyan H. S., Aroutiounian R. M., Sahakyan L. V., Asmaryan Sh. G., Galstyan H. M., Bazikyan G. K., Martirosyan H. A., Saghatelyan A. K.,* Study of the cancer incidence in kids and juveniles in Yerevan in relation to air and soil pollution on their dwelling sites. Biological Journal of Armenia, 3 (65), 2013, p. 69-74.
13. *Simonyan A., Hovhannisyan G., Aroutiounian R., Jin Kyu Kim.,* Effect of *N*-acetyl-L-cysteine on human chronic myeloid leukemia cells KCL22 treated with mitomycin CJ. Ecol. Environ, 37 (1), 2014, p. 1-4.

14. *Simonyan A. E., Harutyunyan T. A.,Gevorgyan A. L., Tadevosyan E. H., Gabrielyan B. K., Badalyan N. S., Aroutiounian R. M.,* Levels of DNA damage in crayfish hemocytes. Proceedings of the Yerevan State University, (1), 2014, p. 58-60.

Զեկուցումների թեզիս

1. *Հարությունյան Տ. Ա., Սիմոնյան Ա. Է., Գևորգյան Ա. Լ.,* Հայաստանի ջրային միջավայրում քիմիական մուտագենների/կանցերոգենների մոնիթորինգ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի գիտաժողով, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 77-82:
2. *Арутюнян Р. М.,* Экологическая генетика человека и среды его обитания в Армении, Материалы V Международной научно-практической конференции “Актуальные проблемы биологии, нанотехнологий и медицины”, изд. Южного федерального университета, Ростов-на-Дону, 3-5 октября, 2013, с. 7-8.
3. *Арутюнян Р. М., Симонян А. Э., Оганесян Г. Г.,* Антимутагенез в клетках человека, Материалы V Международной научно-практической конференции “Актуальные проблемы биологии, нанотехнологий и медицины”, изд. Южного федерального университета, Ростов-на-Дону, 3-5 октября, 2013, с. 58-59.
4. *Арутюнян Т. А., Арутюнян Р. М., Оганесян Г. Г., Карапетян А. Ф.,* Комбинированное генотоксическое воздействие афлатоксина В 1, охратоксина А и зеараленона в лейкоцитах крови и клетках костного мозга, Материалы V Международной научно-практической конференции “Актуальные проблемы биологии, нанотехнологий и медицины”, издат. Южного федерального университета, Ростов-на-Дону, 3-5 октября, 2013, с. 334-336.
5. *Арутюнян Р. М., Лир Т., Оганесян Г. Г.,* Анализ повреждений ДНК и хромосом гибридными методами молекулярной цитогенетики, VI Съезд Вавиловского общества генетиков и селекционеров (ВОГиС) и ассоциированные генетические симпозиумы, Ростов-на-Дону, 15-20 июня, 2014, с. 106.
6. *Казарян Ш., Бабаян Н., Григорян Р., Саркисян Н., Аракелова Е.,* Противоопухолевая активность in vitro новых наноразмерных композитов на основе доксорубицина, XXI Международная конференция студентов, аспирантов и молодых ученых “Ломоносов-2014”, МГУ, сборник “Тезисы докладов”, секция “Биология”, Издательство Московского университета, апрель 7-11, 2014, с. 28.
7. *Babayan N., Apresyan L., Harutyunyan T., Grigoryan S., Arakelova E.,* New doxorubicin nanosize composites’ anticancer activity in vitro and in vivo. Proceedings of International young scientists conference “Perspectives for development of molecular and cellular biology”-4, Biolog. Journal of Armenia, Supplement 1 (65), Yerevan, October 21-22, 2013, p. 45-46.
8. *Chavushyan A., Hovhannisyan L., Mkrtchyan G., Hovsepyan M., Arakelyan A., Hakobyan S., Khoyetsyan A., Petrosyan M., Harutyunyan K., Musaelian R., Ayvazyan V., Hovhannisyan G., Aroutionian R., Boyajyan A.,* Comparative characteristics of different subpopulations of the immune complexes in psycho-neurological disorders: implication to disease-related molecular pathomechanisms. International Symposium on Neuroscience and Biological Psychiatry “Stress and behavior: Yerevan-2013”, Yerevan, September 20-21, 2013, p. 16-17.
9. *Margaryan K., De Lorenzis G.,* Molecular evolution of Myb-related genes in Armenian aboriginal grapevines. Proceedings of International young scientists conference “Perspectives for development of molecular and cellular biology”-4, Biolog. Journal of Armenia, Supplement 1 (65), Yerevan, October 21-22, 2013, p. 98-100.
10. *Margaryan K., Aroutiounian R., Melyan G., Failla O.,* Polyphenolic profiles detected in Armenian wine and table grape varieties. International Symposium on fruit culture and its traditional knowledge along Silk Road countries, Armenia & Georgia, November 4-8, 2013, p. 50.

11. *Nebish A. A., Melyan G., Aroutiounian R.,* Phenotypic studies of some Armenian grapevine aboriginal varieties. International Symposium on Fruit Culture and its Traditional Knowledge along Silk Road Countries, Armenia & Georgia, November 4-8, 2013, p. 49.
12. *Nebish A. A., Galstyan S. V.,* Cytoembryological and morphogenetic characteristics of some new selected Armenian grapevine varieties. Proceedings of International young scientists conference "Perspectives for development of molecular and cellular biology"-4, Biolog. Journal of Armenia, Supplement 1 (65), Yerevan, October 21-22, 2013, p. 109-110.
13. *Royo C., Carbonell-Bejerano P., Hernaiz S., Nebish A. A., Aroutiounian R. M., Ibanez J., Martinez-Zapater J. M.,* Analysis of the origin of parthenocarpy in grapevine cultivar Corinto Bianco. Second Annual Conference of the COST Action FA1106 "QualityFruit", Fleshy Fruit Development & Ripening, Chania, Crete, Greece, book of abstracts, September 22-25-th 2013, p. 57.
14. *Simonyan A.,* The protective effects of few natural and synthetic substances on human chronic myeloid leukemia cells KCL22. Proceedings of International young scientists conference "Perspectives for development of molecular and cellular biology"-4, Biolog. Journal of Armenia, Supplement 1 (65), Yerevan, October 21-22, 2013, p. 136-138.

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Նանագուլյան Միրանուշ Գերասիմի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Բաղալյան Սուսաննա Միշայի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Պողոսյան Աստղիկ Վիկտորի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Զաքարյան Նարինե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Էլոյան Ինեսսա Մակեդոնի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Շահազիզյան Իռեն Վաչագանի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Ադամյան Ռուզաննա Գեորգիի, դասախոս

Համատեղողներ

1. Հովհաննիսյան Եվա Խորենի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Սողոյան Եվա Յուրիի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Քարտաշյան Նունե Գրիգորի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Մարգարյան Լուսինե Վահանի, ավագ լաբորանտ
3. Մաթևոսյան Ռուզաննա Էդուարդի, ավագ լաբորանտ
4. Սողոյան Եվա Յուրիի, ավագ լաբորանտ
5. Ստեփանյան Անուշ Ստեփանի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Հայաստանի հարավային շրջանների սնկերի, բույսերի, կենդանիների կենսաբազմազանության վրա մարդածին գործոնի ազդեցության գնահատումը (պետական ֆինանսավորում) (Կենդանաբանության ամբիոնի հետ համատեղ):	Նանագյուլյան Ս. Գ.
2. Ծառաբնակ պոլիպորային սնկերի (բաժին Basidiomycota) գենետիկական ռեսուրսներն ու գենոտիպային բազմազանությունը և դրանց կենսատեխնոլոգիական պոտենցիալի գնահատումը (պետական ֆինանսավորում):	Բաղալյան Ս. Մ.
3. Բնափայտ քայքայող սնկերի հակաբորբոքային ակտիվության ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Ավագյան Ի. Ա.

16. Հարությունյան Սիրանուշ Վարդգեսի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Ազոտ պարունակող միացությունների կատաբոլիզմը և ամոնիակի չեզոքացման մեխանիզմները համեմատական էվոլյուցիոն տեսանկյունից (պետական ֆինանսավորում):	Դավթյան Մ. Ա.

Թեմա 1. Հաշվետու տարում ցույց է տրվել, որ ոչ ուրեոթելիկ արգինազի իզոֆերմենտները մասնակցում են պոլիամինների կենսասինթեզին և արգելակվում են նրանց ազդեցությամբ: Ցույց է տրվել նաև, որ երկկենցաղների և կաթնասունների ուրեոթելիկ արգինազը օժտված է որոշակի կառուցվածքային դոմեններով, որոնք տարբեր դենատուրացնող գործոնների նկատմամբ որոշակի կայունություն ունեն և ունակ են տարբեր աստիճանի ռենատուրացիայի և ռեակտիվացիայի: Իրականացվել են նաև արգինազի ֆլյուորեսցենտային հատկությունների ուսումնասիրություններ:

Շարունակվել է ջրածնի պերօքսիդի տարբեր կոնցենտրացիաների ազդեցության դինամիկայի ուսումնասիրությունը Asp. niger R-3 բորբոսասնկից անջատված L-ամինաթթվային օքսիդազների (L-արգինին, L-մեթիոնին, L-ալանին) վրա:

Ցույց է տրվել, որ հողային և հիդրոպոնիկայի եղանակով աճեցված բույսերի էքստրակտները զգալիորեն իջեցնում են գլյուկոզի կոնցենտրացիան արյան մեջ:

Օրնիթինային ցիկլի ֆերմենտների ակտիվության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առնետի ուղեղում ամիլոիդային սպիտակուցով ինտոքսիկացիայի պայմաններում ի հայտ է գալիս ինտակտ ուղեղում բացակայող օրնիթինտրանսկարբամոիլազային ակտիվություն, որին զուգընթաց կրկնակի բարձրանում է արգինազային ակտիվությունը:

Ցույց է տրվել, որ ծերացման ժամանակ և հիպօքսիայի պայմաններում առնետների գլխուղեղում տեղի է ունենում սպիտակուցների դեզամիդացում: Սպիտակուցների ամիդացման վրա հակասթրեսային ազդեցություն ունի Trifolium pratense-ն, որի ազդեցությունը հիպօքսիայի պայմաններում թուլանում է ծերացմանը զուգընթաց:

Շարունակվել են աշխատանքները տարբեր գործոնների ազդեցությամբ պուրինային ազոտային հիմքերը և նուկլեոզիդները դեզամինացնող ֆերմենտների ակտիվության փոփոխությունների ուսումնասիրման ուղղությամբ: Ցույց է տրվել, որ հիպոքսիայի բարձրացման պայմաններում տեղի է ունենում գուանինդեզամինազ, ադենինդեզամինազ և ադենոզինդեզամինազ ֆերմենտների ակտիվության զգալի աճ: Շարունակվել են համեմատական ուսումնասիրությունները ռենտգենյան ճառագայթահարման և հետճառագայթային ինկուբացիայի պայմաններում խմորասնկային բջիջներում պուրինային և պիրիմիդինային միացությունների դեզամինացման ուսումնասիրման ուղղությամբ:

ԵՆԹԱԲՋՋԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Վարդանյան Պողոս Հովհաննեսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Փանոսյան Գերասիմ Հարությունի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Ճավրշյան Ջանիկ Մամիկոնի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Անտոնյան Արա Պետիկի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Փարսադանյան Մարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Զաքարյան Արմեն Եգորի, կենս. գիտ. դոկտոր, գիտաշխատող
8. Հակոբյան Նունե Ռոմենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Մինասբեկյան Լիա Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Պողոսյան Գայանե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
11. Սարգսյան Էվելինա Գեորգիի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
12. Տիրացույան Սուսաննա Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
13. Դարբինյան Մերի Ռազմիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
14. Թորգոմյան Հեղինե Ռաֆիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
15. Թոչունյան Կարեն Արմենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
16. Հակոբյան Լիլիթ Յուրիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
17. Շահինյան Մարիամ Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
18. Վարդանյան Զարուհի Արմենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
19. Օհանյան Վահե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
20. Սարգսյան Հարություն Հրաչիկի, կրտսեր գիտաշխատող
21. Համբարձումյան Լիլիթ Արմենի, ավագ լաբորանտ
22. Մինասյանց Միքայել Վահանի, ավագ լաբորանտ
23. Սարգսյան Գոհար Գուրգենի, ավագ լաբորանտ
24. Սողոմոնյան Դիանա Ռազմիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Բջջի միասնական համակարգում կառուցվածքաֆունկցիոնալ փոխհարաբերությունները միջավայրի գործոնների ազդեցության ներքո (պետական ֆինանսավորում):	Վարդևանյան Պ. Հ.

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԴՆԹ-ի հետ էթիդիումի բրոմիդի (ԷԲ), մեթիլեն կապույտի (ՄԿ) և Hoechst 33258-ի (H33258) կոմպլեքսների ուսումնասիրությունները տարբեր իոնական ուժերում: Ստացված տվյալներից բացահայտվել է, որ լուծույթի փոքր իոնական ուժերի դեպքում ԷԲ-ն և ՄԿ-ը ԴՆԹ-ի հետ փոխազդում են երեք, H33258-ը՝ երկու եղանակներով: Ստացված տվյալներն ի հայտ են բերել, որ ԴՆԹ-ի հետ ինտերկալյացիոն մեխանիզմով կապվող ԷԲ-ն և ՄԿ-ը փոխազդում են նաև կիսաինտերկալյացիոն եղանակով: Ցույց է տրվել, որ ավելի մեծ իոնական ուժերի դեպքում ԴՆԹ-ի հետ ԷԲ-ի կապման եղանակների թիվը չի փոխվում, ՄԿ-ի դեպքում հայտնաբերվում է երկու եղանակ: ԴՆԹ-ի հետ կապման եղանակների թվի փոփոխություն չի հայտնաբերվում նաև Hoechst 33258-ի դեպքում, սակայն այդ եղանակներից մեկի կապման մեխանիզմը որակապես փոխվում է:

Հետազոտվել է ԾԲՀ հաճախականությունների ազդեցությունը կենդանիների արյան պլազմայի և էրիթրոցիտների թաղանթների վրա: Պարզվել է, որ ԾԲՀ ԷՄՃ բազմակի ճառագայթահարումը հանգեցնում է արյան պլազմայի մակերևութային լարվածության գործակցի փոփոխությանը, ինչպես նաև փոխվում են էրիթրոցիտների թաղանթի թափանցելիությունը և էրիթրոցիտների դիմացկունությունը թթվային հեմոլիզի պայմաններում: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ճառագայթահարված կենդանիների արյան կազմում փոխվում է բարձրակայուն և ցածրակայուն էրիթրոցիտների հարաբերությունը, խթանվում է արյունաստեղծումը, և աճում է երիտասարդ բարձրակայուն էրիթրոցիտների քանակը: Սակայն ԷՄՃ բազմակի ներգործության արդյունքում փոխվում են նաև էրիթրոցիտների մակերևութային լիցքի խտությունը և վերջիններիս էլեկտրակինետիկ շարժունակությունը էլեկտրական դաշտում:

Կորիզաթաղանթը բարձր կարգավորված կառուցվածքով թաղանթային խոչընդոտ է, որը տարանջատում է էուկարիոտ բջջի կորիզը ցիտոպլազմայից: Միևնույն ժամանակ այն ապահովում է կորիզացիտոպլազմային փոխանակությունը: Բացի դրանից՝ պարզվել է, որ կորիզաթաղանթի կազմում առկա որոշակի լիպիդները՝ խոլեստերինը, սֆինգոմիելինը և ֆոսֆատիդիլխոլինը, ինչպես նաև լամին B-ն ընդգրկված են կորիզաթաղանթի միկրոդոմենների կամ ներկորիզային կոմպլեքսների մեջ: Ընդ որում՝ այդ ներկորիզային կոմպլեքսներն ապահովում են կորիզաթաղանթի ու ակտիվ քրոմատինի կապը: Միկրոդոմենների լիպիդային կազմի քանակական փոփոխություն է դիտվում՝ կախված բջջի տրանսկրիպցիոն ակտիվությունից: Չի բացառվում կորիզաթաղանթի լիպիդների մասնակցությունը ցիտոպլազմայից կորիզ ցիսպլատինի ներթափանցման գործընթացում: Բացի դրանից՝ հնարավոր է նաև միկրոդոմենների կազմում ընդգրկված լիպիդների մասնակցությունը այդ դեղամիջոցի հակաքաղցկեղային և իմունոմոդուլացնող ազդեցությունների դրսևորման ժամանակ: Այդ ազդեցությունները կարող են իրականանալ կորիզաթաղանթի լիպիդների քանակական փոփոխությունների հաշվին: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են առնետի ուրցագեղձի կորիզաթաղանթի կազմում առկա ֆոսֆոլիպիդների և չեզոք լիպիդների կազմը և պարունակությունը հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի in vivo (24 ժամ) ազդեցությունից հետո:

Շարունակվել են ցածր ուժգնությամբ 51.8 և 53 ԳՀց հաճախականությամբ էլեկտրամագնիսական ալիքների և երրորդ սերնդի հակաբիոտիկ ցեֆտազիդիմի համակցված ազդեցության ուսումնասիրությունները կաթնաթթվային բակտերիաների *Lactobacillus acidophilus* VKMB-1660 վայրի շտամի աճի և կենսունակության, ինչպես նաև թաղանթային բշտիկների ԱԵՖ-ազային ակտիվության վրա: Ցույց է տրվել, որ նշված ֆիզիկական գործոնի ազդեցությամբ տեղի են ունենում բակտերիաների աճի ճնշում և կենսունակության նվազում, ընդ որում՝ այդ փոփոխություններն առավել ակնհայտ են դառնում ցեֆտազիդիմի հետ զուգակցման դեպքում: Նաև նկատվել է ԴՑԿԴ-զգայուն ԱԵՖ-ազային ակտիվության նվազում, ինչը վկայում է, որ H^+-ի տեղափոխող F_0F_1-ԱԵՖազը նշված գործոնի հիմնական թիրախ է:

Ուսումնասիրվել է նաև 51.8, 53.0, 70.6 և 73 ԳՀց հաճախության էլեկտրամագնիսական ալիքների առանձին և հակաբիոտիկների հետ համակցված ազդեցությունները *Enterococcus hirae* ATCC 9790 բակտերիաների աճման առանձնահատկությունների վրա կարճատև ճառագայթահարման պայմաններում: Ցույց է տրվել, որ 53.0, 70.6 և 73 ԳՀց հաճախություններում կարճատև ճառագայթահարումները զգալի ազդեցություններ չեն ցուցաբերում: Սակայն 51.8 ԳՀց հաճախությամբ կարճատև՝ 1, 5, 10, 15 րոպե ճառագայթահարումը խթանել է բակտերիաների աճը, ընդ որում՝ հստակ օրինաչափությամբ. 15 րոպե ճառագայթահարման դեպքում դիտվել է աճի առավելագույն խթանում՝ գրեթե 4 անգամ չճառագայթված նմուշների համեմատությամբ:

Շարունակվել են 1 ժամ տևողությամբ ցածր ուժգնությամբ 51.8 և 53 ԳՀց հաճախականությամբ էլեկտրամագնիսական ալիքներով ճառագայթահարված հակաբիոտիկներ ամպիցիլինի և դալացինի ուղղակի և անուղղակի ազդեցությունների ուսումնասիրությունները:

Ուսումնասիրվել է որոշ ծանր մետաղների իոնների ազդեցությունը *Enterococcus hirae* և Հայաստանի հանքային աղբյուրներից անջատված *Rhodobacter sphaeroides* բակտերիաների աճի և թաղանթային ակտիվության վրա: Պարզվել է, որ Mn^{2+}-ը խթանում է *E. Hirae*-ի աճը՝ կրճատելով լաг փուլի տևողությունը և մեծացնելով աճման տեսակարար արագությունը: Պարզվել է նաև, որ Mn^{2+}-ը ազդում է թաղանթով պրոտոն-կալիումական փոխանակության և թաղանթային բշտիկների ԴՑԿԴ-զգայուն պրոտոնային ԱԵՖ-ազային ակտիվության վրա: Այսպիսի ազդեցությունը կարող է պայմանավորված լինել մետաղի իոնների անմիջական ազդեցությամբ թաղանթի վրա: Կատարվել է նաև ԱԵՖ-ազային ակտիվության վրա պղնձի և երկաթի իոնների ազդեցության համեմատական վերլուծություն:

R. sphaeroides ծիրանագույն բակտերիաներում ցույց է տրվել Mn^{2+}-ի խթանող ազդեցությունը բակտերիաների ֆոտոտրոֆ աճի վրա: Առավելագույն ուժգնությամբ աճ դիտվել է 50 մՄ Mn^{2+}-ի ազդեցությամբ: Mn^{2+}-ի կոնցենտրացիայի ավելացումը հանգեցրել է բակտերիաների աճի ճնշմանը. 500 մկՄ Mn^{2+} ազդեցությամբ աճման տեսակարար արագությունը ճնշվել է 2 անգամ: Ջրածնի արտադրության արդյունավետությունը նույնպես դրսևորել է կոնցենտրացիոն կախվածություն. ջրածնի ելքը աճել է Mn^{2+}-ի կոնցենտրացիայի ավելացմանը (10-200 մՄ) զուգահեռ, սակայն 500 մկՄ Mn^{2+}-ի առկայությամբ ջրածնի ելքը նվազել է մոտ 4 անգամ՝ ստուգիչի համեմատությամբ:

Նաև ուսումնասիրվել է համակցված ծանր մետաղների ազդեցությունը *E. hirae* բակտերիաների վայրի տիպի և MS116 ԱԵՖ-ազային մուտանտի աճի և թաղանթային ակտիվության վրա: Ուսումնասիրվել են այնպիսի մետաղների զույգեր, ինչպիսին են՝ Cu^{2+}-Fe^{3+}; Cu^{+}-Fe^{3+}; Cu^{2+}-Fe^{2+}; Mn^{2+}-Fe^{3+}: Ստացված արդյունքները համեմատվել են նախկինում նույն քանակով (0.1 մՄ և 1 մՄ) առանձին մետաղների հետ կատարված փորձերի արդյունքների հետ, և պարզվել է, որ դիտվող ազդեցություններն էապես տարբերվում են: Ընդ որում՝ ազդեցությունները կարող են ինչպես ուժեղանալ կամ թուլանալ, այնպես էլ ընդհանրապես վերանալ: Ենթադրվում է, որ ծանր մետաղների ազդեցության թիրախ կարող են հանդիսանալ թաղանթակապ ԱԵՖ-ազները, և մետաղների միջև հնարավոր են որոշակի մրցակցային երևութներ:

Սկսվել են օքսիդիչ՝ ֆերիցիանիդի ազդեցության ուսումնասիրությունները *R. sphaeroides* բակտերիաների անաերոբ աճման առանձնահատկությունների վրա: Ֆերիցիանիդի կոնցենտրացիայի ավելացումը հանգեցրել է բակտերիաների աճի արգելակմանը. 2-5 մՄ ֆերիցիանիդը ճնշել է *R. sphaeroides*-ի աճման տեսակարար արագությունը 2.5-5.5 անգամ:

Ֆլավոնոիդները բուսական ծագման երկրորդային մետաբոլիտներ են, որոնք ցածրամոլեկուլային պոլիֆենոլներ են: Նրանք օժտված են կենսաբանական բարձր ակտիվության լայն սպեկտրով, ցուցաբերում են իմունամոդուլացնող, հակաբորբոքային, հակասթմատիկ, հակաուռուցքային և այլ ակտիվություններ: Ֆենոլային միացությունների ազդեցության հիմքում ընկած են նրանց հակաօքսիդանտային հատկությունները: Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են մի շարք դեղաբույսերի՝ *P. major-ի, A. absinthium-ի, C. laevigata-ի, L. nobilis-ի, O. basilicum-ի, H. perforatum-ի* էքստրակտների հակաօքսիդանտային հատկությունները: Կատարվել են վերը նշված բույսերի էթանոլային էքստրակտների հիմնական բաղադրիչների քանակական և որակական վերլուծություններ HPLC (ԲԱՀՔ) մեթոդով, բացահայտվել են ակտիվ բաղադրիչները, հետազոտվել են էքստրակտների և նրանց բաղադրիչների հակադոտ հատկությունները *in vivo* և *in vitro* փորձարարական մոդելային համակարգերում:

Հակառադիկալային ազդեցությունը գնահատվել է DPPH ռադիկալի գունազրկման, իսկ ֆլավոնոիդների ընդհանուր պարունակությունը կոլորիմետրիկ մեթոդներով: Ֆլավոնոիդների ամենամեծ քանակությունը հայտնաբերվել է *L. nobilis-ի,* իսկ ամենաքիչը՝ *A. absinthium-ի* էքստրակտի մեջ: Հետազոտված բույսերի սպիրտային էքստրակտներից ամենաբարձր հակառադիկալային ակտիվություն ունի *C. laevigata-ի* էքստրակտը, իսկ ամենացածրը՝ *O. basilicum-ը:* Ստացված արդյունքների համաձայն՝ բոլոր երեք էքստրակտները պարունակում են քվերցետին և քվերցետրին: Կարևորվում է այն փաստը, որ քվերցետինի քանակը էքստրակտներում և նրանց հակառադիկալային և հակաթունային ակտիվությունները կորելացվում են:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է կենսաբանական թաղանթների լիպիդներում մշտապես ընթացող գերօքսիդային օքսիդացման պրոցեսը նորմայում և որոշ պաթոլոգիաների ժամանակ: Կիրառվել է լիպոսոմների բազմակի սառեցման-հալեցման մեթոդով ստացման եղանակը: Մշակվել են ստանդարտ քեմիլյումինեսցենտային համակարգ (լիպոսոմներ+Fe^{2+}), դրա ինտենսիվության խթանման մեթոդ (ֆիզիկական ակտիվատոր՝ կումարին C-525, ռոդամին 6Ի): Ստացվել են լիպոսոմների, հեպատոցիտների կորիզաթաղանթների և միտոքոնդրիումների թաղանթների Fe^{2+} ինդուկցված ՔԼ-ի կինետիկայի վրա լիպոսոմների, երկաթի իոնների, կումարինի կոնցետրացիոն էֆեկտները: Մշակված եղանակի միջոցով ուսումնասիրվել է արյան պլազմայի, այլ կենսաբանական հեղուկների հակաօքսիդանտային ակտիվությունը:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավարներ՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Դալյան Եվա Բենոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Անանյան Գայանե Վոլոդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Արծրունի Իրինա Գեղամի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

3. Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Մատինյան Կարինե Ստեփանի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Յավրոյան Ժենյա Վաղինակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Հակոբյան Նունե Ռոմենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Հարությունյան Տիգրան Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Ղուկասյան Գայանե Բաբկենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Վարդապետյան Արմեն Ռուբենի, անաս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Ազիզյան Ռաֆայել Արմենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Դալլաքյան Մարինա Վահանի, կրտսեր գիտաշխատող
12. Եսոյան Սյուզաննա Սայաթի, կրտսեր գիտաշխատող
13. Թորոսյան Անահիտ Լևոնի, կրտսեր գիտաշխատող
14. Հովհաննիսյան Ազապի Գևորգի, կրտսեր գիտաշխատող
15. Մանուկյան Իսկուհի Մարտիկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

ԵՊՀ կենսաբանության և ֆիզիկայի ֆակուլտետների մասնագետները համագործակցում են Կառուցվածքային կենսաֆիզիկայի միջֆակուլտետային լաբորատորիայի շրջանակում: Հետազոտություններն ուղղված են բջջակորիզի հիմնական կառուցվածքների՝ կորիզաթաղանթի, կորիզային մատրիքսի, ինչպես նաև քրոմատինի և ԴՆԹ-ի վրա տարաբնույթ էնդոգեն և էկզոգեն էֆեկտորների *in vitro* և *in vivo* ներգործման մոլեկուլային մեխանիզմների պարզաբանմանը: Որպես դասական էնդոգեն կարգավորիչներ հանդես են գալիս տարբեր հորմոններ, իսկ որպես էկզոգեն էֆեկտորներ՝ մետաղ պարունակող տարբեր հակաուռուցքային պրեպարատներ /օրինակ՝ ցիսպլատինը, ցիսպալադիումը և այլն/:

1. Հաշվետու ժամանակահատվածում միջֆակուլտետային լաբորատորիայի Կենսաֆիզիկայի ամբիոնում գործող խմբում ուսումնասիրվել է ՊԱՌՊ-1-ի ակտիվության սեռական դիմորֆիզմից կախված կարգավորումը առնետների թիմոցիտներում և լյարդի բջիջներում, ինչը պայմանավորված է այս օրգանների՝ օրգանիզմի իմունային և հակատոքսիկացնող հզոր գործունեության առումով ունեցած նշանակությունից: Ցույց է տրվել, որ կոֆերմենտ $ՆԱԴ^+$-ի պարունակությունը առնետների լյարդի բջջակորիզներում մոտ երկու անգամ գերազանցում է վերջինիս պարունակությունը թիմոցիտների կորիզներում: Արձանագրվել է ՊԱՌՊ-1-ի ակտիվության օրգան-սպեցիֆիկ դրսևորումը: Համաձայն նախնական արդյունքների՝ ՊԱՌՊ-1-ի ակտիվությունը էապես տարբերվում է էգ և արու առնետների մոտ, ինչը կարող է բացատրել ֆերմենտի ինհիբիտորների էֆեկտիվության տարբերությունները տարբեր սեռերի մոտ:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պոլի(ԱԿՖ-ռիբոզ)պոլիմերազ-1-ի (ՊԱՌՊ-1) արգելակիչների կիրառությունը խթանում է բազմաթիվ դեղամիջոցների ազդեցությունը, ուսումնասիրվել է ՊԱՌՊ-1-ի արգելակիչներ ԱԵՖ-ի և բենզամիդի (Բամ) ազդեցությունը առնետների լյարդի բջիջներում և թիմոցիտներում հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի (ցիս-ԴԴՊ-ի) ներարկումից հետո: Ցույց է տրվել, որ իգական սեռի կենդանիների լյարդի բջիջների և թիմոցիտների ՊԱՌՊ-1-ի ակտիվությունը բավականին տարբեր է: Ֆերմենտի ակտիվությունն արու առնետների լյարդի բջիջներում ավելի զգայուն է Բամ-ի արգելակիչ ազդեցության հանդեպ: Ցիս-ԴԴՊ-ի ներարկումից հետո էգ առնետների լյարդի բջիջների զգայնությունը Բամ-ի արգելակիչ ազդեցության հանդեպ աճում է, իսկ արուների լյարդի

բջիջներում ՊԱՌՊ-1-ի ակտիվությունը նվազում է գրեթե երեք անգամ: ՊԱՌՊ-1-ի արգելակիչների ազդեցության փոփոխությունները, որոնք դիտվում են ցիս-ԴԴՊ-ի ներարկումից հետո, չարորակ ուռուցքների բուժման ժամանակ կարող են զգալի ներգործություն ունենալ լրացուցիչ դեղաբուժական միջամտությունների արդյունավետությունը մեծացնելու առումով: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և ներդրվել են մոլեկուլային իմունոլոգիական մեթոդներ՝ Ուեսթերն բլոթինգի և ELISA-ի մեթոդները:

Հաշվետու տարում շարունակվել են նաև հետազոտությունները բջջակորիզի տարբեր կառուցվածքների լիպիդային բաղադրամասերի վրա ցիսպլատինի in vivo ազդեցության առումով: Մասնավորապես իրականացվել են հետազոտություններ՝ նվիրված ֆոսֆոինոզիտիդային ցիկլի ֆոսֆոլիպիդների՝ մոնոֆոսֆոինոզիտիդների, դիֆոսֆոինոզիտիդների և տրիֆոսֆոինոզիտիդների պարունակության ցիսպլատինի ներգործության տակ դիտվող քանակական տեղաշարժերին: Հետազոտությունները ցույց տվեցին նաև, որ ցիսպլատինի ազդեցության արդյունքում գրանցված փոփոխություններն առաջացնում են միկրոդոմենների կազմում ընդգրկված հիմնականում 3 լիպիդների՝ ֆոսֆատիդիլխոլինի, սֆինգոմիելինի և խոլեստերինի խիստ որոշակի հարաբերության փոփոխություն: Դա իր հերթին կարող է անդրադառնալ ինչպես կորիզա-ցիտոպլազմային փոխանակման գործընթացի, այնպես էլ կորիզի հիմնական ֆունկցիաների վրա:

Հաշվետու տարում իրականացվել են նաև բազմասուբստրատ և մասնավորապես երկսուբստրատ ֆերմենտային ռեակցիաների կինետիկայի տեսական հետազոտություններ: Տարբեր համակարգչային փաթեթների միջոցով համակարգչային փորձը՝ *in silico* հետազոտությունները, թույլ են տալիս հայտնաբերել հետազոտվող օբյեկտների մի շարք առանձնահատկություններ, որոնք երբեմն բավականին դժվար է լինում հայտնաբերել *in vitro* հետազոտություններում: Համակարգչային մոդելների փորձարկումները, ինչպես նաև տարբեր տիպի արգելակիչների ազդեցության համեմատական վերլուծությունը վկայում են, որ ինչպես հաջորդական, այնպես էլ պինգ-պոնգ մեխանիզմներով ընթացող երկսուբստրատ ֆերմենտային ռեակցիաների կինետիկայի վրա առավել արդյունավետ են ոչ մրցակցային արգելակիչները: Արգելակման արդյունավետության տեսանկյունից ոչ մրցակցային արգելակիչներից հետո ֆերմենտային ռեակցիաների առավել արդյունավետ արգելակում են դրսևորում անմրցակցային արգելակիչները (բացառությամբ հաջորդական մեխանիզմով ընթացող ռեակցիայի՝ առաջին կոմպլեքսի նկատմամբ անմրցակցային արգելակչի): Ինչ վերաբերում է մրցակցային արգելակիչներին, ապա պետք է նշել, որ միևնույն սկզբնական կոնցենտրացիաներով տարբեր տիպի արգելակիչներից առավել նվազ արգելակում դիտվում է հենց մրցակցային արգելակիչների առկայության ժամանակ: Նշված տեսական հետազոտությունների հիման վրա հաշվետու տարում պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն:

2. Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայի Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում գործող խմբում շարունակվել են հետազոտությունները ԴՆԹ-պորֆիրին կոմպլեքսառաջացման առանձնահատկությունների բնագավառում: Մասնավորապես հիմնվելով ֆոտոդինամիկ թերապիայի և ուռուցքաբանության բնագավառում պորֆիրինների լայն կիրառությունների վրա՝ հետազոտվել են ԴՆԹ-պորֆիրին կոմպլեքսառաջացման առանձնահատկությունները ներկայումս ամենատարածված և էֆեկտիվ համարվող հակաուռուցքային պրեպարատ cisPt-ի առկայությամբ: Քանի որ ԴՆԹ-ի հետ պորֆիրինների փոխազդեցության մեխանիզմը պայմանավորված է կողմնային ռադիկալի տեսակով, դիրքով և, որ ամենակարևորն է, կենտրոնական մետաղի տեսակով, ուսումնասիրվել են օքսիէթիլ կողմնային ռադիկալով և փոխազդեցության տարբեր մեխանիզմներ նախընտրող մետաղապորֆիրիններ՝ Co(II), Cu(II), Zn(II), Ag(II), որոնք համեմատվել են մետաղ չպարունակող իրենց անալոգի հետ՝ H_2TOEtPyP4: Հետազոտությունները կատարվել են հիմնականում սպեկտրալ մեթոդներով: Մասնավորապես ցույց է տրվել, որ մեկ աքսիալ լիգանդով օժտված Co- և Zn-պորֆիրինները ԴՆԹ-ի հետ

փոխազդում են արտաքին կապման մեխանիզմով, իսկ մետաղ չպարունակող և Ag-, Cu-պարունակող հարթ պորֆիրինները նախընտրում են ինտերկալյացիոն մեխանիզմը: ԴՆԹ-ի պլատինացումը առավել վառ է դրսևորում կապման առանձնահատկությունները: Հայտնի է, որ cisPt-ի հակաուռուցքային ազդեցությունը հիմնված է հիմնականում ֆիզիոլոգիական պայմաններում ամուր կովալենտ կապերով կցակարումներ առաջացնելու վրա, որով հնարավոր է դառնում ուռուցքային ԴՆԹ-ի երկրորդային կառուցվածքի դեֆեկտավոր տեղամասերը կցակարել: Ցույց է տրվել, որ անկախ կենտրոնական մետաղի տեսակից՝ պորֆիրինները կայունացնում են ԴՆԹ-ի մոլեկուլը, որը հնարավորություն է տալիս այդ պորֆիրինները համատեղ կիրառել cisPt-ի հետ, քանի որ cisPt-ը ապակայունացնում է ԴՆԹ-ի մոլեկուլը: Այդ մասին են վկայում ԴՆԹ-պորֆիրին կոմպլեքսի հալման թերմոդինամիկական պարամետրերը: Կապման մեխանիզմների առանձնահատկությունները բացահայտելու նպատակով հաշվվել են կապման պարամետրերը՝ K և n, ինչպես cisPt-ի առկայությամբ, այնպես էլ առանց cisPt-ի: Ցույց է տրվել, որ լուծույթում cisPt-ի առկայությունը էապես ազդում է ԴՆԹ-ի հետ պորֆիրինների կապման առանձնահատկությունների վրա:

3. Հաշվետու տարում լաբորատորիայի էկոլոգիայի ամբիոնում գործող խմբում շարունակվել են մշակաբույսերի, մասնավորապես խաղողի տարբեր սորտերի և դրանց վայրի ցեղակիցների գենետիկական բազմազանության համեմատական ուսումնասիրությունները: Շարունակվել են Արենի-1 քարանձավային համալիրում հայտնաբերված բուսական մնացորդներից ԴՆԹ-ի անջատման և դրա քիմիական ու կենսաբանական առանձնահատկությունների գնահատման աշխատանքները: Կատարվում են նաև այդ մնացորդների քիմիական կազմի ուսումնասիրության և մասնավորապես դրանցում պորֆիրինային տիպի միացությունների հայտնաբերման աշխատանքներ: Փորձարարական աշխատանքների հետ մեկտեղ իրականացվել են նաև այլ աշխատանքներ՝ հիմնված համակարգչային մոդելավորման վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Օսիպյան Լիա Լևոնի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Գրիգորյան Կառլեն Վաղարշակի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Դանիելյան Ֆելիքս Դանիելի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Թոչունյան Արմեն Համբարձումի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
4. Հարությունյան Ռուբեն Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
5. Մինասյան Սիրանուշ Մինասի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
6. Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
7. Պոպով Յուրի Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
8. Եղիազարյան Էդուարդ Մուրազի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
9. Հովհաննիսյան Գալինա Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
10. Ադամյան Նոնա Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
11. Աղաջանյան Էվելինա Արտաշի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
12. Առաքելյան Մարինե Սեմյոնի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
13. Գրիգորյան Կարինե Մարտինի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

14. Երվանդյան Սիրունիկ Գերասիմի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
15. Զալինյան Գայանե Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
16. Էլոյան Ինեսսա Մակեդոնի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
17. Կարապետյան Աննա Ֆելիքսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
18. Կարապետյան Մարիետտա Արմենակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
19. Հովհաննիսյան Համասփյուռ Հովհաննեսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
20. Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
21. Պոպով Գեորգի Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
22. Սարգսյան Սուսաննա Հրաչի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
23. Ադամյան Ծովինար Իշխանի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
24. Աթոյանց Անահիտ Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
25. Աղայան Սարգիս Աղասու, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
26. Ավալյան Ռիմա Էդուարդի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
27. Բաբայան Նելլի Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
28. Գևորգյան Էմմա Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
29. Հովհաննիսյան Եվա Խորենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
30. Ղազարյան Աստղիկ Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
31. Ղազարյան Կարեն Արամայիսի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
32. Ղուկասյան Լիլիթ Էդիկի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
33. Մարգարյան Քրիստինե Սերյոժայի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
34. Նեբիշ Աննա Անդրեյի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
35. Շահազիզյան Իրեն Վաչագանի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
36. Գրիգորյան Կարեն Կառլենի, գիտաշխատող
37. Սահակյան Նաիրա Ժորայի, գիտաշխատող
38. Քսաջիկյան Նարինե Ներսեսի, գիտաշխատող
39. Ադամյան Ռուզաննա Գեորգիի, կրտսեր գիտաշխատող
40. Մարգարյան Արմինե Արմենի, կրտսեր գիտաշխատող
41. Մարգարյան Լուսինե Վահանի, կրտսեր գիտաշխատող
42. Պետրոսյան Աիդա Միքայելի, կրտսեր գիտաշխատող
43. Սողոյան Եվա Յուրիի, կրտսեր գիտաշխատող
44. Քեռյան Անդրանիկ Գեղամի, կրտսեր գիտաշխատող
45. Աբրահամյան Հերմինե Տիգրանի, ավագ լաբորանտ
46. Աբրահամյան Վարդուհի Ռաֆիկի, ավագ լաբորանտ
47. Առաքելյան Անուշ Հայկի, ավագ լաբորանտ
48. Գալստյան Հասմիկ Հենրիկի, ավագ լաբորանտ
49. Զաքոյան Ամալիա Կարոյի, ավագ լաբորանտ
50. Ծովյան Էլիզա Արմենի, ավագ լաբորանտ
51. Պարոնիկյան Արմինե Երվանդի, ավագ լաբորանտ
52. Պողոսյան Լուսինե Հակոբի, ավագ լաբորանտ
53. Սարգսյան Մարիամ Պետրոսի, ավագ լաբորանտ
54. Սիմոնյան Աննա Էդիկի, ավագ լաբորանտ
55. Հարությունյան Թեհմինե Կառլենի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Հայաստանի սնկերի կենսաբազմազանության տեսակային, տարածական և ֆունկցիոնալ կառուցվածքը (պետական ֆինանսավորում):	Նանագյուլյան Ս. Գ.
2. Կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող համակարգերի կենսաբազմազանություն (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Ռ. Մ.
3. Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավոր-ման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում (պետական ֆինանսավորում):	Մինասյան Ս. Մ.
4. Ողնաշարավոր կենդանիների սիմպատրիկ պոպուլյացիաներում գործող հիբրիդոգեն մեխանիզմների և միկրոէվոլյուցիոն պրոցեսների ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Դանիելյան Ֆ. Դ.
5. Դեղաբույսերի մեկուսացված կուլտուրաների և Հայաստանի տարբեր հողերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը (պետական ֆինանսավորում):	Թոչունյան Ա. Հ.

Թեմա 1. **«Հայաստանի սնկերի կենսաբազմազանության տեսակային, տարածական և ֆունկցիոնալ կառուցվածքը»** խմբի շրջանակում շարունակվել է Հայաստանի տարբեր մարզերի, մասնավորապես հատուկ պահպանվող տարածքների, միկրո- և մակրոմիցետների կենսաբազմազանության մոնիթորինգը: Շարունակվել են ուսումնասիրությունները հանրապետության և Լեռնային Ղարաբաղի որոշ քիչ հետազոտված շրջանների սնկերի և սնկային խմբակցությունների կարգաբանական և էկոլոգիական կազմի վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի մասնագետների հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ՝ կապված Թեղուտի և հարակից տարածքների միկոբիոտայի /հիմնականում մակրոմիցետների/, քարաքոսերի և մամուռների կենսաբազմազանության ուսումնասիրության հետ: Ստացված արդյունքները գտնվում են մշակման փուլում: Ամփոփվել են միկրոսկոպիկ սնկերի որոշակի տաքսոնոմիական խմբերի կենսաբազմազանության երկարատև ուսումնասիրությունները, արդյունքում հրատարակվել է «Микобиота Армении» («Հայաստանի միկոբիոտան») բազմահատորյակի ութերորդ հատորը, որը հանդիսանում է նախկինում տպագրված «Микофлора Армянской ССР» («Հայկական ԽՍՀ միկոֆլորան») մատենաշարի շարունակությունը: Սկսվել է նյութերի հավաք՝ Հայաստանում սնկաբանական և ֆիտոպաթոլոգիական հետազոտություններին նվիրված աշխատանքների մատենագրություն կազմելու նպատակով: Կատարվել են Հայաստանի կերային բույսերի ախտածին միկոբիոտայի տաքսոնոմիական և էկոլոգիական վերլուծություն, տեսակային կազմի բացահայտում: Իրականացվել է սնկերի զարգացման սեզոնային դինամիկայի որոշում Հայաստանի տարբեր բնակլիմայական գոտիներում և ֆլորիստիկ շրջաններում: Բացահայտվել են առավել վտանգավոր սնկային հիվանդությունների հարուցիչները և դրանց նկատմամբ կայուն տեր-բույսերը: Կազմվել է ախտածին սնկերի տվյալների բազա: Շարունակվել են Հայաստանի որոշ եկեղեցիների և խաչքարերի վրա տարածված քարաքոսերի, մամուռների և բարձրակարգ բույսերի ուսումնասիրությունները: Հայաստանի

Հնագույն ձեռագրերի ինստիտուտ մատենադարանի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվել են գրապահոցների օդի և գրքերի ֆոնդի միկոդեստրուկտորները: Շարունակվել են Հայաստանի տարբեր քաղաքների և գյուղերի գրադարաններում սնկերով վարակված գրքերի միկոդեստրուկտորների տեսակային կազմի հայտնաբերման աշխատանքները: Ուսումնասիրվել է նաև օդի աղտոտվածությունը տարբեր շինություններում, այդ թվում՝ ԵՊՀ-ի գրադարանի գրապահոցներում, բնակելի տարածքներում, դպրոցներում, մանկապարտեզներում, թանգարաններում և այլն: Շարունակվել են օտորինոլարինգոլոգիայի բաժանմունքի միկոտիկ հիվանդությունների հետազոտման աշխատանքները, ստուգվել է անջատված իզոլյատների զգայունությունը հակասնկային պատրաստուկների նկատմամբ: Կատարվել է Հայաստանում տարբեր ժամանակահատվածներում հայտնաբերված օնիխոմիկոզներով հիվանդների համեմատական վերլուծություն:

Անջատվել և նույնականացվել են ախտահարված տարբեր պոլիմերային նյութերից միկոդեստրուկտորների տեսակներ, որոնցից առանձնացվել են ռադիոռեզիստենտ հատկություններով օժտված սնկեր: Շարունակվել են «Պլաստպոլիմեր» գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ աշխատանքները ժամանակակից պոլիմերային նյութերի սնկադիմացկունության ուղղությամբ: Այդ նյութերը նախատեսվում է կիրառել տարբեր մակերևույթներից և հողերից ռադիոակտիվ նյութերի վնասազերծման ժամանակ:

Շարունակվել են արհեստականորեն աճեցվող որոշ սնկատեսակների ֆիզիոլոգիական ակտիվության օրինաչափությունների ուսումնասիրման աշխատանքները: Ընթացքում են բժշկական նշանակություն ունեցող սնկերի առանձնահատկությունների, դրանց դեղաբանական հատկությունների ուսումնասիրման աշխատանքները: Սկսվել են Հայաստանի տարբեր մարզերում խաղողի տարբեր տեսակների ֆիտոպաթոգեն սնկերի տարածման աշխատանքները:

Թեմա 2. **«Կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող համակարգերի կենսաբազմազանություն»:** Բաժին 1.01 Ուսումնասիրվել է Սևանա լճի՝ թերակղզու և Շորժա գյուղից հարավ ընկած տարածքից, ինչպես նաև լիճ թափվող Գավառագետ և Զկնագետ գետերի ջրերի նմուշների գենաթունային ազդեցությունը բուսական թեստ-օբյեկտ՝ տրադեսկանցիա 02 կլոն-ի կիրառմամբ: Գավառագետ և Զկնագետ գետերի ջրերը հավաստի բարձրացնում են տրադեսկանցիայի առէջաթելերի մազիկների ռեցեսիվ մուտացիոն դեպքերի (ՌՄԴ) և միկրոկորիզների (ՄԿ) հաճախականությունը ստուգիչի և մյուս նմուշների համեմատ: Բացահայտվել է բարձր դրական կորելյացիա ՌՄԴ-ի և ՄԿ-ի մակարդակների և Si, P, Al, Mn, Fe պարունակության միջև:

Բաժին 1.02 Իրականացվել է հայկական խաղողի գունավոր և սպիտակ 20 սորտերի ֆենոլային միացությունների վերլուծություն: Գումարային ֆենոլների առավելագույն քանակ դիտվել է Ալդարի, Կարմրահյութ և Թոզոտ սորտերի մոտ, որոնք ունեն պտղի սև գունավորում և օգտագործվում են գինու արտադրության մեջ: Ֆենոլների նվազագույն քանակ դիտվել է Արարատ և Վան սորտերի մոտ, որոնք ունեն պտղամաշկի բաց գունավորում և օգտագործվում են որպես սեղանի սորտեր: Խաղողի հայկական սորտերի համար ներկայացվել են ֆենոտիպային բնութագրեր: Ընտրվել են ֆենոլային միացությունների ամենաբարձր պարունակությամբ խաղողի սորտեր՝ հետագա սելեկցիոն աշխատանքներում կիրառելու համար:

Բաժին 1.03 Արարատի և Արագածոտն մարզերում ծննդկան կանանց բերանի խոռոչի բջիջներում ուսումնասիրվել են միկրոկորիզների մակարդակները, որոնք կազմում են համապատասխանաբար 2,1 և 1,7‰: Կանանց կրծքի կաթի նմուշներում քլորօրգանական պեստիցիդների պարունակությունը Արարատի մարզում ավելի բարձր է, քան Արագածոտն մարզում, սակայն դա չի առաջացնում միկրոկորիզների քանակի ավելացում: Կանանց ավելի ավագ տարիքային խմբում բացահայտվել է միկրոկորիզների ստույգ բարձրացում:

Բաժին 1.04 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ իրականացվել է Հայաստանի հնէաբանական հուշարձաններից (Վերին Նավեր և Շենգավիթ) վերցված հողերի 7 նմուշների պալինոլոգիական ուսումնասիրություն: Հայտնաբերվել են մշակովի (ցորեն) և վայրի հացազգիների ու խաղողի փոշեհատիկներ, հետևաբար նկարագրված շրջաններում զարգացած են եղել հողագործությունը և խաղողագործությունը:

Թեմա 3. **«Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավորման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում»:** Ալբինոս ցեղի առնետների վրա ուսումնասիրվել է ստորին անդաստակային կորիզի (ՍԱԿ) նեյրոնային ակտիվությունը ենթատեսաթմբի հարփորոքային և վերտեսողական կորիզների բարձրահաճախ էլեկտրական խթանման, թրթռահարման և PRP-1-ի կիրառման պայմաններում:

PRP-1-ի ներարկման պայմաններում գրանցվել են դրդման և արգելակման հավասարակշռված ռեակցիաներ, նյարդամիջնորդանյութերի ակտիվության հարմարողական փոփոխություններ ու ՍԱԿ-ի նեյրոնների ապրելունակության բարձրացում, թթվային ֆոսֆատազի ակտիվության բարձրացում երկարատև թրթռահարման պայմաններում:

Հետազոտությունների երկրորդ տարբերակում ուսումնասիրվել է գլխուղեղի տարբեր գոյացությունների (կեղևի զգայաշարժիչ շրջան, ենթատեսաթմբի հետին (NHP) և հարմիջային (HDM) կորիզների նեյրոնային ակտիվության վրա կարմիր երեքնուկի ազդեցությունը թթվածնաքաղցի դինամիկայում:

Երեքնուկի օգտագործումը նշված բոլոր գոյացությունների ազդակային ակտիվության վրա թողնում է շտկող ազդեցություն: Դրական ազդեցությունն առավել դրսևորվել է կեղևի նեյրոններում թթվածնաքաղցի I և II փուլերում: Ենթատեսաթմբի կորիզների և շնչառական կենտրոնի նեյրոնային ակտիվության վրա երեքնուկի դրական ազդեցությունն առավել նկատելի է թթվածնաքաղցի ծանր՝ 7500-8000մ փուլում: Ստացված արդյունքները վկայում են, որ երեքնուկը հակաթթվածնաքաղցային ազդեցություն է թողնում գլխուղեղի ուսումնասիրված գոյացությունների վրա:

Հետազոտությունների հաջորդ տարբերակում ուսումնասիրվել է ֆիզիկական ծանրաբեռնվածության ազդեցությունը վելոէրգոմետրի (3-րդ մակարդակի ուժգնությամբ) վրա աշխատելուց հետո և վերականգնողական շրջանի 15-րդ րոպեին: Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո դիտվել են ուսանողների անհանգստության մակարդակի իջեցում և տրամադրության ցուցանիշի բարձրացում, կենտրոնական հեմոդինամիկայի և սրտի կարգավորման սիմպաթիկ օղակի ինտեգրալային և սպեկտրային ցուցանիշների արտահայտված աճ: Նկատված տեղաշարժերը պահպանվել են վերականգնման շրջանի 15-րդ րոպեին:

Միաժամանակ ուսումնասիրվել են նաև Ա. Շիրակացու անվան կրթահամալիրի XI-րդ դասարանում սովորող աշակերտների հեմոդինամիկայի և սրտի ռիթմի կարգավորման հիմնական ցուցանիշները հոգեհուզական լարվածության պայմաններում:

Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ քննական սթրեսի պայմաններում գրանցվում են սրտի կծկումների հաճախության, արյան զարկերակային սիստոլային և դիաստոլային ճնշումների, արյան սիստոլային և րոպեական ծավալների, ինչպես նաև լարվածության ցուցչի, Am₀-ի, ՌՎՑ-ի, ԿԳԱՑ-ի, VLF-ի ու այլ ցուցանիշների փոփոխություններ, որոնք վկայում են քննական սթրեսի պայմաններում աշակերտների լարվածության և հոգնածության գործընթացների զարգացման մասին:

Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվել են № 72 մանկապարտեզում նախադպրոցական տարիքի գրիպով և անգինայով հաճախակի հիվանդացող երեխաների (փորձնական խումբ) արյան սիստոլային և դիաստոլային ճնշումներն ու սրտի կծկումների հաճախությունը: Փորձնական խմբի հետազոտվողների 45,5%-ի մոտ սիստոլային զարկերակային ճնշումը գերազանցում է տարիքային նորմայի սահմանները, իսկ 55%-ի մոտ դիտվել է դիաստոլային զարկերակային ճնշման

ցուցանիշների շեղում նորմայից: Դիտվել է նաև սրտի կծկումների հաճախության ցուցանիշների աճ առողջ երեխաների (ստուգիչ խումբ) համեմատությամբ:

Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվել է 30 օր (օրական 2 ժամ) աղմկահարված ճագարների արյան թթվածնային տարողությունը (ըստ շրջանառու արյան հեմոգլոբինի պարունակության և էրիթրոցիտների քանակի) մատուտակի արմատներով կերակրելու դեպքում:

Ստացված արդյունքներից հետևում է, որ երկարատև աղմուկի ազդեցության պայմաններում մատուտակի արմատներով կերակրումը զգալիորեն բարելավում է աղմկահարված ճագարների արյան թթվածնային տարողությունը: Աղմուկի և մատուտակի համակցված ազդեցության պայմաններում ավելանում են էրիթրոցիտների ընդհանուր քանակը, հեմոգլոբինի պարունակությունը, որի արդյունքում թթվածնային տարողությունն ավելանում է 22,8%-ով:

Թեմա 4. **«Ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիոն պրոցեսներն ապահովող մի շարք օրինաչափությունների ուսումնասիրությունն անհատական զարգացման և պոպուլյացիոն մակարդակով»** թեմայի շրջանակում, ըստ օրացուցային պլանի, շարունակվել են հետազոտությունները:

Իրականացվել են սողունների սիմպատրիկ պոպուլյացիաների թվաքանակի, սեռահասուն առանձնակների խտության, դրանց օրական և սեզոնային ակտիվության դինամիկայի, տարբեր տեսակների վարքի և կենդանիների կողմից էկոլոգիական խորշերի օգտագործման ուսումնասիրություններ, ինչպես նաև ամփոփվել են սողունների հելմինթոֆաունայի տեսակային և քանակական կազմի ու վարակվածության տարբեր ասպեկտների վերաբերյալ ստացված տվյալները, որոնց հիման վրա պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայաստանի որոշ սողունների հելմինթոֆաունան և տարբեր գործոնների ազդեցությունը վարակվածության վրա» թեմայով:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է Հայաստանի թռչունների արյան սպորավոր մակաբույծների հետազոտություն: Գիտարշավների ընթացքում հայտնաբերվել է նոր թռչնատեսակ Հայաստանի ֆաունայի համար (*Rhodospiza obsoleta*), ինչպես նաև իրականացվել է Կանաչ մորեհավի (*Hippolais icterina*) կարգավիճակի և տարածվածության բնութագրում: Շարունակվել են կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցության հետազոտությունները թռչունների արյան սպորավոր մակաբույծների տարածվածության վրա:

Հանրապետության հարավային շրջաններում՝ հիմնականում Շիկահողի արգելոցում, լքված հանքահորում հայտնաբերվել է սովորական երկարաթև տեսակի չղջիկների երկու ենթատեսակների խառը պոպուլյացիա: Կատարվել է այդ պոպուլյացիայի որոշ առանձնյակների հավաք, ձևաբանական, մակաբուծաբանական և գենետիկական ուսումնասիրությունների նպատակով: Կապան քաղաքի շրջակայքում հայտնաբերվել է ձեռքաթևավորների նոր տեսակ *Myotis alcathoe* Հայաստանի հանրապետության համար, որը հետազոտվել է Բեռլինի Բնության թանգարանում և տեսակը հաստատվել է գենետիկորեն: Պարզաբանվել են անտառային մկների տեսակային կազմը և կարգաբանական վիճակը Հայաստանում: Շարունակվել են նաև խոշոր կաթնասունների ուսումնասիրությունները հատկապես Վայոց ձորի մարզում:

Միկոտոքսինների՝ օրգանիզմի վրա ունեցած բացասական ազդեցության գնահատման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները շարունակվել են:

Թեմա 5. **«Դեղաբույսերի մեկուսացված կուլտուրաների և Հայաստանի տարբեր հողերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը»:** Հաշվետու տարում ուսումնասիրվել է *Hypericum elongatum* մեկուսացված կուլտուրայի հակաբակտերիական և հակաօքսիդանտային ակտիվությունը: Հակաբակտերիական ակտիվությունն ուսումնասիրվել է ագարում դիֆուզիայի մեթոդով տարբեր թեստ-օրգանիզմների կիրառմամբ *(Escherichia coli* VKPM M-17, *Salmonella typhimurium* TA 100, *Staphylococcus aureus* WDCM 5233, *St. citreus* WT, *Baciluus subtilis* A1WT, *B. mesentericus* WDCM 1873): Պարզվել է, որ երկրորդային նյութափոխանակության արգասիքների սինթեզի

ակտիվությունը կախված է մեկուսացված կուլտուրայի կուլտիվացման պայմաններից և սննդամիջավայրի կազմից: *H. elongatum* մեկուսացված կուլտուրայի հակաօքսիդանտային ակտիվությունն ուսումնասիրվել է էքսպրես-թեստի մեթոդով՝ DPPH-ի (2,2-diphenyl-1-picrylhydrazyl) կիրառմամբ: Պարզվել է, որ ուսումնասիրվող կուլտուրայի 1000, 500, 100, 50 pl/ml լուծամզվածքների հակաօքսիդանտային ակտիվությունը հասել է համապատասխանաբար 95%, 54,6%, 39,7%, 10,8%-ի և կախված է եղել կուլտիվացման պայմաններից: Հաշվետու տարում մշակվել են նաև թերապևտիկ բարձր արժեք ունեցող *S. balsamita* բույսի կուլտիվացման պայմանները: Բույսը հավաքվել է ծաղկման շրջանում Երևանի տարածքից (ծովի մակարդակից մոտ 1000 մ բարձրություն): Կալուսային կուլտուրան ստացվել է բաժակաթերթերից Մուրասիգե-Սկուգի սննդամիջավայրի վրա: Կալուսի աճի առանձնահատկությունների ուսումնասիրման համար որոշվել են աճի ինդեքսը և չոր նյութերի կուտակումը՝ աճեցման մեկ փուլում՝ 5, 10, 15, 20, 30 օրերի ընթացքում: *S. balsamita* կալուսի աճեցման 30-րդ օրը աճի ինդեքսը հասել է առավելագույնի՝ կազմելով 3.5: Կալուսային հյուսվածքի չոր նյութի առավելագույն քանակը դիտվել է միայն աճեցման 15-րդ օրը՝ հասնելով 7%-ի:

Ուսումնասիրվել են 51,8 և 53 ԳՀց հաճախականությամբ էլեկտրամագնիսական ալիքների և հակաբիոտիկ ցեֆտազիդիմի առանձին և զուգակցված ազդեցությունները կաթնաթթվային բակտերիաների *Lactobacillus acidophilus* շտամի կենսունակության և ԱԵՖ-ազային ակտիվության վրա: Որոշվել են վերը նշված հաճախություններով ճառագայթված և հակաբիոտիկ ցեֆտազիդիմով մշակված *L. acidophilus* բակտերիաների կենսունակությունը տարբեր pH-ներով (pH 2; 3; 4; 5; 7.5; 8) ՄՌՇ աճման միջավայրում, ինչպես նաև pH 4 և pH 6,5 միջավայրերում աճեցված *L. acidophilus* բակտերիաների թաղանթային բշտիկների ԱԵՖ-ազային ակտիվությունը:

Ցույց է տրվել, որ բակտերիաների կենսունակությունը զգալիորեն փոփոխվում է, և այդ փոփոխությունը առավել ակնհայտ է ճառագայթման և հակաբիոտիկի զուգակցման դեպքում, ինչպես նաև *L. acidophilus* բակտերիաների թաղանթային բշտիկները ցուցաբերում են նկատելի ԴՑԿԴ զգայուն ԱԵՖ-ազային ակտիվություն, որն առավել ակնհայտ է թթվային պայմաններում և զգալիորեն ճնշվում է 6,5 pH-ում՝ ճառագայթման և հակաբիոտիկի զուգակցման դեպքում:

Ուսումնասիրվել է տարբեր դեղաբույսերի լուծամզվածքների ազդեցությունը կաթնամթերքի մերանների թթվառաջացման և հակաբակտերիական ակտիվության վրա: Ռեհան մշակովի (*Ocimum basilicum* L.), հալվե իրականի (*Aloe vera* L.) և սրոհունդ ծակոտկենի (*Hypericum perforatum* L.) լուծամզվածքներով պատրաստված յոգուրտը, մածունն ու թանը դրսևորում էին հակաբակտերիական ակտիվություն գրամդրական *S. aureus* WDCM 5233 շտամի նկատմամբ: Հալվե իրականի և սրոհունդ ծակոտկենի լուծամզվածքների հավելումը դրդում է յուգուրտի պատրաստման համար նախատեսված համակեցության հակամանրէային ակտիվությունը *E. coli* VKMB-M17-ի նկատմամբ: Առաջարկվող համակեցություններով պատրաստված սննդամթերքի սպիտակուցային կազմում զգալի փոփոխություններ չեն դիտվել:

Ուսումնասիրվել է ջրածնի պերօքսիդ պարունակող առանձին բիոցիդային պատրաստուկների հակասնկային ազդեցությունը հյութերի արտադրության գործարանների սարքավորումներից և արտադրական մակերեսներից անջատված *Saccharomyces cerevisiae* և *Rhodotorula rubra* խմորասնկերի ցեղերի տեսակների վրա: Ցույց է տրվել խմորասնկերի ճնշման աստիճանը՝ կախված պատրաստուկի կոնցենտրացիայից, շփման ժամանակից և շտամների բնույթից: Իրականացվել է ՀՀ երկու մարզերի՝ Կոտայքի և Սյունիքի (Մեղրու տարածաշրջան) մեղուների փեթակներից վերցված քսուկների մանրէաբանական վերլուծություն: Անջատվել և նույնականացվել են միցելիալ և կոլիֆորմ բակտերիաների տեսակները՝ *Hafnia alvei, Serratia mascerans*, *Penicillium aurantiogriseum*, *P. brevi-compactu,* որոնք բնութագրվում են հանդիպման բարձր հաճախականությամբ: Կոլիֆորմ բակտերիաների նույնականացման համար օգտագործվել է API 20E թեստը: *Penicillium* ցեղի տեսակներով բարձր աղտոտվածություն ունեցող փեթակներում նկատվում էր կոլիֆորմ բակտերիաներով աղտոտման ցածր մակարդակ:

ՍՆԿԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Բաղալյան Սուսաննա Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Նարինե Գրիգորի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գրիգորյան Մարգարիտա Օգսենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Ասատրյան Անժելա Նովիկի, լաբորանտ
4. Շահբազյան Տաթևիկ Արշակի, լաբորանտ
5. Մկրտչյան Ջոն Ասպուրակի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մակրոմիցետների կարգաբանության և կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կենսատեխնոլոգիայում նրանց կիրառման նպատակով (պետական ֆինանսավորում):	Բաղալյան Ս. Մ.

Թեմա 1. Շարունակվել են կոպրինային սնկերի կարգաբանության և կենսաբանական առանձնահատկությունների հետազոտությունները Գյոթինգենի համալսարանի հետ համատեղ: Ուսումնասիրվել է դրանց որոշ տեսակների մոնոկարիոնային և դիկարիոնային իզոլյատների պրոտեոլիտիկ ակտիվությունը, իրականացվել են որոշ ներկայացուցիչների քիմիական՝ ճարպաթթվային և ածխաջրային կազմի, ինչպես նաև դեղաբանական հատկությունների ուսումնասիրման վերաբերյալ աշխատանքներ: Բացահայտվել են կարգաբանական նշանակություն ունեցող նոր կուլտուրալ հատկանիշներ: Ուսումնասիրվել է նաև կոպրինային սնկերի հակասնկային ակտիվությունը մարդու և կենդանիների պոտենցիալ պաթոգեն սնկերի նկատմամբ: Աշխատանքներ են տարվում *Ganoderma* ցեղի որոշ տեսակների (*Ganoderma lucidum, G. applanatum, G. adspersum, G. resinaceum* և ուրիշներ) կարգաբանության, կենսաբանական և գենետիկական առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ Բոլոնիայի և Ուրբինոյի (Իտալիա) համալսարանների հետ համատեղ: Ամփոփվել են Հյուսիսային Իրանում տարածված *Sclerotinia sclerotiorum* ֆիտոպաթոգեն սնկի բարձր գենոտիպային բազմազանության, ագրեսիվության և համապատասխանության խմբերի բացահայտման վերաբերյալ աշխատանքները Մազանդարանի շրջանի գյուղատնտեսության և բնական ռեսուրսների գիտական կենտրոնի հետ համատեղ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ավագյան Արծրուն Աբգարի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալներ՝ *Եղիազարյան Վարդան Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*
Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
031000	Հայոց լեզու և գրականություն
050100	Կրթության կազմակերպում
051300	Սոցիալական մանկավարժություն

Մասնագիտացումներ՝
(մագիստրոսական ծրագրեր)

Համաշխարհային գրականություն և գրականության տեսություն
Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ
Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն
Հայ գրականության պատմություն
Բարձրագույն կրթության կառավարում
Հանրակրթության կառավարում

Կրթական աստիճան, մասնագիտություն	***Ուսանողների թիվը՝ 728***							
	I կուրս		**II կուրս**		**III կուրս**		**IV կուրս**	
	պպ	**վճ**	**պպ**	**վճ**	**պպ**	**վճ**	**պպ**	**վճ**
Բակալավրիատ								
Հայոց լեզու և գրականություն	22	112	23	127	22	12	26	116
Սոցիալական մանկավարժություն	2	35	2	44	2	17	5	21
Ընդամենը	**24**	**147**	**25**	**171**	**24**	**29**	**31**	**137**
Մագիստրատուրա								
Հայոց լեզու և գրականություն	19	44	17	27	-	-	-	-
Կրթության կազմակերպում	3	14	3	13	-	-	-	-
Ընդամենը	**22**	**58**	**20**	**40**	-	-	-	-

Հեռակա ուսուցում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 369*				
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.	**30**	**37**	**33**	**75**	**76**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.	11	22	19	-	-
Կրթության կազմակերպ.	15	30	21	-	-
Ընդամենը	**26**	**52**	**40**	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադի-մության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	134	3	23	5	81
2-րդ	150	1	24	3	83
3-րդ	34	5	7	2	65
4-րդ	142	4	63	6	53
Սոցիալական մանկավարժություն					
1-ին	37	-	1	8	97
2-րդ	46	-	1	4	98
3-րդ	19	-	8	4	58
4-րդ	26	-	7	3	73
Ընդամենը	**588**	**13**	**134**	**35**	75
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	63	-	1	17	98
2-րդ	44	-	-	21	100
Կրթության կազմակերպ.					
1-ին	17	-	-	2	100
2-րդ	16	-	-	6	100
Ընդամենը	**140**	**-**	**1**	**46**	99

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադի-մության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	133	3	26	6	78
2-րդ	154	-	22	12	86
3-րդ	31	2	5	-	77
Սոցիալական մանկավարժություն					
1-ին	37	-	7	-	81
2-րդ	48	-	2	1	96
3-րդ	19	-	6	3	68
Ընդամենը	**422**	**5**	**68**	**22**	83
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	64	-	3	19	95
Կրթության կազմակերպ.					
1-ին	17	-	3	8	82
Ընդամենը	**81**	**-**	**6**	**27**	93

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 330 (50), այդ թվում նախորդ տարիներից՝ 11*			
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)		մագիստրատուրա	
	առկա	հեռակա	առկա	հեռակա
Հայոց լեզու և գրականություն	137 (17)	68 (4)	44 (20)	18
Սոցիալական մանկավարժություն	26 (4)	-	-	-
Կրթության կազմակերպ.	-	-	16 (5)	**21**
Ընդամենը	**163 (21)**	**68 (4)**	**60 (25)**	**39**

2013-2014 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիսներ
1	**6**	**3**	**3**	**119**	**12**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 7

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Եզեկյան Լյովիկ Կորյունի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ
2. Աբաջյան Աննա Հենրիկի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ադիլխանյան Անահիտ Զավենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Աղաջանյան Զարիկ Խաչատուրի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Թելյան Լեոնիդ Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Թիրաբյան Նելլի Հարությունի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Հայրապետյան Լևոն Հրանտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Մարգարյան Ռեբեկա Հայկարամի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Մեյթիխանյան Փառանձեմ Գառնիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Միքայելյան Կարինե Ռոբերտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Ներսիսյան Բագրատ Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Ներսիսյան Գոհար Միշայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
13. Ներսիսյան Նարինե Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
14. Սաղաթելյան Ռիտա Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
15. Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
16. Սուքիասյան Քնարիկ Աշոտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
17. Տեր-Մինասյան Աշոտ Անդրանիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
18. Գաբրիելյան Սուսաննա Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
19. Գևորգյան Շուշանիկ Սամսոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
20. Մադանյան Մադլենա Նորիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
21. Մանուկյան Անահիտ Լևոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
22. Մովսիսյան Անահիտ Ժորայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
23. Մուրադյան Անի Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
24. Սարգսյան Հրաչին Գրիշայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
25. Քամալյան Արևիկ Սերգեյի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
26. Քոշատաշյան Սիլվա Սերյոժայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
27. Ֆալակյան Մանուկ Հարությունի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
28. Կիրակոսյան Մարիամ Վրույրի, ասիստենտ
29. Համբարձումյան Ռիմա Սերժիկի, ասիստենտ
30. Գրիգորյան Նելսոն Գրիգորի, դասախոս
31. Եզեկյան Լիլիթ Լևիկի, դասախոս

Համատեղողներ

1. Տոնոյան Թադևոս Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մելքոնյան Լուիզա Արմենի, դասախոս
3. Պապիկյան Լիլիթ Միհերի, դասախոս
4. Սարգսյան Լիանա Սամվելի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Սարգսյան Լիանա Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
2. Մելքոնյան Լուիզա Արմենի, ավագ լաբորանտ
3. Պապիկյան Լիլիթ Միհերի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013-2014 հաշվետու տարում ամբիոնը ծավալել է գիտաուսումնական բավարար գործունեություն:

2013թ. հոկտեմբերի 17-ին և 18-ին «Հայագիտությունը և արդի մարտահրավերները» միջազգային հայագիտական համաժողովում զեկուցումներ են կարդացել պրոֆ. Յուրի Ավետիսյանը, դոց. Լեոնիդ Թելյանը և դոց. Փառանձեմ Մեյթիխանյանը:

2014թ. մայիսի 13-ին և 14-ին «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային երկրորդ գիտաժողովում զեկուցումներ են կարդացել պրոֆեսորներ Յուրի Ավետիսյանը, Աննա Աբաջյանը, դոցենտներ Բագրատ Ներսիսյանը, Անահիտ Ադիլխանյանը և ասիստենտ Շուշան Գևորգյանը:

2014թ. մարտի 24-ին և 28-ին ԵՊՀ-ի և Թբիլիսիի պետական համալսարանի համատեղ միջազգային գիտաժողովին մասնակցել է դոց. Բագրատ Ներսիսյանը:

2014թ. ապրիլին կազմակերպվել է հանդիսավոր նիստ՝ նվիրված վաստակաշատ լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի ծննդյան 90-ամյակին:

3. *Գալստյան Մ. Վ.,* Միգրացիայի միտումները հետխորհրդային Հայաստանի բնակչության շրջանում (1991-2010), Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, հայ ժողովրդի մշակույթ, XVI, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 283-291:
4. *Գալստյան Մ. Վ.,* Սոցիալական ցանցերը և Հայաստանից աշխատանքային միգրացիայի ձևավորման առանձնահատկությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 203-213:
5. *Զոհրաբյան Ա. Լ.,* Մահմեդական մակադրոշմներով բյուզանդական դրամների շրջանառությունը Հայաստանում XII դարում, «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2013, էջ 24-26:
6. *Զոհրաբյան Ա. Լ.,* Սեֆյան դրամահատման կնիքներ՝ հայտնաբերված Հայաստանից, Պայման, Թեհրան, 2013, էջ 108-112 (պարսկերեն):
7. *Զոհրաբյան Ա. Լ.,* Շապուհ Բ-ի դրամ խաչի պատկերով, «Պայման», Թեհրան, 2013, էջ 120-125 (պարսկերեն):
8. *Կիրակոսյան Լ. Վ.,* Ղազարավանի և Օրգովի ամրոց-բնակատեղիները (Պաշտպանական համակարգի և ճարտարապետության շուրջ), «Հուշարձան» տարեգիրք, Ը, Երևան, 2013, էջ 71-81:
9. *Կիրակոսյան Լ. Վ.,* Մշակութային եղեռն (Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով), «Հայագիտության հարցեր» հանդես, 1, Երևան, 2014, էջ 107-119:
10. *Կիրակոսյան Լ. Վ.,* Նորահայտ ամրոցը Արցախի Տիգրանակերտի մերձակայքում, «Հայագիտական ուսումնասիրություններ», 4, Ստեփանակերտ, 2014, էջ 14-21:
11. *Մարգարյան Ն. Մ.,* Հայերի անձնանվանական համալիրի փոխակերպումները հետխորհրդային ժամանակահատվածում (նորածինների անձնանվանական համալիրի քննություն), «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» գիտաժողովի նյութերի ժողովածու, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 181-187:
12. *Մարգարյան Ն. Մ.,* Անձնանունը և քաղաքական հաղորդակցությունը, «Հանրային հաղորդակցություն. արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, էջ 90-98:
13. *Մաթևոսյան Կ. Ա.,* Լրացումներ Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերում, «Էջմիածին», Ա, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2013, էջ 130-139:

14. *Մաթևոսյան Կ. Ա.,* Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցու անուան շուրջ, «Հանդէս ամսօրեայ», Երևան-Վիեննա, 2013, էջ 311-326:
15. *Մաթևոսյան Կ. Ա.,* Հավուց թառի գրչության կենտրոնը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 19, Երևան, 2013, էջ 159-172:
16. *Հայրապետյան Թ. Լ.,* Առասպելական տարրերը Բահաթրյանների գրառած հրաշապատում հեքիաթներում (Շուշի, XIX դարի երկրորդ կես), «Շուշին հայկական մշակույթի օջախ» հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., Շուշի, 2014, էջ 113-123:
17. *Հայրապետյան Թ. Լ.,* Շիրակի ժողովրդական հեքիաթները (ըստ XX դարի սկզբի գրառումների), «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2013, էջ 195-196:
18. *Հայրապետյան Թ. Լ.,* Նվիրագործման ծեսը հեքիաթային անտառում (հայկական հրաշապատում հեքիաթների հիման վրա) «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 4, Երևան, 2013, էջ 7-13:
19. *Հայրապետյան Թ. Լ.,* Հայ ժողովրդական հեքիաթների աղայանական մշակումների շուրջ, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 4, Երևան, 2013, էջ 53-60:
20. *Հայրապետյան Թ. Լ.,* Հայ ժողովրդական հեքիաթների սյուժեների ու տիպերի նշացանկի նախնական տարբերակը (ըստ Աարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների տիպերի միջազգային նշացանկի), Հայ ժողովրդական մշակույթ, XVI, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» գիտաժողովի հոդվածների ժողովածու, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 375-383:
21. *Պետրոսյան Հ. Լ.,* Հայ ինքնության խորհրդանշանները և դրանց մերօրյա դրսևորումները. տապանակիր լեռը և կորուսյալ դրախտը, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում» գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 123-138:
22. *Պետրոսյան Հ. Լ.,* Հուշարձանը և հասարակությունը. Արցախի Տիգրանակերտ, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական երկրորդ համաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 100-101:
23. *Պիկիչյան Հ. Վ.,* Ռաբիս պարը. նախնական դիտարկումներ, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» գիտաժողովի նյութերի ժողովածու, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 217-224:
24. *Антонян Ю. Ю.,* Возвращение героя: новые культы “древней” религии, в: Язычество в XX-XXI вв.: российский и европейский контекст, Colloquium Heptaplomeres: Научный альманах, Выпуск I, НГПУ им. К.Минина, Нижний Новгород, 2014, с. 126-135.
25. *Антонян Ю. Ю.,* (совместно с Л. Абрамяном, С. Акопяном, Л. Гущяном, Г. Мелкумяном, С. Мкртчяном, А. Погосяном, Г. Шагояном), Дискуссия по поводу статьи М. Соколова и К. Титаева, Антропологический Форум, # 19, Санкт Петербург, 2013, с. 189-215.
26. *Мкртчян Р. А., Воронцова Е.,* Изучение вариабельности строения черепов из могильника Неркин Геташен (Республика Армения), Вестник Московского университета, Серия 23, Антропология, № 1, Москва, 2014, с. 57-73.
27. *Antonyan Yu. Yu.,* Reminiscences of the Future: the Social Life of Monuments in Refugee-villages, in: Caucasus, Conflict, Culture. Anthropologica Perspectives on the Time of Crisis, S. Voell, K. Khutsishvili, eds., Curupira: Marburg, 2014, pp. 195-208.
28. *Mkrtchyan R. A., Simonyan H. A.,* Vorbericht zur Paleoanthropologie des Skelettmaterials von Norabak 1 und Sotk 2, Archeologie in Armenia II, Band 67, 2013, p. 280.

Զեկուցումների թեզիս

1. *Հայրապետյան Թ. Լ.,* Ամանոր և Վանատուր դիցազույզը՝ իբրև նորապտղի ծպտյալ հովանավոր, «Գերբնականի խորհուրդը հեքիաթում» գիտաժողովի թեզիսներ, Հ. Թումանյանի թանգարան, Երևան, 2014, էջ 30-33:
2. *Մարգարյան Ն. Մ., Թորոսյան Մ. Գ.,* Հաբիթուսը, մշակութային կապիտալը և մշակույթի ընկալումը, «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողով, Հայագիտական կենտրոն, Գյումրի, 4-6 հոկտեմբեր, 2013:
3. *Մարգարյան Ն. Մ., Հարությունյան Ղ. Ա.,* ՀՀ Գյումրիի համայնքի 2009-2012թթ. բյուջետային քաղաքականության հետազոտություն, Գյումրի, 2013:
4. *Պետրոսյան Հ. Լ.,* Հայ ինքնության խորհրդանշանները և դրանց մերօրյա դրսևորումները. տապանագիր լեռը և կորուսյալ դրախտը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 123-138:
5. *Պետրոսյան Հ. Լ.,* Հուշարձանն ու հասարակությունը. Արցախի Տիգրանակերտ, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, հայագիտական երկրորդ համաժողով, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2013, էջ 100-101:
6. *Պետրոսյան Հ. Լ.,* Մշակութային ժառանգության հանրահռչակման մի օրինակի մասին. Արցախի Տիգրանակերտ, Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողով, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 24:
7. *Мкртчян Р. А., Воронцова Е. Л.,* О роли ДВП как генетических маркёров в анализе могильников с коллективным обрядом погребений (на примере могильника Неркин Геташен), Международная научно-практическая конференция “Современная антропология: новые данные, перспективы развития, методологические принципы”, Минск, 25-27 июня, 2014, с. 23-25.

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Եղիազարյան Արման Սամվելի, պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Համատեղողներ

1. Մարուքյան Արմեն Ցոլակի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մխիթարյան Գայանե Մելիսի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավետիսյան Լևոն Վազգենի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Դանիելյան Համազասպ Գրիգորի, քաղ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մինասյան Տաթևիկ Էդիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013-2014 հաշվետու տարում ամբիոնը ծավալել է գիտաուսումնական լայն գործունեություն՝ հիմնված 2013թ. մշակված «Սփյուռքագիտության զարգացման հայեցակարգ»-ում ամրագրված սկզբունքների վրա:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են «Սփյուռքագիտություն» տարեգրքի պատրաստման աշխատանքներին: Տարեգրքում զետեղվել են Սփյուռքի տարբեր ոլորտներին առնչվող գիտական հոդվածներ և հաղորդումներ:

Մշակվել է մագիստրոսական ծրագրի նոր առարկայացանկը, որը միտված է սփյուռքագիտությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: Նոր առարկայացանկը կազմված է միջկրթանքային մոտեցման սկզբունքին համապատասխան:

2014թ. մայիսի 14-16-ը ամբիոնը, ի դեմս Ա. Եղիազարյանի, մասնակցել է Բեյրութում կազմակերպված «Հայերը Լիբանանում» միջազգային գիտաժողովի աշխատանքներին: Լիբանանի համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հաստատվել են համագործակցության ձևաչափեր:

2014թ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Սփյուռքագիտության ամբիոնի և Համազգային հայ կրթական և մշակութային միության ներկայացուցիչները մշակել են «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը և համապատասխան առարկայացանկը: «Հայագիտություն» ծրագիրը կգործի 2014 թվականից:

Ամբիոնի դասախոսները (Ա. Եղիազարյան, Հ. Ալեքսանյան, Ա. Մարուքյան, Գ. Մխիթարյան, Է. Հովհաննիսյան) մասնակցել են ՀՀ-ում և արտերկրում կայացած մի շարք գիտաժողովների:

Հաշվետու տարում ամբիոնի դասախոսները հրատարակել են մենագրություններ և գիտական հոդվածներ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	3	-	-	14	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Եղիազարյան Ա. Ս.*, Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 80 էջ:
2. *Ալեքսանյան Հ. Ս.,* Հայկական համայնքները Խորհրդային հանրապետություններում 1917-1941թթ., «Տիր» հրատ., Երևան, 2014, 221 էջ:
3. *Մարուքյան Ա. Յ.,* Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2014, 332 էջ:

Հոդված

1. *Եղիազարյան Ա. Ս.,* Բագրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը, Մաս երկրորդ. Համավրացական թագավորության ինքնուրույն պատմական հեռանկարի ուրվագծերը, «Վէմ» համահայկական հանդես, N 2, Երևան, 2013, էջ 32-57:
2. *Եղիազարյան Ա. Ս.,* Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարը, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում» գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 81-92:
3. *Եղիազարյան Ա. Ս.,* Բագրատունիները եւ Վրացական թագաւորութեան պետական գաղափարաբանութեան ձեւաւորումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2013, էջ 67-82:
4. *Եղիազարյան Ա. Ս.,* Տայքը և Կղարջքի կուրապաղատությունը IX դարում, «ԲԵՀ. Հայագիտություն», 141.1, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 3-15:
5. *Եղիազարյան Ա. Ս.,* Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն. տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 3-28:
6. *Եղիազարյան Ա. Ս.,* Բագրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը: Մաս երրորդ. Քաղկեդոնական երկրամասերի միավորումը և Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության ստեղծումը, «Վէմ» համահայկական հանդես, N 4, Երևան, 2013, էջ 30-59:
7. *Եղիազարյան Ա. Ս.,* Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «Վէմ» համահայկական հանդես, N 1, Երևան, 2014, էջ 62-75:
8. *Հովհաննիսյան Է. Գ.,* Երկու փաստաթուղթ Հայաստան-Սփյուռք քաղաքական հարաբերությունների սկզբնավորման պատմության վերաբերյալ, «Սփյուռքագիտություն. տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 76-96:
9. *Հովհաննիսյան Է. Գ.,* Մարտնչող անաստվածների գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Էջմիածին», Ա, հունվար, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2014, էջ 100-107:
10. *Մարուքյան Ա. Յ.,* Սփյուռքի ջանքերը միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունման գործում, «Սփյուռքագիտություն. տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 29-43:
11. *Մարուքյան Ա. Յ.,* Պատմություն և իրավունք. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեռ Նորայի «փաստարկները», «Վէմ» համահայկական հանդես, N 2, Երևան, 2013, էջ 10-31:
12. *Մարուքյան Ա. Յ.,* Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները և հայ-թուրքական հարաբերությունները, «Գիտության աշխարհում», N 1, Երևան, 2014, էջ 10-19:
13. *Մինասյան Տ. Է.,* Հայրենիք-Սփյուռք առնչությունները կրթամշակութային բնագավառում ՀՀ անկախության տարիներին, «Սփյուռքագիտություն. տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 140-148:
14. *Марукян А. Ц.,* Новые тенденции в процессе отрицания Геноцида армян (о попытках отрицания Геноцида армян российскими историками М. Мейером и О. Кузнецовым), «Լրաբեր (հաս. գիտ.)», N 1, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 19-45:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Վարդանյան Յուրի Լազարի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալներ՝ *Մովսիսյան Կարեն Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
011200	Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա
011300	Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա
011400	Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում

Մասնագիտացումներ՝ (մագիստրոսական ծրագրեր)	Ալիքային պրոցեսների տեսություն և տիեզերքի ֆիզիկա ԳԲՀ ռադիոֆիզիկա Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ

1. Հարությունյան Վլադիմիր Միքայելի
2. Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի
3. Վարդանյան Յուրի Լազարի (թղթակից անդամ)

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Վարդանյան Յուրի Լազարի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 284*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա	22	18	20	38	4	8	21	18
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	7	-	5	16	-	-	4	1
Հեռահաղ. և ազդանշ. մշակում	3	9	5	16	-	-	-	-
Ընդամենը	**32**	**27**	**30**	**70**	**4**	**8**	**25**	**19**
Մագիստրատուրա								
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա	12	11	9	13	-	-	-	-
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	6	-	6	1	-	-	-	-
Հեռահաղ. և ազդանշ. մշակում	4	3	1	3	-	-	-	-
Ընդամենը	**22**	14	**16**	**17**	-	-	-	-

Հեռակա ուսուցում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 34*				
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս
Բակալավրիատ					
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա	-	12	7	11	4

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադի-մության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա					
1-ին	40	4	15	1	53
2-րդ	58	3	31	5	41
3-րդ	12	-	-	-	100
4-րդ	39	4	15	4	51
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	7	1	-	-	86
2-րդ	21	2	8	1	52
3-րդ	-	-	-	-	-
4-րդ	5	1	-	1	80
Հեռահաղ. և ազդանշ. մշակում					
1-ին	12	-	6	-	50
2-րդ	21	2	13	-	29
3-րդ	-	-	-	-	-
4-րդ	10	-	3	3	70
Ընդամենը	225	17	91	15	52

Մագիստրատուրա					
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա					
1-ին	23	-	-	10	100
2-րդ	22	-	-	18	100
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	6	-	-	6	100
2-րդ	7	-	-	7	100
Հեռահաղ. և ազդանշ. մշակում					
1-ին	7	-	-	1	100
2-րդ	4	-	-	2	100
Ընդամենը	**69**	**-**	**-**	**44**	100

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադի-մության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա					
1-ին	33	5	9	1	58
2-րդ	56	2	31	4	41
3-րդ	15	4	4	1	47
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	7	2	-	-	71
2-րդ	20	3	13	1	20
3-րդ	-	-	-	-	-
Հեռահաղ. և ազդանշ. մշակում					
1-ին	12	-	7	-	42
2-րդ	20	1	11	-	40
3-րդ	-	-	-	-	-
Ընդամենը	163	17	75	7	44
Մագիստրատուրա					
Ռ/Ֆ և էլեկտրոնիկա					
1-ին	23	-	-	8	100
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	6	-	-	5	100
Հեռահաղ. և ազդանշ. մշակում					
1-ին	7	-	-	4	100
Ընդամենը	**36**	**-**	**-**	**17**	**100**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Ընդամենը՝ 94 (27), այդ թվում նախորդ տարիներից՝ 1		
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)		մագիստրատուրա
	առկա	հեռակա	
Ռ/ֆ և էլեկտրոնիկա	38 (4)	4	21 (15)
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	7 (1)	-	7 (7)
Հեռահաղ. և ազդանշ. մշակում	10 (3)	-	4 (2)
Ընդամենը	**55 (8)**	**4**	**35 (19)**

2013-2014 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	-	-	39	16

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ԳԵՐԲԱՐՁՐ ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համատեղության կարգով)*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ավետիսյան Յուրի Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Թադևոսյան Վահե Ռազմիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Հարոյան Հովհաննես Սամվելի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մակարյան Արմեն Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Մովսիսյան Կարեն Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Նիկողոսյան Անահիտ Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Քալանթարյան Վիտալի Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Բաբաջանյան Արսեն Ժորայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ասիստենտ
10. Մինասյան Հասմիկ Արամի, դասախոս

Համատեղողներ

1. Բաղդասարյան Դավիթ Հակոբի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հախումյան Արսեն Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

3. Աբրահամյան Լեոնարդ Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Զաքարյան Տիգրան Վանիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Աբրահամյան Տիգրան Արսենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Գրիգորյան Նատալիա Գրիգորի, ավագ լաբորանտ
3. Թևոսյան Սուսաննա Ամասիկի, ավագ լաբորանտ
4. Մակարյան Քրիստինե Ժորայի, ավագ լաբորանտ
5. Առուշանյան Կարինե Ռուբիկի, լաբորանտ
6. Հովսեփյան Տաթևիկ Անուշավանի, լաբորանտ
7. Մովսիսյան Մանուշակ Լերմոնտի, լաբորանտ
8. Պողոսյան Դեղձիկ Հովհաննեսի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Տերահերցային ալիքների գեներացումը փուլային դիմակի միջոցով ձևավորված պարբերական ոչ գծային կառուցվածքներում (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Յու. Հ.
2. Բազմաշերտ պլազմոնային նանոլազերներ և կոնաձև նանոանտենաներ (պետական ֆինանսավորում):	Ներկարարյան Խ. Վ.
3. Պլազմոնային ճեղքային նանոանտենաների տեսական և փորձարարական հետազոտություն (պետական ֆինանսավորում):	Հարոյան Հ. Ս.
4. Հեղուկի շերտի նանոմետրական տատանումների չափումը մետաղական ծածկույթով զոնդի միջոցով (պետական ֆինանսավորում):	Առաքելյան Շ. Խ.

Թեմա 1. Ցույց է տրվել, որ պարբերական բևեռացված լիթիումի նիոբատ (ՊԲԼՆ) բյուրեղում, լազերային իմպուլսների ՊԲԼՆ բյուրեղի դոմենային պատերին զուգահեռ տարածման դեպքում, կարելի է գեներացնել նեղշերտ ՏՀց ճառագայթում՝ $\Delta\nu \approx 15$ ԳՀց: Առաջարկվել է որպես պարբերական ոչ գծային համակարգ օգտագործել համասեռ (միադոմեն) $LiNbO_3$ բյուրեղ, որը պատված է բինարային փուլային դիմակով (ՓԴ): ՓԴ-ի օգտագործումը ՕՈՒ պրոցեսում համարժեք է ոչ գծային բյուրեղի լայնական հարթության մեջ բյուրեղի երկրորդ կարգի ոչ գծայնության գործակցի նշանի պարբերական փոփոխությանը, ինչի շնորհիվ բյուրեղում ստեղծվում է վիրտուալ պարբերական քվազի փուլահամաձայնեցված (ՔՓՀ) կառուցվածք:

Փուլային դիմակով պատված բյուրեղում ՏՀց ճառագայթման հաճախությունը հնարավոր է ղեկավարել՝ դիմակի և բյուրեղի միջև տեղավորելով ոսպնյակների համակարգ, որի միջոցով կարելի է

ստանալ դիմակի պատկերը բյուրեղում: Այս դեպքում, փոփոխելով ոսպնյակների համակարգի M խոշորացումը, կարելի է փոփոխել վիրտուալ պարբերական քվազի փուլահամաձայնեցված կառուցվածքի պարբերությունը և հետևաբար նաև գեներացվող ՏՀց ճառագայթման հաճախությունը՝ $\omega_M = \omega_0/M$:

Փորձնականորեն հետազոտվել է ՏՀց ճառագայթման գեներացումը փուլային դիմակով պատված միադոմեն ԼՆ բյուրեղում: Ստացվել է հաճախալարքավորվող ճառագայթում 0.42-1 ՏՀց տիրույթում, երբ ոսպնյակների համակարգի խոշորացումը փոխվում է 1-ից մինչև 0.4: Գեներացվող ճառագայթման հաճախության աճն ուղեկցվում է ճառագայթման սպեկտրալ շերտի լայնացմամբ:

Թեմա 2. Առաջարկված է լայն արգելված գոտիով կիսահաղորդիչներում էքսիտոնների կապի էներգիայի մեծացման մեխանիզմ՝ օպտիկապես մղված էլեկտրոն-խոռոչային պլազմայի առկայության պայմաններում: Համեմատաբար մեծ կապի էներգիայով (>150 մէՎ) այդ էքսիտոնները կարող են գոյատևել սենյակային ջերմաստիճանում, երբ կիսահաղորդչի դիէլեկտրական թափանցելիության արժեքը սպեկտրի ինֆրակարմիր տիրույթում էապես նվազում է: CdS-ի նանոբյուրեղի համար կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նման էքսիտոնների ձևավորման համար էլեկտրոն-խոռոչային պլազմայի խտությունը պետք է կազմի մոտ 10^{19} սմ$^{-3}$:

Ռեզոնանսորեն կապված քվանտային դիպոլային ճառագայթչի և մետաղական նանոմասնիկի համակարգում ռելաքսացիոն պրոցեսի ժամանակային վարքը նկարագրվում է աստիճանաձև կորով և սկզբունքորեն տարբերվում է ընդունված էքսպոնենցիալ տեսքից: Այդ ընթացքում ճառագայթման հզորությունը զգալի հապաղմամբ հասնում է իր առավելագույն արժեքին:

Թեմա 3. Զարգացվել է տեսական մոդել՝ դիէլեկտրիկ ճեղքով տարանջատված սֆերիկ մակերևույթներից և հարթ մետաղական շերտից կազմված ղեկավարվող պլազմատիկ ոսպնյակներում ֆոկուսացման և կառավարման առանձնահատկությունները բնութագրելու համար: Կատարվել են պլազմոնիկ ոսպնյակների մոդելավորում և թվային հաշվարկներ՝ օգտագործելով վերջավոր տարրերի եղանակը (FEM) COSMOL միջավայրում: Իրականացվել են նաև փորձարարական հետազոտություններ պլազմոնային ոսպնյակների ֆոկուսացման և կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ:

Թեմա 4. Ցույց է տրվել, որ բարակ մետաղական թաղանթով պատված օպտիկական մանրաթելի կոնաձև գագաթից ելնող ճառագայթումը կտրուկ աճում է հեղուկի մակերևույթից ելնելու ընթացքում: Դա պայմանավորված է գագաթի շուրջը ձևավորվող մենիսկով, որը ծառայում է որպես ալիքատար: Հետազոտվող երևույթը կարելի է օգտագործել հեղուկի մակերևույթի նանոմետրական տատանումները գրանցելու համար:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մանրադիտարկումը մակերևութային ալիքների միջոցով (2011-0004688):	Բաբաջանյան Ա. Ժ.

Թեմա 1. Մետաղ-օրգանական միացությունների համակցման եղանակով պատրաստվել են 0.8-1.2 մկմ հաստությամբ բիսմութի ատոմներով տեղակալված նռնաքարե բարակ թաղանթներ: Դիտարկվել է, որ կարճաժամկետ նախաբյուրեղացման պրոցեսում հաստ նմուշները ցուցաբերում են հագեցված մագնիսաօպտիկական հատկություններ, ունեն լավ բյուրեղական կառուցվածք և բարձր մագնիսական հագեցում:

Արյան մեջ գլյուկոզի քանակությունը իրական ժամանակում չափելու համար օգտագործվել է միկրոալիքային ռեզոնանսային սենսոր: 90-550 մգ/դլ տիրույթում արյան մեջ գլյուկոզի խտությունը չափվել է 4.76 ԳՀց աշխատանքային հաճախությունների համար: Արդյունքները վկայում են, որ

միկրոալիքային սենսորը շատ զգայուն և օգտակար կիրառություններ կարող է ունենալ ամենատարբեր կենսաբանական հետազոտություններում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսոր Խ. Ներկարարյանը գործուղվել է Հարավդանիական համալսարան՝ համատեղ գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

Ամբիոնի դոցենտ Վ. Քալանթարյանը Սոֆիայում (Բուլղարիա) մասնակցել է VIII միջազգային գիտական կոնֆերանսին, որտեղ ներկայացրել է զեկուցում:

Ամբիոնի դոցենտ Ա. Նիկողոսյանը մասնակցել է 38-րդ «IMMW-THz-2013» միջազգային կոնֆերանսին (Մայնց, Գերմանիա)՝ հանդես գալով երկու զեկուցումներով: Նա մասնակցել է նաև Շտուտգարտի ինստիտուտի Կոսմիկական համակարգերի կենտրոնի (Գերմանիա) գիտական քննարկումներին և սեմինարներին:

Ամբիոնում շարունակվել են հետազոտությունները՝ ուղղված միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների փոխազդեցությանը կենսաբանական օբյեկտների հետ (Վ. Քալանթարյան, Լ. Աբրահամյան), ՏՀց տիրույթի ալիքատարային համակարգերին (Յու. Ավետիսյան, Ա. Նիկողոսյան, Հ. Հարոյան, Վ. Թադևոսյան), էլեկտրամագնիսական ալիքների դետեկտմանը ֆերրոմագնիսական միջավայրերում (Ա. Մակարյան, Վ. Թադևոսյան, Կ. Մովսիսյան, Հ. Հարոյան):

Ամբիոնի ասիստենտ Ա. Բաբաջանյանը և Ուսումնական լաբորատորիայի վարիչ Տ. Աբրահամյանը Սոգանգի համալսարան (Հարավային Կորեա) կատարած գործուղման ընթացքում մոտակա-դաշտային տեսածրող մանրադիտակի օգնությամբ հետազոտել են օրգանական կիսահաղորդչային տրանզիստորների և լուսաճառագայթային դիոդների հատկությունները հաճախությունների միկրոալիքային տիրույթում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ասիստենտ Ա. Բաբաջանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ ասպիրանտ Վ. Թեքկոզյանը (ղեկ.՝ պրոֆ. Խ. Ներկարարյան)՝ թեկնածուական ատենախոսություն:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	14	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Մալաքյան Մ. Հ., Բաջինյան Ս. Ա., Եղիազարյան Դ. Ե., Աբրահամյան Լ. Է.,* 1800 ՄՀց ռադիոհաճախության ալիքների ազդեցությունը սուր և խրոնիկ ճառագայթված առնետների արյան ցուցանիշների վրա, ճառագայթային անվտանգության արդիական հիմնախնդիրները, «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի գիտապրակտիկ կոնֆերանսի նյութերի ժողովածու», Երևան, 2014, էջ 29-33:
2. *Оганисян А., Калантарян В.,* Влияние низкоинтенсивного электромагнитного излучения на активность сукцинатгидрогеназы сердечной и скелетных мышц кроликов, “Биомедицинская радиоэлектроника”, N 3, 2014, pp. 55-57.

3. *Мартиросян Р. М., Макарян А. О., Мхитарян В. М., Татевосян В. Р.,* Оптическое детектирование в ферромагнетике, “Письма в ЖЭТФ”, том 99, вып. 8, 2014, с. 505-510.
4. *Nerkararyan Kh. V. and Bozhevolnyi S. I.,* Relaxation dynamics of a quantum emitter resonantly coupled to a metal nanoparticle, “Optics Letters”, Vol. 36, Issue 6, 2014, pp. 1617-1620.
5. *Tekkozyan V., Babajanyan A., Nerkararyan Kh., Lee K.,* Formation of excitons in semiconductor nanostructures in the presence of electron-hole plasma, “Journal of Contemporary Physics” (Armenian Academy of Sciences), Volume 49, Issue 3, 2014, pp. 123-126.
6. *Tekkozyan V., Babajanyan A., Nerkararyan Kh., Lee K.,* Surface plasmonpolaritons modes in a convex cylinder microresonator, “Proceedings of the YSU, Physical and Mathematical Sciences”, 1, 2014, pp. 57-60.
7. *Galstyan O., Lee H., Lee S., Yoo N., Park J., Babajanyan A., Friedman B., Lee K.,* Effect of Pre-Crystallization on the Preparation of Thick Bi-YIG Films by the Metal-Organic Decomposition Method, “Journal of Magnetism and Magnetic Materials”, vol. 366, No. 11, 2014, pp. 21-27.
8. *Kim S., Kim J., Kim K., Lee J., Babajanyan A., Friedman B., Lee K.,* In vitro Monitoring of Goat-Blood Glycemia with a Microwave Biosensor, “Current Applied Physics”, vol. 14, No. 4, 2014, pp. 563-569.
9. *Pors A., Nerkararyan Kh. V. and Bozhevolnyi S. I.,* Scaling in light scattering by sharp conical metal tips, “Optics Letters”, Vol. 39, Issue 11, 2014, pp. 3308-3311.
10. *Никогосян А. С.,* Терагерцовый $LiNbO_3$ Волновод, “Альтернативная энергетика и экология”, N 9 (131), 2013, стр. 46-51.
11. *Nikogosyan A. S., Tunyan M. Yu., Kazaryan M. A.,* THz wave imaging in medical diagnostics, “International Scientific Journal for Alternative Energy and Ecology”, № 06/1 (127), 2013, pp. 54-57.
12. *Nikoghosyan A. S.,* Terahertz $LiNbO_3$ waveguide, “Letters in ISJAEE”, N 2, 2014, pp. 10-12.
13. *Kalantaryan V., Martirosyan R., Babayan Yu., Nersesyan L., Stepanyan H.,* Preliminary Results of Influence of Nonionizing Electromagnetic Radiation on Tumor and Healthy DNA and Role of Water, “American Journal of Medical and Biological Research”, Vol. 2, No. 1, 2014, pp. 18-25.
14. *Martirosyan R. M., Makaryan A. H., Mekhitarian V. M. and Tadevosyan V. R.,* Optical Detection in a Ferromagnet, “JETP Letters”, Vol. 99, N 8, 2014, pp. 435-440.

Զեկուցումների թեզիս

1. *Nikoghosyan A. S., Roeser H. P., Martirosyan R. M.,* THz Radiation in the Tapered $LiNbO_3$ Ribbon Waveguide, 38 International Conference on Infrared and Millimeter and Terahertz waves, Mainz, 2013, Th P3-04.
2. *Nikoghosyan A. S.,* Laser-Driven $LiNbO_3$ Crystal Wedge THz Antenna, 38 International Conference on Infrared and Millimeter and Terahertz waves, Mainz, 2013, Th P3-15.
3. *Kalantaryan V., Martirosyan R., Adamyan Ts., Gevorkyan E. & Badalyan H.,* Influence of super weak electromagnetic emission (EME) and mechanical vibration on activity changes of prolin biosynthesis enzymes, Abstract International Scientific Conference “Physics, Chemistry and Biology of water”, Sofia, 2013, p. 23.

ԱԼԻՔԱՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ալավերդյան Գրիգոր Բախշիի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հաջյան Գևորգ Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ

2. Հարությունյան Արթուր Սաղաթելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Սիմոնյան Կորյուն Խաչատուրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ավետիսյան Գագիկ Ավետիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Հարությունյան Տարոն Արթուրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Հարությունյան Անահիտ Ռոլանդի, ասիստենտ
7. Ալավերդյան Անի Գրիգորի, դասախոս
8. Մելիքյան Շուշանիկ Ռազմիկի, դասախոս

Համատեղողներ

1. Վարդանյան Յուրի Լազարի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գազազյան Էդմոնդ Դավթի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ասլյան Զորիկ Ռուդոլֆի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Եսայան Ասյա Օթարի, ավագ լաբորանտ
3. Ղազարյան Լուսինե Սերժիկի, ավագ լաբորանտ
4. Շահինյան Հասմիկ Աշոտի, ավագ լաբորանտ
5. Հարությունյան Աննա Սեյրանի, լաբորանտ
6. Միրաքյան Ելենա Վլադիմիրի, լաբորանտ
7. Սիմոնյան Նարինե Կորյունի, լաբորանտ
8. Վարդանյան Արտաշես Յուրիի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

1) Շարունակվել են տարօրինակ թզուկների կայունության ուսումնասիրությունները: Դրանք գերխիտ աստղեր են, որոնք ունեն Արեգակի զանգվածի երկու հարյուրերորդականը չգերազանցող զանգվածով տարօրինակ քվարկային նյութից բաղկացած փոքր ինքնակապված կորիզ և սովորական սպիտակ թզուկների նյութից բաղկացած լայնաշերտ թաղանթ: Այդ աստղերն ունեն սովորական սպիտակ թզուկներին բնորոշ զանգված ու շառավիղ: Ցույց է տրված, որ այդպիսի գերխիտ աստղերի կայունության ուսումնասիրության համար անհրաժեշտ է դիտարկել զանգվածի կախումը երկու պարամետրերից, ի թիվս որոնց՝ հարմար է ընտրել քվարկային կորիզի բարիոնների լրիվ թիվը և քվարկային կորիզի մակերևույթի վրա թաղանթի էներգիայի խտությունը: Տարօրինակ թզուկների զանգվածի ու շառավղի վերաբերյալ տեսական մոդելների ու «HIPPARCOS» ծրագրի շրջանակներում ստացված դիտողական տվյալների համադրման միջոցով բացահայտվել է տարօրինակ թզուկի ամենահավանական թեկնածուն:

2) Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) քվարկային պարկի մոդելի շրջանակում որոշվել է ջերմ տարօրինակ քվարկային նյութի վիճակի հավասարումը, որի մեջ հաշվի է առնված միջավայրում էլեկտրոնա-պոզիտրոնային զույգերի ծնման հնարավորությունը: Ուսումնասիրվել են ջերմ տարօրինակ աստղերի հավասարակշիռ վիճակները: Ցույց է տրվել, որ կենտրոնական ջերմաստիճանի՝ $0 \le T_c \le 100$ ՄէՎ տիրույթում իզոթերմ տարօրինակ աստղի զանգվածի կախումը կենտրոնական

խտությունից և շառավղի կախումը զանգվածից թույլ կախվածություն ունեն T_c կենտրոնական ջերմաստիճանից: Դրան հակառակ՝ սևեռված բարիոնային լիցքով տարօրինակ աստղի զանգվածը, ջերմաստիճանի նվազմանը զուգընթաց, զգալիորեն նվազում է: Արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ $N < 1,83 \cdot 10^{57}$ բարիոնային լիցքով տարօրինակ աստղերը սառչելու ընթացքում միայն սեղմվում են, իսկ $1,83 \cdot 10^{57} < N < 2,02 \cdot 10^{57}$ դեպքում, սկզբնական ջերմաստիճանի արժեքից կախված, աստղը կա՛մ անընդմեջ ընդարձակվում է, կա՛մ սառչելու սկզբնական փուլում ընդարձակվում է, իսկ այնուհետև՝ սեղմվում:

3) Ուսումնասիրվել են իզոսպինային-ասիմետրիկ միջուկային նյութի հատկությունները ռելյատիվիստական միջին դաշտի տեսության շրջանակում, որում հաշվի է առնված նաև սկալյար-իզովեկտոր դելտա մեզոնի արդյունարար դաշտը: Ստացվել են այդպիսի նյութում քվարկային փուլային անցման երկու տարբեր մեխանիզմներին՝ Գլենդենինգի և Մաքսվելի կառուցումներին համապատասխանող վիճակի հավասարումները: Հաշվարկվել են կոմպակտ աստղերի բնութագրերը, և կատարվել է փուլային անցման վերոհիշյալ երկու այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծություն, որի նպատակն է եղել պարզել, թե կոմպակտ աստղերի կառուցվածքի ու դիտելի բնութագրերի վրա ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ փուլային անցման տեսակը: Հաշվարկվել են քվարկային փուլային անցումով պայմանավորված էներգաանջատման չափը և աստղի շառավղի թռիչքաձև փոփոխությունը ինչպես Գլենդենինգի սցենարի, այնպես էլ Մաքսվելի կառուցման դեպքում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	-	-	3	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Հաջյան Գ. Ս.,* Ալիքային պրոցեսների տեսության հիմունքներ, ԵՊՀ հրատ.,Երևան, 2013, 200 էջ:

Հոդված

1. *Vartanyan Yu. L., Hajyan G. S., Grigoryan A. K., Sarkisyan T. R.,* Stability of strange dwarfs: a comparision with observations, Journal of Physics: Conf. Ser. 496, 2014, 012009 (5 pages).
2. *Alaverdyan A. G., Hajyan G. S.*, On the radii of hot strange stars, Journal of Physics: Conf. Ser. 496, 2014, 012005 (6 pages).
3. *Alaverdyan G. B.,* Influence of phase-transition scenarios on the abrupt changes in the characteristics of compact stars, Journal of Physics: Conf. Ser. 496, 2014, 012001 (6 pages).

Զեկուցումների թեզիս

1. *Vartanyan Yu. L., Hajyan G. S., Grigoryan A. K., Sarkisyan T. R.,* Stability of strange dwarfs: a comparision with observations, In Book of abstracts of the International Conference “The modern Physics of Compact Stars and Relativistic Gravity”, Yerevan, 18-21 September, 2013, p. 20.

2. *Alaverdyan A. G., Hajyan G. S.*, On the radii of hot strange stars, In Book of abstracts of the International Conference "The modern Physics of Compact Stars and Relativistic Gravity", Yerevan, 18-21 September, 2013, p. 9.
3. *Alaverdyan G. B.,* Influence of phase-transition-scenarios on the neutron star characteristics abrupt changes triggered by the formation of quark phase, In Book of abstracts of the International Conference "The modern Physics of Compact Stars and Relativistic Gravity", Yerevan, 18-21 September, 2013, p. 1.

ԿԻՍԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հարությունյան Վլադիմիր Միքայելի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գասպարյան Ֆերդինանդ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ղամբարյան Կարեն Մարտինի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Մելքոնյան Սլավիկ Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Միքայելյան Մարգարիտա Ռուբենի, դասախոս
5. Նանուշյան Հրանուշ Վարդգեսի, դասախոս

Համատեղողներ

1. Առաքելյան Վալերի Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ալեքսանյան Միքայել Սերյոժայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Բաղիյան Երան Մոսիկի, ավագ լաբորանտ
3. Հովհաննիսյան Հայկանուշ Ռաֆայելի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Միջին ինֆրակարմիր տիրույթի և ջերմաէլեկտրիկական կիրառությունների նպատակով InAsSbP, Si և Ge նանոկառուցվածքների հետազոտումը և դրանց մակերևույթների բնութագրումը (պետական ֆինանսավորում):	Ղամբարյան Կ.Մ.

Թեմա 1. Ստեղծվել են միջին ենթակարմիր տիրույթի ֆոտոընդունիչներ՝ n-InAs/p-InAsSbP դիոդային հետերոկառուցվածքներ, որոնց p-n անցման աղքատացված շերտում ընկղմված են 10-ից 30 նմ տրամագծով և 3-ից 20 նմ բարձրությամբ քվանտային կետեր: Ի տարբերություն առանց քվանտային կետերի համանման կառուցվածքների, քվանտային կետերով դիոդային հետերոկառուցվածքների՝ սենյակային ջերմաստիճանում կատարված կլանման և հեղուկ ազոտի ջերմաստիճանում ֆոտոլյումինեսցենցի սպեկտրների չափման արդյունքում դիտվել է դրանց երկարալիքային շեղում: Կատարվել են գերմանացի գործընկերների կողմից աճեցված Si-ի նանոկառուցվածքների օպտիկական և էլեկտրաֆիզիկական հատկությունների հետազոտումը: Մասնավորապես Ֆուրյե- ձևափոխման ենթակարմիր սպեկտրոմետրի միջոցով չափվել են դրանց թափանցելիության սպեկտրերը, որոշվել է հաղորդականության տեսակը: Ջերմավակուումային փոշեցրման եղանակով ստեղծվել են օհմական հպակներ, և չափվել են նանոկառուցվածքների վոլտ-ամպերային և վոլտ-ունակային բնութագրերը:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հետազոտվել են էլեկտրալիտում գտնվող փականով ղեկավարվող 50 նմ հաստությամբ սիլիցիումային նանոլարից պատրաստված դաշտային էֆեկտով տրանզիստորներում ընթացող ստատիկ և դինամիկական պրոցեսները: Տեսականորեն և փորձնական ճանապարհով ուսումնասիրվել է այդպիսի կենսաքիմիական սենսորների նանոլարում լիցքակիրների լայնակի բաշխումը ինչպես դասական, այնպես էլ քվանտամեխանիկական մոտեցումներով: Ցույց է տրվել, որ նանոչափային սարքերում քվանտացման հետևանքով լիցքակիրների բաշխումը էապես տարբերվում է դասականից: Հենվելով քվանտամեխանիկական մոտեցման վրա՝ բացատրվել են ինչպես վոլտամպերային բնութագծերի ընթացքը, այնպես էլ այդ սենսորներում ի հայտ եկող պատահական հեռագրային աղմուկի առանձնահատկությունները: Հետազոտվել է նանոլարի 10^{-12} սմ^2 մակերեսի վրա գտնվող 9 նմ հաստությամբ օքսիդի շերտում գտնվող մեկ (միակ) վանող բնույթի թակարդով ընթացող գրավման և արտանետման պրոցեսների դինամիկան: Բացահայտվել է, որ հենց այդ թակարդներն էլ պատասխանատու են պատահական հեռագրային ազդանշանի առաջացման համար: Աղմկային սպեկտրասկոպիան հնարավորություն է տվել հաշվել ինչպես թակարդի հեռավորությունը օքսիդ-նանոլար բաժանման սահմանից, այնպես էլ այդ թակարդի վրա լիցքակիրների գրավման կտրվածքը:

Հիմնվելով դաշտով ինդուկցված էլեկտրոն-ֆոնոն թունելային ցրման մեխանիզմի վրա՝ ուսումնասիրվել է արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությունը էլեկտրոն-ակուստիկական ֆոնոն ցրումների վրա: Էլեկտրական դաշտի ազդեցության տակ գտնվող անհավասարակշիռ կիսահաղորդչում էներգետիկ գոտիները թեքվում են: Թեքված գոտիներով ծավալային կիսահաղորդչի համար հաշվարկվել են էլեկտրոն-ակուստիկական ֆոնոն թունելային անցման մատրիցական էլեմենտը, հավանականությունը և ռելաքսացիայի ժամանակը, ստացված արտահայտությունները հետազոտվել և վերլուծվել են: Ցույց է տրվել, որ արտաքին էլեկտրական դաշտի բացակայության սահմանային դեպքում ստացված արտահայտություններից հետևում են հարթ գոտիներով կիսահաղորդչի դեպքի համար գրականությունից լավ հայտնի համապատասխան արտահայտությունները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	7	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Aroutiounian V. M.,* Investigations in the field of conversion of solar energy at Yerevan State University, Proc. of Engineering Academy of Armenia, 3rd World Congress, Yerevan, 2013, p. 28-32.
2. *Aroutiounian V. M.,* Nanotechnology: Present Status and Future Prospects in Armenia, In: Nanotechnology - Present Status and Future Prospects in Developing Countries, chapter 13, Daya Publishing House, Delhi, 2013, p. 167-187.
3. *Buniatyan V., Huck C., Poghossian A., Aroutiounian V. M., Schoening M. J.*, $Ba_xSr_{1-x}TiO_3$/pc-Si heterojunction capacitance, Armenian Journal of Physics, v. 6, N 4, Yerevan, 2013, p. 177-187.
4. *Buniatyan V., Huck C., Poghossian A., Aroutiounian V. M., Schoening M. J.,* $Ba_xSr_{1-x}TiO_3$/pc-Si heterojunction capacitance, Armenian Journal of Physics, v. 6, N 4, Yerevan, 2013, p. 188-197.
5. *Gasparyan F. V.,* Charge carriers distribution in the inversion channel of nanosized FETs, Armenian Journal of Physics, v. 7, N 3, Yerevan, 2014, p. 123-133.
6. *Gasparyan F. V., Vitusevich S. A.,* Millimeter wave detectors developed on the base of doped semiconductors, Modern Physics Letters B, v. 28, N 31, Singapore, 2014, p. 1450001 (7 pages).
7. *Pud S., Gasparyan F., Petrychuk M., Li J., Offenhäusser A., Vitusevich S.,* Single trap dynamics in electrolyte-gated Si-nanowire field effect transistors, Journal of Applied Physics, v. 115, AIP Publishing, USA, 2014, p. 233705 (11 pages).

Զեկուցումների թեզիս

1. *Melkonyan S. V., Asriyan H. V., Surmalyan Ash. V., Harutyunyan A. L.,* Electron mobility variance in the presence of an electric field, 22nd Intern. Conf. On Noise and Fluctuations (ICNF 2013), IEEE Xplore, Montpellier, 2013.
2. *Surmalyan Ash. V.,* Electron mobility variance in metals and degenerate semiconductors, 22nd Intern. Conf. On Noise and Fluctuations (ICNF 2013), IEEE Xplore, Montpellier, 2013.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հովհաննիսյան Արթուր Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Խաչատրյան Արամ Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մկրտչյան Ռուդիկ Զավենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Նավոյան Վարազդատ Խաժակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Օհանյան Վաղարշակ Հայաստանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Նաջարյան Նելսոն Գագիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մխիթարյան Ալեքսան Արտուշի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարվել են հետևյալ գիտական աշխատանքները:

Երկրորդ կարգի հիպերբոլական տիպի հավասարումների համար ֆունդամենտալ լուծման կառուցման նոր եղանակի հիման վրա հետազոտվել է Հադամարի խնդիրը: Հյուգենսի սկզբունքին բավարարող մեկ հավասարման համար այդ ֆունդամենտալ լուծման կառուցման ընթացքում ստացվել է ինտեգրալ հավասարում, որի լուծումը գրվում է վերջավոր անդամներ պարունակող գումարի տեսքով: Ստացված արդյունքները պատրաստվում են տպագրության:

Հետազոտվել է 1935 թվականին Կլի-Եֆիմով-Ստեչկինի կողմից դրված խնդիրն այն մասին, որ ցանկացած չեբիշևյան բազմություն հիլբերտյան տարածության մեջ ուռուցիկ է: Այդ խնդիրը դեռևս մնում է չլուծված: Ստացված արդյունքները պատրաստվում են տպագրության:

Դիտարկվել է հայտնի կոնֆորմ ինվարիանտներից մեկի՝ կորերի ընտանիքի էքստրեմալ երկարության անընդհատության հատկությունը: Կառուցվել է ժիստորինակ, որը հերքում է Պ. Մ. Թամրազովի հայտնի արդյունքներից մեկը:

Ուսումնասիրվել է F<x> ազատ հանրահաշվի ֆակտոր հանրահաշիվների ռադիկալը: Ապացուցվել է, որ այդպիսի որոշ ֆակտոր հանրահաշիվների Ջեկոբսոնի ռադիկալը իդեալ է: Այն ընդհանրացնում է Ս. Ա. Ամիցուրի դասական թեորեմներից մեկը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	-	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Զեկուցումների թեզիս

1. *Навоян Х. В., Навоян В. Х.,* “О свойстве непрерывности экстремальной длины”, Труды международной научной конференции, “H&H Print”, Цахкадзор, 24-29 марта, 2014, с. 27-29.
2. *Казарян С. С., Навоян В. Х., Пашоян С. А.* “О некоторых особенностях преподавания теории матриц на естественных факультетах вуза”, “H&H Print”, Цахкадзор, 24-29 марта, 2014, с. 51-53.

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ 2

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Հարությունյան Վլադիմիր Միքայելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Գործադիր տնօրեն՝ *Առաքելյան Վալերի Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Վահանյան Արտյոմ Ընձակի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Ադամյան Զավեն Նիկոլայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Ազարյան Միխաիլ Հրաչյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Մարգարյան Հակոբ Լևոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Առաքելյան Արծրուն Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Հարությունյան Վարդան Գագիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Շահնազարյան Գոհար Էմիլի, գիտաշխատող
8. Սիմոնյան Արփինե Կորյունի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
9. Խաչատուրյան Էմմա Արսենի, կրտսեր գիտաշխատող
10. Հակոբյան Նունե Հրանտի, կրտսեր գիտաշխատող
11. Սեմերջյան Բաբկեն Օգսենի, կրտսեր գիտաշխատող
12. Ստեփանյան Գնել Մկրտիչի, կրտսեր գիտաշխատող
13. Ղազարյան Մարգարիտա Սեմյոնի, ավագ ինժեներ
14. Մամիկոնյան Գայանե Մամիկոնի, ավագ ինժեներ
15. Մելիքյան Հրաչիկ Կառլոսի, ավագ ինժեներ
16. Թոփչյան Հայկազ Լևոնի, տեխնիկ
17. Հովհաննիսյան Ռաֆայել Վաղինակի, լաբորանտ (ասպիրանտ)
18. Սայունց Արտակ Գարեգինի, լաբորանտ (ասպիրանտ)
19. Առաքելյան Արմեն Հայկի, լաբորանտ (մագիստրոս)
20. Երանյան Լիլիթ Սուրենի, լաբորանտ (մագիստրոս)

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր և գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մետաղ-օքսիդային կիսահաղորդիչների և բազմակոմպոնենտ միացությունների հիման վրա ճառագայթային էներգիայի փոխակերպիչների, տարբեր գազերի ու կենսաբանական նանոկառուցվածքային սենսորների և այլ սարքերի ստեղծումն ու հետազոտումը (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Վ. Մ.
2. Թունավոր և պայթյունավտանգ գազերի նանոկառուցվածքային սենսորների ստեղծում և դրանցում ընթացող ֆիզիկական երևույթների հետազոտում (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Վ. Մ.

Թեմա 1. Մշակվել է տեխնոլոգիա, պատրաստվել և հետազոտվել են ռեզիստիվ գազային սենսորներ՝ մոդիֆիկացված բազմապատ ածխածնային նանոխողովակների (ԲՊԱՆԽ) հիման վրա: α-Fe_2O_3գ ԲՊԱՆԽ(25:1) դեկորացված նանոկոմպոզիտ փոշու ձևաբանությունը ուսումնասիրվել է տեսածրող էլեկտրոնային մանրադիտակով: Ածխածնային նանոխողովակների տրամագծերը 20-50 նմ կարգի են: Չափվել է պատրաստված սենսորների զգայնությունը սպիրտի գոլորշիների նկատմամբ: COOH խմբերով ֆունկցիոնալացված ԲՊԱՆԽ-ի հիման վրա պատրաստված սենսորների համար նկատվում է դիմադրության փոփոխություն սպիրտի գոլորշիների ազդեցության ներքո աշխատանքային մարմինն արդեն մինչև 150°C ջերմաստիճան տաքացնելիս: ԲՊԱՆԽ-ի պատումը Fe_2O_3 նանոմասնիկներով բերում է սենսորի զգայունության կտրուկ բարձրացման: Սենսորի դիմադրությունը փոքրանում է 2 կարգով, երբ փորձախցիկում սպիրտի գոլորշիների քանակությունը 5000 ppm է, իսկ գազազգայուն տարրի ջերմաստիճանը՝ 200°C: Fe_2O_3գԲՊԱՆԽ(25:1)/Pd նանոկառուցվածքներով սենսորները ցուցաբերում են բավարար զգայունություն սպիրտի գոլորշիների նկատմամբ՝ սկսած արդեն 500 ppm կոնցենտրացիայից աշխատանքային մարմնի 300°C ջերմաստիճանում: Զգայնության՝ կոնցենտրացիայից կախված մոնոտոն աճը հնարավորություն է տալիս գրանցել ոչ միայն սպիրտի գոլորշիների առկայությունը, այլև մեծ ճշտությամբ որոշել միջավայրում նրա կոնցենտրացիան:

Հետազոտվել են նանոչափային կատալիտիկ մասնիկներով ծածկված մետաղօքսիդային գազի տվիչների ներքին աղմուկները: Բացահայտվել և ուսումնասիրվել է ցածրհաճախականային աղմուկների սպեկտրալ խտությունը: Աղմկային սպեկտրասկոպիան հնարավորություն է տալիս նաև բացահայտելու այդ տվիչների մակերևույթին ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների բնույթը և դրանք դարձնելու ավելի կառավարելի:

Ուսումնասիրվել են Si-Ge-C համակարգում նանոկառուցվածքների, քվանտային կետերի և լարերի ձևավորման և սաղմնառաջացման մեխանիզմները: Տեսականորեն պարզվել է, որ ածխածնի կոնցենտրացիայի մեծացնելը SiGeC համակարգում և գերմանիումինը՝ SiGe համակարգում, հանգեցնում է քվանտային կետի ձևավորման կրիտիկական չափերի փոքրացմանը: Հաշվարկվել են $Si_{1-x-y}Ge_xC_y$ պինդ լուծույթների խառնման ազատ էներգիաները, ու կառուցվել են դրանց 2D և 3D սխեմատիկ պատկերները: Հետազոտվել են դրանց սպինոդալ և բինոդալ անցումային տիրույթները, ինչպես նաև որոշվել են պինդ լուծույթների բաղադրությունների կայուն, մետակայուն և անհամատեղելիության միջակայքերը տարբեր

ջերմաստիճանների դեպքում: Ցույց է տրվել, որ անհամատեղելիության տիրույթները խիստ կախված են ջերմաստիճանից, և դրանք փոքրանում են ջերմաստիճանի մեծացմանը զուգընթաց:

Հետազոտվել է բազմահովիտ կիսահաղորդիչների գոտիական կառուցվածքի որոշ պարամետրերի որոշման սկզբունքային հնարավորությունը (վիճակների խտության արդյունարար զանգված, հովիտների միջև էներգիական հեռավորությունը և խառնուրդային մակարդակների իոնիզացման էներգիան) ընդհանուր կոնցենտրացիայի ջերմաստիճանային կախման փորձարարական կորերի հիման վրա:

Ա. Կ. Սիմոնյանը պաշտպանել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի ատենախոսություն «A^3B^5 դասի և Si-Ge-C կիսահաղորդչային համակարգերում նանոկառուցվածքների ձևավորման օրինաչափությունները» թեմայով:

Կ. Մ. Ղամբարյանը պաշտպանել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի ատենախոսություն «Կիսահաղորդչային էպիտաքսիալ նանոկառուցվածքների և դրանց հիման վրա միջին ենթակարմիր տիրույթի ֆոտոընդունիչների ստեղծում և հետազոտում» թեմայով:

Ռ. Վ. Հովհաննիսյանը պաշտպանել է տեխնիկական գիտությունների թեկնածուի ատենախոսություն «Նանոկառուցվածքային գազային սենսորներ» թեմայով:

Թեմա 2. Բազմակոմպոնենտ օքսիդային կիսահաղորդչային միացությունների ու ածխածնային նանոխողովակներ/մետաղօքսիդային կիսահաղորդիչ կոմպոզիտ միացությունների հիման վրա ստեղծվել են թունավոր գազերի սենսորներ: Հետազոտվել է սենսորների զգայունությունը՝ կախված սենսորների աշխատանքային ջերմաստիճանից, գազի կոնցենտրացիայից և գազի ազդեցության ժամանակից, ինչպես նաև գրանցվել են սենսորների արձագանքի և վերականգնման ժամանակները:

Ացետոնի և տոլուոլի սենսորների ստացման նպատակով մշակվել են ածխածնի բազմապատ նանոխողովակներ/անագի երկօքսիդ նանոկոմպոզիտ փոշիների ստացման տեխնոլոգիաներ՝ կիրառելով երեք տարբեր մեթոդներ՝ զոլ-ժել, հիդրոթերմիկ սինթեզ և այդ երկու տեխնոլոգիաների համատեղումը (հիբրիդային տեխնոլոգիա): Իրականացվել են նանոխողովակների համապատասխան ֆունկցիոնալիզացիայի և SnO_2 նանոմասնիկների նանոխողովակների պատերի վրա նստեցման օպերացիաները: ԲՊԱՆԽ/SnO_2 հիման վրա պատրաստված սենսորները ցուցաբերել են բավարար զգայունություն ≈400 ppm կոնցենտրացիայով ացետոնի և տոլուոլի գոլորշիների նկատմամբ աշխատանքային մարմնի 200°C - 250°C ջերմաստիճանում:

Մշակվել է տեխնոլոգիա, և բարձրհաճախային մագնետրոնային փոշեցրման եղանակով In_2O_3qGa_2O_3qSnO_2 (70:20:10) քառաբաղադրիչ նանոկոմպոզիտի հիման վրա պատրաստվել են բարակթաղանթային սենսորներ էթանոլի և ացետոնի գոլորշիների հայտնաբերման համար: Ցույց է տրվել, որ In_2O_3qGa_2O_3qSnO_2 (70:20:10) նանոկոմպոզիտի հիման վրա սենսորը էթանոլի գոլորշիների նկատմամբ էական զգայունություն է ցուցաբերում՝ սկսած աշխատանքային մարմնի 150°C ջերմաստիճանից: Այս սենսորները հարաբերականորեն ավելի բարձր զգայունություն են ցուցաբերում էթանոլի գոլորշիների նկատմամբ: Հետազոտվել են նաև In_2O_3qGa_2O_3qSnO_2 (70:20:10) նանոկոմպոզիտի հիման վրա պատրաստված սենսորների աղմկային զգայունությունները: Ցույց է տրվել, որ աղմկային եղանակով չափված զգայունության արժեքները գերազանցում են ռեզիստիվ եղանակով որոշված արժեքները: Այսպիսի սենսորները կարող են օգտագործվել էթանոլի ցածր կոնցենտրացիաների (≈ 500 ppm) հայտնաբերման համար: Կառուցվածքի զգայունության մոնոտոն բարձրացումը (որոշված ռեզիստիվ եղանակով), էթիլ սպիրտի և ացետոնի գոլորշիների պարունակության աճին զուգընթաց, թույլ է տալիս այս սենսորներն օգտագործել նաև օդում դրանց կոնցենտրացիան արագ որոշելու համար:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հեղուկ բյուրեղային բևեռացնող դիֆրակցիոն ցանցի հիման վրա սպեկտրապոլյարիմետրի արտադրական նախանմուշի մշակումը բժշկական նպատակների համար (A-1951):	Մարգարյան Հ. Լ.
2. Միջին ինֆրակարմիր տիրույթի ֆոտոընդունիչների համար InAsSbP քվանտային կետերի աճեցումը և ուսումնասիրությունը (YSSP-13-08):	Հարությունյան Վ. Գ.

Թեմա 1. Նախագծի աշխատանքները սկսվել են 2011թ. դեկտեմբերին և ավարտվել 2013թ. նոյեմբերի 30-ին: Աշխատանքը նվիրված է հեղուկ բյուրեղային դիֆրակցիոն ցանցի հիման վրա բժշկական կիրառության (ախտորոշում) համար սպեկտրոպոլյարիմետրի մշակմանը և նախանմուշի պատրաստմանը: Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել են սպեկտրոպոլյարիմետրի հիմնական ֆունկցիոնալ հանգույցները: Ըստ փորձարկման արդյունքների՝ ի հայտ են բերվել կատարելագործման ենթակա հանգույցները, մշակվել, պատրաստվել և ձեռք են բերվել համապատասխան մասերն ու հանգույցները: Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է նաև սպեկտրոպոլյարիմետրի ծրագրային ապահովումը:

Ստեղծված սարքի լաբորատոր փորձարկման նպատակով չափվել է եզան շիճուկային ալբումինի («կոնգո կարմիր» ներկանյութի և պրոտեինի հետ խառնուրդի տեսքով) շրջանային դիքրոզմը (աջ- և ձախ-շրջանային պոլարիզացիայով դիֆրակցված փնջերի ինտենսիվությունների տարբերությունը): Չափումների արդյունքները համեմատվել են Մոսկվայի պետական համալսարանում «Chiroscan» (Applied Photophysics, GB) սպեկտրոպոլյարիմետրով կատարված չափումների հետ: Այդ չափումների համաձայն՝ 500 նմ ալիքի երկարության վրա խառնուրդի շրջանային դիքրոիզմի մեծության տարբերությունը կազմել է 0.2 միլիաստիճան:

Հայտնի է, որ «կոնգո կարմիր» ներկանյութի և տարբեր պրոտեինների կոմպլեքսների շրջանային դիքրոիզմի ազդանշանների ձևը և ինտենսիվությունը կախված են պրոտեինի մոլեկուլների կոնֆորմացիայից, ուստի մեր լաբորատոր չափման արդյունքների տարբերությունը նշված արդյունքներից կարելի է բացատրել հետազոտվող խառնուրդներում եզան շիճուկային ալբումինի կոնֆորմացիայի տարբերությամբ:

Չափվել է նաև B-12 վիտամինի շրջանային դիքրոիզմի սպեկտրը: Նախքան չափումները սկսելը ստուգվել է բազային գծի կայունությունը: 5 ժամվա ընթացքում շեղումը 0-ական գծից կազմել է 1 միլիաստիճան: B-12 վիտամինի շրջանային դիքրոիզմը կազմել է 70 միլիաստիճան 420 նմ ալիքի երկարության վրա: Մեր չափած և «Chirascan™-plus» սարքի տեխնիկական անձնագրից վերցված B-12 վիտամինի շրջանային դիքրոիզմի արժեքների տարբերությունը կազմում է 35 միլիաստիճան 420 նմ ալիքի երկարության վրա և պայմանավորված է կյուվետի հաստության տարբերությամբ:

4. *Hakobyan M. R., Alaverdyan R. B., Hakobyan R. S., Chilingaryan Yu. S.,* Direct Volume Expansion Mechanism of Laser-Induced Hydrodynamic Reorientation. International conference IONS-Armenia, Yerevan-Ashtarak, 11-14 Sept., 2013, p. 58.
5. *Karayan H. S., Makaryan A. H., Gaboyan T. N.,* Computer Modeling of Multistable Semiconductor Electron-Hole Plasma, Proc. Of the Ninth Int. Conf. Semiconductor Micro- and Nanoelectronics, Yerevan, 2013, p. 11-13.
6. *Karayan H. S., Makaryan A. H., Gaboyan T. N.,* Computer Modeling of the Phenomenon of Spontaneous Symmetry Changes in Multistable Electron-Hole Plasma. Proc. Of the Ninth Int. Conf. Semiconductor Micro- and Nanoelectronics, Yerevan, 2013, p. 14-17.
7. *Karayan H. S.,* Sahakyan and the Development of Quantum Mechanics in the Republic of Armenia. Book of Abstracts of the Int. Conf. The Mothern Physics of Compact Stars and Relativistic Gravity, Yerevan, 2013, p. 10.
8. *Mouradian L. Kh., Zeytunyan A. S., Yesayan G. L., Louradour F., Barthélémy A. and Zadoyan R.,* Broadband similariton: applications to ultrafast optics and photonics, Proc. CAOL 2013, 6th Int. Conf. on Advanced Optoelectronics and Lasers, Invited Talk, Sudak, Crimea, Ukraine, September 9-13, 2013, pp. 265-267.
9. *Zeytunyan A., Yesayan G. and Mouradian L.,* Similariton pulse compression using hybrid grating-prism compressor, Proc. CAOL 2013, 6th Int. Conf. on Advanced Optoelectronics and Lasers, Invited Talk, Sudak, Crimea, Ukraine, September 9-13, 2013, pp. 293-295.
10. *Zeytunyan A., Yesayan G. and Mouradian L.,* Similariton pulse compression down to 14 fs in a hybrid grating-prism compressor, Oral Presentation at Laser Physics 2013, Ashtarak, October 8-11, 2013.
11. *Grigoryan A., Kutuzyan A., Yesayan G., Mouradian L.,* Spectral self-compression of chirped laser pulses, Int. Conf. Laser Physics 2013, Ashtarak, October 8-11, 2013, p. 9.
12. *Grigoryan A., Kutuzyan A., Yesayan G., Mouradian L.,* Spectral compression of ultrashort laser pulses in the negative dispersion fiber, Int. Conf. IONS-Armenia, Yerevan-Ashtarak, 11-14 September, 2013, p. 56.

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ 8

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Մեղրակյան Դավիթ Մհերի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Մուրադյան Ատոմ Ժորայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Բաղալյան Դավիթ Հայրապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Հայրապետյան Մեխակ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Մուրադյան Գևորգ Ատոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Գրիգորյան Լյովա Նազարեթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Պետրոսյան Պետիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Մեղրակյան Լևոն Ռուբենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Երկրի լոկալ գրավիտացիայի ճշգրիտ չափումը ատոմական ինտերֆերոմետրերով. դեպի քվանտային չափիչներ (ANSEF դրամաշնորհ N nano-3048):	Մուրադյան Գ. Ա.

Թեմա 1. Քննարկվել է երկմակարդակ ատոմի Կապիցա-Դիրակյան ցրման ժամանակ փոխազդեցության միացման ռեժիմի ազդեցությունը ցրման պատկերի վրա: Ճշգրիտ թվային հաշվարկներով հաստատվել են առաջարկված անալիտիկ մոտավորության կիրառելիության սահմանները:

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Մարկո Պրեվեդելլիի հետ սկսվել են քննարկումներ առաջարկված սխեմայի էքսպերիմենտալ իրականացման հնարավորությունների վերաբերյալ:

Քննարկվել է գերհոսուն նեյտրոնային աստղի պտույտի դինամիկան՝ թռիչքից հետո բաբախիչների անկյունային արագության հետթռիչքային ռելաքսացիան մոդելավորելու համար: Հետազոտվել է նեյտրոն-պրոտոնային մրրկային համակարգի շարժումը աստղի միջուկի սֆերիկության հաշվառմամբ, ինչպես նաև մրրիկների պինինգի և դեպինինգի հաշվառմամբ: Ստացված ռելաքսացիոն լուծումները համեմատվել են VELA բաբախիչի ութ թռիչքների դիտողական տվյալների հետ: Շարունակվել են աշխատանքները բաբախիչների ռադիոճառագայթման նոր աղբյուրի ուսումնասիրման նպատակով:

Հաշվարկվել են նեյտրոնային աստղի պատյանի կինետիկ գործակիցները մագնիսական դաշտի հաշվառմամբ: Այս հաշվարկները հնարավորություն կտան ուսումնասիրելու պատյանում գրգռված մագնիսաձայնային ալիքների կլանման օրինաչափությունները:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Ներկայացվել է Բլոխի վիճակների վրա հիմնված մոտավոր անալիտիկ հաշվարկի մեթոդ երկմակարդակ ատոմի՝ կանգուն ալիքի դաշտում համընթաց շարժման վիճակները նկարագրելու համար: Տեսությունը վիճակները քննարկում է ադիաբատիկ և ռաման նաթի մոտավորություններից դուրս՝ պահպանելով պոտենցիալ էներգիայի գաղափարը հիմնական էներգետիկ մակարդակի համար:

Գլանային համաչափությամբ նանոկառուցվածքում դիտարկված է քվանտային մասնիկի հիմնական վիճակի էներգիայի որոշման խնդիրը: Ստացված է տրանսցենդենտ հավասարում, որը որոշում է էներգիայի ամենացածր մակարդակը: Գտնված է կլանման եզրի կախվածությունը δ-պոտենցիալի դիրքից և հզորությունից: δ-պոտենցիալի առկայությունը փոքրացնում է գլանային նանոկառուցվածքի էֆեկտիվ երկարությունը, որը հանգեցնում է օպտիկական կլանման սպեկտրի սահմանային հաճախականության աճին:

Բազմուղի ցրման խնդրի լուծման համար կիրառված է ընկղման մեթոդը կոնկրետ պոտենցիալի դեպքում: Մասնավորապես դիտարկված է մասնիկի ցրումը երկչափ արգելքի վրա, որը հաստատուն է ցրման ուղղությամբ և կամայական՝ լայնական ուղղությամբ: Այս դեպքի համար որոշված են ցրման t_m և $r_m\left(m=1,2,\ldots N\right)$ ամպլիտուդները: Բարակ թաղանթների համար ստացվել են արտահայտություններ անցման t_m և անդրադարձման r_m ամպլիտուդների համար: Ենթադրվել է, որ ցրվող մասնիկը արգելքին է մոտենում $\mathbf{k}_l$ երկայնական ալիքային վեկտորով, որը համապատասխանում է ցրման l-րդ ուղուն:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են $CdS_{1-x}Se_x$ նանոբյուրեղներ պարունակող սիլիկատային ապակիների կլանման գործակցի սպեկտրալ կախվածությունները: Ցույց է տրված, որ կլանման գործակցի $k-f(h\nu)$ կախվածությունը $h(<E_g$ տիրույթում ենթարկվում է Ուրբախի օրենքին, որի հիման վրա գնահատվել է տարբեր տեսողությամբ ջերմամշակման ենթարկված նմուշների միջատոմային հեռավորությունների միջին քառակուսային շեղումը բնութագրող E_0 բնութագրական էներգիան: Օգտագործելով ատոմների քաոսային բաշխմամբ ձևավորված պատահական պոտենցիալի մոդելը՝ որոշվել է ձևավորվող նանոբյուրեղներում դեֆեկտների էֆեկտիվ կոնցենտրացիայի կախվածությունը ջերմամշակման ժամանակից: Ցույց է տրվել, որ այն ջերմամշակման սկզբնական էտապում կտրուկ նվազում է:

Ցույց է տրվել, որ նանոբյուրեղների միջին շառավղի կախվածությունը ջերմամշակման ժամանակից լավ նկարագրվում է արմատային կախվածությամբ t>50 ռոպե ժամանակների դեպքում: Ջերմամշակման սկզբնական էտապում այդ կախվածությունից շեղումը բացատրվել է դեֆեկտների էֆեկտիվ կոնցենտրացիայի նվազմամբ:

ՄԱԿՐՈՄՈԼԵԿՈՒԼՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Հարությունյան Սամվել Գառնիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Առաքելյան Վալերի Բեյբութի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող

2. Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Բարխուդարյան Վիգեն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Մամասախլիսով Եվգենի Շամիլի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
5. Կարապետյան Նելլի Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Ալոյան Լուսինե Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Նավոյան Զավեն Էմիլի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Վարդանյան Իշխան Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Գրիգորյան Ինեսսա Էդվարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Ղազարյան Ռուզան Սուրենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Տոնոյան Շուշանիկ Արմենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
12. Քարամյան Կարինե Կառլենի, կրտսեր գիտաշխատող
13. Վարդանյան Հարություն Բաբկենի, տնտ. գիտ. թեկնածու, ավագ ինժեներ
14. Պողոսյան Միքայել Կարենի, ավագ ինժեներ
15. Ավետիսյան Անի Արթուրի, ավագ լաբորանտ
16. Բոյաջյան Հասմիկ Բենիկի, ավագ լաբորանտ
17. Սինյավսկայա Ալլա Կոնստանտինի, ավագ լաբորանտ
18. Կարայան Զարուհի Կարոյի, ավագ լաբորանտ
19. Մելքոնյան Լենա Վարուժանի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մակրոմոլեկուլների կառուցվածքային փոխակերպումների ջերմադինամիկան և կինետիկան (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Ս. Գ.

Թեմա 1. *<u>ԴՆԹ-լիգանդ փոխազդեցություններ:</u>* Հաշվետու ժամանակահատվածում UV-VIS սպեկտրոֆոտոմետրիայի և շրջանային դիքրոիզմի եղանակներով հետազոտվել են մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ)պորֆիրինի (TOEPyP4) փոխազդեցությունը ԴՆԹ-ի A-ձևի հետ: Հաշվվել են կոմպլեքսի կապման հաստատունները՝ K_b և n: Օգտվելով Վանտ-Հոֆֆի բանաձևից՝ հաշվվել է պորֆիրին – A-ԴՆԹ փոխազդեցության հետևանքով տեղի ունեցած թերմոդինամիկական պարամետրերի փոփոխությունը՝ (ΔG_b), (ΔH_b) և (ΔS_b): Հետազոտությունները ցույց են տալիս, որ ի տարբերություն B-ԴՆԹ-ի՝ A-ԴՆԹ-ի հետ այս պորֆիրինները կապվում են արտաքինից ԴՆԹ-ի երկպարույրի ակոսային տեղամասերում:

Մածուցիկաչափության եղանակով հետազոտվել է ջրալույծ մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ) պորֆիրինի և Ni-ի, Cu-ի, հետ նրա մետաղակոմպլեքսների փոխազդեցությունը ԴՆԹ-ի հետ ջրային լուծույթներում: Ցույց է տրվել, որ նշյալ պորֆիրինների հետ փոխազդեցության պատճառով ԴՆԹ-ի բնութագրական մածուցիկությունը աճում է պորֆիրինի կոնցենտրացիայի որոշակի տիրույթում: Նման փոփոխությունը վկայում է այն մասին, որ այս պորֆիրինները փոխազդում են ԴՆԹ-ի հետ ինտերկալացիոն մեխանիզմներով, որը բերում է ԴՆԹ-ի մակրոմոլեկուլի երկպարույրի երկարացմանը:

Տեսական հետազոտություններ: ՊՇԸՄ-ի (պոլիպեպտիդային շղթայի ընդհանրացված մոդել) սահմաններում պարույր-կծիկ անցման նկարագրման համար կառուցված է հետերոպոլիմերային շղթայի վիճակագրական գումար: Ցույց է տրված, որ հետերոպոլիմերային հալման ինտերվալը քիչ է կախված հոմոպոլիմերային հալման ինտերվալից, բայց խիստ կախված է հոմոպոլիմերային ջրածնական կապերի էներգիաների տարբերությունից: Կառուցված է տեսական ալգորիթմ՝ հալման դիֆերենցիալ կորերը ստանալու համար:

ՊՇԸՄ-ի սահմաններում կառուցված է վիճակագրական գումար պարույր-կծիկ անցման երկկոմպոնենտային լուծույթի համար: Ցույց է տրված, որ ջերմաստիճանային և կոնֆորմացիոն պարամետրերը ոչ գծային ձևով են կախված կոնցենտրացիայից:

Ուսումնասիրվել է արտաքին աղմուկի ազդեցությունը ԴՆԹ-բիոսենսորի ելքային ազդանշանի վրա: Ցույց է տրվել, որ երբ արտաքին ուժի ազդեցությամբ լուծույթում լիգանդների քանակը ֆլուկտուացվում է, ապա այն դասվում է որպես մուլտիպլիկատիվ աղմուկ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԴՆԹ-բիոսենսորի ելքային ազդանշանի վրա այդ մուլտիպլիկատիվ աղմուկի ազդեցությամբ տեղի է ունենում աղմուկի ինտենսիվության աճին համեմատական ԴՆԹ-բիոսենսորի ելքային ազդանշանի միջին ստացիոնար արժեքի աճ: Կարևոր է այն արդյունքը, որի համաձայն՝ մուլտիպլիկատիվ աղմուկը բերում է նրան, որ լուծույթում գոյություն ունի լիգանդների փոքր կոնցենտրացիոն տիրույթ, որոնց դեպքում ԴՆԹ-բիոսենսորի ազդանշանը բացակայում է: Ընդ որում՝ ինչպես արտաքին աղմուկի ինտենսիվության աճը, այնպես էլ լիգանդ ԴՆԹ կոմպլեքսի առաջացման արագության հաստատունի աճը բերում են տիրույթի ընդլայնմանը:

Երկշերտ լիպիդային թաղանթներ: Ուսումնասիրվել է meso-tetra-(4N-oxyethylpyridyl) պորֆիրինի և նրա Co մետաղական ածանցյալի փոխազդեցությունը երկշերտ լիպիդային թաղանթների /ԵԼԹ/ հետ: Կատարելագործվել է ԵԼԹ-ի և պորֆիրինների համատեղ փոխազդեցության ուսումնասիրության համար նախատեսված մեթոդը: Չափվել են ԵԼԹ-ի կայունությունը, հաղորդականությունը և էլեկտրական ունակությունը պորֆիրինի մոլեկուլների առկայության և բացակայության դեպքում: ԵԼԹ-ի կայունությունը գնահատվել է ԵԼԹ-ի կյանքի միջին տևողության միջոցով ԵԼԹ-ի վրա կիրառված տարբեր պոտենցիալների տարբերության դեպքում:

Սինթետիկ պոլիմերներ: Սինթետիկ պոլիմերների հետազոտման բնագավառում կատարվել է հետևյալը: Ուսումնասիրվել է թթվածնի առկայության պայմաններում ջերմաստիճանի ազդեցությունը պոլիմերների ծերացման պրոցեսի վրա բարձր ճնշման պոլիէթիլենի (ԲՃՊԷ) օրինակով: Հետազոտվել է ԲՃՊԷ-ի մոլեկուլային բնութագրերի փոփոխման դինամիկան ջերմային ազդեցության ընթացքում: Պարզվել է, որ ջերմային ազդեցության հետևանքով պոլիմերում զուգահեռաբար ընթանում են մակրոմոլեկուլների քայքայման և կցակարման պրոցեսներ, ինչի հետևանքով զգալիորեն փոփոխվում են պոլիմերի տարբեր միջինացումներով մոլեկուլային զանգվածների արժեքները և մակրոմոլեկուլների ձևը: Մասնավորապես զգալիորեն աճում է մակրոշղթաների ճյուղավորման աստիճանը, որն էականորեն ազդում է պոլիմերային լուծույթների հիդրոդինամիկական վարքի վրա:

Ստացված տվյալները համադրվել են նախկինում իրականացված ԲՃՊԷ-ի մոլեկուլային բնութագրերի վրա բարձր էներգիաներով ճառագայթումների (γ- և ուլտրամանուշակագույն ճառագայթում) ազդեցության հետազոտման արդյունքների հետ, և եզրակացվել է, որ հիշյալ ճառագայթումների և բարձր ջերմաստիճանների ազդեցության մեխանիզմները ԲՃՊԷ-ի մոլեկուլային բնութագրերի վրա նույնն են:

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Գևորգյան Սամվել Գերասիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հարությունյան Վալերի Սոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
3. Լևոնյան Լևոն Վարդգեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Սարգսյան Հայկ Արայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
5. Ալումյան Կառլեն Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Այվազյան Աշոտ Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Բալյան Մինաս Կարապետի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
8. Գասպարյան Լաուրա Գասպարի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
9. Հարությունյան Լևոն Ալբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
10. Մանուկյան Հասմիկ Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
11. Ջոթյան Անահիտ Պարույրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
12. Աղաբաբյան Էդուարդ Վաղինակի, քիմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
13. Ավետիսյան Արտակ Արայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
14. Ավետյան Կոլյա Թորգոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
15. Բաղրամյան Հենրիխ Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
16. Բարսեղյան Մանուկ Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
17. Գասպարյան Շուշանիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
18. Գևորգյան Վարդան Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
19. Երանոսյան Մկրտիչ Ալեքսանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
20. Էյրամջյան Տիգրան Հովհաննեսի, տնտ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
21. Կուրղինյան Բիլոր Կորյունի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
22. Հարությունյան Նորայր Պատվականի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
23. Մանասելյան Արամ Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
24. Մկրտչյան Վահրամ Պատվականի ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
25. Մնացականյան Թամարա Սևոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
26. Մուղնեցյան Վռամ Ներսեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
27. Մուրադյան Սերոբ Տարոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
28. Սաքանյան Մարտին Սարգսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
29. Վարդանյան Լյուդվիգ Արշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
30. Սեմերջյան Հովհաննես Սարգսի, ավագ ինժեներ
31. Գրիգորյան Արշակ Հրայրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
32. Ռոստոմյան Ասյա Արտաշի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Միկրո- և նանոկառուցվածքների ռենտգենադիֆրակտային և ցածրջերմաստիճանային փորձարարական և տեսական ուսումնասիրում և հետազոտման նոր մեթոդների մշակում • Ռենտգենյան հետազոտություններ • Կիսահաղորդչային նանոկառուցվածքների հետազոտություններ • Ցածրջերմաստիճանային հետազոտություններ, գիտական սարքաշի-նություն և գերհաղորդականություն, մագնիսական հետազոտություններ (պետական ֆինանսավորում):	Կիրակոսյան Ա. Ա.

Թեմա 1. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ***Ռենտգենյան հետազոտություններ***

Տեսականորեն ուսումնասիրվել է ռենտգենյան դինամիկ դիֆրակցիայի հավասարումներում լայնությունների՝ ըստ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղության երկրորդ կարգի ածանցյալների դերը: Քննարկվել են ինչպես էյկոնալային մոտավորությունը, այնպես էլ ալիքային օպտիկական մոտեցումը: Էյկոնալային մոտավորության դեպքում որպես կիրառություն ուսումնասիրվել է պարաբոլական տեսքի մակերևույթով բյուրեղով ռենտգենյան փնջի կիզակետումը Բրեգի և Լաուեի երկրաչափության դեպքերում: Ստացվել է Գրինի ֆունկցիան երկրորդ կարգի ածանցյալների հաշ-վառմամբ: Օգտագործելով ստացված Գրինի ֆունկցիան՝ ուսումնասիրվել են դիֆրակցիան Լաուեի և Բրեգի երկրաչափության դեպքերում ալիքային ճակատի երկչափ կորության մոտավորությամբ, ուսումնասիրվել և տիպարավորվել են օբյեկտի ռենտգենյան դինամիկ-դիֆրակտային ֆրաունհոֆերյան հոլոգրաֆիկ արտապատկերումը և օբյեկտի պատկերի վերականգնումը տեսանելի տիրույթի լույսով և խնդրի համար նախատեսված ու զարգացված համապատասխան թվային մեթոդներով:

Իրականացվել է երկմակարդակ գոտիական թիթեղներից բաղկացած եռաբլոկ ռենտգենյան ինտերֆերաչափի օգնությամբ փուլային օբյեկտների խոշորացված արտապատկերման թվային մոդելավորում: Ծրագիրը օգտագործվել է ինտերֆերաչափում առկա դանակների ձևի և տեղաբաշխման օպտիմալացման համար:

Իրականացվել է առաջարկած բազմամակարդակ դարսված (stacked) ֆրենելյան գոտիական թիթեղի փորձարարական հետազոտություն: Հաշվարկները կատարվել են ՊՄՖ ամբիոնում, իսկ գոտիական թիթեղի պատրաստումը և չափումները՝ արտերկրում՝ «American NanoScience and Advanced Medical Equipment, Inc»-ի ֆինանսավորմամբ: Սարքի կիզակետման արդյունավետության չափումները ցույց են տվել, որ այն գերազանցում է ներկայումս լայնորեն օգտագործվող երկմակարդակ ֆրենելյան գոտիական թիթեղի կիզակետման արդյունավետության անգամ տեսական սահմանը:

Ռենտգենադիֆրակտային չափումների և օպտիկական մանրադիտակի կիրառմամբ գրանցված պատկերների վերլուծության հիման վրա հետազոտվել է ցեմենտային մածուկում էտրինգիտ ֆազի բյուրեղների տարածական բաշխման և դեֆորմացված վիճակի կախվածությունը $C_4A_3\overline{S}$ խառնուրդային նյութի հարաբերական պարունակությունից: Համաձայն ստացված հիմնական արդյունքների՝ 1)

ցեմենտային մածուկում էտրինգիտի միկրոնային չափի բյուրեղները $C_4A_3\overline{S}$ -ի մասնիկների շուրջ կազմում են խիտ դասավորվածությամբ կարգավորված շերտեր, 2) $C_4A_3\overline{S}$ -ի պարունակության աճը բերում է էտրինգիտի բյուրեղների մեխանիկական դեֆորմացիայի և լարումների կտրուկ աճի, 3) էտրինգիտի բյուրեղների արդյունարար դեֆորմացիան իրենից ներկայացնում է հիդրոստատիկ և երկառանցքային տիպի դեֆորմացիաների վերադրում: Նշված տիպի դեֆորմացիաները համապատասխանաբար պայմանավորված են բյուրեղական ցանցում կետային արատների առաջացմամբ և շերտավորված էտրինգիտի բյուրեղների մեխանիկական փոխազդեցությամբ: Կիրառական տեսանկյունից ստացված արդյունքները կարող են օգտակար լինել $C_4A_3\overline{S}$ խառնուրդային նյութ պարունակող ցեմենտային մածուկի և բետոնի մեխանիկական հատկությունների հետազոտություններում:

Դիտարկվել են ռենտգենյան ճառագայթման լայն տարամիտված փնջի դիֆրակցիայի երկու սխեմա՝ *d-c* (դիաֆրագմա-բյուրեղ) և *c-d* (բյուրեղ-դիաֆրագմա): Ցույց է տրվել և փորձով հաստատվել է, որ *c-d* սխեմայի դեպքում դիֆրակտային պատկերը բյուրեղի հետազոտվող մասի տեղագրական քարտեզ է: Ցույց է տրվել նաև, որ *d-c* սխեմայի դեպքում պարամետրերի $L = 2l$ պայմանը բավարարելիս հիպերբոլի երկու ճյուղերը, որոնք ձևավորվել են տվյալ ատոմական հարթության վրա K_α և K_β բնութագրական ճառագայթումներով (ինչպես նաև դրանց երկրորդ և երրորդ կարգերը), միաձուլվում և դառնում են մի ուղիղ գիծ: Փորձով հաստատվել է, որ նշված միաձուլման բնույթը զգայուն է հետազոտվող բյուրեղի անկատարելությունների նկատմամբ:

Փորձով հաստատվել է, որ թույլ կլանող նմուշի տարբեր տեղամասերից ցրված ռենտգենյան ճառագայթումը բավարար տեղեկություններ է պարունակում նմուշի ներքին կառուցվածքի, տարբեր տիպի անհամասեռությունների առկայության, անտեսանելի արատների ձևի, չափերի և տեղաբաշխման մասին: Դրա հիման վրա զարգացվել է ոչ բյուրեղական օբյեկտների ներքին կառուցվածքի հետազոտման նոր եղանակ, որը պայմանավորված է ցրված ռենտգենյան ճառագայթման գրանցմամբ: Ցույց է տրվել, որ թույլ կլանող նմուշների վրա ցրված ռենտգենյան ճառագայթումով ձևավորված պատկերի ցայտունությունը կարող է զգալի մեծ լինել կլանման ցայտունությունից:

Տեսականորեն հետազոտվել է ռենտգենյան ճառագայթների դինամիկ դիֆրակցիան դարսման արատ պարունակող միաչափ հետերոէպիտաքսային գերցանցերում Բրեգի երկրաչափության դեպքում, գերցանցը կազմող նյութերի փոխադարձ դիֆուզիայի պայմաններում: Արտածվել է ռենտգենյան ճառագայթների անդրադարձման գործակցի բանաձևը սատելիտների ուղղությամբ՝ կախված դարսման արատի խորությունից, նրա վրա ալիքի կրած փուլի թռիչքից և գերցանցը կազմող նյութերի փոխադարձ դիֆուզիայի աստիճանից:

Ուսումնասիրվել են մնացորդային լարումները, որոնք առաջանում են, երբ Si-ի ինտերֆերաչափի բլոկներից մեկը ենթարկվում է տարբեր կողմնորոշումներով էլեկտրոնային ճառագայթման: Իրականացվել են փորձեր, երբ երկթիթեղ ռենտգենյան ինտերֆերաչափի սեպաձև բլոկը ենթարկվում է էլեկտրոնային ճառագայթման [111] և $[1\overline{1}0]$ բյուրեղագիտական ուղղություններով: Մասնավորապես իրականացվել է այն փորձը, երբ [111] բյուրեղագիտական ուղղությամբ էլեկտրոնային ճառագայթման է ենթարկվել ինտերֆերաչափի սեպաձև բլոկը: Ցույց է տրվել, որ այդ դեպքում տեղի է ունենում փորձում ստացված ճոճանակային շերտերի տեղաշարժ ուղղահայաց ուղղությամբ:

Ռենտգենաինտերֆերաչափական եղանակով ուսումնասիրվել է 5CB տիպի նեմատիկ հեղուկ բյուրեղների օպտիկական անիզոտրոպության երևույթը: Եռաբլոկ ռենտգենյան ինտերֆերաչափից ստացվող մուարի շերտերի տեղափոխությունների չափմամբ որոշվել են գլխավոր հատույթին ուղղահայաց ուղղությամբ բևեռացված ճառագայթի n_o բեկման ցուցիչի և գլխավոր հատույթին զուգահեռ

ուղղությամբ բևեռացված ճառագայթի բեկման n_e ցուցիչի գլխավոր արժեքները: Ցույց է տրվել, որ 5CB տիպի նեմատիկ հեղուկ բյուրեղը ռենտգենաօպտիկապես դրական անիզոտրոպ միջավայր է $n_o < n_e$:

- ***Կիսահաղորդչային նանոկառուցվածքների հետազոտություններ***

Ուսումնասիրվել է հիդրոստատիկ ճնշման, համաձուլվածքային կոնցենտրացիայի, ինչպես նաև համակարգի երկրաչափական չափերի ազդեցությունը էլեկտրոնային և խառնուկային վիճակների վրա կրկնակի համակենտրոն քվանտային օղակներում: Ուսումնասիրվել է նաև նշված գործոնների ազդեցությունը լույսի ներգոտիական կլանման գծային և ոչ գծային գործակիցների վրա:

Ուսումնասիրվել է հիդրոստատիկ ճնշման և արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությունը էլեկտրոնային վիճակների վրա միայնակ քվանտային օղակում, ինչպես նաև՝ նշված արտաքին ազդակների ազդեցությունը լույսի ներգոտիական կլանման գործակցի վրա:

Ուսումնասիրվել է արտաքին ուժեղ լազերային դաշտի ազդեցությունն էլեկտրոնային վիճակների վրա, ինչպես նաև ներգոտիական գծային և ոչ գծային կլանման գործակիցների և բեկման ցուցչի վրա եռանկյուն կտրվածքով քվանտային լարում:

Ուսումնասիրվել է GaAs/$Ga_{1-x}Al_xAs$ գլանային քվանտային օղակներից կազմված միաշերտ գերցանցում էլեկտրոնի էներգիական սպեկտրի և Բլոխի լայնույթների վրա Ga-ի և Al-ի փոխադարձ դիֆուզիայի ազդեցությունը: Ստացվել են դիսպերսային կորերը գլխավոր բյուրեղագիտական ուղղություններով դիֆուզիայի պարամետրի տարբեր արժեքների համար: Էլեկտրոնի արդյունարար զանգվածի՝ Al-ի կոնցենտրացիայից կախման հաշվառումը բերում է էներգիական մակարդակների մինչև 10 մԷՎ կարգի ուղղման:

Ուսումնասիրվել է երկու շեղված գաուսյան բաշխման ֆունկցիաներով սահմանափակված GaAs/$Ga_{1-x}Al_xAs$ կրկնակի քվանտային օղակներից կազմված եռաչափ գերցանցում էլեկտրոնի էներգիական սպեկտրի և Բլոխի լայնույթների վրա Ga-ի և Al-ի փոխադարձ դիֆուզիայի ազդեցությունը: Քննարկվել են խորանարդային և տետրագոնալ համաչափությամբ գերցանցի դեպքերը: Դիֆուզիայի պարամետրի տարբեր արժեքների համար ստացվել են դիսպերսային կորերը գլխավոր բյուրեղագիտական ուղղություններով:

Հետազոտվել են էլեկտրոնային, երկէլեկտրոնային վիճակները, ինչպես նաև միջզոտիական օպտիկական կլանումը գնդային մակերևույթի վրա գտնվող քվանտային օղակում: Քննարկված է Շտարկի երևույթը նշված համակարգում, և ցույց է տրված, որ տարածության կորության հաշվառումը բերում է գծային շտարկյան շեղման: Երկէլեկտրոնային վիճակները քննարկվել են խոտորումների տեսության շրջանակներում: Միջզոտիական անցումների համար ստացվել են ջոկման կանոնները և կլանման շեմային հաճախությունները:

Քննարկվել են երկէլեկտրոնային վիճակները պարաբոլական քվանտային կետում: Ներմուծվել են «պարաբոլական հելիումի ատոմի» համար օրթո- և պարա- վիճակներ: Ցույց է տրվել, որ չափային քվանտացման հետազոտվող համակարգի շնորհիվ կարելի է կառավարել էլեկտրոնների վիճակների փոխանակման ժամանակը:

Հետազոտվել է սպինային մագնիսական մոմենտի հոսանքը քվանտային օղակում: Ստացվել է այդ հոսանքի վերլուծական արտահայտությունը, և որոշվել նրա կախումն օղակի երկրաչափական պարամետրերից: Ցույց է տրվել, որ չափային քվանտացման շնորհիվ նշված համակարգում կարելի է իրագործել այնպիսի իրավիճակ, երբ միակ հոսանքը պայմանավորված է սպինային մագնիսական մոմենտով:

Ուսումնասիրվել է լույսի ռամանյան ցրումը մի քանի էլեկտրոն պարունակող քվանտային օղակում: Դիտարկվել է նաև Ռաշբայի սպին-ուղեծրային փոխազդեցության ազդեցությունը ռամանյան անցումների վրա: Ցույց է տրվել, որ սպին-ուղեծրային փոխազդեցությունը բերում է կառավարելի լայնույթներով լրացուցիչ ռամանյան անցումների առաջացման: Ցույց է տրվել նաև, որ երկու էլեկտրոն պարունակող

քվանտային օղակում սպին-ուղեծրային փոխազդեցության արդյունքում հնարավոր է ստանալ սինգլետ-տրիպլետ, ինչպես նաև տրիպլետ-սինգլետ ռամանյան անցումներ:

Ուսումնասիրվել են էքսիտոնային վիճակները մագնիսական խառնուկ պարունակող CdTe քվանտային օղակում արտաքին մագնիսական դաշտում: Հաշվարկները կատարվել են էլեկտրոնի և խոռոչի միջև սպինային փոխազդեցության, ինչպես նաև էլեկտրոնի, խոռոչի և մագնիսական խառնուկի միջև s,p-d փոխազդեցությունների հաշվառմամբ: Առաջարկվել է s,p-d փոխազդեցությունների ինտենսիվությունների գնահատման նոր եղանակ: Ուսումնասիրվել է նաև համակարգի օպտիկական սպեկտրը լույսի տարբեր բևեռացումների և խառնուկի սպինի պրոյեկցիայի տարբեր սկզբնական արժեքների դեպքում:

Ուսումնասիրվել է արտաքին էլեկտրական դաշտի և հիդրոստատիկ ճնշման համատեղ ազդեցությունը մեկ էլեկտրոն պարունակող քվանտային օղակի օպտիկական հատկությունների վրա: Ցույց է տրվել, որ հիդրոստատիկ ճնշման մեծացումը կարող է բերել օպտիկական սպեկտրի ինչպես կապույտ, այնպես էլ կարմիր շեղման, սակայն էլեկտրական դաշտի մեծացումը միշտ բերում է կապույտ շեղման:

Տեսականորեն ուսումնասիրվել են կապված պոլարոնային վիճակները կիսահաղորդչային GaAs/AlGaAs-ային քվանտային լարերում՝ ֆոնոնային սահմանափակության, հետերոկառուցվածքի երկրաչափական ձևի և չափերի, ինչպես նաև արտաքին էլեկտրական և մագնիսական դաշտերի ազդեցությունների հաշվառմամբ: Խառնուկի տարբեր դիրքերի դեպքում գնահատվել են կապի էներգիայում ծավալային, սահմանափակ և մակերևութային օպտիկական ֆոնոնային մոդերի հետ էլեկտրոնի փոխազդեցությամբ պայմանավորված ներդրումները:

Վերջավոր պոտենցիալային փոսի մոդելում ուսումնասիրվել են պոլարոնային վիճակները կրկնակի քվանտային օղակներում արտաքին էլեկտրական և մագնիսական դաշտերի առկայությամբ: Լանդաու-Պեկարի փոփոխակային տեսության շրջանակներում ուսումնասիրվել է էլեկտրոնի փոխազդեցությունը սահմանափակ և մերձմակերևութային ֆոնոնների հետ, գնահատվել է այդ փոխազդեցության ներդրումը պոլարոնի սեփական էներգիայում՝ կախված օղակների չափերից և արտաքին դաշտերի մեծությունից:

Ուսումնասիրվել են վյուրցիտային կառուցվածքով նիտրիդային քվանտային փոսում ֆոնոնային մոդերի առանձնահատկությունները, ինչպես նաև Ռաշբայի և Դրեսելհաուսի սպին-ուղեծրային փոխազդեցությունների համաժամանակյա ազդեցությունը պոլարոնային վիճակների վրա: Խոտորումների տեսության շրջանակներում հաշվարկվել են պոլարոնի սեփական էներգիան և արդյունարար զանգվածը՝ հաշվի առնելով այսպիսի կառուցվածքներում առկա տարածական անհամաչափության ներգործությունը սպին-ուղեծրային փոխազդեցության, ինչպես նաև ֆոնոնային սպեկտրի վրա:

Ուսումնասիրվել է տաք էլեկտրոնների էներգիական ռելաքսացիան քվանտային փոսերով կառուցվածքներում արտաքին էլեկտրական և մագնիսական դաշտերի առկայությամբ: Դիտարկվել է էլեկտրոնների փոխազդեցությունը ձայնային և օպտիկական ֆոնոնների հետ, և բացահայտվել են ֆոնոնային սահմանափակման ազդեցությունը ռելաքսացիայի արագության վրա, ինչպես նաև նրա կախումը էլեկտրոնային և ցանցային ջերմաստիճաններից, էլեկտրոնային կոնցենտրացիայից, կիրառված դաշտերի ուժգնությունից, համակարգի երկրաչափական չափերից, էլեկտրոնի շարժումը սահմա-նափակող պոտենցիալի տեսքից:

Ուսումնասիրվել են գրաֆենային և սիլիցիումային քվանտային կետերում և քվանտային կետերով մոլեկուլներում լիցքակիր-ֆոնոն փոխազդեցությամբ և լիցքակիրների ռամանյան ցրումով մակածված սպինային անցումների առանձնահատկությունները:

Փականային դաշտով կառավարվող գրաֆենային և սիլիցիումային քվանտային կետերով և քվանտային կետերի մոլեկուլներով համակարգերում սպին-ուղեծրային փոխազդեցության հաշվառմամբ ուսումնասիրվել են էլեկտրոնի սպինային ռելաքսացիան՝ պայմանավորված էլեկտրոն-ֆոնոնային փոխազդեցությամբ, և լույսի ոչ առաձգական ռեզոնանսային ցրումով պայմանավորված՝ էլեկտրոնի ռամանյան անցումները: Լիցքակիր-ֆոնոն փոխազդեցության տեսական ուսումնասիրումն իրականացվել է ֆոնոնային մոդերի տարածական քվանտացման հաշվառմամբ:

Հետազոտվել են չեզոք՝ D_0 խառնուկային կենտրոնի հետ կապված էլեկտրոնի էներգիական վիճակները կիսահաղորդչում, երբ խառնուկային կենտրոնը տեղայնացված է կիսահաղորդչի մակերևույթի շրջակայքում՝ տեսածրող թունելային մանրադիտակի ծայրի առկայությամբ: Դիտարկվել են ծայրի հաստատուն դրական և բացասական էլեկտրական լարումների ազդեցություններն էլեկտրոնի էներգիական սպեկտրի վրա: Ցույց է տրվել, որ ծայրի դրական լարման դեպքում (բացասական լիցք ծայրի վրա) տեղի է ունենում դոնորային կենտրոնի իոնացում: Բացասական լարման դեպքում դիտվում է կապի էներգիայի ոչ մոնոտոն վարք՝ կախված դոնորի և ծայրի միջև հեռավորությունից:

Հետազոտվել են տարբեր դասավորվածությամբ բազմաշերտ գրաֆենի օպտիկական հատկությունները: Դիտարկվել են էլեկտրոնային անցումներ արժեքական գոտուց դեպի հաղորդականության գոտի՝ պայմանավորված ուժեղ լազերային դաշտով, երբ համակարգում առկա է հաստատուն էլեկտրական դաշտով ստեղծված էներգիական ճեղք:

- **Ցածրջերմաստիճանային հետազոտություններ, գիտական սարքաշինություն և գերհաղորդականություն, մագնիսական հետազոտություններ**

Մշակվել, նախագծվել և ստեղծվել են 10 մՀց-500 Հց հաճախային տիրույթում գործող, 2-5 նմ դիրքի փոփոխության լուծող ունակությամբ օժտված մեխանիկական («սեյսմիկ») և ակուստիկ («միկրոֆոն») տատանումների դետեկտորներ, որոնք գործում են թույլ հզորությամբ (5 մկՎտ փոքր) թունելային դիոդով ակտիվացվող ինքնագեներատորների հիման վրա:

Սեյսմիկ դետեկտորում որպես տվիչ ծառայում է լիտոգրաֆիկ մեթոդով պղնձից նստեցված, 20 մմ տրամագծով, մոտ 20 գալար պարունակող միաշերտ հարթ կոճը: Այն ենթարկվել է լաբորատոր ու դաշտային փորձարկումների ու կարողանում է «նկատել» քայլող մարդուն (կախված գետնի խոնավության աստիճանից ու երկրաբանական բաղադրությունից)՝ սկսած 100փ250մ հեռավորությունից: Համեմատության համար նշենք, որ աշխարհում հայտնի, այլ սկզբունքներով գործող սեյսմիկ դետեկտորները կարողանում են քայլող մարդուն «նկատել» առավելագույնը 10փ50մ հեռավորությունից (կախված գետնի վերը նշված վիճակից): Իր հնարավորություններով եզակի այս դետեկտորն 2014թ. հունվարին բազմակողմանի ու համեմատական փորձարկումների է ենթարկվել նաև ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմաուսումնական կենտրոնում ու արժանացել բարձր գնահատականի: Քննարկման ընթացքում են հայկական այս տեխնոլոգիան ԱՄՆ-ի հետ առևտրայնացման բերելու մարքեթինգային հարցերը:

Ավարտին են հասցվել միաժամանակ 3 առանցքներով տատանումներ գրանցող /«վեկտորական»/ սեյսմիկ դետեկտորի լաբորատոր մանրակերտի ստեղծման աշխատանքները: Սկսվել են այդ դետեկտորի լաբորատոր ու դաշտային փորձարկումները:

Ակուստիկ տատանումների դետեկտորում որպես սենսոր ծառայում է 5-6 մմ տրամագծով, մոտ 15 գալար պարունակող, պղնձե լարով միաշերտ փաթաթված հարթ կոճը: Այն ենթարկվել է լաբորատոր փորձարկումների, որոնց ընթացքում հետազոտվել են բժշկական ու կենսաբանական հետազոտություններում այս նոր մեթոդով գործող միկրոֆոնի օգտագործման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Փորձերն իրականացվել են առողջ ու տկար կամավորների վրա: Հետազոտությունների ընթացքում նոր միկրոֆոնով գրանցվել են մարդու ներքին օրգանների գործունեության հետևանք հանդիսացող նրա մարմնի մաշկի տատանումները՝ 0.1-500 Հց հաճախային տիրույթում: Դա հնարավորություն է տվել բացահայտելու մարդու ներքին օրգանների (սրտանոթային ու շնչառական

օրգաններ, ձայնալարեր և այլն) գործունեության առանձնահատկությունները: Հետազոտությունների արդյունքներից հետևում է, որ հարթ կոճի մեթոդով գործող նոր միկրոֆոնի հիման վրա կարելի է ստեղծել մարդուն ըստ ձայնի (խոսակցության գրանցման միջոցով) ճանաչելու սկզբունքորեն նոր գերզգայուն տեխնիկա:

Հետազոտվել է $Gd_5Si_{2-x}Ge_{2-x}Sn_{2x}$ համակարգի մագնիսակարգավորված միացությունների մագնիսականացումը սիլիցիումի և գերմանիումի ատոմներն անագի ատոմներով մասնակի փոխարինմամբ: $Gd_5Si_{2-x}Ge_{2-x}Sn_{2x}$ ($2x = 0 – 0.1$) համաձուլվածքների մագնիսացման ջերմաստիճանային և դաշտային կախվածություններից որոշվել են համաձուլվածքների էնտրոպիայի մագնիսական մասի առավելագույն փոփոխությունները (ΔS_M^{max}): Հայտնաբերվել է, որ անագով լեգիրված համաձուլվածքների Կյուրիի ջերմաստիճանները (T_C) և ΔS_M^{max}-ի արժեքները աճում են: Դիտվում է ΔS_M^{max}-ի մոտ կրկնակի աճ T_C-ի ($\Delta T_C \approx 15$ Կ) աճի դեպքում:

ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Զուբարյան Էդվարդ Վարդանի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ավագյան Ռոլանդ Մամիկոնի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հարությունյան Գոհար Հրայրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Նազարյան Էռնեստ Աղաջանի, տեխ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
4. Ներսեսյան Արմեն Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
5. Հակոբյան Տիգրան Ստեփանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
6. Քոթանջյան Աննա Սենիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Սարգսյան Գոռ Ալֆրեդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Օհանյան Վաղիմ Ռոբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Անդրիասյան Վարդան Կարենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Մխիթարյան Արամ Լևոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Նովիկովա Ալլա Լեոնիդի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Spherical systems related to the rational Calogero models, ANSEF 3501-math-phys (2014).	Hakobyan T. S.
2. Duality defects, ANSEF hepth-3267 (2013).	Sarkissian G. A.
3. Novel Approach for Mesoscopic phenomena, ICTP Network NET68 (Armenia-Iran-Morocco-Turkey), 2012.	Nersessian A. P.

Թեմա 1. Ուսումնասիրվել են կոնֆորմ մեխանիկայի շարժման ինտեգրալների կառուցվածքը: Կիրառելով կոնֆորմ խմբի ներկայացումների տեսությունը՝ հայտնի շարժման ինտեգրալների միջոցով կառուցվել են մի շարք այլ ինտեգրալներ: Կալոջերոյի մոդելի դեպքում վերջիններս համապատասխանում են հավելյալ շարժման ինտեգրալներին:

Թեմա 2. Կառուցվել է տոպոլոգիական դեֆեկտները առաջացնող ոչ աբելյան T-դուալությունը: Ցույց է տրված, որ դեֆեկտներին համապատասխան շարժման հավասարումները նկարագրում են ոչ աբելյան T-դուալությունը:

Թեմա 3. Ցույց է տրված նաև, որ Ֆուրյե-Միկայի ձևափոխությունը տալիս է էլեգանտ և կոմպակտ միջոց Ռամոնդ-Ռամոնդ դաշտերի արտահայտության համար ոչ աբելյանի T-դուալության դեպքում:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Դիտարկված են դե-Սիտտերի կոսմոլոգիական մոդելները Յորդան-Բրանս-Դիկկե մոդիֆիկացված տեսության շրջանակներում տարբեր կոսմոլոգիական սկալյարների դեպքում: Քննարկված է փոխազդեցության ξ հաստատունի դերը:

Ուսումնասիրվել է ԴՆԹ-ի վիրուսների կիրառումը աբողջ ռեպլիկացիոն ցիկլի համար, որը հնարավորություն է տալիս տեղայնացնելու բջջային և վիրուսային ազդեցության մեխանիզմները նոր պատճենված վիրուսային ԴՆԹ-ի վրա կամ բնածին իմունային սենսորների ազդեցությունը ցիտոպլազմային վիրուսային ԴՆԹ-ի վրա:

Ուսումնասիրվել են նաև ազոտային մետաբոլիզմը, հատկապես ազոտ օգտագործող ֆենոտիպեր, որոնք սահմանվում են մետաբոլիզմի կենսունակությամբ: Ուսումնասիրությունները վեր են հանում մակրոմոլեկուլների գենոտիպային տարածքների միջև եղած մեծ նմանությունները և այնպիսի մետաբոլիզմ, որը կարող է նպաստել նոր ֆենոտիպերի առաջացմանն ու զարգացմանը:

Ուսումնասիրվել է ինտեգրվող գնդաձև մեխանիկան, որը նկարագրում է կամայական չափողականությամբ հորիզոնին մոտ էքստրեմալ սև խոռոչը՝ պարամետրերի որոշակի արժեքների համար: Պարզվել է, որ գնդաձև մեխանիկայի հետ կապված սև խոռոչը կենտ չափոխականությունների դեպքում առավելագույն սուպերինտեգրվող է, իսկ զույգ չափոխականությունների դեպքում բացակայում է միայն մեկ շարժման ինտեգրալ՝ առավելագույն սուպերինտեգրվող համակարգ կազմելու համար:

Կառուցվել է իզոսպինային մասնիկների համակարգ՝ բազմաչափ քվարտենիոնային պրոյեկտիվ տարածություններում ինստանտոնների առկայությամբ 2n+1 չափանի ազատ մասնիկից նվազեցման եղանակը կիրառելու համար: Հավելյալ քվարտենիոնային տատանակի առկայությամբ այս համակարգը ևս սուպերինտեգրվող է: Ցույց է տրվել, որ համակարգը ունի երրորդ կարգի անկախ շարժման ինտեգրալներ:

Առաջարկվել է ընդհանուր տեխնիկա կորելյացիոն ֆունկցիաների ճշգրիտ հաշվարկման համար սպինային այն մոդելների համար, որոնք բաղկացած են քվանտային սպիններից կազմված փոքր կլաստերներից, որոնք տեղադրված են շղթայի վրա և փոփազդում են միմյանց հետ Իզինգի սպինների միջոցով: Առաջարկված մեթոդը հայտնի փոխանցման մատրիցի մեթոդի բնական ընդհանրացում է հանդիսանում:

Ուսումնասիրվել է քվանտամեխանիկական Կուլոնի խնդիրը եռաչափ սֆերայի վրա: Դիտարկվել է էլիպտա-սֆերոիդալ կոորդինատային համակարգի որոշակի պարամետրիզացիա, որը տարանջատում է փոփոխականները: Քվանտացման արդյունքում ստացվել է սպեկտրի բացահայտ տեսքը: Ռունգե-Լենցի վեկտորի սեփական արժեքների համար դուրս է բերվել հանրահաշվական հավասարում:

Ուսումնասիրվել են դեֆեկտները առաջացնող դուալությունները լարային տեսությունում: Մասնավորապես հետազոտվել են ֆերմիոնական և ոչ աբելյան T-դուալությունները: Կառուցվել են

համապատասխան դեֆեկտները, ստացվել են դեֆեկտային շարժման հավասարումները, որոնք տալիս են դուալության առնչությունները:

Հետազոտվել են նաև էլեկտրամագնիսական դաշտի քվանտային ֆլուկտուացիաները դե Սիտտերի տարածությամբ նկարագրվող կոսմոլոգիական մոդելում: Որոշվել են դաշտի երկկետային ֆունկցիաները սահմանի առկայությամբ, ինչպես նաև դաշտի քառակուսու և էներգիայի իմպուլսի թենզորի միջինները՝ Բանչ Դևիսի վակուումային վիճակում:

Ցույց է տրված, որ ի տարբերություն Մինկովսկու տարածության դեպքի՝ հետազոտվող խնդրում էներգիայի-իմպուլսի թենզորն ունի նաև ոչ անկյունագծային բաղադրիչ, որը նկարագրում է էներգիայի հոսքը սահմանին ուղղահայաց ուղղությամբ: Ցույց է տրված, որ այդ հոսքն ուղղված է սահմանից դուրս:

Ուսումնասիրվել են դիէլեկտրական գլանի շուրջը կամայական փակ հետագծով շարժվող լիցքավորված մասնիկի դաշտը և ճառագայթման ինտենսիվությունը: Քննարկվել են ճառագայթման ինտենսիվության անկյունահաճախային բաշխման մեջ նեղ ինտենսիվ պիկերի առաջացման հնարավորությունը և պայմանները:

ՕՊՏՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԵՎ ՖՈՏՈՆԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Չիլինգարյան Յուրի Սերգեյի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ալահվերդյան Ռոման Բախշիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Ասլանյան Լևոն Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Չիլինգարյան Ալեքսանդր Դավիթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Գևորգյան Գևորգ Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
6. Էլբակյան Վաչագան Լեոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
7. Կիրակոսյան Արթուր Աբրահամի, տեխն. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
8 Ղարագուլյան Հերմինե Սաշայի, կրտսեր գիտաշխատող
9. Ներսիսյան Սամվել Ցոլակի, կրտսեր գիտաշխատող
10. Սահակյան Նաիրա Սարգսի, կրտսեր գիտաշխատող
11. Վարդանյան Աշոտ Անուշավանի, կրտսեր գիտաշխատող
12. Վարդանյան Նունե Ֆրունզեի, կրտսեր գիտաշխատող
13. Գրիգորյան Հայարփի Հովելի, ավագ լաբորանտ
14. Մարգարյան Կարինե Ալեքսանդրի, ավագ լաբորանտ
15. Նինոյան Ժիրայր Վահեի, լաբորանտ
16. Տոնեյան Հրաչ Ալբերտի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Լազերային ճառագայթման տարածումը և ստացիոնար ու ոչ ստացիոնար փոխազդեցությունը մանրաթելերում, պլանար ալիքատարներում և ծավալային կառուցվածքներում: Դրանց հիման վրա օպտոէլեկտրոնային տարրերի և համակարգերի մշակում ու ստեղծում (պետական ֆինանսավորում):	Չիլինգարյան Յու. Ս.

Թեմա 1. Ուսումնասիրվել են արտաքին փոփոխական էլեկտրական դաշտի ազդեցությունը երկհաճախային քիրալ հեղուկ բյուրեղի (ՀԲ)-ի պարուրաձևավորման ընթացքի վրա և դրա ազդեցությունը նրանով անցնող լազերային փնջի բևեռացման վրա: Փորձնականորեն ուսումնասիրվել են երկհաճախային քիրալ ՀԲ-ական թաղանթից լազերային ճառագայթման անդրադարձման առանձնահատկությունները արտաքին էլեկտրական դաշտով հոմեոտրոպից պլանար (պարուրաձև) կառուցվածքային անցման ընթացքում, երբ լազերային ճառագայթման ալիքի երկարությունն ընկած է քիրալ ՀԲ-ի ֆոտոնային արգելված գոտու (ՖԱԳ)-ի մեջ:

Անիզոտրոպության սահուն անհամասեռությամբ միջավայրերում իրականացվել է լույսի բևեռացման վիճակի տարածական դինամիկայի համակարգված վերլուծություն: Որպես նման միջավայրի օրինակ դիտարկվել է թվիստ կողմնորոշմամբ նեմատիկ հեղուկ բյուրեղը: Երկրաչափական օպտիկայի մեթոդով ստացվել է այդ համակարգի անալիտիկ լուծումը, և ցույց է տրվել, որ պտույտ պարունակող միջավայրերում լույսի բևեռացման վիճակը ենթարկվում է օսցիլյացիաների, որոնց տարածական հաճախությունը կախված է նմուշի հաստությունից:

Կատարվել են կալցիտի թափանցիկության տիրույթում բազմաֆոնոնային ռեզոնանսի երևույթի ուսումնասիրմանն ուղղված փորձարարական հետազոտություններ: Ստացված արդյունքներից հստակ երևում է, որ երբ ընկնող ճառագայթման հաճախականությունը համընկնում է կալցիտի ֆոնոնային մակարդակի կամ նրա պատիկների հետ, ապա դիտվում է հստակ արտահայտված ռեզոնանսի երևույթ:

Լաբորատորիայում զբաղվում են ֆիզիկական գիտափորձի սարքավորումների ղեկավարմամբ, չափումների տվյալների ավտոմատացմամբ և համակարգչային վերլուծությամբ:

Ինժեներական խումբը մշակել է համակարգ, որը կարող է կիրառվել աստղադիտակների պտտվող գմբեթի ճշգրիտ կառավարման համար, կատարված են որոշակի աշխատանքներ այդ համակարգի LabVIEW-ի միջավայրում ծրագրային ապահովմամբ, որը արդյունավետ կերպով կարող է օգտագործվել աստղադիտակների ավտոմատացված կառավարման համար:

ԳԵՐԱՐԱԳ ՕՊՏԻԿԱՅԻ ԵՎ ՖՈՏՈՆԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Մուրադյան Լևոն Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Եսայան Գարեգին Լևոնի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Զեյթունյան Արամ Սարգսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

3. Հարությունյան Իշխան Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Կուտուզյան Աղավնի Ալբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Քալաշյան Մերի Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
7. Հակոբյան Մարիամ Ռաֆիկի, կրտսեր գիտաշխատող
8. Մարգարյան Գոհարիկ Հրանդիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի լաբորատորիայի ստեղծում և զարգացում (պետական ֆինանսավորում):	Մուրադյան Լ. Խ.

Թեմա1. Հետազոտությունների առարկան են լազերային ճառագայթման ինքնա-, կրոսս- և փոխմոդուլացման, սպեկտրալ սեղմման, հաճախային վերալարման, ոչ գծային օպտիկական Ֆուրյե-փոխակերպման, սոլիտոնաձևավորման, օպտիկական ինքնանմանության տիպի երևույթները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են թվային և փորձարարական հետազոտություններ՝ նպատակաուղղված լազերային գերկարճ իմպուլսների բնութագրման և կառավարման մեթոդների մշակմանը ժամանակակից գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի հիմնախնդիրների լուծման համար, մասնավորապես՝ ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում ազդակների գրանցման և կառավարման սարքերի ստեղծման հեռանկարով: Լաբորատորիայի ձեռքբերումները հիմք են ծառայում ֆեմտովայրկյանային իմպուլսների անալիզի և սինթեզի մեթոդների մշակման համար՝ կոհերենտ վերահսկման, ֆոտոնիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում կիրառությունների նպատակով: Լաբորատորիայում իրականացված աշխատանքների արդյունքները ամփոփ արտահայտված են գիտական հրապարակումներում:

ԳԾԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԳԾԱՅԻՆ ՄՈՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Գրիգորյան Մարտին Գևորգի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Եպիսկոպոսյան Սերգո Արմենակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Արծրուն Արշալույսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Գալոյան Լևոն Նիկոլայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
4. Կոբելյան Արթուր Խաչիկի, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հետազոտված է տարբեր համակարգերով Ֆուրիե շարքերի բացարձակ, ոչ պայմանական զուգամիտությունը: Ուսումնասիրված են տարբեր դասերի միաչափ և բազմաչափ ֆունկցիաների, ըստ Ուոլշի, ընդհանրացված Ուոլշի, Ֆաբեր-Շաուդերի, Հաարի, եռանկյունաչափական համակարգերի ոչ գծային մոտարկման, որոշ դեպքերում լավագույն մոտարկման, մասնավորապես «Greedy» ալգորիթմով մոտարկման հարցեր:

ԹԱՂԱՆԹՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՅ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Նազարյան Էռնեստ Աղաջանի, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Առաքելյան Միլետա Մարտիրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Հովսեփյան Աշոտ Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ինժեներ-ծրագրավորող
3. Նովիկովա Ալլա Լեոնիդի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Թաղանթների ձևագոյացում (պետական ֆինանսավորում):	Նազարյան Է. Ա.

Թեմա 1. Ուսումնասիրվել են դժվար դեֆորմացվող և հրակայուն թերթային մետաղների ձևագոյացման ընթացքում առաջացող լարումների և դեֆորմացիաների դաշտերը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Սանթրոսյան Սարգիս Գրիգորի, դոցենտ*

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Ավագիմյանց Վլադիմիր Միքայելի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող
2. Զաքոյան Վլադիմիր Ռուբենի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող
3. Թադևոսյան Հմայակ Տիգրանի, ՀՀ վաստակավոր մարզիչ
4. Թումանյան Հենրիկ Գևորգի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող
5. Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող
6. Ղուկասյան Արկադի Արսենի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող
7. Սանթրոսյան Սարգիս Գրիգորի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող
8. Օրդյան Վրեժ Վլադիմիրի, ՀՀ վաստակավոր մարզիչ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Թումանյան Հենրիկ Գևորգի, մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
2. Զաքոյան Վլադիմիր Ռուբենի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավագիմյանց Վլադիմիր Միքայելի, դոցենտ
4. Թադևոսյան Հմայակ Տիգրանի, դոցենտ
5. Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի, դոցենտ
6. Բաբուրյան Հայկ Ռուբենի, ասիստենտ
7. Ղուկասյան Արկադի Արսենի, ասիստենտ
8. Գալոյան Արսեն Ռոբերտի, դասախոս
9. Գևորգյան Հայկ Սանասարի, դասախոս
10. Զաքարյան Երվանդ Ալեքսանդրի, դասախոս
11. Կարապետյան Դավիթ Սերգեյի, դասախոս
12. Հարությունյան Արարատ Աղաբեկի, դասախոս
13. Ղուկասյան Նարեկ Յուրիի, դասախոս
14. Մելքոնյան Լուսինե Ազատի, դասախոս
15. Մինասյան Դավիթ Ռստանիկի, դասախոս
16. Մխիթարյան Արսեն Գուրգենի, դասախոս
17. Մնացականյան Սարգիս Խաչիկի, դասախոս
18. Մուրադյան Սարիբեկ Մկրտչի, դասախոս
19. Շահբազյան Կարեն Նորայրի, դասախոս
20. Սարգսյան Աշոտ Հրաչյայի, դասախոս
21. Փարվանյան Դիաննա Վարդանի, դասախոս

22. Օրդյան Վրեժ Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Պողոսյան Արթուր Բորիկի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գուլասարյան Ջուլիետա Լյուդվիգի, գործավար
2. Բարսեղյան Լիլյա Հակոբի, լաբորանտ
3. Գասպարյան Լուսինե Վոլոդյայի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական և այլ աշխատանքների ամփոփում

Ֆիզիկական դաստիարակության գործընթացը համալսարանում ավելի արդյունավետ կազմակերպելու, սպորտային կատարելագործման խմբերը ֆիզիկական բարձր պատրաստականություն ունեցող ուսանողներով համալրելու նպատակով հաշվետու ուստարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հետազոտվել է առաջին կուրս ընդունված ուսանողների ֆիզիկական պատրաստականության և ֆիզիկական զարգացման վիճակը: Ամփոփվել են վերջին 5 տարիներին /2008/2009-2012/2013թթ./ առաջին կուրս ընդունված ուսանողների՝ կիրառական մարզաձևերին վերաբերող սոցիոլոգիական հարցումների տվյալները (գործընթացում ներգրավված են եղել 11000 ուսանողներ): Արդյունքները տպագրվել են Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հանրապետական 40-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութերում:

Ամբիոնի երկու դասախոսների (Վ. Զաքոյան, Վ. Ավագիմյանց) ԵՊՀ գիտական խորհուրդը շնորհել է պրոֆեսորի գիտական կոչում:

Ուսումնական և գիտամեթոդական աշխատանքներին զուգընթաց՝ ամբիոնում կատարվել են բազմաբնույթ այլ աշխատանքներ: Արհեստակցական կազմակերպության, Մարզական ակումբի և Ուսանողական խորհրդի հետ համատեղ ամբիոնը կազմակերպել է ֆակուլտետային և միջֆակուլտետային առաջնություններ սեղանի թենիս, շախմատ, բասկետբոլ և վոլեյբոլ մարզաձևերից: Օլիմպիական միջազգային օրվան նվիրված վազքարշավին (Հանրապետության հրապարակ-Մաշտոցի պողոտա-Հրազդան մարզադաշտ երթուղով) մասնակցել են 100-ից ավելի տարբեր տարիքի համալսարանականներ:

Հաշվետու ուստարում անցկացվել են ՀՀ ԿԳ նախարարության ավանդական 14-րդ ուսանողական մարզական խաղերը 7 մարզաձևերից (տղաներ և աղջիկներ), որոնց մասնակցել են 19 պետական և ոչ պետական բուհերի ներկայացուցիչներ: Համալսարանի շախմատի, աթլետիկական կրոսավազքի և ֆուտզալի աղջիկների հավաքականները հանդես են եկել բարձր կազմակերպվածությամբ և դարձել խաղերի չեմպիոններ: Մնացած մարզաձևերում մեր հավաքականները գրավել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

2014թ. ապրիլ ամսին համալսարանը հյուրընկալել է Հայկազյան համալսարանի մարզական պատվիրակությանը: Ընկերական հանդիպումներ են անցկացվել բասկետբոլ (տղաներ և աղջիկներ), ֆուտզալ (տղաներ) և սեղանի թենիս մարզաձևերից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը մայիսի 15-ից 30-ը համատեղ կազմակերպել են միջբուհական մարզամշակութային ունիվերսիադա 5 մարզաձևերից: Միջոցառմանը հաջողությամբ մասնակցել են նաև համալսարանականները:

Մայիսի 25-ին ամբիոնը ձմեռային մարզաձևերի և լեռնային տուրիզմի զարգացման «Ալպինա» կենտրոնի (տնօրեն Ռ. Ազլյան) հետ համատեղ կազմակերպել է վերելք Արագածի հարավային գագաթ՝ նվիրված ՀՀ անկախության տարեդարձին և ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին:

Ուստարում կազմակերպվել են բազմաթիվ էքսկուրսիա-արշավներ Ամբերդ, Բուժական Թեղենյանց վանք, Անիի ավերակների դիտում Անի-Պեմզա սահմանի դիտակայանից, Երերույքի վանք և այլ երթուղիներով, վերելքներ Հատիս և Արայի լեռներ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	3	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Զաքոյան Վ. Ռ.,* Պատանեկան բասկետբոլ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2014, 145 էջ:

Հոդված

1. *Թումանյան Հ. Գ., Գուլասարյան Ջ. Լ., Գասպարյան Լ. Վ.,* Բուհում ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարելավման հարցերը, Հանրապետական XL գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, Երևան, 2013, էջ 139-142:
2. *Հակոբյան Հ. Ռ., Սանթրոսյան Ս. Գ.,* Ուսանողի ֆիզիկական պատրաստվածության խնդիրները բուհերում, Հանրապետական XL գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, էջ 151-152:
3. *Авагимянц В. М.,* О эффективности применения технических средств в тренировочном процессе в восточных единоборствах, Հանրապետական XL գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, էջ 345-348:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, Ուսումնամեթոդական վարչության պետ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Մանասյան Կարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Անանյան Սուսաննա Սուրենի, դասախոս
3. Բաղդասարյան Լյովա Լյուդվիգի, դասախոս
4. Հակոբյան Ասյա Անդրանիկի, դասախոս
5. Հարությունյան Հասմիկ Վարդգեսի, դասախոս
6. Ճաղարյան Գագիկ Հրանտի, դասախոս
7. Մանուկյան Սուսաննա Ալեքսանի, դասախոս
8. Նիկոյան Կարինե Ռազմիկի, դասախոս
9. Շահինյան Սուսաննա Միշիկի, դասախոս
10. Սաղիխյան Ֆենյա Միշայի, դասախոս
11. Քամալյան Սամվել Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Սամվելյան Արա Գեղամի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Շահնազարյան Մարինե Սերժիկի, գործավար
2. Մարտիրոսյան Անուշ Ալբերտի, ավագ լաբորանտ
3. Հարությունյան Էլմիրա Ալեքսանդրի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի կողմից «Քաղաքացիական պաշտպանություն (ՔՊ) և արտակարգ իրավիճակների (ԱԻ) հիմնահարցեր» ու «Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացների շրջանակներում ուսուցանվել են 844 առկա և 703 հեռակա համակարգերի ուսանողներ:

Ուսուցման արդյունքում ուսանողների շրջանում ձևավորվել են իմացություններ ՀՀ-ում հավանական ԱԻ-ների ազդող գործոնների և դրանցից պաշտպանվելու կարողությունների վերաբերյալ: Ուսանողներն իրազեկվել են պետության կողմից ԱԻ-ում իրականացվող միջոցառումներին և այդ գործընթացում իրենց

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 76*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Կիրառական արվեստ	5	15	5	21	-	-	5	25
Ընդամենը	***5***	***15***	***5***	***21***	**-**	**-**	***5***	***25***

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կիրառական արվեստ					
1-ին	20	-	7	-	65
2-րդ	26	-	12	-	54
4-րդ	30	-	13	-	57
Ընդամենը	**76**	**-**	**32**	**-**	**58.6**
Մագիստրատուրա					
Կիրառական արվեստ					
1-ին	4	-	-	-	100
2-րդ	9	-	1	2	89
Ընդամենը	**13**	**-**	**1**	**2**	**92.3**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կիրառական արվեստ					
1-ին	19	-	8	-	57.8
2-րդ	28	-	10	1	64.2
Ընդամենը	***47***	***-***	***18***	***1***	***61.7***
Մագիստրատուրա					
Կիրառական արվեստ					
1-ին	4	-	-	-	100

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 40, այդ թվում նախորդ տարիներից՝ 2*
	Բակալավրիատ (գերազանցության դիպլոմով) Մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)
Կիրառական արվեստ	31 (3)
Մագիստրատուրա	9 (4)
Ընդամենը	***40 (7)***

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Բուդդարյան Ռաֆիկ Գարեգինի, Դիզայներների միջազգային ասոցիացիայի անդամ, ՀՀ դիզայներների միության անդամ, ասիստենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Այվազյան Կամո Բենիկի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ դիզայներների միության անդամ
2. Չիբուխչյան Անուշ Լյուբիկի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
3. Չիբուխչյան Դոնարա Լևոնի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
4. Պողոսյան Ռուզաննա Կիմի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Պողոսյան Դավիթ Անդրանիկի, դասախոս

Համատեղողներ

1. Մելքումյան Սամվել Հովհաննեսի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պողոսյան Դավիթ Անդրանիկի, արվեստանոցի վարիչ
2. Աբազյան Անահիտ Աթաբեկի, ուսումն. վարպետ
3. Չիբուխչյան Դոնարա Լևոնի, ուսումն. վարպետ
4. Պողոսյան Ռուզաննա Կիմի, ուսումն. վարպետ
5. Ասլանյան Գայանե Սարգսի, գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակաշրջանում Դեկորատիվ կիրառական արվեստի և Գծանկար, գունանկարի ամբիոնները համատեղ կազմակերպել են հետևյալ ցուցահանդեսները.

1. Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված ցուցահանդեսների շարք:
2. Իջևան քաղաքում՝ ցայտաղբյուրների տարածքում, I և II կուրսերի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
3. Կանանց միջազգային տոնին նվիրված ցուցահանդես:
4. Ցուցահանդես՝ նվիրված Շուշիի ազատագրմանը:
5. 2014թ. շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի բակում՝ նվիրված Ուկրաինայից հրավիրված պատվիրակությանը:
6. Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի ադմինիստրատիվ շենքի բակում:
7. Գեղեցկության և մայրության տոնին նվիրված ցուցահանդես Իջևանի քաղաքային պատկերասրահում:
8. Պլենեռային նկարչության կազմակերպում կիսամյակի ընթացքում:
9. Մասնակցություն Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպված հանրապետական երեք ցուցահանդեսներին:
10. Ավարտական աշխատանքների ցուցադրում ԵՊՀ-ի բակում՝ նվիրված ԵՊՀ-ի կազմավորման 95-ամյակին:

Քննարկվել և հաստատվել են ամբիոնի 2013-14 ուստարվա աշխատանքային պլանները և առարկայական ծրագրերը, ավարտական աշխատանքների թեմաները և պետական քննության հարցաշարերը: Բոլոր դասախոսների մոտ պարբերաբար կազմակերպվել են դասալսումներ և արդյունքների քննարկում:

Կազմակերպվել են ավարտական աշխատանքների փուլային նախապաշտպանություն և արդյունքների քննարկում, ցուցահանդեսների կազմակերպում, արդյունքների քննարկում:

Քննարկվել և հաստատվել են ամբիոնային անհատական ծանրաբեռնվածությունները:

Քննարկվել և ամփոփվել են ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ուսումնասիրվել և քննարկվել են ուսանողների առաջարկությունները:

Քննարկվել և հաստատվել են 2014-18 ուստարիների առարկայական ծրագրերը:

Ամբիոնի ջանքերով և Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի օժանդակությամբ ֆակուլտետում կազմակերպվել են ոչ ավանդական գոբելենագործության վարպետության դասեր:

ԳԾԱՆԿԱՐ, ԳՈՒՆԱՆԿԱՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Միրզոյան Արթուր Համլետի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ջավրուշյան Գևորգ Մկրտիչի, ՀՀ նկարիչների միության անդամ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միության անդամ, ասիստենտ
2. Հովհաննիսյան Սերգեյ Թորգոմի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
3. Մխիթարյան Քրիստինե Համլետի, ՀՀ դիզայներների միության անդամ, ասիստենտ
4. Խաչատրյան Արևիկ Ռաֆիկի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Ստեփանյան Միեր Օգսենի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Էդիլյան Սոֆիկ Սերյոժայի, օպերատոր-գործավար

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013-2014 ուստարվա ընթացքում Գծանկարի, գունանկարի և Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնները համատեղ կազմակերպել են հետևյալ ցուցահանդեսները.

1. Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված ցուցահանդեսների շարք:
2. Իջևան քաղաքում՝ ցայտաղբյուրների տարածքում, I և II կուրսերի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
3. Կանանց միջազգային տոնին նվիրված ցուցահանդես:
4. Ցուցահանդես՝ նվիրված Շուշիի ազատագրմանը:
5. 2014թ. շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի բակում՝ նվիրված Ուկրաինայից հրավիրված պատվիրակությանը:
6. Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի ադմինիստրատիվ շենքի բակում:
7. Գեղեցկության և մայրության տոնին նվիրված ցուցահանդես Իջևանի քաղաքային պատկերասրահում:
8. Պլենեռային նկարչության կազմակերպում կիսամյակի ընթացքում:
9. Մասնակցություն Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպված հանրապետական երեք ցուցահանդեսներին:

10. Ավարտական աշխատանքների ցուցադրում ԵՊՀ-ի բակում՝ նվիրված ԵՊՀ-ի կազմավորման 95-ամյակին:

11. Ս. Հովհաննիսյանի անհատական աշխատանքների ցուցադրություն Իջևանի քաղաքային պատկերասրահում:

Քննարկվել և հաստատվել են ամբիոնի 2013-14 ուստարվա աշխատանքային պլանները և առարկայական ծրագրերը, ինչպես նաև գծանկար, գունանկար, քանդակ առարկաների ընթացիկ, եզրափակիչ, հանրագումարային քննությունների գնահատման նոր կարգը:

Իրականացվել են որոշակի բարեփոխումներ, քննարկվել և հաստատվել են ավարտական աշխատանքների թեմաները: Բոլոր դասախոսների մոտ պարբերաբար կազմակերպվել են դասալսումներ և արդյունքների քննարկում:

Քննարկվել և հաստատվել է ավարտական աշխատանքների թեմատիկան՝ ըստ ուսանողների և ղեկավարների:

Ավարտական աշխատանքների ղեկավար դասախոսների կողմից ավարտական աշխատանքների ընթացքի մասին ներկայացվել է հաշվետվություն և քննարկվել:

Կազմակերպվել են ավարտական աշխատանքների փուլային նախապաշտպանություն և արդյունքների քննարկում: Կատարվել է ցուցահանդեսների կազմակերպման արդյունքների քննարկում:

Կատարվել է 2014-15 ուստարվա առարկայական ծրագրերի հիմնովին բարելավում: Քննարկվել և հաստատվել են 2014-18 ուստարիների առարկայական ծրագրերը:

Ամբիոնի ջանքերով և Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի օժանդակությամբ ֆակուլտետում կազմակերպվել են ոչ ավանդական գոբելենագործության վարպետության դասեր:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Զուրաբյան Մարատ Հովիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Մասնագիտություններ

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Պատմություն
- Հայոց լեզու և գրականություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Էկոլոգիական քիմիա
- Տնտեսագիտության տեսություն
- Սերվիս
- Անգլերեն լեզու և գրականություն

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 972				
5-ամյա ուսուցում բակալավրիատ	I	II	III	IV	V
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	11	-	-	-	-
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	-	25	20	17	13
Էկոլոգիական քիմիա	22	-	-	-	-
Բնապահպանություն և բնօգտագործում	-	39	32	21	30
Պատմություն	28	37	35	35	36
Հայոց լեզու և գրականություն	14	32	21	35	22
Մանկավարժութ. և հոգեբանութ.	31	45	31	44	40
Անգլերեն լեզու և գրականություն	7	-	-	-	-
Տնտեսագիտության տեսություն	37	54	39	45	39
Սերվիս	16	19	-	-	-
Ընդամենը	***166***	***251***	***178***	***197***	***180***

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 1-ին	11	6	-	45.4
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա				
2-րդ	25	13	-	48
3-րդ	20	10	-	50
4-րդ	17	3	-	82.3
5-րդ	13	5	-	62
Էկոլոգիական քիմիա 1-ին	22	15	-	30
Բնապահպ. և բնօգտագործում				
2-րդ	39	29	-	26
3-րդ	20	10	-	50
4-րդ	21	14	1	33.3
5-րդ	30	17	-	43.3
Պատմություն 1-ին	28	23	-	18

2-րդ 3-րդ 4-րդ 5-րդ	37 35 35 36	23 28 27 21	- - - -	38 20 23 42
Հայոց լեզու և գրակ. 1-ին 2-րդ 3-րդ 4-րդ 5-րդ	 14 32 21 35 22	 10 24 12 15 8	 - - - 1 -	 29 25 43 57.1 64
Մանկ. և հոգեբանութ. 1-ին 2-րդ 3-րդ 4-րդ 5-րդ	 31 45 31 35 22	 9 20 19 15 8	 - - - 2 -	 71 56 39 57.1 64
Տնտեսագիտության տեսություն 1-ին 2-րդ	 37 54	 26 43	 - -	 30 20.3
3-րդ 4-րդ	39 45	30 29	- -	23 36
5-րդ	39	26	-	33.3
Սերվիս 1-ին 2-րդ	 16 19	 15 9	 - -	 69 53
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	 7	 3	 -	 57.1
Ընդամենը	***972***	***589***	***4***	***39.4***

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	**Քննաշրջանին մասնակցել են**	**Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը**	**Գերազանցիկ-ների թիվը**	**Առաջադիմության %-ը**
Բակալավրիատ				
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 1-ին Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա 2-րդ 3-րդ 4-րդ	 11 24 20 18	 7 18 13 5	 - - - -	 36.3 25 35 72.2
Էկոլոգիական քիմիա 1-ին	 21	 9	 -	 57.1

Բնապահպ. և բնօգտագործում				
2-րդ	40	25	-	37.5
3-րդ	32	23	-	28.1
4-րդ	21	17	-	38.6
Պատմություն				
1-ին	23	15	-	34.7
2-րդ	40	28	-	30
3-րդ	34	22	-	35.2
4-րդ	34	25	-	26.4
Հայոց լեզու և գրակ.				
1-ին	14	5	-	64.2
2-րդ	32	19	-	40.6
3-րդ	22	13	-	40.9
4-րդ	35	18	-	48.5
Մանկ. և հոգեբանություն				
1-ին	33	19	-	42.4
2-րդ	45	16	-	64.4
3-րդ	31	16	-	48.3
4-րդ	44	19	2	56.8
Տնտեսագիտության տեսություն				
1-ին	34	22	-	35.3
2-րդ	58	36	-	37.9
3-րդ	35	24	-	31.4
4-րդ	44	27	-	38.6
Սերվիս				
1-ին	17	6	-	64.7
2-րդ	20	11	-	45
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	7	3	-	57.1
Ընդամենը	***789***	***458***	***2***	***41.9***

Շրջանավարտներ

Մասնագիտություն	***Ընդամենը՝ 177, այդ թվում նախորդ տարիներից՝ 0***
	Բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	13 (0)
Պատմություն	36 (0)
Հայոց լեզու և գրականություն	21 (0)
Մանկավարժություն և հոգեբանություն	40 (0)
Բնապահպանություն և բնօգտագործում	29 (0)
Տնտեսագիտության տեսություն	38 (0)
Ընդամենը	***177 (0)***

ՀԱՄԱՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Պողոսյան Վարդիթեր Գուրգենի, Միջազգային սպորտի վարպետ, ասիստենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Վանեսյան Արթուր Հենրիկի, դասախոս

Համատեղողներ

1. Մովսիսյան Գայանե Սերյոժայի, դասախոս
2. Քամալյան Ռոբերտ Վասիլի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ադամյան Սաշա Ֆրոնտիկի, սպորտային սեկցիաների համակարգող, ԽՍՀՄ սպորտի վարպետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Ամբիոնն իր ուսումնադաստիարակչական և սպորտ-մասսայական աշխատանքները կազմակերպում է՝ հիմք ընդունելով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար մշակված բուհերի ամբիոնների աշխատանքների կազմակերպման և բովանդակության մասին հրահանգը:

Կազմվել և հաստատվել են.

1. 2013-14 ուստարվա ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը,
2. 2013-14 ուստարվա սպորտային միջոցառումների տարեկան պլանը:

Ուշադրություն դարձնելով նորագույն մեթոդների մշակման և առարկայական ծրագրերի արդիականության վրա՝ 2013-14 ուստարվա առարկայական ծրագրերը կազմվել են նոր պահանջներին համապատասխան:

Դասապրոցեսը համարելով հիմնական օղակ՝ ուսումնական պրոցեսը կազմակերպվել է՝ ուշադրություն դարձնելով դասավանդման նոր մեթոդներին, որակավորման բարձրացմանը, անհատական փորձին, ուսանողների ֆիզիկական պատրաստության բարելավման գործընթացին:

Հետևողականորեն իրականացվել են ուսանողների նախաստուգարքային նորմատիվները և ստուգարքների նախապատրաստման գործընթացը: Աշխատանքներ են տարվել ուսումնանյութական բազայի բարելավման ուղղությամբ:

Բացի փոխադարձ դասալսումներից՝ ամբիոնի վարիչի կողմից իրականացվել են դասալսումներ, որոնց արդյունքները հաջորդական կարգով քննարկվել են ամբիոնի նիստերում:

Դասապրոցեսին և դասերից դուրս ստուգարքային նորմատիվները հանձնելու նպատակով կազմակերպվել են լրացուցիչ մարզումներ հատկապես այն ուսանողների համար, որոնք ունեն առողջական խնդիրներ և ֆիզիկապես շատ թույլ են:

Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով երկրորդ կիսամյակից մասնաճյուղում սկսեց գործել մարզասրահը, որը հագեցած է մարզագույքով:

Մասնաճյուղում ուսումնական տարվա սկզբից ամբիոնի վարիչի նախաձեռնությամբ գործում են վոլեյբոլի և փետրագնդակի սեկցիաներ, ինչի արդյունքում ամբիոնում հաջորդական կարգով անց են կացվել սպորտային միջոցառումներ:

Մասնաճյուղում կազմակերպվել են մասնաճյուղային առաջնություններ, ընկերական հանդիպումներ, բաց առաջնություններ: Մասնաճյուղը մասնակցել է ներքոնշյալ մարզական ստուգատեսներին.

1. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում սպորտային փառատոն (սեպտեմբեր, 2013թ.),
2. Անկախության 22-րդ տարեդարձին նվիրված վոլեյբոլի և փետրագնդակի մասնաճյուղի առաջնություն (սեպտեմբեր, 2013թ.),
3. Սպորտլանդիայի մասնաճյուղի առաջնություն (հոկտեմբեր, 2013թ.),
4. Սեղանի թենիսի բաց առաջնություն (հոկտեմբեր, 2013թ.),
5. Բազկամարտի և շախմատի մասնաճյուղի առաջնություն (նոյեմբեր, 2013թ.),
6. Փետրագնդակի բաց առաջնություն (նոյեմբեր, 2013թ),
7. Վոլեյբոլի մասնաճյուղի առաջնություն (փետրվար, 2014թ.),
8. Բազկամարտի մասնաճյուղի առաջնություն (փետրվար, 2014թ.),
9. Սպորտլանդիայի բաց առաջնություն՝ նվիրված Կանանց միջազգային տոնին (մարտ, 2014թ.),
10. Շախմատի և սեղանի թենիսի մասնաճյուղի առաջնություն (ապրիլ, 2014թ.),
11. Փետրագնդակի բաց առաջնություն՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին (ապրիլ, 2014թ.),
12. Վոլեյբոլի բաց առաջնություն (մայիս, 2014թ.),
13. 2013թ. սեպտեմբերի 28-29-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մարզադահլիճում կայացել է փետրագնդակի ընկերական հանդիպում Վանաձորի մարզադպրոցի սաների հետ: Թիմային հաշվարկով հաղթել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի թիմը:
14. 2013թ. հոկտեմբերի 12-15-ը Երևան քաղաքում տեղի է ունեցել փետրագնդակի ՀՀ մեծահասակների առաջնություն, որտեղ ԵՊՀ ԻՄ-ի ուսանող Հրաչ Ներսիսյանը գրավել է III մրցանակային տեղը և պարգևատրվել բրոնզե մեդալով, պատվոգրով և դրամական պարգևով:
15. Վոլեյբոլի ընկերական հանդիպում (Վանաձոր, 2014թ. ապրիլի 4):

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Շրջանավարտների և արտաքին շահառուների հետ տարվող աշխատանքների համակարգող՝	*Աղաբաբյան Վահան Արշակի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ*

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանքներ է իրականացրել տարածաշրջանային աշխատանքի շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մասնագիտական մրցակցության զարգացման և այն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Կենտրոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ստեղծվել է շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համակարգչային բազա, որտեղ հավաքագրվել են վերջին հինգ տարիների շրջանավարտների կոնտակտային տվյալները:

- Կենտրոնը համագործակցում է տարածաշրջանի պետական և մասնավոր կազմակերպությունների ու տնտեսությունների հետ, որի ընթացքում հստակ տեղեկություններ են ստացվել աշխատաշուկայի առկա և հեռանկարային զարգացման միտումների վերաբերյալ:
- Պարբերաբար կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ: Հարկ է առանձնացնել վերջին հինգ տարիներին ուսումնառությունը գերազանցությամբ ավարտած մի խումբ շրջանավարտների հետ հանդիպումը, որտեղ հնչեցին տարաբնույթ հարցեր և պատասխաններ: Շրջանավարտները նշեցին մասնաճյուղի առավելությունները իրենց ուսանած այլ բուհերի նկատմամբ, որտեղ իրենք շարունակել են կրթությունը, ներկայացրին այն բացթողումները, որոնց լուծումը հնարավորություն կտա առավել որակյալ կրթություն տրամադրել և լինել մրցունակ: Կարևոր էր նաև արտաքին շահակիցների՝ Տավուշի մարզի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների, մարզպետարանի ներկայացուցիչների, բարձրաստիճան զինվորականների, համայնքների ղեկավարների, գործարարների, դպրոցների տնօրենների, լրագրողների, ծնողների հետ հանդիպումը, որի ընթացքում մասնակիցները ներկայացրին համագործակցության ձևերի վերաբերյալ իրենց առաջարկությունները:
- Նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել կենտրոնի աշխատանքները ուսանողների և շրջանավարտների հետ՝ մասնաճյուղի կայքէջում (http://ijevan.ysu.am/) առանձնացվել է Շրջանավարտ բաժինը՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններով, որտեղ պարբերաբար համապատասխան նյութեր են տեղադրվում:
- Մասնաճյուղի գործունեության, տարածաշրջանում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ շրջանավարտներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու նպատակով Facebook սոցիալական ցանցում ստեղծվել է ԵՊՀ Իջևանի շրջանավարտ էջը (https://www.facebook.com/shrjanavart?ref_type=bookmark):
- Կենտրոնն իրականացրել է 2013-2014 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների բավարարվածության հարցումներ, որոնց նպատակն էր պարզել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից, կրթական և օժանդակ ծառայություններից շրջանավարտների բավարարվածության աստիճանը՝ ծառայությունների և ռեսուրսների հետագա բավարարման համար:
- Ուսումնառությանը զուգահեռ՝ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների աշխատանքային փորձի ձևավորման ու տիրապետման նպատակով միջոցներ են ձեռնարկվել նրանց ուսումնաարտադրական պրակտիկան ավելի նպատակային կազմակերպելու ուղղությամբ:
- Մասնաճյուղի շրջանավարտների հետ, ըստ նրանց բնակության և աշխատանքի վայրի, մշտական կապ է պահպանվել, և այդ ընթացքում կատարված «Արտաքին շահակիցների կարծիքների վերաբերյալ» հարցումների միջոցով տեղեկություններ են հավաքվել արտաքին շահառուների կողմից մասնաճյուղի և նրա շրջանավարտների մասնագիտական գիտելիքների վերաբերյալ:
- Կենտրոնը պարբերաբար ուսումնասիրել է ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրները, մասնակիորեն պարզել այն պատճառներն ու պայմանները, որոնք խանգարում են այդ կարևոր գործընթացի իրականացմանը: Աշխատանք գտնելու և դրա հետ կապված այլ հիմնահարցերի պարզաբանման նպատակով կազմակերպվել են խորհրդակցություններ և կլոր սեղաններ:

- Կենտրոնի աջակցությամբ ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց արդյունքում շուրջ 5 շրջանավարտ ընդունվել է աշխատանքի:
- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից մասնաճյուղում ստեղծվել են առանձին ցուցատախտակ և գովազդային անկյուն, որտեղ փակցվում են կենտրոնի գործառույթների վերաբերյալ իրավական փաստաթղթեր՝ մարզի տարբեր կազմակերպությունների կողմից պարբերական մամուլում աշխատանքային թափուր պաշտոնների համար տպագրված հայտարարություններ և այլ փաստաթղթեր:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

1. Հիմնարար վերանորոգվել է մասնաճյուղի ադմինիստրատիվ մասնաշենքի առաջին հարկի միջանցքներից մեկը: Այդ նույն միջանցքի վրա տեղակայված Մասնագիտական կրթության, Որակի ապահովման, Գնումների, մատակարարման և պահեստավորման, Ընդհանուր բաժինների հին փայտե դռները փոխարինվել են MDF-ի դռներով:
2. Հիմնարար վերանորոգվել են մասնաճյուղի առաջին մասնաշենքում Տնտեսագիտության ֆակուլտետին հատկացված առաջին հարկի մեկ, երկրորդ հարկի երեք լսարաններ: Այդ լսարանների փայտե հատակները փոխարինվել են ցեմենտբետոնե հատակներով: Ցեմենտբետոնյա հատակները ծածկվել են լինոլիումով: Նշված լսարանների պատերը և առաստաղները եվրոնորոգվել են:
3. Հիմնարար վերանորոգվել են Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատը և ամբիոնային սենյակները: Դեկանատի և Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի փայտե հատակները փոխարինվել են ցեմենտբետոնե հատակներով, որոնք ծածկվել են լինոլիումով:
4. Մասնաճյուղի Տնտեսագիտության ֆակուլտետի երկրորդ հարկի միջանցքների զգալի հատվածի փայտե հատակները փոխարինվել են ցեմենտբետոնե հատակներով, սալիկապատվել պրեսգրանիտե սալիկներով:
5. Հիմնարար վերանորոգվել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի լսարաններից մեկը և որպես ֆրանսերեն լեզվի ուսուցման կենտրոն վերազինվել համապատասխան գրասենյակային գույքով և տեխնիկական միջոցներով: Հումանիտար գիտությունների ֆակուլտետի լսարաններից մեկը հիմնարար վերանորոգվել է, համալրվել լեզվի ուսուցման տեխնիկական միջոցներով և կահավորվել գրասենյակային նոր գույքով՝ նպատակ ունենալով նպաստել տարածաշրջանում ֆրանսերեն լեզվի ուսուցմանը:
6. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թիվ 51 լսարանը հիմնարար վերանորոգվել է, նրա փայտե հատակը փոխարինվել է ցեմենտբետոնյա հատակով, ծածկվել լինոլիումով:
7. Մասնաճյուղի առաջին մասնաշենքի առաջին հարկի լսարանների և ամբիոնային սենյակների՝ բնակելի տներին և այգիներին հարող պատուհանները ցանցապատվել են:
8. Մասնաճյուղի երկրորդ մասնաշենքի բնագիտական ֆակուլտետի թիվ 6 լսարանը, լաբորատորիաներից մեկը հիմնարար վերանորոգվել են: Ֆակուլտետի լսարաններից մեկը /թիվ 12/ հիմնարար վերանորոգվել է, կահավորվել ընթերցասրահային կահույքով, համալրվել մասնագիտական գրականությամբ, որպեսզի Բնագիտության և Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողության համար ծառայի որպես ընթերցասրահ:
9. Մասնաճյուղի երկրորդ մասնաշենքում Կիրառական արվեստի ֆակուլտետի երկու լսարաններ հիմնարար եվրոնորոգվել են: Կիրառական արվեստի ֆակուլտետի երկու արվեստանոցներ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով երեք կամարաձև բացվածքներով միացվել են իրար, հիմնարար եվրոնորոգվել, համալրվել արվեստանոցային նոր գույքով:

10. Հիմնարար վերանորոգվել է մասնաճյուղի երրորդ մասնաշենքի սպորտային դահլիճը, նրա ալյումինե շրջանակներով պատուհանները փոխարինվել են եվրոպատուհաններով:
11. Կենտրոնական մասնաշենքի բակում, բակից հեռակա բաժին տանող մայթի վրա կառուցվել է հարմարավետ տաղավար, որտեղ տեղադրվել են չորս նստարան, տաղավարն ունի անվճար համացանց /WI-FI/, ուսանողներն ունեն հանգստանալու և համացանցից օգտվելու հնարավորություն:
12. Մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի բակում՝ մուտքի հարևանությամբ, այգու մեջ՝ կանաչ խոտի վրա տեղադրվել են երկու նստարան, և ստեղծվել է հանգստի գոտի՝ հետաքրքիր դիզայներական լուծումներով:
13. Մասնաճյուղի հյուրանոցային համալիրի հարևանությամբ՝ գետի ափին, տեղադրվել է մետաղական կարկասով տաղավար՝ դասախոսների հանգիստը կազմակերպելու նպատակով:
14. Մասնաճյուղի առանձին ստորաբաժանումներին տրամադրվել է գրասենյակային նոր գույք:
15. Մասնաճյուղի համար ձեռք են բերվել նոր համակարգիչներ, էլեկտրոնային սարքեր, նոր տեխնիկական միջոցներ:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիտական ղեկավար՝ *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Փոխտնօրեն՝ *Հովհաննիսյան Մհեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

Ինստիտուտի գործունեության հիմնական խնդիրներն ու ուղղությունները

- Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմությունը, պատմագրությունը և մատենագիտությունը (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչությունները (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
- Հայ հնագիտությունը (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության ուսումնասիրությունը (Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա),
- Հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրությունը (Աղբյուրագիտության բաժին),
- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտությունը (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին),
- Հայ-վրացական հարաբերությունները (Հայ-վրացական հարաբերությունների բաժին),
- Հայ-քրդական առնչությունները (Հայ-քրդական առնչությունների բաժին):

2013-2014 ուստարում իրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	5	-	-	66	16

Ինստիտուտում գործող բաժինների և լաբորատորիաների թիվը՝ 8

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, գիտաշխատող
2. Ասատրյան Արմինե Ալբերտի, կրտսեր գիտաշխատող
3. Սիմոնյան Անի Արամի, կրտսեր գիտաշխատող
4. Գալստյան Գայանե Հայկազի, լաբորանտ
5. Հովհաննիսյան Վարդուհի Պարգևի, լաբորանտ
6. Ղազարյան Ծովինար Սարգսի, լաբորանտ
7. Մարդոյան Լուսինե Աշոտի, լաբորանտ
8. Սաֆարյան Սուսաննա Գարիկի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Հայագիտության վերաբերյալ արխիվային վավերագրերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտասահմանյան այլ երկրներում գտնվող արխիվներից:

Հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին վերաբերող ձեռագրերի հետազոտում և հայագիտական տարբեր օջախներում պահպանվող մատյանների մասին տեղեկությունների ուսումնասիրում և համակարգում:

Հայոց պատմության առանձին էջերին առնչվող արժեքավոր արխիվային փաստաթղթերի բացահայտում և ժողովածուների տեսքով հրատարակության նախապատրաստում:

Բաժնի գործունեության ուղղությունները

Արդեն մի քանի տարի է, ինչ բաժնի աշխատակիցներն աշխատում են Հայաստանի և հայերի վերաբերյալ Ռուսական կայսրության տարածքում տեղեկությունների հավաքագրմամբ:

Հետազոտական աշխատանքներ են տարվում Հայոց ցեղասպանության վավերագրերի, հուշագրությունների, տարբեր վկայությունների հավաքման, մշակման և հրատարակման ուղղություններով:

Հայոց հայրենիքի առանձին երկրամասերի (Զանգեզուր, Լեռնային Ղարաբաղ, Ջավախք, Նախիջևան) տարբեր ժամանակահատվածների պատմության առանցքային իրադարձություններին առնչվող փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում ու հրատարակում:

Հայոց ցեղասպանության և հայկական պահանջատիրության իրավական խնդիրներ:

Արցախի պատմության հնագույն շրջանի ուսումնասիրություն, Արցախյան հիմնախնդրի նորովի արժևորում, շարժման, ազատագրական պատերազմի և ԼՂՀ կայացման պատմության ներկայացում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը տեղի ունեցած «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի լիագումար նիստում ՀՀԻ տնօրեն, բաժնի ղեկավար Արամ Սիմոնյանը հանդես է եկել «Հայագիտության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» վերնագիրը կրող զեկույցով:

Հրատարակություններ

Դասագիք	Մենագրու-թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթո-դական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	1	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ղարիբյան Ա. Ա.* (թարգ.՝ Ա. Սիմոնյան) Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 300 էջ:
2. *Ջեյմս Հարբորդ* (Կազմողներ՝ Ա. Սիմոնյան, Ա. Ղարիբյան), Իրավիճակը Մերձավոր Արևելքում. դեպի Հայաստան ամերիկյան առաքելության զեկույցը, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 300 էջ:

Հոդված

1. *Սիմոնյան Ա. Հ.,* Հայագիտության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 92-99:

ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Հովհաննիսյան Միհր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Մուրադյան Լիլիթ Վարդանի, կրտսեր գիտաշխատող
2. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
3. Զոհրաբյան Ելենա Վրույրի, ավագ լաբորանտ
4. Պողոսյան Սիմոն Սերգեյի, ավագ լաբորանտ
5. Սեդրակյան Նինա Հաբեթի, ավագ լաբորանտ
6. Ավանեսյան Մելինե Կարենի, լաբորանտ
7. Բաղդասարյան Գոհար Ռազմիկի, լաբորանտ
8. Սարգսյան Վերա Աշոտի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

21-րդ դարում հայագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական և տեղեկատվական շտեմարանների դերը հետզհետե ստանձնում է համացանցը՝ ինտերնետը, որի առաջադրած խնդիրները հայագիտության համար նոր մարտահրավերներ կարելի է համարել: Բաժնի առջև ծառացած խնդիրներից են համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրների դիտարկումը, անհրաժեշտ հայագիտական գրականության թվայնացումը, համապատասխան կայքերի պատրաստումն ու համացանցում անհրաժեշտ նյութերի տարածման ապահովումը:

Բաժնի գործունեության ուղղությունները

Բաժինն իրականացնում է համացանցում զետեղված հայագիտական, հակահայագիտական նյութերի վերհանումը, մոնիթորինգը, համակարգումը, հասցեագրումը համապատասխան մասնագետներին, հայագիտական անհրաժեշտ գրականության թվայնացումը, կայքերի և այլ համացանցային ռեսուրսների պատրաստումը և սպասարկումը, ինչպես նաև ՀՀԻ-ի հետ ԶԼՄ-ների ու հասարակայնության կապերը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2013թ. սեպտեմբերից մինչ ուսումնական տարվա վերջ բաժինը թվայնացրել և ՀՀԻ-ի կայքերը (**www.armin.am, www.armenianarchaeology.am, www.armeniaculture.am, www.armeniandiaspora.am, www.historyofarmenia.am, www.armenianlanguage.am, www.armeniansgenocide.am, www.armenianreligion.am**) համալրել է **307** գրքերով, **232** հոդվածներով, **567** հանրագիտարանային նյութերով, **42** քարտեզներով, **1101** նկարներով, **2** փաստաթղթով ու **14** տեսանյութերով:

Կրթական ուղղվածությամբ կայքերից ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի կայքին՝ **www.masters.armeniansgenocide.am**-ին, ավելացավ նաև ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հետ համատեղ իրականացվող «Հայագիտություն» մագիստրոսական ծրագրի կայքը՝ **www.masters.armin.am**-ը:

Բաժնի կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են գիտաժողովներ ու կլոր սեղաններ: 2013 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ն ընկած ժամանակահատվածում կայացել է «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը: Համաժողովի «Պատմություն» բաժանմունքում ԵՊՀ ՀՀԻ-ի փոխտնօրեն, Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի ղեկավար Մհեր Հովհաննիսյանը հանդես է եկել «Համացանցային քարոզչության հակահայկական դրսևորումները» վերնագիրը կրող զեկույցով: Նա ղեկավարել է նույն գիտաժողովի «Հայ ինքնության հիմնախնդիրներ» բաժանմունքի նիստերը:

2014թ. ապրիլի 20-ից 26-ը Դոնի Ռոստովի «Նոր Նախիջևան» համայնքում իրականացվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ: Ծրագրի շրջանակում ՀՀԻ-ի փոխտնօրեն, Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի ղեկավար Մհեր Հովհաննիսյանը հանդես է եկել «Հայոց ցեղասպանության խնդրի արտացոլումը համացանցում» խորագրով դասախոսությամբ:

Սփյուռքում հայագետների պատրաստման և մասնագիտական հմտությունների ապահովման նպատակով նախագծվել, պատրաստվել և արդեն գործում է հեռաուսուցման համակարգը, որի

իրականացման համար Միեր Հովհաննիսյանը գործուղվել է Լիբանան. առաջին՝ «Հայոց պատմության հիմնահարցեր» ծրագրի շնորհանդեսը 2014թ. մարտի 25-ին տեղի է ունեցել Բեյրութում, իսկ մեկնարկը տրվել է ապրիլի 14-ին՝ Համազգայինի Լիբանանի շրջանային վարչության հետ գործակցաբար: 2014 թվականի դրությամբ հեռաուսուցման ծրագիրն անցել է 18 ուսանող:

Հեռաուսուցման ծրագրին զուգահեռ, Լիբանանում 2011-2013 թթ. տեղի հայկական կրթական դաշտում Միեր Հովհաննիսյանի իրականացրած դիտարկումներից հետո վեր հանելով Հայոց պատմության միասնական դասագրքերի, ուսուցիչների, ինչպես նաև նոր մասնագետների հեռաուսուցման համակարգի միջոցով կրթություն ապահովելու խնդիրները, Բեյրութի «Վահե Սեթյան» հրատարակչատան հետ համագործակցաբար պատրաստվում են Լիբանանի հայկական դպրոցների 1-12-րդ դասարանների համար Հայոց պատմության միացյալ դասագրքեր:

Բաժնի ավագ լաբորանտ Նինա Սեդրակյանը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ բաժնին կից ձեռնարկել է «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն տարբերակի խմբագրությունը:

Նախատեսվում է իրականացնել «Ամառային դպրոց» ծրագիրը, որի համար բաժինը պատրաստել է ենթադոմենային կայք, որը գտնվում է նախապատրաստական աշխատանքների իրականացման ընթացքում՝ www.summerschool.armin.am:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	-	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Զեկուցումների թեզիս

1. *Հովհաննիսյան Մ. Ս.,* Համացանցային քարոզչության հակահայկական դրսևորումները, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», զեկուցումների դրույթներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 17-19 հոկտեմբերի, 2013, էջ 31-32:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Վիրաբյան Վանիկ Հրանտի, պատմ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Թամարյան Ջեննի Լավրենտիի, լաբորանտ
5. Յոլչյան Ծովինար Կարենի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

- Ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն և մշակույթը,
- ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ, «Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» մասնագիտացումների համար,
- պատրաստել հայ վրացագետների կադրեր,
- անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
- ամբողջացնել հայկական աղբյուրներում առկա տեղեկությունները Վիրքի և վրաց ժողովրդի մասին,
- թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
- Հայաստանի և Վրաստանի բուհերի միջև նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը,
- ինտերնետային կայքերից գտնել, թարգմանել և համակարգել հայ-վրացական հարաբերություններին առնչվող գիտական և գիտահանրամատչելի նյութերը,
- հետազոտել հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման միտումներն ու բարդույթները 1918-1921 թթ., սահմանատարածքային վեճերը և դրանց պատմաքաղաքական արդյունքները:

Գիտական աշխատանքները նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչությունների, հայ-վրացական գրական և պատմամշակութային կապերի, վրացերեն լույս տեսած հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանությանն ու հրատարակության պատրաստելուն:

Հայ-վրացական հարաբերությունների բաժնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական (Հայ բանասիրության ֆակուլտետի «Վրացագիտություն» մասնագիտացման և Պատմության ֆակուլտետի բակալավրիական ու «Կովկասագիտություն» մագիստրոսական խմբերում վրացագիտական հիմնական առարկաները դասավանդում են բաժնի աշխատակիցներ Հր. Բայրամյանը և Ջ. Թամարյանը):

Բաժնի գործունեության ուղղությունները

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են եղել վրաց գրականության պատմության և վրաց լեզվի ուսումնական ձեռնարկներ ստեղծելու աշխատանքներին, հայ-վրացական գրական-մշակութային կապերի վերջին տարիների խնդիրներին:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. **«Վրաց գրականությունը XX դ.» (կատարող՝ Բայրամյան Հրաչիկ Սմբատի):**

Հաշվետու ժամանակաշրջանում գիտաշխատողն ամբարել է 1900-1930-ական թվականների՝ թեմային առնչվող նյութեր, ՀՀ Ազգային գրադարանում, Մատենադարանում, Գրականության ու արվեստի թանգարանում մատչելի գրականությունը, վրացի հեղինակների ու նրանց երկերի մասին հայ մամուլում հրապարակված հոդվածներն ու գրախոսությունները, մշակել հետազոտության մեջ ներառվող հեղինակների կյանքի, գործունեության ու երկերի շարադրանքի սկզբունքները, դրույթներն ու մեթոդները:

Նախապատրաստական աշխատանքները շարունակվում են:

Թեմա 2. **«Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ.» (կատարող՝ Վիրաբյան Վանիկ Հրանտի):**

Բաժնի կողմից հաստատված «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921թթ.» աշխատությունը նախապատրաստական ընթացքում է: Հիմնականում պատրաստ է գրքի բովանդակային կառուցվածքը: Գիտաշխատողը հաշվետու ժամանակաշրջանում ժողովել է 1918-1921 թթ. վերաբերող նյութերի զգալի մասը՝ սկզբնաղբյուրներ, արխիվային փաստաթղթեր, գրադարաններում ու համացանցում առկա վրաց և օտարազգի աշխատություններ: Որոշակիացրել է շարադրանքի հիմնական գաղափարաքաղաքական դրույթներն ու մեթոդները:

Նախապատրաստական աշխատանքները շարունակվում են:

Թեմա 3. **«Վրաստանի հայ նորագույն մամուլը և գրատպությունը (1921-1991 թթ.»): (Կատարող՝ Մաղալյան Վլադիմիր Սարգսի):**

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է որոշակի աշխատանք, ուսումնասիրվել է ՀՀ Ազգային գրադարանում պահվող 1920-ական թթ. վրացահայ մամուլը և թեմայի ընդհանրացման նպատակով գրի են առնվել անհրաժեշտ նյութերը, ուսումնասիրվել տվյալ թեմային նվիրված աշխատություններ, ինչպես նաև արխիվային նյութեր:

Թեմա 4. **«Հայկական պատմական աղբյուրները (5-7-րդ դդ.) Վիրքի և վրաց ժողովրդի մասին»: (Կատարող՝ Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի):**

Ընթացքի մեջ է 5-7-րդ դարերի հայ պատմիչների՝ Վիրքի և վրաց ժողովրդի մասին տեղեկությունների հավաքման աշխատանքը:

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հայ-վրացական հարաբերությունների բաժինը, գիտական թեմաների իրականացումից զատ, կատարում է նաև այլ աշխատանքներ:

Ջ. Թամարյանը իրականացնում է վրացական կայքերից հայ-վրացական պատմամշակութային առնչություններին վերաբերող վիճահարույց հոդվածների, գրքերի և հարցազրույցների վերհանումը, դրանց թարգմանությունը, մոնիթորինգը, համակարգումը և հասցեագրումը համապատասխան մասնագետներին:

Ջ. Թամարյանը և Ծ. Յոլչյանը թարգմանում են «Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերականներում 1914-1918 թթ.» արխիվային նյութերի ժողովածուն: Աշխատանքը շարունակվում է:

Կենտրոնի աշխատակիցներ Հ. Բայրամյանը և Ջ. Թամարյանը հանրապետության գրական հանդեսներում թարգմանել և տպագրել են վրացական պատմվածքներ և նովելներ:

1. Բայրամյանի թարգմանությամբ՝ Միշվելաձե Ռևազ, «Հուդա» (նովել), «Կայարան», «Գրական հանդես», N 2, 2013, էջ 110-116: Սիխարուլիձե Գիվի, «Ցտեսություն, Անուկ»: Ամիրեջիբի Ճաբուա, «Ունայնություն ունայնությանց»: Թորիա Զուրաբ, «Պարտքերի համակարգը», «Գրական համալսարան», Գիրք XIII, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 253-260: Փանջիկիձե Գուրամ, «Քարայծը» (պատմվածք): «Կամուրջ-2013» (Վրաստանի գրողների ստեղծագործական միություն), Թբիլիսի, 2014, էջ 203-209: Թամարյանի թարգմանությամբ՝ Միշվելաձե Ռևազ, «Անգերեզման մարդը» (նովել), «Գրական համալսարան», Գիրք XIII, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 260-264:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	11	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Բայրամյան Հ. Ս.,* Կյանքը՝ ժամանակին, գիրը՝ հավերժությանը (Գուրամ Փանջիկիձեի 80-ամյակի առթիվ, «Կամուրջ-2013» (Վրաստանի գրողների ստեղծագործական միություն), Թբիլիսի, 2014, էջ 201-203:
1. *Բայրամյան Հ. Ս.,* Թարգմանություն՝ պայմանավորված տաղանդավոր անհատի գործոնով, «Կամուրջ-2013», Թբիլիսի, 2014, էջ 312-316:
2. *Բայրամյան Հ. Ս.,* Հայոց եղեռնի արձագանքները վրացական մամուլում 1914-1918թթ., «Գրական թերթ», 25 ապրիլի (N 13), Երևան, 2014:
3. *Վիրաբյան Վ. Հ., Վարդանյան Ա. Վ.,* Ադրբեջանի տարածքային հավակնությունների և Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի մասին, «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Երևան, «Լիմուշ» հրատ., 2014, էջ 188-196:
4. *Հարությունյան Ռ. Վ.,* «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցի շուրջ, «Պատմություն և մշակույթ» հանդես, Բ, 2013, էջ 72-77:
5. *Հարությունյան Ռ. Վ.,* Մարզպանական Հայաստանի ռազմական ուժը և Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունը, ԲԵՀ, թիվ 1, 2014, էջ 14-21:
6. *Մաղալյան Վ. Ս.,* Հայկական տպագրությունը Թիֆլիսում (XIX դար-XX դարասկիզբ), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2013, էջ 62-83:
7. *Մաղալյան Վ. Ս.,* Ջավախքի անդրանիկ պարբերականը, «Գրական թերթ», թիվ 41, 6 դեկտեմբերի, Երևան, 2013, էջ 7-8:
8. *Մաղալյան Վ. Ս.,* Ալեքսանդր Մյասնիկյանի երկերի 5-րդ հատորը, գրախոսություն, «Պատմություն և մշակույթ» հանդես, պրակ Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 360-365:
9. *Մաղալյան Վ. Ս.,* Հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը Վրաստանի հայկական և հայաբնակ գավառներում (XIX դարի վերջ-XX դարասկիզբ), «Հայկական տպագրությունը դարերի միջով. հոդվածների ժողովածու», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 106-120:
10. *Մաղալյան Վ. Ս.,* Երևանի համալսարանի գիտական գրադարանի հիմնադրման պատմությունից, ԲԵՀ, պրակ 1. Հայագիտություն, թիվ 2 (143), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 50-57:
11. *Թամարյան Ջ. Լ.,* Պատկերային համակարգը Շիրազի պոեզիայում, «Կանթեղ», թիվ 4 (57), Երևան, 2013, էջ 116-124:

Զեկուցումների թեզիս

1. *Բայրամյան Հ. Ս.,* 101 հայրենը՝ վրացերեն: Զեկուցում հայ-վրացական բանասիրությանը նվիրված միջազգային գիտաժողովում, Երևան, 24-27 մարտի, 2014թ.:
2. *Հարությունյան Ռ. Վ.,* Հայ-վրացական հարաբերություններն ըստ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության: Զեկուցում «Եվրոպա և Կովկաս, տարածաշրջանային խնդիրներ» միջազգային գիտաժողովում, Երևան, 7-8 մայիսի, 2014թ.:
3. *Թամարյան Ջ. Լ.,* Վրաց բառանյութը Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարան»-ում: Զեկուցում Հայ բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, 25 ապրիլի, 2014:

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Պողոսյան Վարուժան Արամազդի, պատմ. գիտ. դոկտոր*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Գևորգյան Սուսաննա Պարույրի, բան. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Մելքոնյան Գևորգ Գագիկի, պատմ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
4. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
5. Սարուխանյան Ելիզավետա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
6. Բաբայան Հասմիկ Մամիկոնի, լաբորանտ
7. Մինասյան Մարինե Պետիկի, ավագ լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

- Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրություն
- Հայոց ցեղասպանության արտասահմանյան պատմագրության ուսումնասիրություն
- Փաստաթղթերի ժողովածուների կազմում
- Օտար ականատեսների վկայությունների և արտասահմանյան պատմաբանների արժեքավոր ուսումնասիրությունների թարգմանություններ

Բաժնի գործունեության ուղղությունները

1. 19-րդ դարի վերջի - XX դարի սկզբի հայկական ազատագրական շարժումներ,
2. 1909թ. կիլիկյան կոտորածներ,
3. 1915թ. Մեծ եղեռն,
4. Եվրոպական մեծ տերությունների քաղաքականություն,
5. Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ 1890-ական թվականների կոտորածների պատմագրության ուսումնասիրություն՝ ցեղասպանագիտության նվաճումների կտրվածքով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	24	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Պողոսյան Վ. Ա. (կազմող),* Les massacres hamidiens à travers le prisme des conférences des contemporaines français, Erevan, 2013, 176 p..

Հոդված

1. *Պողոսյան Վ. Ա.,* 1909թ. Կիլիկյան կոտորածները ֆրանսիական պատմագրության քննական լույսի ներքո (համառոտ դիտարկումներ), «Ցեղասպանագիտական հանդես», թիվ 1, Երևան, 2013, էջ 118-127:
2. *Պողոսյան Վ. Ա.,* Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների լուսաբանումը կապիտան Սենյոբոսի կողմից, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», թիվ 1, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 3-13:
3. *Պողոսյան Վ. Ա. (գրախոս.),* Ցեղասպանագիտական հանդես, 2013, թիվ 1, «Հայագիտության հարցեր», թիվ 2, Երևան, 2014, էջ 218-224:
4. *Հայրունի Ա. Ն.,* 1915-16թթ. գերմանա-թուրքական դաշինքի շուրջ, «Հայագիտության հարցեր», թիվ 1, Երևան, 2014, էջ 34-48:
5. *Հայրունի Ա. Ն.,* Լեփսիուսի տունը՝ ցեղասպանագիտության և հայագիտության կարևոր կենտրոն, «Հայագիտության հարցեր», թիվ 2, Երևան, 2014, էջ 236-240:
6. *Գևորգյան Ե. Հ., Գևորգյան Ե. Հ.,* Տեսողության խանգարումներով անձանց հասարակության մեջ ներառելու մի կարևոր պայմանի շուրջ, «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդես, N 1, ԵՊՄՀ հրատ., 2014, էջ 49-57:
7. *Գևորգյան Ս. Պ., Գևորգյան Ե. Հ.,* Մակդիրները Գարեգին Նժդեհի ստեղծագործություններում, «Էջմիածին», թիվ Ե, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2014, էջ 52-61:
8. *Գևորգյան Ս. Պ., Գևորգյան Ե. Հ.,* Կրկնությունները Գ. Նժդեհի ստեղծագործություններում, «Էջմիածին», թիվ Զ, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2014, էջ 87-103:
9. *Погосян В. А.,* Анатоль Леруа-Болье об армянских погромах 1890-х годов, Россия и Франция: XVIII-XX века, вып. 11, М., 2014, с. 94-103.
10. *Погосян В. А.,* К вопросу о научном сотрудничестве В. М. Далина с А. З. Манфредом // Французский ежегодник-2013, Москва, 2013, с. 344-357.
11. *Poghosyan V. A. (գրախոս.),* В. П. Тотфалушин Саратовский край и наполеоновские войны: к 200-летию Отечественной войны 1812 года, Саратов, 2011, Annales historiques de la Révolution française, Paris, 2013, n 373 (juillet-septembre), pp. 231-233.
12. *Poghosyan V. A. (գրախոս.),* В. Н. Земцов, 1812 год. Пожар Москвы, Москва, 2010// Annales historiques de la Révolution française, Paris, 2013, n 373 (juillet-septembre), pp. 233-234.
13. *Погосян В. А.,* Штрихи к портрету А. З. Манфреда// Французский ежегодник-2014, Москва, 2014, с. 306-313.
14. *Poghosyan V. A.,* La correspondance entre Boris Porchnev et Albert Soboul. Un témoignage de l'amitié entre historiens soviétiques et français, Annales historiques de la Révolution française, Paris, 2014, n 376 (avril-juin), pp. 163-177.
15. *Poghosyan V. A. (գրախոս.),* Французский ежегодник-2012. В. В. Рогинский Двухсотлетний юбилей Отечественной войны 1812 года, Москва, 2012// Annales historiques de la Révolution française, Paris, 2014, n. 375 (janvier-mars), pp. 218-221.
16. *Poghosyan V. A. (գրախոս.),* В. В. Рогинский, Борьба за Скандинавию. Международные отношения на Севере Европы в эпоху наполеоновских войн 1805-1815, Москва, 2012// Annales historiques de la Révolution française, Paris, 2014, n. 375 (janvier-mars), pp. 221-224.
17. *Poghosyan V. A.,* Les massacres de Diarbékir de 1895 : regard d'une sœur franciscaine, «Հայագիտության հարցեր», թիվ 1, Երևան, 2014, էջ 143-158:
18. *Poghosyan V. A.,* The Armenian Massacres of Cilicia in 1909 in the Elucidation of the Times, «Հայագիտության հարցեր», թիվ 1, Երևան, 2014, էջ 159-168:
19. *Poghosyan V. A.,* Le chemin de Croix parcouru par un religieux arménien, «Հայագիտության հարցեր», թիվ 2, Երևան, 2014, էջ 182-195:
20. *Hayruni A. N.,* Johannes Lepsius´ armenische Verbindungen, in: "Johannes Lepsius - Eine deutsche Ausnahme; der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte", Herausgegeben von Rolf Hosfeld, Wallstein Verlag, Göttingen 2013, S. 207-227.

21. *Hayruni A. N.,* Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 3., in: “Armenisch-Deutsche Korrespondenz”, Frankfurt/M., Jg. 2013, Heft 3, S. 41-42.
22. *Hayruni A. N.,* Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 4., in: “Armenisch-Deutsche Korrespondenz”, Frankfurt/M., Jg. 2013, Heft 4, S. 42-44.
23. *Hayruni A. N.,* Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 5., in: “Armenisch-Deutsche Korrespondenz”, Frankfurt/M., Jg. 2014, Heft 1, S. 43-44.
24. *Hayruni A. N.,* Johannes Lepsius und die Armenier. Was sind die Prioritaten einer globalen erinnerungskulter in.: «Հայագիտության հարցեր», թիվ 2, Երևան, 2014, էջ 101-107:

Զեկուցումների թեզիս

1. *Հայրունի Ա. Ն.,* Գերմանիան և Մեծ եղեռնը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 273-274:

ՀԱՅ-ՕՍՄԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, ավագ լաբորանտ
3. Մինասյան Միհրան Անթունի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Հայ-օսմանական առնչությունների բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում): Բաժնում ուսումնասիրվում են թյուրքականության գաղափարախոս Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութային և տնտեսագիտական հայացքները: Բաժնում շարունակվում են աշխատանքներն օսմաներենի դասագրքի ստեղծման ուղղությամբ, և գրեթե ավարտին են հասցված նյութերի հավաքագրման աշխատանքները: Հրատարակության է պատրաստվում «Հայոց Համշեն գավառը (պատմություն, ժողովրդագրություն, տեղանուններ)» մենագրությունը (հեղ.՝ Լ. Սահակյան): Ուսումնասիրության է ենթարկվում Զեյթունի Ֆրոնուզ գյուղաքաղաքի պատմությունը:

Բաժնի գործունեության ուղղությունները

1. Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում ոչ թուրք ժողովուրդների իսլամացման-թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն
2. Տեղանունների թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն
3. Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական հայացքների քննություն

4. Դաշտային աշխատանքների ընթացքում գրանցված Համշենի մանրատեղանունների իմաստակառուցվածքային քննություն
5. Հայատառ ղփչաղերեն ձեռագրի լեզվական քննություն
6. Օսմանյան աշխարհագիր մատյանների, տարեգրքերի և հայկական ու օտար աղբյուրների համադրությամբ հայկական նահանգների ժողովրդական շարժերի և տեղանունների ուսումնասիրություն
7. Զեյթունի Ֆըռնուզ գյուղաքաղաքի պատմության քննություն
8. Թուրք պատմագրության կեղծարարության բացահայտում և հակադարձում
9. Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Համշենահայերի իսլամացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում. փուլերը, մեթոդները, հետևանքները և ներկա վիճակը (պետական ֆինանսավորում):	Սահակյան Լ. Ս.

Թեմա 1. Լ. Ս. Սահակյանը 2011, 2012, 2013 թվականների ամռանը Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ դաշտային աշխատանքներ է կատարել Թուրքիայի Ռիզեի, Արդվինի և Էրզրումի նահանգների համշենցիների բնակության շրջաններում՝ հատկապես պատմական հայոց Համշեն գավառում (Չայելի, Չամլըհեմշին, Համշեն և Արտաշեն գավառներում), ուր գրանցվել են համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված բազմաթիվ հայերեն միկրոտեղանուններ, կենցաղային բառեր, բանահյուսական նյութեր: Ուսումնասիրման արդյունքների մի մասը Լ. Սահակյանը հրատարակել է «Համշենի մանրատեղանունները» մենագրության տեսքով (հայերեն, ռուսերեն, թուրքերեն, ֆրանսերեն լեզուներով):

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

Ֆրանսիայում ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով հրատարակվել է Լ. Սահակյանի «Համշենի մանրատեղանունները» մենագրությունը:

Հրատարակության է պատրաստվում Ցեղասպանության ականատեսի մի հուշագրություն, որը վերաբերում է Զեյթունի Ֆըռնուզ գյուղաքաղաքի պատմությանն ու քաղաքական իրադարձություններին:

Բաժնի աշխատակիցները դասախոսություններով և զեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում և Սփյուռքում (Նյու Յորք, Տորոնտո, Մոնրեալ, Աշխաբադ, Դոնի Ռոստով):

Բաժնի աշխատակից Ա. Սարգսյանը գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել Ստամբուլի Օրիենտ ինստիտուտում, ինչպես նաև Սուլեյմանիե հին ձեռագրերի ինստիտուտում:

Շարունակվել են աշխատանքները թյուրքիզմի գաղափարախոսության պատմաքաղաքական հիմքերի ուսումնասիրության ուղղությամբ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	6	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Sahakyan L. S.,* Les Microtoponymes de Hamchen, Hamşen (Hemşin) Mikro yer isimleri, Sigest, Paris, 2013, 181 p.
2. *Sahakyan L. S.,* Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal Arod Books, 2014, 70 p. (լրամշակված):

Հոդված

1. *Մինասյան Մ. Ա.,* Յուշամատեաններու ժանրի գիրքերու հետքերով (մատենագիտական փորձ), «Ottoman Armenians. Life, Culture, Society», Պերլին, 2014, էջ 235-264:
2. *Մինասյան Մ. Ա.,* Գաբրիէլ Լազեանի եւ Արշակ Ջամալեանի անտիպ նամակները՝ Վահան Թէքէեանին, «Բագին», թիւ 4, 2013, էջ 65-76:
3. *Մինասյան Մ. Ա.,* Նշան Տէր Ստեփանեանի զոյգ նամակները Միհրան Տամատեանին եւ Վահան Թէքէեանին, «Բագին», թիւ 1, Պէյրութ, 2014, էջ 69-74:
4. *Մինասյան Մ. Ա.,* «Հայկական ցեղասպանութեան ուսումնասիրման նոր հեռանկարներ», «Ազդակ»-ի 24 ապրիլ 2014-ի բացառիկ համարի մէջ:
5. *Մինասյան Մ. Ա.,* Հենրիկ Էդոյանի «Կիլկամէշի վերադարձը» պոեմի արաբերեն թարգմանություն: Արաբերեն «Արեգ» հանդես, թիվ 36, 2013, էջ 4-9:
6. *Մինասյան Մ. Ա.,* «Այվազովսկի» նկարների արաբերեն ալբոմի արաբերեն ընդարձակ տեքստի թարգմանություն, Կազմող՝ Շահեն Խաչատրյան, Պէյրութ, 2014:

Զեկուցումների թեզիս

1. *Сафарян А. В., Саргсян А. А.,* Образ Махмуда Газнави в “Маснави и Маанави” Мевляны Джелаледина Руми, Туркменская литература эпохи Газнавидов и духовная культура мира, Тезисы международной научной конференции, Ашхабад, 2013, с. 428-429 (նույնը՝ թուրքմ., էջ 133, անգլ.՝ էջ 286-287):
2. *Симонян А. Г., Сафарян А. В.,* О переводах произведений Махтумкули Фраги на армянский язык, Махтумкули Фраги и общечеловеческие культурные ценности, Материалы Международной научной конференции, 14-16 мая 2014 года, Национальный институт рукописей АН Туркменистана, “Ылым”, Ашгабад, 2014, с. 62-63.

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Պետրոսյան Վահրամ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Յարալյան Ռուդիկ Ֆելիքսի, պատմ. գիտ. թեկնածու
2. Գրիգորյան Սարգիս Մարտինի, ասպիրանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Հայ-քրդական առնչությունների բաժնի փորձագիտական հետաքրքրությունների շրջանակում է տարածաշրջանային արդի զարգացումների, քրդական գործոնի ակտիվացման և հայ-քրդական պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, որն ունի ոչ միայն տեսական, այլև առաջին հերթին կիրառական նշանակություն՝ հաշվի առնելով հիշյալ խնդիրների արդիականությունը:

Բաժնի գործունեության ուղղությունները

1. Քրդական խնդիրը Մերձավոր և Միջին Արևելքում (Թուրքիա, Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան) և հայ-քրդական առնչությունները
2. Քրդական գործոնը Հարավային Կովկասում
3. Հայ-քրդական հարաբերություններին առնչվող աղբյուրագիտական նյութերի մշակում
4. Թուրքիա-Քուրդիստանի ռեգիոնալ կառավարություն հարաբերությունները տարածաշրջանային զարգացումների համատեքստում
5. Քրդական և քրդագիտական աղբյուրների և ԶԼՄ-ների մշտադիտարկում

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում՝ 2014թ. հուլիսի 4-ին, «Նոյյան Տապան» մամուլի սրահում կազմակերպվել է մամլո ասուլիս (տե՛ս հետևյալ կայքէջը՝ http://nt.am/am/news/196357/):

Ս. Գրիգորյանը մասնակցել է «Սիրիա. ահաբեկչություն, հայություն, ընտրություն» խորագրով քննարկմանը՝ 2014թ. մայիսի 30-ին կազմակերպված «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի կողմից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	4	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Պետրոսյան Վ. Ս.,* Խաղաղության մոնիթորինգի ուժերի խնդիրն Իրաքյան Քուրդիստանում թուրքական ռազմական ներկայության համատեքստում, «Ժամանակակից Եվրասիա», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2013, էջ 23-36:
2. *Петросян В. С.,* Военно-разведывательная деятельность Турции в Иракском Курдистане, Государство, общество, международные отношения на мусульманском Востоке, Институт востоковедения РАН, Крафт+, Москва, 2014, с. 431-456.
3. *Գրիգորյան Ս. Մ.,* Քրդական գործոնը սիրիական հակամարտությունում, 11.04.2014, http://www.panorama.am/am/politics/2014/04/11/kurdish-siria/:
4. *Գրիգորյան Ս. Մ.,* Իրաք՝ էթնիկ փոքրամասնություններն իսլամականների կողմից նվաճված տարածքներում, 05.07.2014, http://www.panorama.am/am/politics/2014/07/05/sargis-grigoryan/:

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Մխիթարյան Վարդան Գառնիկի, պատմ. գիտ. դոկտոր (Մոնպելիեի համալսարան, Ֆրանսիա)*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Սարգսյան Համլետ Գրիշայի, ավագ գիտաշխատող
2. Ղամբարյան Գոհար Գուրգենի, կրտսեր գիտաշխատող
3. Արզումանյան Սրբուհի Անդրանիկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

1. Պատմական զարգացման տարբեր փուլերում ուսումնասիրել Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը՝ Հայաստանի պատմական աշխարհագրությունը, որը ներառում է հետևյալ ուղղությունները. պատմական ֆիզիկական աշխարհագրություն, պատմական քաղաքական աշխարհագրություն, բնակչության և տարաբնակեցման պատմական աշխարհագրություն, պատմական տնտեսական աշխարհագրություն, պատմամշակութային աշխարհագրություն և պատմաաշխարհագրական երկրագրություն:

Վերոհիշյալից ակնառու է դառնում, որ լաբորատորիայի ուսումնասիրությունների շրջանակում կարող են ներառվել նաև ներկա ժամանակաշրջանի աշխարհագրական հետազոտությունները:

2. Կատարել պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների տարածական տեղաբաշխման պատկերում և մոդելավորում՝ քարտեզների ստեղծում: Ավելի լայն մեկնաբանությամբ դա քարտեզների հեղինակային և կազմողական բնօրինակների, ձևավորման և տպագրական բնօրինակների ստեղծման աշխատանքներն են:

3. Պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում կիրառել ժամանակակից տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ պատմական

գեոինֆորմատիկա, որը նոր մոտեցում է պատմական հետազոտություններում: Այն հնարավորություն կընձեռի ժամանակակից և հին քարտեզների, ինչպես նաև տեղեկատվական բազաների համադրմամբ կատարել վերլուծություններ, ստանալ որակապես նոր քարտեզներ:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Պատմական աշխարհագրություն
- Աշխարհագրություն
- Պատմական քարտեզագրություն
- Քարտեզագրություն
- Պատմական գեոինֆորմատիկա
- Ատլասների կազմում և ձևավորում (Ցեղասպանության ատլասի ստեղծում)
- Ուսումնամեթոդական քարտեզների և պաստառների (պլակատների) կազմում և ձևավորում
- Ադրբեջանական և թուրքական քարոզչության դեմ պայքարի ծավալում

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. «Հայոց ցեղասպանության ատլաս»-ի ստեղծում (անգլերեն լեզվով):

Լաբորատորիան ձեռնամուխ է եղել անգլերեն լեզվով «Հայոց ցեղասպանության ատլաս»-ի կազմողական և ձևավորման աշխատանքների իրականացմանը: Անգլերեն լեզվով «Հայոց ցեղասպանության ատլաս»-ի պատրաստումն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն:

Ատլասն ունենալու է հետևյալ կառուցվածքը. բաղկացած է լինելու տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, պայմանական նշաններ էջից, պատմական քարտեզների շարքից, Ցեղասպանության պատմության շարադրանքից, բացատրական տեքստերից և նկարներից, տվյալ ժամանակահատվածին առնչվող պատմական (հին) քարտեզների կամ փաստաթղթերի պատճեններից, անվանացանկից:

Լաբորատորիայի բոլոր աշխատակիցները ներգրավված են ատլասի պատրաստման աշխատանքներում: Աշխատանքների կատարման ներկա փուլում լաբորատորիան զբաղված է անգլերեն լեզվով քարտեզների կազմման, Հայոց ցեղասպանության պատմության տեքստային մասի շարադրման ու քարտեզների բացատրական մասերի՝ լեգենդների անգլերեն թարգմանությամբ:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան, գիտական թեմայի իրականացումից զատ, կատարում է նաև այլ աշխատանքներ:

Վ. Մխիթարյանը Ֆրանսիայի Մոնպելիեի համալսարանում պաշտպանել է «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» վերտառությամբ ատենախոսությունը և ստացել պատմ. գիտ. դոկտորի աստիճան: Նա այս տարի համատեղ գիտական աշխատանքներ կատարելու նպատակով Բեռլինի Ազատ համալսարանի հրավերով գործուղվել է Գերմանիա: Արժանացել է Բեռլինի Ազգային գրադարանի քարտեզագրության բաժնի կրթաթոշակին, մասնակցել է մայիսի 7-8-ը Երևանի պետական համալսարանում կայացած «Եվրոպա և Կովկաս, միջտարածաշրջանային կապերն ու ինքնության հարցը» վերտառությամբ միջազգային գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներին՝ որպես կազմկոմիտեի անդամ:

Գ. Ղամբարյանը պատրաստում է ««Աճի բևեռներ և կենտրոններ» հայեցակարգը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացում» վերտառությունը կրող աշխարհագրական ատենախոսությունը:

Վ. Գ. Մխիթարյանը «Տարածաշրջանի առաջին ֆրանսիական քարտեզը. Ֆրանսիայի աշխարհաքաղաքական և գիտական հետաքրքրությունների համատեքստում» վերտառությամբ զեկույց է կարդացել 2014 թ-ի մայիսի 7-8-ը Երևանի պետական համալսարանում կայացած «Եվրոպա և Կովկաս, միջտարածաշրջանային կապերն ու ինքնության հարցը» միջազգային գիտաժողովում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	5	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ղամբարյան Գ. Գ., Ավագյան Ա. Ռ.,* ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Տարեգիրք-2013», Երևան, 2014, էջ 252-262:
2. *Սարգսյան Հ. Գ.,* Վայոց ձորի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները 1988-2001 թթ., Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Երևան, 2014, էջ 298-307:
3. *Սարգսյան Հ. Գ.,* Արխիվային տվյալները որպես Լոռու գավառակի հայ բնակչության վերարտադրության գնահատման աղբյուր (XIX դ. կես - XX դ. սկիզբ), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 2014, էջ 70-81:
4. *Гамбарян Г. Г., Айриянц А. А.,* Теория “полюсов и центров роста” и региональная политика, “Modern problems of geography” proceedigs of the conference: Dedicated to the 80th Anniversary Since the Foundation of Vakhushti Bagrationi Institute of Geography: collected papers new series N 5 (84), Tbilisi, 2013, p. 223-226.
5. *Саркисян Г. Г.,* Из истории формирования архива Отдела этнографии Института Археологии и этнографии НАН РА, International science conference dedicated to 135th anniversary of returning Ajara to motherland South-west Georgia (history, archaeology, ethnology), Conference materials, Tbilisi, 2013, c. 107-112.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Տեր-Մարտիրոսով Ֆելիքս Իվանի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող

4. Վրդանեսովա Տատյանա Վլադիմիրի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Օհանյան Հովհաննես Արտաշի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Աբաջյան Լիլիթ Վլադիմիրի, կրտսեր գիտաշխատող
7. Գասպարյան Բորիս Զարեհի, կրտսեր գիտաշխատող
8. Դավթյան Անժելա Զալիոսի, կրտսեր գիտաշխատող
9. Ավետիսյան Նատալյա Հայկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

Վերջին տասնամյակների ընթացքում նորագույն մեթոդների վրա հիմնված հնագիտական հետազոտությունները ՀՀ տարածքում հեղաշրջիչ դեր ունեցան մեր երկրի հնագույն պատմության վերակազմության գործում: Որակապես և քանակապես հարստացած աղբյուրագիտական հենքի շնորհիվ հնարավոր դարձավ նորովի մեկնաբանել հայ ժողովրդի հնագույն պատմության բազմաթիվ հարցեր: Այս համատեքստում ներկայացված թեմայի շրջանակներում իրականացվում է Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություն, որը ներառում է դաշտային աշխատանքները, նյութի լաբորատոր մշակումը, չափագրումը և հրապարակումը: Բացի դրանից՝ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում և վերակազմվում է հնագույն լանդշաֆտը, ինչը հիմքեր է ստեղծում հնէաաշխարհագրական մոդելի վերակազմության համար: Վերակազմության առարկա են հանդիսանում նաև հնագույն ճանապարհները:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Պեղումներ Օշականում և Արամուսում
- Պեղումներ Սոդքում և Մարգահովտում
- Պեղումներ Երվանդաշատում
- Պեղումներ Կերենում
- Արենիի, Աղուդիի քարայրների պեղումներ
- Հնագիտական ուղեգծային արշավներ Սյունիքում և Վայոց ձորում
- Հնագիտական ուղեգծային արշավներ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում
- Թանգարանային նյութի մշակում (Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարան, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Կապանի երկրագիտական թանգարան, Քաշաթաղի երկրագիտական թանգարան)
- Կապանի, Հարժիսի, Սելիմի, Եղեգնաձորի հնագիտական նյութերի մշակում
- Մերձավորարևելյան քաղաքակրթությունների զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրություն

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ամփոփվել են 2013թ. Արամուսում և Օշականում իրականացված դաշտային աշխատանքների արդյունքները: Կազմվել է խեցեղենի տիպաբանություն, զատվել դրոշմազարդ խեցեղենը:

Ամփոփվել և հրատարակման են նախապատրաստվել 2013թ. Սյունիքի ուղեգծային արշավախմբի նյութերը: Տիպաբանվել են Վայոց ձորի բիայնական ժամանակաշրջանի հուշարձանները: Ուսումնասիրություններ են ծավալվել Գորիսի տարածաշրջանի Հարժիս, Վերիշեն, Խնածախ գյուղերում: Հայտնաբերվել են մի շարք դամբանադաշտեր և բնակատեղիներ: Հաստատագրվել են տասնյակ պաշտամունքային հուշարձաններ, մենհիրներ, վիշապաքարեր և այլն: Ուսումնասիրվել են ՀՊՊԹ պահպանվող կոթողային հուշարձանները (Կատարող՝ Ավետիսյան Հայկ):

Թեմա 2. Ամփոփվել և հրապարակման են նախապատրաստվել 2013թ. Սոթքի, Մարգահովտի հուշարձանների, վիշապաքարերի, Եղեգնաձոր կատարած արշավի նյութերը: Տիպաբանվել են Եղեգնաձորի Աթթաշի և Սելիմի նորահայտ վիշապաքարերը: Տիպաբանվել և նորովի են թվագրվել Եղեգնաձորի և Գորիսի թանգարանների նյութերը: Էջմիածնի թանգարանում ուսումնասիրվել է Ռ. Թորոսյանի ֆոտոարխիվը՝ նվիրված Սևանա լճի ավազանի 1969թ. և Շամիրամի 1973թ. արշավախմբերի արդյունքներին (Կատարող՝ Բոբոխյան Արսեն):

Թեմա 3. Ամփոփվել և հրատարակման են նախապատրաստվել 2013թ. Կերենի պեղումների նյութերը, աքեմենյան շրջանի կարասային թաղումների համատեքստում տիպաբանվել են դամբարանային կառույցները, ամփոփվել և հրատարակվել են 2013թ. Քաշաթաղի շրջանի ուղեգծային արշավների արդյունքները: Ուսումնասիրվել են Բերձորի, Ստեփանակերտի, Կապանի և Եղեգնաձորի թանգարաններում պահպանվող ծորակավոր անոթները: Մշակվել և հրատարակման են նախապատրաստվել 2012թ. Կապանի պեղումների նյութերը: Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանում մշակվում է Ռ. Թորոսյանի ձեռագիր ժառանգությունը (Կատարող՝ Գնունի Արտակ):

Թեմա 4. Վերականգնվել, տիպաբանվել և թանգարանացման են նախապատրաստվել 2012-2013թթ. Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված նյութերը: Նախապատրաստվել և տպագրության է հանձնվել խաչքարային արվեստին նվիրված մենագրությունը (Կատարող՝ Տատյանա Վարթանեսովա):

Թեմա 5. Ամփոփվել են 2013թ. Երվանդաշատի պեղումների նյութերը: Ճշգրտվել է ուսումնասիրվող տարածքի շերտագրությունը, դասդասվել և տիպաբանվել են Երվանդյան և Արտաշիսյան ժամանակաշրջանների նյութական մշակույթի նմուշները (Կատարող՝ Տեր-Մարտիրոսով Ֆելիքս):

Թեմա 6. Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանում պահպանվող անտիկ նյութերի ուսումնասիրության հիման վրա հրապարակման է նախապատրաստվել Հին Վաղարշապատի առաջացմանն ու քաղաքագոյացնող սկզբունքներին նվիրված հոդված (Կատարող՝ Օհանյան Հովհաննես):

Թեմա 7. 2012թ. Արենիի պեղումների արդյունքների ամփոփում, էնեոլիթյան դարաշրջանի խեցեղենի տիպաբանում և դասդասում, Աղավնաձորի բիայնական դամբարանի նյութերի տիպաբանում և հրապարակում (Կատարող՝ Գասպարյան Բորիս):

Թեմա 8. Չափագրվել և գրչանկարվել են Արամուսի, Օշականի, Կապանի, Քաշաթաղի, Հարժիսի, Եղեգնաձորի, Սելիմի, Աթթաշի նյութերը (Կատարող՝ Անժելա Դավթյան):

Թեմա 9. Մերձավոր Արևելքի, մասնավորապես Արևելյան Միջերկրականի և Իրանի մշակույթների զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրություն, նյութերի հավաքագրում, համապատասխան հրապարակումների նախապատրաստում (Կատարող՝ Լիլիթ Աբաջյան):

Թեմա 10. Երևանի պատմության թանգարանում Կարմիր Բերդի և ուշ բրոնզե վաղ երկաթեդարյան հուշարձանների պեղումներից հայտնաբերված իրերի մշակում (Կատարող՝ Նատալյա Ավետիսյան):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	-	-	14	10

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Ավետիսյան Հ. Գ.,* Համաշխարհային պատմություն, Հին աշխարհի հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2013, 200 էջ:

Հոդված

1. *Ավետիսյան Հ. Գ., Ղարիբյան Ի. Գ.,* Հուշարձան, Տարեգիրք Ը, «Հուշարձան» հրատ., Երևան, 2013, էջ 136-141:
2. *Ավետիսյան Հ. Գ.,* Ուրվագծեր Կարապետ Սուքիասյանի հայագիտական գործունեության, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 349-355:
3. *Ավետիսյան Հ. Գ.,* Ռ. Նահապետյանի «Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ)» ուսումնասիրությունը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 350-352:
4. *Գասպարյան Բ. Զ., Խաչատրյան Հ., Եգանյան Լ.,* Շիրակը մշակույթի օրրան, Կատալոգ, 2013,Շիրակի երկրագիտական թանգարան, Գյումրի, 2013, էջ 22-27:
5. *Սարգսյան Գ. Մ., Գնունի Ա. Վ., Հակոբյան Ա. Հ.,* Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգը մ.թ.ա. II-I հազ, «Վեմ», N 1, Երևան, 2014, էջ 147-171:
6. *Тер-Мартиросов Ф. И.,* Античный Багаран, Строительство и Архитектура, № 10, Ереван, 2013, с. 48-52.
7. *Bobokhyan A. A.,* Projekt Ushkiani. Untersuchungen der Kulturlandschaft um das prähistorische Goldrevier von Sotk, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, 49-88 (Koautoren: Kunze R., Pernicka E., Meliksetian K.).
8. *Bobokhyan A. A.,* Ausgrabungen in Karchaghbyur, Provinz Gegharkunik, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, 109-163 (Koautoren: Engibaryan N., Kunze R.).
9. *Bobokhyan A. A.,* Die armenischen višap, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, 195-205 (Koautoren: Gilibert A., Hnila P.).
10. *Bobokhyan A. A.,* Vishapakars/Dragon Stones: High-Altitude Monuments in Armenia and Problem of Their Protection, ICOMOS Heritage Conservation Regional Network Journal 3, 2013-09-30 (http://rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4) (Coauthors: Gilibert A., Hnila P.).
11. *Gasparyan B. Z., Montoya C., Balasescu A., Joanin S., Ollivier V., Liagre J., Nahapetyan S., Ghukasyan R., Colonge D., Chataigner C.,* The Upper Palaeolithic Site of Kalavan-1 (Armenia): An Epigravettian Settlement in the Lesser Caucasus. Journal of Human Evolution, 65, 2013, pp. 621-640.
12. *Gasparyan B. Z., Colonge D., Jaubert J., Nahapetyan S., Ollivier V., Arakelyan D., Devilder G., Fourlobey C., Jamois M-H., Chataigner C.,* The Upper Palaeolithic Site of Kalavan-1 (Armenia): An Epigravettian Settlement in the Lesser Caucasus. Journal of Human Evolution, 65, 2013, pp. 621-640.
13. *Gasparyan B. Z.,* Frahm E., Schmidt B.A., Yeritsyan B., Karapetian S., Meliksetian Kh., Adler D.Sh. Ten seconds in the field: rapid Armenian obsidian sourcing with portable XRF to inform excavations and surveys Journal of Archaeological Science, 41, 2014, pp. 333-348.
14. *Gasparyan B. Z., Frahm E., Feinberg J. M., Schmidt-Magee B. A., Wilkinson K., Yeritsyan B., Karapetian S., Meliksetian Kh., Muth M. J., Adler D. S.,* Sourcing geochemically identical obsidian: multiscalar magnetic variations in the Gutanasar volcanic complex and implications for Palaeolithic Research in Armenia, Journal of Archaeological Science, 47, 2014, pp. 164-178.

Զեկուցումների թեզիս

1. *Բոբոխյան Ա. Ա., Ջիլիբերա Ա., Հնիլա Պ.,* Վիշապաքարերի պահպանության հարցը, Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2013, էջ 10-11:
2. *Bobokhyan A. A.,* Investigation of Bronze Age in Armenia during the Post-Soviet Period, in: At the Northern Frontier of Near Eastern Archaeology: Recent Research on Caucasia and Anatolia in the Bronze Age, Humboldt Foundation International Conference, Ca' Foscari University, Venice, 9-11 January, 2013, Abstracts, Rova E., Tonussi M. (ed.), Venice, 2013, p. 2-3.
3. *Gasparyan B. Z., Adler D. S., Wilkinson K. N., Blockley S., Mark D., Pinhasi R., Schmidt B., Yeritsyan B.,* Frahm E. Earliest Evidence for Levallois Technology and the Transition from the Lower to Middle Paleolithic in the Caucasus: New Data from Nor Geghi 1, Armenia. The Role of the Southern Caucasus on Early Human Evolution and Expansion – Refuge, Hub or Source Area, Workshop organized by Angela A. Bruch and & David Lordkipanidze, October 15-20, 2013, Tbilisi, Georgia, Abstracts of Oral Contributions, Tbilisi, 2013, p. 15.
4. *Gasparyan B. Z., Egeland C. P., Fadem C., Arakelyan D., Miller C., Nahapetyan S., Armitage S., Nicholson C. M.,* Middle Paleolithic Occupations in the Debed River Valley (Lori Depression, Northeastern Armenia) The Role of the Southern Caucasus on Early Human Evolution and Expansion – Refuge, Hub or Source Area, Workshop organized by Angela A. Bruch and & David Lordkipanidze, Tbilisi, October 15-20, 2013, p. 27.
5. *Gasparyan B. Z.,* Newly Discovered Paleolithic Sites of Armenia: Achievements and Perspectives Workshop organized by Angela A. Bruch and & David Lordkipanidze, Tbilisi, October 15-20, 2013, p. 33.
6. *Gasparyan B. Z., Kandel A. W.,* Cultural Adaptations in the Southern Caucasus: Early Evidence for Clothing from Aghitu-3 Cave, Armenia Workshop organized by Angela A. Bruch and & David Lordkipanidze, Tbilisi, October 15-20, 2013, p. 39.
7. *Գասպարյան Բ. Զ.,* Արենի-1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի շրջանի մարտահրավերները», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 17-19:
8. *Gasparyan B. Z., Kandel A., Bruch A., Deckers K., Nahapetyan S., Weissbrod L.,* Onwards and upwards in the Caucasus - A multidisciplinary approach to understanding the lifeways of the earliest modern humans in Armenia Geophysical Research Abstracts, Vol. 15, EGU2013-1110, 2013, EGU General Assembly 2013, Elsevier 2014.
9. *Gasparyan B. Z., Kandel A., Bruch A., Nahapetyan S., Weissbrod L.,* Environmental change and cultural adaptation in the southern Caucasus: Latest results from Aghitu-3 Cave, Armenia Geophysical Research Abstracts, Vol. 16, EGU 2014, 2014 EGU General Assembly 2014.
10. *Gasparyan B. Z., Wilkinson K., Adler D., Nahapetyan S., Smith V., Mark D., Mallol C., Blockley S.,* Middle Pleistocene palaeoenvironments and the late Lower-Middle Palaeolithic of the Hrazdan valley, central Armenia Geophysical Research Abstracts Vol. 16, EGU2014-1281, 2014 EGU General Assembly 2014.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի գիտական ղեկավար՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի հիմնական խնդիրներն են

- ՏՏ-ների ոլորտում կրթական, մարզման, շարունակական կրթության ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,
- ՏՏ-ների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարում,
- համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում:

Կենտրոնի գործունեության ուղղություններն են

- Կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,
- գիտահետազոտական աշխատանքների կատարում,
- համալսարանի կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում:

Կենտրոնի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր **Մասնագիտություն՝**

090100 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Մասնագիտացումներ՝
(մագիստրոսական ծրագրեր)

ՏՏ մշակում
ՏՏ կառավարում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝54*			
	I կուրս		II կուրս	
	պպ	վճ	պպ	վճ
Մագիստրատուրա				
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	9	12	6	27

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն.					
1-ին	21	2	5	-	67
2-րդ	33	-	-	6	100
Ընդամենը	**54**	**2**	**5**	**6**	**87**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնա-հատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն					
1-ին	**21**	**1**	**4**	**2**	**76**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը* ՝ 33
	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	**33 (3)**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (համատեղության կարգով)*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մանուկյան Մանուկ Գառնուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավագյան Արթուր Արամայիսի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Վասիլյան Աշոտ Մորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Հարությունյան Գուրգեն Էդիկի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Մաթևոսյան Վարդան Ալբերտի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Վարդանյան Վալերիկ Արտյուշայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Ավագյան Անի Վահեի, դասախոս
7. Էլբակյան Լարիսա Աշոտի, դասախոս
8. Խաչատրյան Մանիկ Ռազմիկի, դասախոս
9. Պետրոսյան Ելենա Գրիգորի, դասախոս
10. Սողոմոնյան Ժաննա Միքայելի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պետրոսյան Ելենա Գրիգորի, գործավար
2. Ավագյան Անի Վահեի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Առցանց դասընթացների մշակման գործիքային միջավայրի ստեղծում և կիրառում (Basic toolkit for a comprehensive course development and its application, OSI N 18293), (2013-2014):	Շուքուրյան Ս. Կ.

Թեմա 1. Ծրագրի շրջանակում մշակվել են առցանց ուսուցման հետևյալ դասընթացները. «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ», «Ժամանակակից բնագիտության հիմունքներ», «Բնապահպանություն» (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ), «Բժշկական էկոլոգիա» (Երևանի պետական բժշկական համալսարանի հետ համատեղ):

Առաջին երկու դասընթացները ներդրվել են ԵՊՀ հոգեբանության և փիլիսոփայության ֆակուլտետում, երրորդ դասընթացը՝ ՀՊՃՀ-ում, չորրորդը՝ նախապատրաստվում է ներդրման ԵՊԲՀ-ում:

Մասնակցություն միջազգային գիտաժողովների աշխատանքներին

Ս. Կ. Շուքուրյան

- IEEE խորագրով անցկացվող EWDTS'2014 (East-West Design and Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի նախագահ:
- IEEE խորագրով անցկացվող VTS'2014 (VLSI Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:

Գ. Է. Հարությունյան

- IEEE խորագրով անցկացվող VLSI Test Symposium (VTS) գիտաժողով, ԱՄՆ, 2014:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	5	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Harutyunyan G., Tshagharyan G., Vardanian V., Zorian Y.,* "Fault Modeling and Test Algorithm Creation Strategy for FinFET-Based Memories", IEEE VLSI Test Symposium (VTS), USA, 2014, pp. 49-54.
2. *Harutyunyan G., Kumar A., Yessayan A., Zorian Y.,* "An Effective Hierarchical Test Solution for Interface IP blocks within Complex SoC", IEEE International Workshop on Test and Validation of High Speed Analog Circuits in conjunction with International Test Conference (ITC), USA, 2013.
3. *Harutyunyan G., Shoukourian S., Vardanian V., Zorian Y.,* "Impact of Process Variations on Read Failures in SRAMs", IEEE East-West Design and Test Symposium (EWDTS), Russia, 2013, pp. 15-18.
4. *Alexanyan K., Vardanian V. A., Zorian Y.,* "Various Methods and Apparatuses for Effective Yield Enhancement of Good Chip Dies Having Memories Per Wafer", US Patent No. 8,359,553, 2013, p. 18.
5. *Manukyan M. G.,* Canonical Model: Formal Semantics, Вестник Российско-Армянского (Славянского) университета, Физико-математические и естественные науки, ISSN 1829-0450, N 1, Ереван, 2014, с. 20-39.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Դանիելյան Նատալյա Ռոբերտի*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Անհատական ծանրաբեռնվածության, աշխատանքային և ուսումնական պլանների մուտքագրման ծրագիրը վերամշակվել է նորմերի փոփոխություններին համապատասխան, և ավելացվել են համեմատում կատարող հաշվետվություններ (հաստատված բեռնվածության համեմատում նախորդ տարիների բեռնվածության հետ, հաստատված բեռնվածության համեմատում փաստացի ուսանող թվերով բեռնվածության հետ):
- Վերամշակվել են ուսանողների առաջադիմությանը վերաբերող որոշ հաշվետվություններ:
- Մշակվել է ուսումնական քարտի ավտոմատ տրամադրման ենթահամակարգը:
- Մշակվել են 2012-2013 2-րդ և 2013-2014 1-ին կիսամյակների ուսանողական հարցման տվյալները:
- Իրականացվել են Supervision ծրագրի սպասարկումն ու ընթացիկ թարմացումները:
- Մշակվել է հեռակա ուսուցման ընդունելության գործընթացի ավտոմատացման ծրագիրը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. «Կոմպյուտերից օգտվելու հմտություններ» համահամալսարանական առարկայի դասավանդումը ԵՊՀ բոլոր ֆակուլտետների բակալավրիատում: Դասերն անցկացվում են ՏՏԿՀ կենտրոնի հինգ համակարգչային լսարաններում (ԻԿՄ ֆակուլտետի մասնաշենքի կենտրոնական համակարգչային դահլիճ, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի երկու համակարգչային սրահներ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ, Հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ):
2. Բաժինն ապահովում է ԵՊՀ որոշ ֆակուլտետների մագիստրատուրայի «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտության մեջ» առարկայի դասավանդումը: Յուրաքանչյուր մասնագիտության համար մշակվել են դասընթացի պլան-ծրագիրը և գործնական առաջադրանքները:
3. Բաժնի աշխատակիցների կողմից մշակվել են ՀՀ բուհերի և արտերկրի ասպիրանտուրայի (առկա և հեռակա ուսուցման) ընդունելության նախապատրաստական դասընթացի պլան-ծրագիրը, գործնական առաջադրանքների ձեռնարկը, քննության թեստերը, որոնց հիման վրա էլ անցկացվել են նախապատրաստական դասընթացները և ընդունելության քննությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Ավագյան Արթուր Արամայիսի, տեխ. գիտ. թեկնածու, ասիստենտ*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված աշխատանքների ամփոփում

Շարունակվել են էլեկտրոնային ուսուցման կրթական գործընթացի կառավարման ունիֆիկացված ներկառուցվածքի մշակման աշխատանքները հետևյալ ուղղություններով.

- մոբայլ սարքերի ձևաչափերին համապատասխան տեղեկատվության մատուցման շաբլոնների ինտերֆեյսի մշակում,
- ոչ մասնագիտական առարկաների օնլայն ուսուցման նյութերի բազմաշերտ մատուցման շաբլոնների մշակում,
- համագործակցային (collaborative) և գծային (linear) ուսուցման գործիքային միջավայրի կատարելագործում:

Կոմբինացված ուսուցմանն աջակցող ծրագրային գործիքների նախագծման և իրականացման նպատակով տարբեր ֆակուլտետներում դասավանդվող ոչ մասնագիտական դասընթացների ընդհանուր պլատֆորմի հենքի վրա.

- շարունակվել է ուսանողների գիտելիքների գնահատման առցանց թեստավորման մեխանիզմի ընդլայնման գործընթացը,
- մշակվել են միջհամալսարանական էլեկտրոնային կուրսերի կիրառման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ:

Հայկական վիրտուալ համալսարանի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

- Մշակվում է մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված մեդիա էլեկտրոնային գրքերի նոր շարք: Այն հասանելի է սմարթֆոնների, պլանշետների և վեբ-բրաուզերների օգտատերերի համար: ՀՎՀ մուլտիմեդիա էլեկտրոնային գրքերի շարքը հասանելի է յոթ լեզուներով և դյուրին է օգտագործման համար: Բաժանորդագրությունն անվճար է:
- ՀՎՀ և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ վերամշակվել է շախմատի ռազմավարություն սկսնակ մակարդակի՝ երկու մասերից կազմված էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացը: Դասընթացի նյութը հիմնված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված դասագրքերի հիման վրա: Օնլայն դասերն իրականացվել են օնլայն միջավայրում մուլտիմեդիա արդի տեխնոլոգիաներով:

Սփյուռքի լսարանի համար թեմատիկ մասնագիտական կրթություն ապահովելու նպատակով ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման ծրագրի շրջանակում մշակվել է.

- Էլեկտրոնային ուսուցման կրթական պրոցեսի կառավարման ունիֆիկացված ներկառուցվածք:
- Կիրառելով հեռաուսուցման և դասական ուսուցման համակցված մեթոդները՝ մշակվել է տասնմեկ թեմատիկ դասախոսություններից բաղկացած էլեկտրոնային առցանց դասընթաց: Դասընթացը 2014 թվականի գարնանը ներդրվել է Բեյրութի Հայ կաթողիկե Մեսրոպյան բարձրագույն վարժարանում մեկնարկած «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման ծրագրի ընթացքում:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Բալոյան Արտյոմ Վաղինակի
2. Սարգսյան Սնակ Սենիկի (Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի 2-րդ կուրսի ասպիրանտ)
3. Վարդանյան Վահագն Գևորգի (ՏՏԿՀ կենտրոնի ՏՀ ամբիոնի 1-ին կուրսի ասպիրանտ)

Լաբորատորիայի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողները

1. Ասլանյան Հայկ Կարենի
2. Ասրյան Սերյոժա Արմենի
3. Խաչատրյան Արամայիս Արտյոմի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված աշխատանքների ամփոփում

Լաբորատորիայի հետազոտական աշխատանքները հիմնական ընդգրկում են հետևյալ ուղղությունները՝ Webkit դինամիկ կոմպիլյատորի համար ռեգիստրերի գլոբալ բաշխման ալգորիթմի մշակում, իրականացում, ինչպես նաև ռեգիստրերի պարունակությունը հիշողության մեջ գրելու արդյունավետության գնահատականների մշակում:

Հաշվետու ուստարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Webkit դինամիկ կոմպիլյատորի համար ռեգիստրերի գլոբալ բաշխման ալգորիթմի մշակում և իրականացում,
- կոդի կլոնների որոնման մեթոդների մշակում և իրականացում,
- ծրագրի կախվածությունների գրաֆի հետ կապված մի շարք ալգորիթմների մշակում և իրականացում:

ՈՒԺԵՂ ԴԱՇՏԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար և տնօրեն՝ *Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող
2. Ավետիսյան Արա Կարապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող
3. Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, լաբորատորիայի վարիչ
4. Լալայան Ասատուր Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, լաբորատորիայի վարիչ
5. Սեդրակյան Խաչիկ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
6. Մարկոսյան Արմենուհի Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Ավչյան Բաբկեն Ռուբենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
8. Մովսեսյան Հովհաննես Ավետիսի, կենսաբ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

Համատեղողներ

1. Մալաքյան Յուրա Պարույրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Ներսիսյան Հրաչյա Բաղդասարի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Խաչատրյան Լուիզա Միքայելի, ավագ լաբորանտ
2. Վարդանյան Սոֆյա Նապոլեոնի, ավագ լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝ ուժեղ դաշտերի էլեկտրադինամիկայի, լազերային-պլազմային-արագացուցչային ֆիզիկայի, ռենտգենյան քվանտային էլեկտրոնիկայի, նանոկառուցվածքների ոչ գծային էլեկտրադինամիկայի, կոհերենտ ատոմամոլեկուլյար համակարգերի քվանտային օպտիկայի և ինֆորմատիկայի, աստղաֆիզիկական կիրառությունների և կոսմոլոգիայի բնագավառներում տեսական հիմնարար աշխատանքների կատարումը, ինչպես նաև փորձարարական հետազոտությունները լազերային ֆիզիկայի ու նանոտեխնոլոգիաների ոլորտում և դրանց կիրառությունները նանոկենսաբանության ու բժշկության մեջ:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Գիտական հիմնարար, կիրառական-հետազոտական դրամաշնորհների կամ հատուկ նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացվող տեսական ու փորձարարական հետազոտությունների իրականացումը, արտասահմանյան առաջատար գիտական կենտրոնների հետ համատեղ հիմնարար և կիրառական նոր նախագծերի մշակումը, միջազգային համագործակցության ծավալումը, ինչպես նաև վերոնշյալ բնագավառներում գիտական կադրերի պատրաստումը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ և դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Լազերային դաշտերով ինդուկցված ոչ գծային երևույթների ուսումնասիրությունը և լազերային նանոտեխնոլոգիաների կիրառություններ (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
2. Մասնիկ-հակամասնիկ զույգերի ծնումը և անիհիլացիան գերհզոր լազերային դաշտերում (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
3. Նանոկառուցվածքների ոչ գծային էլեկտրադինամիկա (պետական ֆինանսավորում)::	Ավետիսյան Հ. Կ.

Թեմա 1. Ուսումնասիրվել է քվանտէլեկտրադինամիկական վակուումից հարմոնիկների կոհերենտ գեներացիան գերհզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերների հետ փոխազդեցության դեպքում: Ցույց է տրվել, որ հնարավոր է բազմաֆոտոն կանալներով գրգռել Դիրակյան ծովը և էլեկտրոն-պոզիտրոն զույգի անիհիլյացիայի դեպքում ստանալ գրգռող ալիքի հարմոնիկների արդյունավետ գեներացիա:

Ռելյատիվիստիկ տեսության շրջանակներում ուսումնասիրվել է գերհզոր լազերային ճառագայթման ոչ գծային կլանումը պինդմարմնային խտության պլազմայում, որը հանգեցնում է ռելյատիվիստիկ ջերմաստիճանների հաստատման: Սա կարևորվում է նրանով, որ մեծ միջուկային կարգաթվով թիրախների դեպքում ռելյատիվիստիկ ջերմաստիճանները հանգեցնում են էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի հեղեղային ծնման:

Ուսումնասիրվել է բարձր կարգի հարմոնիկների ռեզոնանսային գեներացիան մեծ միջուկային կարգաթվով ջրածնանման իոնների համակարգում հզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերային դաշտերում: Մասնավորապես ցույց է տրվել, որ ռեզոնանսային փոխազդեցության շնորհիվ կարելի է ստանալ մեծ ինտենսիվության կոհերենտ կոշտ-ռենտգենյան ճառագայթում:

Իոնների լիցքի կամայական արժեքներով պլազմայի Ֆոկեր-Պլանկի կինետիկ հավասարման համար գտնվել են նոր լուծումներ, որոնց հիման վրա առաջարկվել է պլազմայի օպտիկական և տրանսպորտային բնութագրիչների լայնադիապազոն մոդել: Նշված մոդելը թույլ է տալիս ընդհանրացումներ կատարել քվանտային և/կամ ուժեղ փոխազդող պլազմաների դեպքերի համար: Ցույց է տրվել, որ ռելյատիվիստիկ էլեկտրոնային փունջը (ՌԷՓ) լազերային պլազմայում կարող է գրգռել Չերենկովյան պարամետրիկ ճառագայթում, ինչը բացակայում է լազերի բացակայության դեպքում: Սակայն այս դեպքում ճառագայթման սպեկտրը դիսկրետ է, իսկ հաճախությունները տեղայնացված են լազերի հարմոնիկների շրջակայքում և էապես կախված են ՌԷՓ-ի էներգիայից: Դիտարկվել են ցածր

էներգիայով իոնների քվանտային գազերում էներգիայի կորուստների բաշխման զրոյական, առաջին և երկրորդ կարգի մոմենտները: Կիրառելով Լինդհարդի 2-րդ և 4-րդ կարգի մոտավորությունները՝ այս մեծությունների համար արտածվել են արտահայտություններ, որոնք քվանտային էլեկտրոնային գազի խտությունների լայն տիրույթում լավ համընկնում են թվային ճշգրիտ արժեքների հետ:

Լուծված է սառը ատոմների հետ միաֆոտոն իմպուլսի կոհերենտ փոխազդեցության հիմնախնդիրը: Ցույց է տրված, որ կորուստների բացակայության դեպքում ելքային ֆոտոնն ունի ժամանակային տատանողական բաշխում: Քվանտային հեռահաղորդակցության մեջ կիրառվող ըստ ժամանակի խճճված ֆոտոնային վիճակների ստացման համար մշակված է նոր մեխանիզմ, որտեղ ֆոտոնի ալիքային փաթեթի տեսքը ղեկավարվում է ուժեղ լազերային դաշտի միջոցով: Մի շարք քվանտային ալգորիթմների գործողության համար անհրաժեշտ է Տոֆֆոլիի (Toffoli) տարրական օպերացիան, որի իրականացման համար առաջարկված է նոր սխեմա՝ անօրգանական բյուրեղներում հազվագյուտ մետաղների իոնների խառնուրդային համակարգի վրա:

Կենտրոնի Լազերային կիրառությունների լաբորատորիայում շարունակվել են փորձարարական աշխատանքները լազերային նանոտեխնոլոգիաների ոլորտում: Ուսումնասիրվել են լազերային ճառագայթահարման միջոցով ստացված մետաղական և կիսահաղորդչային նանոմասնիկների ոչ գծային օպտիկական հատկությունները:

Թեմա 2. Հետազոտվել է կոհերենտ գամմա ճառագայթման ստացման հնարավորությունը պոզիտրոնիումի ատոմներից բաղկացած Բոզե կոնդենսատում՝ կոլեկտիվ անիհիլացիայի պայմաններում: Ցույց է տրվել, որ այս դեպքում երկֆոտոն անիհիլացիան խիստ անկայուն է, որը հանգեցնում է կոնդենսատի սպոնտան ճառագայթման ինքնաուժեղացման (գամմա-լազերի նոր տարբերակ): Ստացվել է ինքնաուժեղացման գործակիցը: Դիտարկվել է երկարաձգված Բոզե կոնդենսատի դեպքում կոհերենտ գամմա ճառագայթման ստացման հնարավորությունը, և ցույց է տրվել, որ այս դեպքում ուժեղացումն իրականանում է միայն առանցքային մոդաների համար:

Ուսումնասիրվել է էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ծնումը բազմաֆոտոն կանալներով գերհզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերների հետ քվանտէլեկտրադինամիկական վակուումի փոխազդեցության ընթացքում: Ցույց է տրվել, որ կոշտ ռենտգենյան լազերների կիրառմամբ կարելի է գրգռել Դիրակյան ծովը բազմաֆոտոն կանալներով:

Ցույց է տրվել պինդմարմնային խտության ուլտրառելյատիվիստիկ էլեկտրոնային փնջերի ստացման հնարավորությունը գերկարճ-գերհզոր լազերային իմպուլսներով՝ մետաղական պլազմայից: Հետազոտվել է այդպիսի փնջերով մեծ միջուկային կարգաթվով թիրախներից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ստացման հնարավորությունը:

Որպես քվանտէլեկտրադինամիկական վակուումի և գերհզոր դաշտերի ոչ գծային փոխազդեցության մոդել դիտարկվել է միաշերտ գրաֆենի և արտաքին կոհերենտ ճառագայթման դաշտի բազմաֆոտոն փոխազդեցության խնդիրը: Զարգացվել է միաշերտ գրաֆենի և արտաքին կոհերենտ օպտիկական ճառագայթման դաշտի ոչ գծային փոխազդեցության միկրոսկոպիկ քվանտային տեսություն, որը ներառում է ինչպես միջզոնային, այնպես էլ ներզոնային անցումները և կիրառելի է Դիրակյան կոնից դուրս ամբողջ էներգետիկ գոտու համար: Ցույց է տրվել, որ հնարավոր է կառավարելի ձևով գրգռել ֆերմի-դիրակյան ծովը և մասնիկ-խոռոչ զույգի անիհիլյացիայի դեպքում ստանալ գրգռող ալիքի հարմոնիկների արդյունավետ գեներացիա:

Թեմա 3. Նախագիծը նպատակ է հետապնդում բացահայտելու ցածրչափանի նանոկառուցվածքների ոչ գծային էլեկտրամագնիսական հատկությունները ինչպես ուժեղ և քվանտացված ճառագայթային դաշտերի հետ բազմաֆոտոն փոխազդեցության, այնպես էլ վակուումի ֆլուկտուացիաների հետ միաֆոտոն փոխազդեցության միջոցով: Ուսումնասիրվել է ասիմետրիկ քվանտային հորերում էլեկտրոնների և արհեստական երկմակարդակ ատոմների՝ գերհաղորդիչ

կոնտուրների ոչ գծային վարքը միամոդ քվանտացված ճառագայթային դաշտում՝ ընդհանրացնելով Ռաբի-տատանումների խնդիրը բազմաֆոտոն գրգռումների դեպքում: Ուսումնասիրվել է նաև գրաֆենի ոչ գծային փոխազդեցությունը վակուումի ֆլուկտուացիաների հետ քվանտային միկրոխոռոչներում-ռեզոնատորում, ինչպես նաև չափավոր հզոր լազերային դաշտերի հետ, երբ էլեկտրոնային սպեկտրում էական է անիզոտրոպիան:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	13	9

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Avetissian H. K., Avetissian A. K., Mkrtchian G. F.,* Self-amplified gamma-ray laser on positronium atoms from a Bose-Einstein condensate, Phys. Rev. Lett., v. 113, 2014, pp. LQ14831(1)- LQ14831(5).
2. *Avetissian H. K., Ghazaryan A. G., Mkrtchian G. F.,* Relativistic theory of inverse-bremsstrahlung absorption of ultrastrong laser radiation in plasma, J. Phys. B: At. Mol. Opt. Phys., v. 46, 2013, pp. 205701(1)- 205701(10).
3. *Avetissian H. K., Mkrtchian G. F., Batrakov K. G., Maksimenko S. A., Hoffmann A.,* Multiphoton resonant excitations and high-harmonic generation in bilayer graphene, Phys. Rev. B, v. 88, 2013, pp. 165411(1)-165411(9).
4. *Avetissian H. K., Mkrtchian G. F., Batrakov K. G., Maksimenko S. A., Hoffmann A.,* Nonlinear theory of graphene interaction with strong laser radiation beyond the Dirac cone approximation: Coherent control of quantum states in nano-optics, Phys. Rev. B, v. 88, 2013, pp. 245411(1)- 245411(7).
5. *Avetissian H. K., Mkrtchian G. F.,* Two-level system with broken inversion symmetry coupled to a quantum harmonic oscillator, Phys. Rev. A 88, 2013, 043811(1)-043811(7).
6. *Ghazaryan A. G.,* Nonlinear Absorption of Superstrong Circularly Polarized Laser Radiation in Plasma owing to Inverse Bremsstrahlung on Coulomb Centers, Armenian Journal of Physics, v. 7, 2014, pp. 1-10.
7. *Nersisyan H. B., Veysman M. E., Andreev N. E. and Matevosyan H. H.,* Dielectric function of a collisional plasma for arbitrary ionic charge, Physical Review E, v. 89, 2014, pp. 033102(1)-033102(9).
8. *Nersisyan H. B. and Deutsch C.,* Stopping of relativistic electron beam in a plasma irradiated by an intense laser field, Laser & Particle Beams, v. 32, 2014, pp. 157-169.
9. *Nersisyan H. B. and Deutsch C.,* Number-conserving linear response study of low-velocity ion stopping in a collisional magnetized classical plasma, Eur. Phys. J.: Web Conf. 59, 2013, pp. 05019(1)-05019(5).
10. *Petrosyan Sh., Malakyan Yu.,* Coherent propagation of a single photon in a lossless medium: storage and retrieval in multiple temporal mode, Phys. Rev. A, v. 88, 2013, pp. 063817(1)-063817(8).
11. *Lalayan A. A. and Aghbalyan Y.,* Water stream generator of millimeter-wave radiation, Armenian Journal of Physics, v. 7, 2014, pp. 113-121.
12. *Lalayan A. A.,* Influence of laser beam structure on luminescence properties of laser synthesized GaAs Quantum Dots, Armenian Journal of Physics, v. 7, 2014, pp. 122-126.
13. *Кибис О. В., Аветисян Г. К., Мкртчян Г. Ф.,* Влияние интенсивного лазерного излучения на электронные свойства графена, Доклады АН ВШ РФ, № 1 (22), 2014, сс. 16-24.

Զեկուցումների թեզիս

1. *Avetissian H. K., Avetissian H. K., Mkrtchian G. F., Sedrakian Kh. V.,* Creation of dense positron jets on high-Z targets by laser produced ultrarelativistic electron bunches from solid-plasma-films, 41st EPS Conference on Plasma Physics, Berlin, Germany, 23-27 June, Book of Abstracts, 2014, p. P2.093.
2. *Avetissian H. K., Avetissian A. K., Avchyan B. R, Mkrtchian G. F., Multiphoton excitations and* harmonics generation in quantum electrodynamic vacuum, 33rd European Conference on Laser Interaction with Matter, Paris, France, 31 August-05 September, 2014.
3. *Avetissian H. K., Avchyan B. R, Mkrtchian G. F.,* Harmonic generation via multiphoton resonant channels by x-ray free electron laser, 33rd European Conference on Laser Interaction with Matter, Paris, France, 31 August-05 September, 2014.
4. *Ghazaryan A. G.,* Investigation of Phase Matching effect in High Harmonic Generation on Plasma Ions in Superstrong Laser Fields, The 8th International West Lake Symposium on Laser Plasma Interactions (IWLS-LPI 2014), Hangzhou, China, 21-25 April, Book of Abstracts, p. IWLS-LPI 14-0005, 2014.
5. *Krasteva A., Slavov D., Sargsyan A., Sarkisyan D., Malakyan Yu., Wilson-Gordon A. D. and Cartaleva S.,* Two-photon resonance on the D2 line of Cs enhanced by optical pumping, 23rd annual International Laser Physics Workshop, Sofia (Bulgaria), July 14-18, 2014.
6. *Akhmedzhanov R., Gushchin L., Litvak A., Sobgayda D., Zelensky I., Malakyan Yu., Kocharovskaya O.,* On the possibility of Toffoli gate implementation in rare-earth-ion-doped inorganic crystals, 23rd annual International Laser Physics Workshop, Sofia (Bulgaria), July 14-18, 2014.
7. *Deutsch C., Nersisyan H. B. and Bendib A.,* Diagnostics of arbitrary magnetized and dense plasmas of ICF/WDM concern, XX International Symposium on Heavy-Ion Inertial Fusion, Lanzhou, China, August 11-15, 2014, invited talk.
8. *Nersisyan H. B., Fernnndez-Varea J. M. and Arista N. R.,* Dynamic screening of an ion in a degenerate electron gas within the second-order Born approximation, XXVI International Conference on Atomic Collisions in Solids (ICACS-26), Debrecen, Hungary, July 13-16, 2014.
9. *Nersisyan H. B., Veysman M. E., Andreev N. E. and Matevosyan H. H.,* Dielectric function of a collisional plasma for arbitrary ionic charge, Annual Moscow International Workshop on Non-Ideal Plasma Physics (NPP-2013), Moscow, Russia, December 3-4, 2013, invited talk.

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի, բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Քոչարյան Հայկ Մկրտիչի, ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու
2. Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող, մարդաբանության դոկտոր (PhD)
3. Գևորգյան Աննա Սերգեյի, կրտսեր գիտաշխատող, իրանական բանասիրության մագիստրոս
4. Մկրտչյան Տաթևիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող, արաբական բանասիրության մագիստրոս
5. Սահակյան Նաիրա Էդիկի, լաբորանտ, արաբագիտության բանասիրության մագիստրոս

Կենտրոնի հիմնական խնդիրները

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (ՔՄՀԿ) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է ֆունդամենտալ հետազոտություններ մշակութաբանության, քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության և այլ ոլորտներում: ՔՄՀԿ-ն իրագործում է նաև քաղաքակրթական գործընթացների փորձագիտական վերլուծություն և զբաղվում է ընթացիկ քաղաքական իրադարձությունների իրադարձային վերլուծությամբ: Հետազոտությունները իրականացվում են Երևանի պետական համալսարանի համապատասխան բաժինների գիտական ներուժի ներգրավվմամբ: ՔՄՀԿ-ի նպատակներից է մշակել առաջարկություններ և եզրակացություններ ՀՀ պետական համապատասխան մարմինների համար: Կենտրոնը հրատարակում է վերլուծական տեղեկագրեր, ինչպես նաև մենագրական ուսումնասիրություններ կենտրոնի հետազոտական ուղղվածության թեմաներով:

Կենտրոնում ուսումնասիրություններ են կատարվում հետևյալ հիմնահարցերի շուրջ.

- «Ինքնության և արժեքային համակարգերի մրցակցության խնդիրները գլոբալացման պայմաններում»,
- «Հայ-թուրքական հարաբերությունները՝ արժեքաբանական տեսանկյունից»,
- ««Մեծ Միջին Արևելք» ծրագրի հիմնադրույթները և Հայաստանը»,
- «Ենթամշակութային համակարգեր և արժեքային համակարգերի մրցակցություն»,
- «Մշակութային ադապտացիոն մեխանիզմների դերը և առանձնահատկությունները»,
- «Տարածաշրջանային անվտանգության համակարգեր և Իրան-ԱՄՆ հարաբերություններ»,
- «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. **«Երեք ծովերի համակարգ»** հայեցակարգը (ղեկավար՝ Դ. Ա. Հովհաննիսյան) հնարավորություն է տալիս ներկայացնելու ժամանակակից աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական, քաղաքական և տեղեկատվական գործընթացները՝ ժամանակի և տարածության կատեգորիաների փոփոխության, այն է՝ աշխարհընկալման և աշխարհի պատկերի ձևավորման սկզբունքորեն նոր պայմաններում: Հայեցակարգը համալիր մոտեցմամբ դիտարկում և վերլուծում է այն նոր իրողությունները, որոնք փոխել են ժամանակակից քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական երևույթների ընկալման էությունը: Դիտարկման կենտրոնում ունենալով Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազանները և դրանց կոմունիկացիոն արեալների մեջ ընդգրկված տարածքները՝ հայեցակարգը իր ամբողջականության մեջ է դիտարկում այս մեգառեգիոնում տեղի ունեցող գործընթացները, վեր հանում տեղի ունեցող տարատեսակ կոնֆլիկտների իրական պատճառները, բացատրում համաշխարհային ուժային կենտրոնների որոշումների և իրականացվող ծրագրերի իրական դրդապատճառները: Հատուկ ուշադրություն է դարձվում ցանցայնացման համաշխարհային գործընթացներին:

«Երեք ծովերի համակարգ» հայեցակարգում տարատեսակ խզումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բավականին բարձր ճշգրտությամբ կանխագուշակելու այս մեգառեգիոնում իրադարձությունների զարգացումը: Թեման պլանավորվում է ավարտել 2016 թ-ին:

Թեմա 2. **«Հանրային դիսկուրս և գենդերային կարծրատիպեր»** ծրագրի (ղեկավար՝ Ա. Ս. Գևորգյան) շրջանակում ուսումնասիրվում են Հայաստանի հանրային ու քաղաքական դիսկուրսներում գենդերային կարծրատիպերի վերարտադրության մեխանիզմները: Հաշվետու ուստարում կատարվել է Հայաստանի կին քաղաքական գործիչների ոչ պաշտոնական ելույթների բովանդակային վերլուծություն՝ դրանցում առկա կարծրատիպերի վերհանման նպատակով: Առաջիկայում ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել հանրային դիսկուրսում առնականության մասին եղած կարծրատիպերը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2014 թվականի առաջին կիսամյակի վերջում:

Թեմա 3. **«Ազգային ինքնության կառուցումը Հայաստանի և Վրաստանի հանրակրթական համակարգերում»** թեմայի (ղեկավար՝ Ս. Ս. Մկրտչյան) ուսումնասիրությունը իրականացվում է դասագրքերի ուսումնասիրության և դաշտային աշխատանքների միջոցով: Հաշվետու տարում իրականացվել են դաշտային նյութի և տեսական գրականության ամփոփում, վերլուծական տեքստերի շարադրում, ինչպես նաև մարդաբանության դոկտորի (PhD) աստիճանի համար հայցվող ատենախոսության պատրաստում և պաշտպանություն Թբիլիսիի պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետում:

Թեմա 4. **«Իսնաաշարիական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը որպես ժամանակակից Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային և քաղաքակրթական համակարգերի ուսումնասիրության աղբյուր»** թեմայի (ղեկավար՝ Տ. Ս. Մկրտչյան) ուսումնասիրությունը պլանավորվում է ավարտել 2015 թ-ին: Հաշվետու տարում կատարվել է նյութի հավաքագրում և համակարգում: Ուսումնասիրության ենթարկվող շիայական միջնադարյան սկզբնաղբյուր Նահջ ալ-Բալաղայի թեմայով պատրաստվում է ատենախոսության պաշտպանություն: Հաշվետու տարում պատրաստվել են ատենախոսության առաջին և երկրորդ գլուխները: Թեմայի վերաբերյալ պատրաստվել են զեկույցներ և ներկայացվել տեղական ու միջազգային գիտաժողովներում: Ինչպես նաև կատարվել է հետազոտություն ժամանակակից Իրանի իսլամական կառավարման և արտաքին հարաբերությունների ձևավորման վրա այդ կառավարման ազդեցությունը Իրան-Հարավային Կովկաս հարաբերությունների համատեքստում թեմայով:

Թեմա 5. **«Ադապտացիոն գործընթացները Մերձավոր Արևելքում»** (ղեկավար՝ Հ. Մ. Քոչարյան)**:** Հաշվի առնելով վերջին շրջանում դեպքերի զարգացումը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում՝ թեմայի ուսումնասիրության ժամկետները երկարաձգվել են ևս մեկ տարով, և պլանավորվում է ավարտել 2015 թ-ին: Հաշվետու տարում ուսումնասիրվել է մերձավորարևելյան պետությունների ներքաղաքական զարգացումները, հասարակական ու մշակութային գործընթացները մերձավորարևելյան առանձին պետություններում և Մերձավոր Արևելքում ընդհանրապես: Պատրաստվել են հրատարակման թեմային առնչվող մի քանի հոդվածներ: Ուսումնասիրվող խնդիրները ներկայացվել են տեղական և միջազգային գիտաժողովներում: Պարբերաբար լրատվամիջոցներով լուսաբանվել են մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնախնդիրները:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու տարում կենտրոնում կայացել են հետևյալ քննարկումները, զեկուցումները, կլոր սեղանները և սեմինարները.

- ««Երեք ծովերի» համակարգ» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Դ. Հովհաննիսյան (16.01.2014):
- ««Երեք ծովերի» համակարգի ենթակառուցվածքները» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Հ. Քոչարյան (28.01.2014):
- «Մերձավորարևելյան տարածաշրջան. Սիրիական հիմնախնդիր» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Հ. Քոչարյան (19.03.2014):
- «Հանրակրթության արդի խնդիրներ-1» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Ռ. Ծատուրյան (12.04.2014):
- «Հանրակրթության արդի խնդիրներ-2» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Ս. Մկրտչյան (28.04.2014):
- «Հանրակրթության արդի խնդիրներ-3» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցող՝ Ն. Մանասյան (05.05.2014):
- «Միխայիլ Բախտին» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն), զեկուցողներ՝ Գ. Տեր-Գաբրիելյան, Դ. Հովհաննիսյան (19.05.2014):
- «Women's religious leadership in cross-national contexts» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ անգլերեն), զեկուցող՝ Victor Agadjanian (15.06.2014):
- «From Russia with lust: Russia as an object of sex in Russian Studies of US» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ անգլերեն), զեկուցող՝ Alexei Lalo (20.06.2014):
- «Գիտական շարադրանքի սկզբունքները» սեմինարների շարք.
  Թեմա՝ «Գիտական տեքստի շարադրանքի սկզբունքները» (05.11.2013):
  Թեմա՝ «Գիտական տեքստի հղման կանոնները» (06.11.2013):

Թեմա՝ «Ինքնակենսագրականի (CV), ուղեկցող նամակի (cover/motivation letter) - հետազոտման առաջարկի (research proposal) շարադրման սկզբունքները» (07.11.2013):

«Քաղաքակրթությունից քաղաքականություն»
Լրատվական ռադիոյի և ԵՊՀ-ի և ՔՄՀԿ-ի համատեղ ծրագիր

1. 12 նոյեմբերի, 2013, «Քառակուսի քարտեզներ՝ արաբական աշխարհի ձևավորումը», հյուր՝ Հ. Քոչարյան
2. 26 նոյեմբերի, 2013, «Մուսուլման եղբայրներ», հյուր՝ Ս. Գրիգորյան
3. 11 դեկտեմբերի, 2013, «Մեր երեխաներն ունեն լավ հիշողություն, բայց վատ երևակայություն. կրթական համակարգի հետքերով», հյուր՝ Ս. Մկրտչյան

4. 27 հունվարի, 2014, «Ալ-Կաիդա», հյուր՝ Ս. Գրիգորյան
5. 31 հունվարի, 2014, «Ումմա կամ ինչպես են ապրում մուսուլմանները», հյուր՝ Հ. Քոչարյան
6. 18 փետրվարի, 2014, «Ինչպե՞ս կորցրեցինք լեզուները...», հյուրեր՝ Ս. Մկրտչյան, Ն. Մանասյան
7. 25 փետրվարի, 2014, «Շիայական իսլամ», հյուր՝ Տ. Մկրտչյան
8. 04 մարտի, 2014, «Ովքեր են ալևիները», հյուր՝ Տ. Մկրտչյան
9. 18 մարտի, 2014, «Կանանց իրավունքներ. դրանք իսլամում, այնուամենայնիվ, գոյություն ունեն», հյուր՝ Ա. Գևորգյան
10. 25 մարտի, 2014, «Բազմակնություն ու ժամանակավոր ամուսնություն», հյուր՝ Ա. Գևորգյան
11. 01 ապրիլի, 2014, «Հիջաբն իսլամում», հյուր՝ Ա. Գևորգյան
12. 15 ապրիլի, 2014, «Ֆեմինիզմը իսլամում», հյուր՝ Ա. Գևորգյան
13. 22 ապրիլի, 2014, «Իրանում կանանց շարժումների պատմությունից», հյուր՝ Ա. Գևորգյան
14. 06 ապրիլի, 2014, «Իրանի փահլավիական շրջանն ու կանայք», հյուր՝ Ա. Գևորգյան
15. 13 ապրիլի, 2014, «Կանանց դերը Իրանի իսլամական հեղափոխության մեջ», հյուր՝ Ա. Գևորգյան
16. 27 մայիսի, 2014, «Կարծրատիպեր Իրանի շուրջ», հյուր՝ Ա. Գևորգյան

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենագրու-թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցում-ների թեզիս
-	-	-	-	9	6

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Սահակյան Ն. Է., Տոնիկյան Ս.,* Կրակի ու արևի պաշտամունքը «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուի մեջ, «Արաբագիտական ուսումնասիրություններ», № 6, Երևան, 2013, էջ 142-153:
2. *Մկրտչյան Ս. Ս.,* Արվեստը և պարը որպես ազգային ինքնություն ձևավորող գործիք (Վրաստանի տարրական դպրոցի օրինակով 2010-2011 թթ), Հայկական ժողովրդական մշակույթ XVI: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 234-241:
3. *Մկրտչյան Ս. Ս.,* Ազգային ինքնություն դրսևորումներն ու կառուցումը Երևանի դպրոցների «Վերջին զանգի» ժամանակակից արարողություններում, Հաբիթուս 1, Մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 42-48:
4. *Hovhannisyan D.,* 100 days: Foreign Policy Dimentions, Caucasus Analytic Digest, No. 53-54, 2013, pp. 23-27 /www.css.ethz.ch/publications/pdfs/CAD-53-54.pdf/.
5. *Mkrtchyan S.,* State and Church in Armenian State Schools: from Atheistic Soviet Education to the Contemporary '*History of Armenian Church'* Course in Jödicke, Ansgar (ed.) Religious Education Politics, the State, and Society. Ergon-Verlag GmbH, 2013, pp. 149-165.

Զեկուցումների թեզիս

1. *Սահակյան Ն. Է.,* Ֆեթվան որպես տեղեկատվական-հոգեբանական պատերազմի գործիք (Սիրիական ճգնաժամի օրինակով), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Երիտասարդ արևելագետների ամենամյա XXXV հանրապետական գիտաժողով, 27 մարտի, 2014:

2. *Գևորգյան Ա. Ս.,* Գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը Հայաստանի կին քաղաքական գործիչների ելույթներում, «Հասարակություն, կանայք և առաջնորդություն» թեմայով միջազգային գիտաժողով, ԵՊՀ, Երևան, 10 հունիսի, 2014:
3. *Գևորգյան Ա. Ս.,* Իսլամական հիջաբն ըստ Մորթեզա Մոթահարիի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Երիտասարդ արևելագետների ամենամյա XXXV հանրապետական գիտաժողով, 27 մարտի, 2014:
4. *Գևորգյան Ա. Ս.,* Ֆեմինիստական դիսկուրսի ազդեցությունը Իրանին վերաբերող գենդերային հետազոտությունների վրա, «Իրանագիտության արդի հիմնախնդիրներ» գիտաժողով, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 16 ապրիլի, 2014:
5. *Մկրտչյան Տ. Ս.,* Նահջ ալ-Բալաղան որպես շիայական կրոնափիլիսոփայական մտքի ձևավորման աղբյուր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Երիտասարդ արևելագետների ամենամյա XXXV հանրապետական գիտաժողով, 27 մարտի, 2014:
6. *Մկրտչյան Տ. Ս.,* Իրանի իսլամական կառավարման համակարգի միֆոլոգեմները, «Իրանագիտության արդի հիմնախնդիրներ» գիտաժողով, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 16 ապրիլի, 2014:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Ղազինյան Արթուր Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
032700	Եվրոպագիտություն

Մասնագիտացումներ՝ Եվրոպական ուսումնասիրություններ
(մագիստրոսական ծրագրեր) Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ալեքսանյան Աշոտ Սեյրանի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մարտիրոսյան Վլադիմիր Էդուարդի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ալեքսանյան Արուսյակ Սեյմոնի, քաղ. գիտ. թեկնածու
4. Անափիոսյան Արևիկ Վարդանի
5. Գրիգորյան Տիգրան Ալեքսանդրի
6. Գևորգյան Քրիստինե Շավարշի
7. Կարապետյան Լիլիթ Սամվելի
8. Կարապետյան Քնարիկ Գագիկի
9. Միրզոյան Լիլիթ Լևոնի
10. Պետրոսյան Նաիրա Սամվելի
11. Սաֆարյան Հասմիկ Պավելի

Կրթական աստիճան, մասնագիտություն	***Ուսանողների թիվը՝65***			
	I կուրս		**II կուրս**	
	պպ	**վճ**	**պպ**	**վճ**
Մագիստրատուրա				
Եվրոպագիտություն	**21**	**2**	**33**	**9**

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Եվրոպագիտություն					
1-ին	23	-	-	4	100
2-րդ	42	1	-	6	98
Ընդամենը	**65**	**1**	**-**	**10**	98

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Եվրոպագիտություն					
1-ին	**7**	**-**	**-**	**-**	**100**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 57 (3), այդ թվում նախորդ տարիներից՝ 1*
	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)
Եվրոպագիտություն	**57 (3)**

Կենտրոնի հիմնական խնդիրները

1. «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
2. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» միջմասնագիտական տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
3. Գիտական և միջմասնագիտական հետազոտությունների նախաձեռնում և իրականացում ԵՄ, ԵՄ-Հայաստան, ԵՄ-Հարավային Կովկասի առանձին հիմնախնդիրների համագործակցության վերաբերյալ,
4. Ներպետական, տարածաշրջանային և կարևորագույն ոլորտներին վերաբերող միջմասնագիտական ծրագրերի հետազոտություն,
5. ԵՄ տեղեկատվական կենտրոն (EUi) Ռեսուրս կենտրոնի ընդլայնում և կատարելագործում,
6. Եվրոպական ճանաչված համալսարանների և կենտրոնների հետ համագործակցություն:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

1. Կենտրոնը, լինելով ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում մասնագիտացված կրթական և գիտահետազոտական ինստիտուտ, նպատակ ունի եվրոպական չափանիշներին համապատասխան

կրթական ծրագրերի իրագործման միջոցով խթանել ՀՀ-ԵՄ համագործակցությունը: Կենտրոնը, լինելով ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում մասնագիտացած կրթական և գիտահետազոտական ինստիտուտ, 2008 թ-ից սկսած իրականացնում է «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը: Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը շարունակում է կատարելագործել «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը, որը պատրաստում է ուսանողներ ԵՄ հաստատություններում, միջազգային կազմակերպություններում, պետական հաստատություններում և խոշոր ընկերություններում աշխատելու և փորձ ձեռք բերելու համար: Հաշվետու տարվա ընթացքում ևս ներդրվել են նոր առարկաներ՝ «Հանրային կառավարման ներածություն» և «Եվրոպական գործընթացների քաղաքական վերլուծություն»: Կապեր են հաստատվել եվրոպական ուսումնասիրություններով զբաղվող եվրոպական հեղինակավոր համալսարանների և կենտրոնների հետ, ինչպես նաև իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ առաջադեմ փորձի փոխանակման նպատակով:

2. 2011 թ-ից կենտրոնը Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ իրականացնում է Հայաստանում և Կովկասում նախադեպը չունեցող «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը: Այն իրականացվում է 4 գործընկեր համալսարանների կողմից (Երևանի պետական համալսարան, Կիևի Տարաս Շևչենկոյի ազգային համալսարան, Բելառուսի պետական համալսարան և Մոլդովայի քաղաքական և տնտեսագիտական եվրոպական ուսումնասիրությունների համալսարան): Ծրագիրն ուսանողներին համապարփակ գիտելիքներ է տրամադրում մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում: Այն նախատեսում է ուսանողների և դասախոսների փոխանակում, ուսուցողական այցեր ԵՄ ինստիտուտներ, վերապատրաստում ծրագրին մասնակից երկրներում: 2013 թ-ից ծրագիրը համագործակցում է Վենետիկի Եվրոպական միջհամալսարանական կենտրոնի հետ: Ծրագիրը ներգրավված է «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» մագիստրոսական ծրագրերի և դիպլոմների գլոբալ կամպուսի մեջ, որն ընդգրկում է աշխարհում գոյություն ունեցող բոլոր ծրագրերը: Այդ համագործակցության ծրագիրն իրականացնում է տարաբնույթ գործողություններ՝ գլոբալ կամպուս հետազոտություն, գլոբալ կամպուսի դասընթացներ, դասախոսների փոխայցելություններ, վերապատրաստումներ, մագիստրոսական ծրագրի շրջանավարտների տարեկան հանդիպումներ: 2013 թ-ի ընթացքում կենտրոնի փորձագետների կողմից ուսումնասիրվել և մշակվել է ծրագիր, աշխատանքային պլան երկամյա մագիստրոսական ծրագիրը մեկամյա դարձնելու ուղղությամբ: 2013 թ-ի հոկտեմբերից սկսած «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» մագիստրոսական ծրագիրը դարձել է մեկամյա ծրագիր (60 կրեդիտով):

3. Ծրագրի և կենտրոնի գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվել է համագործակցությունը Մեծ Բրիտանիայի Էսեքսի համալսարանի պատմության ֆակուլտետի և Մարդու իրավունքների կենտրոնի հետ: Համագործակցության շրջանակում իրականացվել է Մարդու իրավունքների տարեգրքի հրատարակումը, կիրառվել են կրկնակի գնահատումը և մագիստրոսական ծրագրերի դասախոսների վերապատրաստումը:

4. 2013-2014թթ. ընթացքում ԵՄ հեղինակավոր համալսարանների և հաստատությունների ներկայացուցիչները դասախոսություններ են կարդացել «Եվրոպագիտություն» մագիստրոսական ծրագրի ուսանողների համար:

2013 թ-ին Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում հանդիպում է կայացել Չեխիայի Հանրապետության Սենատի փոխնախագահ Միլուշե Հորսկայի և Սենատի Եվրոպական միության հարցերի հանձնաժողովի պատվիրակության հետ: Հանդիպմանը ներկա էին Վրաստանում Չեխիայի դեսպան Իվան Եսթրաբը, Հայաստանում Չեխիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Փիտր Միկիսկան, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝ Ստեփան Գրիգորյանը (Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար) և Բորիս Նավասարդյանը (Երևանի մամուլի ակումբի նախագահ): Հանդիպման ընթացքում հայկական և

չեխական կողմերը տեսակետներ են փոխանակել Հայաստանում տիրող իրավիճակի, հայ-չեխական հարաբերությունների և հետագա հնարավոր համագործակցության վերաբերյալ:

2013 թ-ին տեղի է ունեցել նաև «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում. Արևելյան գործընկերության տարածաշրջան 2011-2012թ.» տարեգրքի շնորհանդեսը:

Տարեգիրքը հրատարակվել է Եվրոպական միության աջակցությամբ: Գիրքը ներկայացնում է ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանի 6 երկրներում մարդու իրավունքների և ժողովրդավարացման իրավիճակի խորը վերլուծություն:

Գրքի հեղինակը Միացյալ Թագավորության Էսեքսի համալսարանի անկախ փորձագետ Բենջամին Ջեյմս Բարնարդն է, ով անկողմնակալ ներկայացրել է ներկա իրական իրավիճակը հետխորհրդային երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Մոլդովայում և Ուկրաինայում:

5. Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ընթացիկ գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հետազոտական բաղադրիչը, որի շրջանակում կենտրոնի փորձագետները փորձում են համալիր հետազոտության ենթարկել ՀՀ-ԵՄ և Հարավային Կովկաս-ԵՄ ձևաչափով ընթացող համագործակցության առանձին հիմնախնդիրները: Կենտրոնի փորձագետները հետազոտությունների իրականացման ընթացքում օգտագործում են միջառարկայական մեթոդը, ինչը հնարավորություն է տալիս առաջադրված խնդիրներն ուսումնասիրել առարկայական սահմաններից դուրս և ապահովել առավելագույն արդյունք: Միջազգային մակարդակում իրականացված հետազոտությունների արդյունավետությունն ընդգծելու համար մի շարք հետազոտություններ թարգմանվել են անգլերեն:

6. Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում գործում է ԵՄ ռեսուրս կենտրոնը, որն իր կազմում ունի ԵՄ իրավունքի, տնտեսագիտության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և պատմության ոլորտում ամենահարուստ գրադարան: Կենտրոնի տվյալների բազան պարբերաբար համալրվում է ԵՄ պաշտոնական տեղեկագրերով, ԵՄ ինստիտուտների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով, հետազոտություններով: 2012 թ-ից սկսած կենտրոնի դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռվել Ռեսուրս կենտրոնի շրջանակում օգտվել JSTOR էլեկտրոնային գրադարանից:

7. Կենտրոնն իր գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և իր շահառուներին տրամադրվող ծառայությունների կատարելագործման նպատակով արդյունավետ համագործակցություն և գործընկերություն է հաստատել մի շարք հեղինակավոր համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում Կովկասում տարածաշրջանային մագիստրոսական ծրագիր» (EIUC/YER/2014/8/1):	Ղազինյան Ա. Գ.

Թեմա 1. 2010 թ-ից Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի կողմից տրամադրված դրամաշնորհով հիմնադրվել է «Հայաստանում, Բելառուսում, Ուկրաինայում և Մոլդովայում մարդու իրավունքներ և ժողովրդավարացում տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը»: Այն Հայաստանում և տարածաշրջանում նախադեպ չունեցող տարածաշրջանային մագիստրոսական ծրագիր է, որն իրականացվում է չորս գործընկեր համալսարանների կողմից՝ Երևանի պետական համալսարան, Կիևի Տարաս Շևչենկոյի ազգային համալսարան, Բելառուսի պետական

համալսարան և Մոլդովայի քաղաքական և տնտեսագիտական եվրոպական ուսումնասիրությունների համալսարան:

Ծրագրի նպատակն է մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում մագիստրոսական կրթության միջոցով հասնել տարածաշրջանային ինտեգրման, խթանել ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, լավ կառավարումը և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և Մոլդովայում: Ծրագիրը մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում ուսանողներին տրամադրում է համապարփակ գիտելիքներ: Այն նախատեսում է ուսանողների և դասախոսների փոխանակում, ուսուցողական այցեր ԵՄ ինստիտուտներ, վերապատրաստում ծրագրին մասնակից երկրներում: 2013 թ-ի հոկտեմբերից ծրագրի տևողությունը մեկ տարի է:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Կենտրոնն իր գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և իր շահառուներին տրամադրվող ծառայությունների կատարելագործման նպատակով արդյունավետ համագործակցություն և գործընկերություն է հաստատել մի շարք հեղինակավոր համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ: 2011 թ-ից կենտրոնը շարունակում է համագործակցել Էսեքսի համալսարանի պատմության ֆակուլտետի և Մարդու իրավունքների կենտրոնի հետ: Համագործակցության շրջանակում իրականացվել է երկու մագիստրոսական ծրագրերի դասախոսների վերապատրաստում, մշակվել է ուսանողների ուղեցույց ձեռնարկը: Համագործակցության շրջանակում 2013 թ-ին անգլերեն լեզվով տպագրվել է «Մարդու իրավունքների տարեգիրքը», նաև վերամշակվել և կիրառվել են կրկնակի գնահատման և արտաքին փորձաքննության փաստաթղթերը:

Կենտրոնի գործունեության բաղկացուցիչ մասերից է հետազոտական աշխատանքների իրականացումը: 2013 թ-ին կայացել է նաև կենտրոնի կողմից հրատարակված «Հայաստան - ԵՄ տնտեսական հարաբերությունները. խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ երկկողմ առևտրային հարաբերությունների ազդեցությունը» գրքի շնորհանդեսը: Հետազոտությունը տպագրվել է հայերեն և անգլերեն: Հետազոտության մեջ ուսումնասիրվել են հասարակական և առևտրային բարեփոխումները, տնտեսական հարաբերությունների և Հայաստանի միջև յուրաքանչյուր ԵՄ երկրների շուրջ առավելությունների ԽՀԱԱՀ-ն:

Կենտրոնը հաշվետու ուստարում շարունակել է համագործակցությունը ՀՀ Կառավարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ սփյուռքի նախարարության հետ: ՀՀ սփյուռքի նախարարության հետ համագործակցության ընթացքում կենտրոնի փորձագետները իրականացնում են հետազոտություն, որը տպագրվելու է 2014 թ-ի դեկտեմբերին:

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենագրու-թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս	Հետազոտու-թյուն
-	-	-	-	-	-	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հետազոտություն

1. *Ալեքսանյան Ա. (խմբագիր),* Հարավային Կովկասի, ԵՎՐԱԶԷՍ և ԵՄ անդամ-պետությունների քաղաքական կայունության ինդեքսը, ներերկրային և միջերկրային վերլուծություն, «Տիգրան Մեծ» տպարան, Երևան, 2013, 335 էջ:
2. Human Rights and Democtarization Eastern Partnership Region, Best Theses, 2011-2013, «Tigran Mec», Yerevan, 2013, 378 p.

ԵԳԻՊՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *դոկտոր Թութունջյան դը Վարդավան Քրիստիան Անդրանիկի*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Առաքելյան Արմենուհի Ռուբենի, ավագ լաբորանտ
2. Զախարյան Աշխեն Սամվելի, լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Եգիպտագիտության հայկական կենտրոնը զբաղվում է Հին Եգիպտոսի քաղաքակրթության ուսումնասիրությամբ, նպատակն է ստեղծել եգիպտագիտության հայկական դպրոց և սեփական ներդրումն ունենալ այս գիտության զարգացման գործում:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Հին Եգիպտոսի բնաշխարհ և հնէաբուսաբանություն, հնագիտություն, հիերոգլիֆային տեքստագիտություն և լեզվաբանություն, արվեստ և արվեստի տեխնոլոգիաների ուսումնասիրություն:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են հին եգիպտերենի (հիերոգլիֆների) խորն ուսումնասիրությունը, մասնավորապես հին եգիպտերենում ամենայն հավանականությամբ առկա հնդեվրոպական շերտի վերհանումը: Պատրաստվում են հոդվածներ հին եգիպտերենի և հայերենի համապատասխան բառերի իմաստաբանական և հնչյունաբանական նմանությունների վերաբերյալ:

Կենտրոնում շարունակվել են հետազոտական աշխատանքները հին եգիպտերենի ձայնավորեցման (վոկալացում), ինչպես նաև Հին Եգիպտոսի բույսերի մնացորդների ժողովածուի 3-րդ հրատարակության ուղղությամբ: Արդեն ձայնավորվել է բանաստեղծական բնույթ ունեցող երեք տեքստ՝ կենտրոնի տնօրենի կողմից մշակված նոր մեթոդի համաձայն:

2013-2014 ուսումնական տարում կենտրոնում կազմվել և տպագրվել է Հին Եգիպտոսի լեզվի՝ ըստ կիրառության ոլորտների դասակարգված մատենացանկը:

Հաշվետու ուստարում մեծ քանակությամբ գիտական հրատարակություններ են ձեռք բերվել կենտրոնի գրադարանի համար:

Շարունակվել է Եգիպտագիտության հայկական կենտրոնի էլեկտրոնային գիտատեղեկատվական լրաթերթի թողարկումը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	2	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Tutundjian de Vartavan,* C., Thot, Bibliography on Ancient Egyptian and Related Subjects, SAIS, London, 2013, 230 p.

Հոդված

1. *Tutundjian de Vartavan,* C., Leather and skin as markers of early exchanges between Western Asia and Egypt? Journal of Ancient Egyptian Interconnections (Arizona University), vol. 6, no. 2, 2014, p. 59-61.
2. *Tutundjian de Vartavan,* C., The Indo-Asiatic origin of *gAS*, the Ancient Egyptian name for the wild sugar cane (Saccharum spontaneum L.), Journal of Ancient Egyptian Interconnections (Arizona University), vol. 6, no. 2, 2014, p. 62-64.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԼԵՔՍԵՅ ՄԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Պողոսյան Գեորգի Սամվելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Դանագուլյան Ալիտա Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Մարդոյան Լևոն Գրիշայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր
4. Հովսեփյան Աշոտ Արտավազդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Հովհաննիսյան Գոհար Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Աբրահամյան Խաչիկ Հունանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
7. Խաչատրյան Անահիտ Արթուրի, ավագ լաբորանտ
8. Բաղրամյան Նելլի Վիկտորի, ասպիրանտ
9. Գագինյան Սուսաննա Վարդանի, մագիստրոս
10. Կարայան Լիլիթ Կարոյի, մագիստրոս

Կենտրոնի հիմնական խնդիրները

1. Գիտական հետազոտությունների կատարում տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի, ինչպես նաև միջուկային և տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառներում:
2. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) հետ համատեղ միջազգային գիտական միջոցառումների՝ գիտաժողովների, թեմատիկ հանդիպումների, սեմինարների, գիտական դպրոցների կազմակերպում:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

1. Տեսական ֆիզիկայի բնագավառում՝ ինտեգրվող և սուպերինտեգրվող համակարգերի սիմետրիաների հետազոտություն:
2. Փորձարարական միջուկային ֆիզիկայի բնագավառում՝ միջուկային ռեակցիաների ուսումնասիրություն բարձր էներգիաներով մասնիկների և իոնների ազդեցությամբ:
3. Տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառում՝ ՄՀՄԻ-ի նուկլոտրոնի ներքին փնջերի վրա կատարած փորձարկումների արդյունքում ստացված չեզոք (նեյտրալ) մեզոնների ծնման փորձարարական տվյալների մշակում:
4. ՄՀՄԻ-ի հետ համատեղ «SYMPHYS» միջազգային գիտաժողովների շարքի և «SYMPHYS INTEGRABLE SYSTEMS» երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպում:
5. ՄՀՄԻ-ից և այլ միջազգային կենտրոններից հրավիրված, բարձր որակավորում ունեցող մասնագետների միջոցով ուսումնական պրոցեսի կատարելագործում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Փոփոխակների անջատում, քվանտային սինգուլյար պոտենցիալներ և երկու ու երեք չափանի Լոբաչևսկու և (անտի) դե-Սիտտերի տարածություններում Լիի հանրահաշվի կոնտրակցիաներ կոնստ (պետական ֆինանսավորում):	Պողոսյան Գ. Ս.

Թեմա 1. Աշխատանքի նպատակն է ինտեգրվող /սուպերինտեգրվող/ մոդելների արդեն հայտնի դասի ընդլայնումը, դրանց լրիվ դասակարգման, մյուս կողմից Լոբաչևսկու եռաչափ տարածությունում տարրական դաշտային կոնֆիգուրացիաների վրա հիմնված թեոր-խմբային և հանրահաշվային մեթոդներով դրանց նկարագրումը և ուսումնասիրումը, ինչպես նաև ոչ էվկլիդյան երկրաչափության կիրառմամբ ինտեգրվող /սուպերինտեգրվող/ դասական և քվանտային դինամիկ համակարգերի շրջանակի ընդլայնումն ու հետագայում հարթ տարածություններում ֆիզիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրների լուծման նկատմամբ վերջիններիս՝ որպես մոդել կիրառումը: Սուպերինտեգրվող համակարգերն ինտեգրվող համակարգերի կարևորագույն ենթադաս են, որոնք թույլատրում են շարժման դասական և քվանտային հավասարումների ինտեգրումը տարբեր այլընտրանքային եղանակներով:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Շարունակվել են Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի նուկլոտրոնի վրա 2011թ. մարտ ամսին սկսված փորձի շրջանակում 2.2 ԳէՎ/ նուկլոն էներգիայով օժտված դեյտրոնների փնջով ոսկու թիրախում ճառագայթման միջոցով առաջացած մնացորդային միջուկների հատկությունների ուսումնասիրությունը, Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի նուկլոտրոնի վրա 2012թ. սկսված 2.2 ԳէՎ/ նուկլոն դեյտրոնների փնջով ճառագայթված կապարի հարստացված թիրախներում առաջացած մնացորդային միջուկների հատկությունների հետազոտությունը բնութագրական գամմա սպեկտրների միջոցով:

Կատարվել է ՄՀՄԻ-ին պատկանող նուկլոտրոնի վրա ստացված նեյտրալ մեզոնների ծնման ռեակցիաների ուսումնասիրման գիտական փորձ, որի նպատակն էր միաժամանակ գրանցել հետհարվածի միջուկները և մեզոնների, R- ռեզոնանսի պակասորդ զանգվածը: Փորձը կատարվել է 1-5ԳէՎ/վ շրջակայքում ընկած իմպուլսով օժտված նեյտրոնների փնջի ազդեցությամբ: Փորձը թույլ կտա պարզելու դիտարկվող ռեզոնանսային կառուցվածքի բնույթը, մասնավորապես պարզելու դիտարկվող համակարգը (կառուցվածքը) միջուկային էֆեկտ է, թե իրական մասնիկի ազդանշան:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	4	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Depman A., Andrade E., Guimaraes V., Karapetyan G., Balabekyan A. R. et al.,* Proton induced fission on ^{241}Am, ^{238}U and ^{237}Np at intermediate energies, Physical Review C 88, 024608, 2013.
2. *Danagulyan A. S., Balabekyan A. R., Hovhannisyan G. H. et al.,* Investigation of isomeric ratio in reactions at high energy, Yad. Fiz. 76, 2013, p. 381-387.
3. *Karapetyan G., Balabekyan A. R., Demekhina N. A.,* Spallation of 197Au with 4.4-GeV deuterons, EPJ Web of Conferences 69, 00022, 2014, http://dx.doi.org/10.1051/epjconf/20136900022.
4. *Depman A., Guimaraes V., Karapetyan G., Balabekyan A. R. et al.,* Photon and proton induced fission on heavy nuclei at intermediate energies, EPJ Web of Conferences 69, 00017, 2014, http://dx.doi.org/10.1051/epjconf/20136900017.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Շեկյան Լեոնարդ Արամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի ունկնդիրների թիվը՝ ***37***

Կենտրոնում գործող ամբիոնների թիվը՝ ***1***

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Աթայան Կամո Իվանի, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ալեքսանյան Պավլիկ Գարսևանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Բատիկյան Սեդա Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հոռոփյան Ստեփան Սարգսի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Բաղումյան Սոֆիկ Լևոնի, մանկ. գիտ, թեկնածու, դասախոս
5. Բաբախանյան Մարինա Հրանտի, դասախոս
6. Հովհաննիսյան Արուսյակ Էդիկի, դասախոս
7. Պետրոսյան Լիլիթ Վահագնի, դասախոս
8. Պետրոսյան Սիմոն Սարգսի, դասախոս
9. Սահակյան Տատյանա Պյոտրի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Բաբախանյան Գոհար Հրանտի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում ամբիոնում հետազոտական աշխատանքներ են տարվել «Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնահարցերը բնագիտական առարկաների դասավանդման պրոցեսում» թեմայով, որը հրատապ է ինչպես աշխարհի, այնպես էլ մեր կրթական համակարգի համար: Խնդիր է դրված հնարավորինս էկոլոգացնել ուսումնական պլան մտած և ուսուցանվող բոլոր, հատկապես բնագիտական առարկաները: Մշակվել են ֆիզիկայի դպրոցական և ընդհանուր ֆիզիկայի բուհական դասընթացների էկոլոգացված ուսուցման հիմնական սկզբունքները, որոնք Կ. Աթայանի կողմից փորձարկվում են ինչպես տեղում, այնպես էլ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում և

Կրթության ազգային ինստիտուտում: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 3 գիտական հոդված:

Շարունակվել են ամբիոնում իրականացվող «Նորարարությունը և ինովացիաները ժամանակակից կրթական համակարգում» թեմայով հետազոտական աշխատանքները, որոնք միտված են ինովացիոն կրթությանը: Կրթական համակարգում իրականացվող բովանդակային բարեփոխումները ենթադրում են մասնավորապես բուհական համակարգում ուսուցման ձևերի ու մեթոդների կատարելագործում: Քննարկվում են նաև օտարերկրացիների՝ Հայաստանում ինովացիոն ուսուցման կազմակերպման խնդիրները: Մշակվել են գիտատեսական նյութեր, ուսումնասիրվել է նշված ուղղությամբ առկա միջազգային փորձը: Տպագրվել է երկու գիտական հոդված:

Առարկայական մեթոդիկաների կատարելագործման և հարստացման, ինչպես նաև կրթության ինֆորմատացման և արագացված ուսուցման բովանդակային մշակումների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները հրատապ են հատկապես օտարազգի ուսանողների համար: Նշված թեմայի շրջանակում տարվում են կոնկրետ աշխատանքներ՝ ուղղված առարկաների ուսուցման ինֆորմատացմանը: Ենթադրվում է նաև ստեղծել (համալսարանական այլ օղակների հետ) կրթական էլեկտրոնային (թվային) ռեսուրս կենտրոնում ուսուցանվող առարկաներից: Այն կունենա շարունակական բնույթ: Ընթացիկ ժամանակահատվածում նշված թեմայով տպագրվել է երկու գիտական հոդված:

Ամբիոնում հետազոտական աշխատանքներ են տարվում դասավանդվող առարկաների և հատկապես հայոց լեզվի արագացված ուսուցման կազմակերպման ուղղությամբ:

ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ համագործակցության շրջանակում 2014թ. ևս «Սփյուռք» ամառային դպրոցի ծրագրերով կազմակերպվել են «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման», «Հայոց լեզվի արագացված ուսուցման», «Երիտասարդ առաջնորդների», «Սփյուռքի լրագրողների» և «Ազգային երգի ու պարի» դասընթացներ: Ամառային դպրոցի կազմակերպման բովանդակային ողջ ծանրաբեռնվածությունը դրված էր ԵՊՀ հետևյալ ստորաբաժանումների վրա՝ Միջազգային կրթական կենտրոն, Ժուռնալիստիկայի, Սոցիոլոգիայի, Միջազգային հարաբերությունների և Հայ բանասիրության ֆակուլտետներ ու Մշակույթի կենտրոն: Ամառային դպրոցի բովանդակային աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրված էր Հանրակրթական առարկաների ամբիոնի վարիչ Կ. Աթայանի վրա: Ամառային դպրոցի պարապմունքները սկսվել են 2014թ. հուլիսի 7-ին, ավարտվել օգոստոսի 2-ին: Ուսումնական պարապմունքները կազմակերպվել են ԵՊՀ-ում: Դասընթացներում ընդգրկված էր 222 ունկնդիր: Ամառային դպրոցի ուսումնական ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 1000 ժամ:

Վերը նշված ուղղություններով ամառային դպրոցի պարապմունքներին հաջողությամբ մասնակցած 210 ունկնդիր արժանացել են համապատասխան վկայագրերի: Ամառային դպրոցի պարապմունքները վարել են ԵՊՀ և ՀՀ այլ բուհերի ավելի քան 50 փորձառու դասախոսներ: Ամբիոնի հայոց լեզվի դասախոսները դասավանդել են «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման», «Հայոց լեզվի արագացված ուսուցման» դասընթացներում:

2014թ. մայիսի 3-4-ին Միջազգային կրթական կենտրոնում տեղի է ունեցել ժամանակին մեր կողմից նախաձեռնված «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» թեմայով արդեն ավանդական դարձած 4-րդ համահայկական կրթական գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցել են շուրջ 150 դասախոսներ, ուսուցիչներ և կրթական գործի կազմակերպիչներ ՀՀ-ից, ԼՂՀ-ից և արտերկրից:

2014թ. հուլիսի 25-26-ին ԵՊՀ-ում տեղի է ունեցել «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» խորագրով երկրորդ միջազգային կրթական գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցել են արտերկրից ժամանած բազմաթիվ հայ ուսուցիչներ և կրթօջախների տնօրեններ ու համալսարանների դասախոսներ: Նշված գիտաժողովների կազմակերպմանը նպաստել է ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի կողմից հայտարարված մրցույթում մեր կողմից ներկայացված երկու նախագծերով համապատասխան դրամաշնորհներ շահելը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	3	6

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Աթայան Կ. Ի.,* Էկոլոգիական կրթության իրականացումը ֆիզիկայի ուսուցման համակարգում, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 310 էջ:

Հոդված

1. *Աթայան Կ. Ի.,* Բնագիտամաթեմատիկական կրթության էկոլոգացման հիմնախնդիրները, «Բնագետ», N 3, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2013, էջ 26-32:
2. *Աթայան Կ. Ի., Մայիլյան Ս.Ս., Մագնիսական շղթա: Նրա հաշվարկման մեթոդները,* «Բնագետ», N 1, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2014, էջ 85-91:
3. *Atayan K. I.*, Concerning an Approach of the Implementation of Environmental Education in the Physics Teaching System. Physics Education, India. Volume 29, No. 3 Article Number: 07, 2013, 7 pages.

Զեկուցումների թեզիս

1. *Աթայան Կ. Ի.,* Էկոլոգիական կրթության իրականացումը դպրոցական ֆիզիկայի ուսուցման գործընթացում, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 5-8:
2. *Աթայան Կ. Ի., Սաղյան Ս. Զ.,* Նոր ընտրովի դասընթաց «Ֆիզիկան, ավտոմեքենան և անվտանգ երթևեկությունը», «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 160-161:
3. *Աթայան Կ. Ի., Ջիվանշիրյան Բ. Գ.,* Ֆիզիկաէկոլոգիական նախագծերի մեթոդի կիրառումը ավագ դպրոցի բնագիտական հոսքում, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 211-212:
4. *Բատիկյան Ս. Հ.,* Ուսուցման արդյունավետության ապահովումը արդիական մեթոդների կիրառման միջոցով, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 138-139:
5. *Շեկյան Լ. Ա.,* Թվերի թվագրության մասին, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 91-93:
6. *Շեկյան Լ. Ա., Գրիգորյան Հ. Վ.,* Մաթեմատիկայի դերը բնագիտության ուսուցման գործընթացում, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական IV կրթական գիտաժողովի նյութեր, «Զանգակ-97» հրատ., Երևան, 3-4 մայիսի, 2014, էջ 93-94:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Գևորգյան Դավիթ Էմիլի, խմբավար, հոգեբան-խորհրդատու*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Գարգրցյան Լիլիթ Ալբերտի, հոգեբ. գիտ. թեկնածու, խմբավար
2. Խանամիրյան Իրինա Ռյուրիկի, հոգեբ. գիտ. թեկնածու, խմբավար, հոգեբան խորհրդատու
3. Սարգսյան Սյուզի Ֆելիքսի, հոգեբ. գիտ. թեկնածու, խմբավար
4. Սիմոնյան Լիլիթ Դիմիտրիի, պատմ. գիտ. թեկնածու, խմբավար
5. Կարախանյան Արմեն Հակոբի, խմբավար
6. Հարությունյան Հասմիկ Արամի, խմբավար, հոգեբան-խորհրդատու
7. Ղազարյան Իզաբելլա Արտավազդի, հոգեբ. գիտ. թեկնածու, խմբավար, հոգեբան-խորհրդատու
8. Սմբատյան Մերի Բագրատի, խմբավար, հոգեբան-խորհրդատու
9. Համբարձումյան Մարիա Էդուարդի, հոգեբան-խորհրդատու
10. Բաղդասարյան Աննա Լևոնի, լաբորանտ
11. Գևորգյան Լուսինե Հայկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված աշխատանքների ամփոփում

1. *Ընդհանուր առմամբ կենտրոնի **խմբային ծառայություններից** օգտվել են 281 հոգի (35 խումբ), որոնցից 186-ը՝ ԵՊՀ ուսանողներ: Ընդհանուր ժամաքանակն է 1473 ժամ:*

1.1 Ուսումնական թրեյնինգներ

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնակիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը	Ընդհանուր ժամաքա-նակ (60ր.)
1	Կոգնիտիվ-վարքաբանական հոգեթերապիա	4	44	33	264
2	Արքետիպային վերլուծություն	2	18	10	96
3	Արտ-թերապիա	4	37	23	192
4	Հեքիաթ-թերապիա	3	30	19	192
5	Նեյրոլեզվաբանական ծրագրավորում	3	24	12	120
6	Մանկական հոգեթերապիա	1	7	5	64

7	Հոգեբանական խորհրդատվության հմտություններ և տեխնիկաներ	3	22	18	108
8	Խմբավարի հմտությունների զարգացում	3	19	16	128
9	Էթնոհոգեբանության դասընթացներ	1	10	4	26
10	Հոգեբանական հետազոտության կազմակերպման հմտություններ	2	17	17	54
11	Կլինիկական հոգեբանների աշխատանքի կազմակերպում	1	6	2	24
12	Կրթության հոգեբանի մասնագիտական հմտությունների զարգացում	2	12	9	32
ԸՆԴԱՄԵՆԸ		**29**	**246**	**168**	**1300**

1.2 Զարգացնող, անձնային աճի թրեյնինգներ

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնակիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը	Ընդհանուր ժամաքանակ (60ր.)
1	Միջանձնային թերապիա	1	5	3	30
2	Խմբային կոգնիտիվ թերապիա (հոգեթերապևտիկ խումբ)	2	14	10	72
ԸՆԴԱՄԵՆԸ		**3**	**19**	**13**	**102**

1.3 Սուպերվիզիոն խմբեր

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնակիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը	Ընդհանուր ժամաքանակ (60ր.)
1	Մանկական հոգեթերապևտների խումբ	2	10	2	31
2	Մեծահասակների հետ աշխատող հոգեթերապևտների խումբ	1	6	3	40
ԸՆԴԱՄԵՆԸ		**3**	**16**	**5**	**71**

2. *Ընդհանուր առմամբ կենտրոնում իրականացվել են 1382* ***անհատական խորհրդատվություններ,*** *որոնցից.*

#	Այցելուներ	Հանդիպումների քանակը
1	ԵՊՀ ուսանողներ	352
2	Այլ բուհերի ուսանողներ	125
3	Երեխաներ և դեռահասներ	161
4	Այլ այցելուներ	712
5	Զույգեր	32
ԸՆԴԱՄԵՆԸ		**1382**

3. ***Համագործակցություն***

- Կենտրոնը «Ինսայթ» հասարակական կազմակերպության հետ համատեղ հոգեբանությամբ հետաքրքրվող երիտասարդների համար իրականացնում է *«Հավես հոգեբանություն» ուսանողական նախաձեռնությունը,* որի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են «Գեշտալտ հոգեբանություն» 1 ուսուցողական խումբ, սեմինար-քննարկում՝ «Նեյրոլեզվաբանական ծրագրավորում. Սուբմոդալային տեխնիկաների ներկայացում» թեմայով, բաց դաս՝ «Պոզիտիվ հոգեբանություն» խորագրով, ինչպես նաև «Վիքիմեդիա Հայաստան» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ ուսանողները «Վիքիպեդիա» ինտերնետային հանրագիտարանում հոգեբանության ոլորտի վերաբերյալ հոդվածներ ավելացնելու և խմբագրելու հնարավորություն ստացան:
- Կենտրոնը կազմակերպել է *«Հոգեուռուցքաբանություն. ուռուցքաբանության և հոգեբանության հատման կետում»* կլոր սեղան-քննարկում, որը նվիրված էր քաղցկեղի միջազգային օրվան:
- Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում անցկացվել է *«Ուռուցքաբանական հիվանդների հետ աշխատանքի հոգեհուզական խնդիրները և դրանց հաղթահարումը»* խորագրով սեմինար, որը նախատեսված էր միջին և կրտսեր բուժանձնակազմերի համար:
- Կենտրոնում իրականացվել է *«Աուտիզմի կոգնիտիվ, զգայական և միջսուբյեկտիվ առանձնահատկությունները: Կոգնիտիվ և հոգեդինամիկ առանցքների համասերումը»* թեմայով սեմինար «Ցավեր առանց սահմանների» ֆրանսիական կազմակերպության և «ՆՌԵՆԻ» ՀԿ-ի հետ համատեղ: Սեմինարը վարել է աուտիզմի ոլորտում մասնագիտացած լոգոպեդ, Պիեռ և Մարի Կյուրիի համալսարանի /Փարիզ/ դասախոս Իզաբել Տանե-Մորին:
- Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի հետ համագործակցության արդյունքում կենտրոնում կազմակերպվել է նաև *«Աուտիզմով երեխաների ինտեգրումը հանրակրթական դասարաններ»* թեմայով սեմինար-քննարկում: Սեմինարը վարել է Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի հիմնադիր, Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) բժշկության ֆակուլտետի կլինիկական հոգեբանության դոկտոր, պրոֆեսոր Այրա Պաուլ Հեյլվեյլը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	14	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Գարգրցյան Լ. Ա.,* Անձի սուբյեկտիվ տարիքի կառուցվածքն ու առանձնահատկությունները հասունության փուլում, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 54-56:
2. *Գևորգյան Դ. Է., Սարգսյան Մ. Ս.,* Ես-կոնցեպցիայի յուրահատկությունը տարբեր նևրոտիկ խանգարումների ներքո, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 69-72
3. *Խանամիրյան Ի. Ռ., Աբրահամյան Տ. Ա.,* Վաղ դեռահասության տարիքում օժտված երեխաների հարմարման առանձնահատկությունները կրթական համակարգում, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 7-9:
4. *Խանամիրյան Ի. Ռ.,* Ամուսնալուծությունը և երեխայի ապրումների դինամիկան, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 83-85:
5. *Խանամիրյան Ի. Ռ., Մաջարյան Ա.,* Սիբլինգների միջև հարաբերությունների ուսումնասիրություն, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 140-142:
6. *Ղազարյան Ի. Ա.,* Առցանց խորհրդատվությունը՝ որպես գործնական հոգեբանի գործունեության զարգացման հնարավորություն, «Կարիերայի ուղղորդման հիմնախնդիրներն ու զարգացման միտումները» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, «Զանգակ» հրատ., Երևան, 2014, էջ 107-112: /Կրկնվում է սոցիալական հոգեբանության ամբիոնի հետ/
7. *Ղազարյան Ի. Ա.,* Քաղաքականության հոգեբանամշակութային հիմքերը, «Յունգյան ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, էջ 86-92.
8. *Սարգսյան Ս. Ֆ.,* Սերունդների տրանսգենեերացիոն կապերի ֆենոմենը, «Բանբեր Երևանի համալսարանի», N 1 (142), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 55-60:
9. *Սարգսյան Ս. Ֆ.,* Մշակութային անգիտակցականը որպես գեղարվեստական մտածողության ակունք, «Յունգյան ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, էջ 68-76.
10. *Սիմոնյան Լ. Դ.,* Սուտը և արժեքային շրջվածությունը հայոց ավանդական կենցաղում, Միջազգային գիտաժողով «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն», Զեկուցումների դրույթներ, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2013, էջ 253-257:
11. *Սիմոնյան Լ. Դ.,* Ս. Գրիգոր Նարեկացու ժողովրդական պաշտամունքը, «Հայ աստվածաբան», գ. Ե, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 178-198:
12. *Гаргрцян Л. А.,* Феноменологическое исследование субъективного возраста личности в период зрелости, Психология и педагогика: методика и проблемы практического применения: сборник материалов XXXIII Международной научно-практической конференции: в 2-х частях. Часть 1, Издательство ЦРНС, Новосибирск, 2013, с. 34-39.
13. *Симонян Л. Д.,* Религия и учение, восприятие религии и религиозности у армян, Свеча-2013, т. 23, Владимир, с. 195-203.
14. *Симонян Л. Д.*, Безымянные языческие боги в армянских этнографических материалах, Свеча-2013, т. 25, Владимир, с. 167-186.

ԿՈՍՄՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ-ԿԵՆՏՐՈՆ

Խմբի ղեկավար՝ *Գուրզադյան Վահագն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Խումբ-կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Եգորյան Գեղամ Մերուժանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
2. Խաչատրյան Հարություն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
3. Ղահրամանյան Տիգրան Ռազմիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
4. Միրզոյան Սերգեյ Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
5. Պողոսյան Էմիլ Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
6. Սարգսյան Սեդա Նորայրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու

Խումբ-կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝ տիեզերական մնացորդային ճառագայթում, տիեզերքում նյութի մեծ տարածքային բաշխում, գրավիտացիոն համակարգերի դինամիկա:

Խումբ-կենտրոնի գործունեության ուղղությունները

Խմբի գործունեության ուղղություններն են՝ աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի դինամիկական խնդիրների հետազոտություն, քառսային երևույթներ, բնութագրիչներ, մոդելավորում, դիտողական տվյալների մշակում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ խմբում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Եվրոպական «PLANCK» արբանյակի միջոցով կատարվել է երկու հետազոտություն: Առաջինը՝ կատարված իտալացի, շվեյցարացի գործընկերների հետ համատեղ, նվիրված է եղել գալակտիկաների հալոներին՝ դժվարորեն գրանցվող գոյակցություններին: Առաջին անգամ գրանցվել է գալակտիկայի (M31) հալո միկրոալիքներում: Այս աշխատանքը հայտնվել է եվրոպական «Astronomy & Astrophysics» ամսագրի ընտրովի (Highlights) հոդվածների թվում: Մյուս աշխատանքում՝ նույնպես տպագրված «Astronomy & Astrophysics»-ում, ցույց է տրվել տիեզերական մնացորդային ճառագայթման քարտեզներում նախկինում հայտնաբերված Cold Spot կոչվող տիրույթի «խոռոչային» (void) բնույթը՝ նյութի միջին ցածր խտությամբ: Այս արդյունքը, ըստ կոսմոլոգիական կայքերի քննարկումների, նոր խնդիրներ է դնում, քանի որ դա նշանակում է Տիեզերքում առ այսօր հայտնի առավել խոշոր գոյակցության գրանցումը: Այս արդյունքը շատ չանցած հաստատվել է հեղինակների այլ խմբի կողմից (Szapudi et al, 1405.1566):

Շարունակվել է «LARES» արբանյակի միջոցով Լենզե-Թիրինգի երևույթի՝ Հարաբերականության ընդհանուր տեսության ստուգմանը վերաբերող տվյալների հետազոտությունը միջազգային համագործակցության շրջանակում, ստացվել են սահմանափակումներ առանձին ազդանշանների ներդրումների համար:

Վ. Գուրզադյանը «Դրական լամբդան, երկրորդ օրենքը և դիտումները» 1 ժամանոց զեկուցումով հանդես է եկել «The Mathematics of CCC: Mathematical Physics with Positive Lambda» գիտաժողովում (Clay Mathematics Institute, Mathematical Institute and University of Oxford, Oxford, 2013) (2014 թ-ի գարնանը Ռուսաստանի «Культура» հեռուստաալիքը մի քանի անգամ հեռարձակել է տեսաֆիլմ՝ նվիրված Գուրզադյանի և Սըր Ռոջեր Պենրոուզի աշխատանքներին:) Գուրզադյանի «Մութ Տիեզերքի առեղծվածը» հանրամատչելի դասախոսությունը հաղորդվել է Հ1 հեռուստաալիքի «Հանրալսարան» ծրագրով:

Վ. Գուրզադյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն (Սեդա Սարգսյան, «Հարաբերականության ընդհանուր տեսության և իր ընդհանրացումների ստուգումը արբանյակային տվյալներով», ԵրՖԻ, նոյեմբեր, 2013):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	7	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ciufolini I., Paolozzi A., Koenig R., Pavlis E., Ries J., Matzner R., Gurzadyan V., Penrose R., Sindoni G., Paris C.,* Fundamental Physics and General Relativity with the LARES and LAGEOS satellites, Nucl.Phys. B, 243, 180, 2013.
2. *Gurzadyan V. G., Sargsyan S., Yegorian G.,* On the time arrows, and randomness in cosmological signals, Eur. Phys.J. Web Conf. 58, 02005, 2013.
3. *Calchi Novati S., Mirzoyan S., Jetzer Ph., Scarpetta G.,* Microlensing towards the SMC: a new analysis of OGLE and EROS results, Mon. Not. Roy. Astr. Soc. 435, 1582, 2013.
4. *Ciufolini I., Paolozzi A., Gurzadyan V., Pavlis E. C., König R., Ries J., Matzner R., Penrose R., Sindoni G. and Paris C.,* Dragging of inertial frames, fundamental physics, and satellite laser ranging, in: Frontiers in Relativistic Celestial Mechanics, Walter de Gruyter GmbH Publ., Berlin, 2014, p. 158.
5. *De Paolis F., Gurzadyan V. G., Nucita A. A., Ingrosso G., Kashin A. L., Khachatryan H. G., Mirzoyan S., Poghosian E., Jetzer Ph., Qadir A., Vetrugno D.,* Planck's confirmation of the M31 disk and halo rotation, Astr & Astrophys. 564, L3, 2014.
6. *Sargsyan S., Yegorian G., Mirzoyan S.,* On the perturbations on satellites probing General Relativity, Phys. Scripta, 89, 07500, 2014.
7. *Gurzadyan V. G., Kashin A. L., Khachatryan H., Poghosian E., Sargsyan S., Yegorian G.,* To the Center of Cold Spot with Planck, Astr & Astrophys. 566, A135, 2014.

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Ներսեսյան Արուսյակ Սերգեյի*
Մեթոդիստ՝ *Երզինկյան Աննա Վիդոկի*

Ռուսական կենտրոնը բացվել է 2008թ. փետրվարի 7-ին «Ռուսկի միր» հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի միջև 2006թ. հունվարի 6-ին կնքված պայմանագրի հիման վրա:

Կենտրոնը ստեղծվել է պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ցանկացողների ռուսերեն լեզվի ուսուցմանն օժանդակելու, ռուս գրականության դասական և ժամանակակից ստեղծագործություններին, ինչպես նաև Ռուսաստանի մշակույթին, պատմությանը, արվեստին և կյանքին ծանոթանալու, հայ-ռուսական մշակութային և գիտական կապերը ընդլայնելու նպատակով:

Կենտրոնն ունի ընթերցասրահ, համակարգչային սենյակ և տեսանյութերի դիտման և քննարկումների համար նախատեսված սենյակ՝ ապահովված համապատասխան տեխնիկական միջոցներով:

Կենտրոնը համալրված է հանրագիտարաններով, բառարաններով, հանրամատչելի և մասնագիտական գրականությամբ, ունի հարուստ տեսա- և աուդիոֆոնդ, ինչպես նաև ուսումնական ծրագրեր ռուսաց լեզվի ուսուցման և կատարելագործման համար:

Կենտրոնը հագեցած է նաև տեղեկատվական ուսուցողական համակարգով, որը մեծ ծավալով ուսումնամեթոդական և գիտահանրամատչելի նյութերից ինտերակտիվ եղանակով օգտվելու հնարավորություն է տալիս: Կենտրոնում կարելի է ծանոթանալ Ռուսաստանի ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակներին և օգտվել ռուսական տեղեկատվական կայքերից:

Ռուսական կենտրոնը այցելուներին ցուցաբերում է համապատասխան օգնություն և օժանդակում ռուսաց լեզվի ուսուցման, ուսումնական գրականության և ուսուցողական ծրագրերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ինքնուրույն աշխատանքի հմտություններ ձեռք բերելու գործում:

Ռուսական կենտրոնը «Ռուսկի միր» հիմնադրամի կողմից արժանացել է 2 պատվոգրերի և 100-ից ավելի ռուսական կենտրոնների շարքում ճանաչվել է լավագույն ինն կենտրոններից մեկը:

Հաշվետու տարում Ռուսական կենտրոնը կազմակերպել և անցկացրել է հետևյալ միջոցառումները.

1. Ակցիա «Առաջին կուրսեցիները Ռուսական կենտրոնում», որի շրջանակում ուսանողները ծանոթացել են կենտրոնի գործունեությանը և դիտել տեսաֆիլմ հիմնադրամի մասին:
2. Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի մասին ֆիլմերի դիտում և քննարկում ուսանողների ու դպրոցականների համար:
3. Ռուս դասականների գրականության հիման վրա նկարահանված ֆիլմերի դիտում ուսանողների և դպրոցականների համար:
4. Գիտահանրամատչելի ֆիլմերի դիտում և քննարկում:
5. Կլոր սեղաններ՝
   ա/ «Հայաստան-Չինաստան՝ քաղաքակրթությունների երկխոսություն» (Միջազգային հարաբերությունների և Ռուս բանասիրության ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ),
   բ/ «Հայկական թագավորական տոհմեր» (Պատմության ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ),

գ/ «Տարբեր ազգերի մշակույթը» (Մշակութաբանության բաժնի ուսանողների մասնակցությամբ),

դ/ «Ռուսական պոեզիան հայկական թարգմանություններում» (Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ):

6. Միջոցառումներ՝ նվիրված ռուսական տոներին՝

ա/ «Մասլենիցա»,

բ/ «Ռուսաց լեզվի միջազգային օր»՝ ըստ ՄԱԿ-ի որոշման,

գ/ «Բուլղարիայի անկախության օր»:

7. Ակցիա՝ նվիրված Մեծ հայրենական պատերազմին՝ ֆիլմերի դիտում, տոնական միջոցառում (Մաթեմատիկայի և մեխանիկայի ու Քիմիայի ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ):

8. Գրական երեկոներ՝ նվիրված ռուսական արվեստի հետևյալ ներկայացուցիչներին՝

ա/ Միխայիլ Լերմոնտովին,

բ/ Մարինա Ցվետաևային,

գ/ Ալեքսանդր Պուշկինին,

դ/ Վլադիմիր Վիսոցկուն:

9. «Հեքիաթների աշխարհում» միջոցառումների շարք դպրոցականների համար:

10. Ռուս բանասիրության ֆակուլտետի հետ համատեղ համալսարանական օլիմպիադա:

11. Ռուսաց լեզվի ամառային դասընթացներ երեխաների համար:

2013-2014 ուսումնական տարում Ռուսական կենտրոնի նյութերից օգտվել են ավելի քան 9000 այցելուներ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ *Շահնազարյան Գոհար Նելսոնի, սոց. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մանուկյան Անի Գառնիկի, մանկ. գիտ. թեկնածու
2. Նավոյան Սինարա Գառնիկի, սոցիոլոգիայի մագիստրոս
3. Հովհաննիսյան Սիրան Հրաչի, սոցիալական աշխատանքի մագիստրոս

Կենտրոնի հիմնական խնդիրները

- Բարձրացնել հայ հասարակությունում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և ազդեցություն ունենալ գենդերային հարցերին վերաբերող քաղաքականության վրա խորհրդատվական, հետազոտական, իրավունքների և շահերի պաշտպանության ու հանրային գործունեությունների շնորհիվ:
- Նոր ընդլայնված և համակարգված ուսումնական ծրագրի միջոցով ուսանողներին ապահովել կանանց և գենդերային ուսումնասիրությունների վերաբերյալ կատարելագործված թրեյնինգներով:
- Համագործակցել ԵՊՀ կարիերայի և շրջանավարտների կենտրոնի հետ՝ սեմինարների և դասընթացների միջոցով նպաստելով կանանց կրթական կապիտալի իրացմանը կարիերայում, ինչպես նաև մասնագիտական ու քաղաքական առաջնորդության դաշտում:
- Զարգացնել կայուն հանրային ռազմավարություն, որը Երևանում և նրա սահմաններից դուրս կապ կստեղծի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի ու կանանց ՀԿ-ների, պետական և միջազգային կազմակերպությունների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:
- Մասնավոր և պետական սեկտորում մասնագիտական առաջխաղացում փնտրող հայ կանանց համար զարգացնել մասնագիտական ցանց և վերապատրաստվելու այլ հնարավորություններ, ինչպես նաև կազմակերպել գիտաժողովներ և քննարկումներ:
- Որպես հետազոտական կենտրոն՝ ծառայել գենդերային հավասարության ու կանանց առաջնորդության հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների ու պետական քաղաքականության առաջխաղացմանը:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Հետազոտություններ: Կենտրոնի շրջանակում հայտարարված դրամաշնորհային ծրագրի ընթացքում արդեն 25 հետազոտական աշխատանքներ են իրականացվում, որոնք արծարծում են գենդերային հիմնախնդիրների մի շարք արտահայտումներ Հայաստանում: Բացի դրանից՝ կենտրոնը իրականացնում է առանձին հետազոտություններ, որոնք վերաբերում են Հայաստանում կանանց և տղամարդկանց գենդերային դիրքորոշումներին և դերերի մասին պատկերացումներին:

Գիտաժողովներ: Գործունեության մեկուկես տարվա ընթացքում կենտրոնի կողմից իրականացվել է 2 գիտաժողով՝ նվիրված Հայաստանում և աշխարհում գենդերային հիմնախնդիրների բարձրաձայնմանը: Դրանց իրականացումը կրում է շարունակական բնույթ:

Մենթորային ծրագիր: Մենթորային ծրագիրն իր էությամբ նորարար մոտեցում է ԵՊՀ ուսանողների համար: Այսօր մի շարք մասնագիտական դիտարկումները ակնհայտ են դարձնում այն փաստը, որ ուսանողուհիները համալսարանական տարիներին ունենում են բարձր առաջադիմություն, հմտորեն դրսևորում են իրենց մասնագիտական պրակտիկայի շրջանակներում, պատրաստակամ են աշխատանքի կատարողականության տեսանկյունից, ինչպես նաև ունեն բարձր աշխատանքային արդյունավետություն, սակայն աշխատաշուկայում չեն կարողանում լիարժեք դրսևորել իրենց, զբաղեցնել բարձր պաշտոններ և ունենալ մասնագիտական և աշխատանքային առաջխաղացումներ: Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի նպատակներից մեկն է, բացի ակադեմիական և պրակտիկ նշանակության հետազոտությունների իրականացումից, վեր հանել այն գործոնները, որոնք երիտասարդ կանանց և աղջիկների համար խոչընդոտ են այն առումով, որ կարիերայի կառուցման ճանապարհը շարունակեն հենց մենթորային ծրագրի կազմակերպման միջոցով: Այդ իսկ պատճառով հատկապես մենթորային ծրագրի շրջանակում մեր բանախոսների շարքում են այնպիսի կանայք, ովքեր կարող են դրական դերային մոդել հանդիսանալ երիտասարդ ուսանողուհիների համար իրենց կյանքում և կարիերայում հաջողությունների հասնելու համատեքստում:

Կրթական ծրագրեր և վերապատրաստումներ: 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ 6 դասախոսներ մասնակցել են Արիզոնայի պետական համալսարանում կենտրոնի կողմից կազմակերպված 4 ամիս տևողությամբ՝ աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում, վերապատրաստման ծրագրին: Բացի դրանից՝ կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվում են տարատեսակ վերապատրաստման ծրագրեր/թրեյնինգներ հասարակության լայն զանգվածների համար:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված աշխատանքների ամփոփում

Գիտական ու հետազոտական ծրագրեր: Հաշվետու ուստարում կազմակերպվել է 2 միջազգային գիտաժողով: 2013 թվականի հոկտեմբերի 7-8-ին կայացած գիտաժողովը կրում էր «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստերում» խորագիրը: Գիտաժողովին մասնակցել են բանախոսներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից՝ ԱՄՆ, Չեխիա, ՌԴ: 2014 թվականի միջազգային գիտաժողովի թեման էր՝ «Կանայք, առաջնորդությունը և հասարակությունը»: Երկու գիտաժողովներում ներկայացված նյութերը պատրաստվել են տպագրության:

2013-2014թթ. կենտրոնը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ իրականացնում է *«Փոքր դրամաշնորհային»* ծրագիրը, որի արդյունքում 25 հետազոտողներ ՀՀ-ում գենդերային տարբեր հիմնահարցերի շուրջ հետազոտություններ իրականացնելու հնարավորություն են ստացել:

Կրթական ծրագրեր: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Արիզոնայի պետական համալսարանի «Մելիքյան» կենտրոնի ու Սոցիալական փոխակերպումների ֆակուլտետի հետ համատեղ մեկ կիսամյակ ժամանակահատվածով իրականացվել է ԵՊՀ 6 դասախոսների վերապատրաստման ծրագիրը Արիզոնայի պետական համալսարանում: Վերապատրաստման ընթացքում ԵՊՀ դասախոսները համագործակցել են Արիզոնայի պետական համալսարանի իրենց կոլեգաների հետ, որպեսզի երկուական առարկայական ծրագիր մշակեն ԵՊՀ-ում 2015 թվականին բացվելիք գենդերային հետազոտությունների մագիստրոսական ծրագրի համար:

Մենթորային ծրագիր: Կենտրոնում իրականացվում է մենթորային ծրագիր, որի շրջանակում ԵՊՀ-ից 25 ուսանողներ կանոնավոր կերպով հանդիպում են իրենց ոլորտում կայացած կին քաղաքական գործիչների, գործարարների, միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց փորձով ու խորհրդատվությամբ փորձում են աջակցել ուսանողներին, որպեսզի նրանք մրցունակ լինեն աշխատաշուկայում: Մենթորային ծրագրի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ու զարգացնել ապագա համագործակցություն տեղական ու միջազգային կառույցների հետ:

Վերապատրաստման դասընթացներ: Կենտրոնն ակտիվորեն համագործակցում է ԵՊՀ կարիերայի և շրջանավարտների կենտրոնի հետ՝ համատեղ աշխատաժողովներ ու դասընթացներ կազմակերպելով աղջիկ ուսանողների կարիերայի զարգացման նպատակով, որպեսզի նրանք աշխատաշուկա մուտք գործեն՝ գիտելիքահեն հմտություններով զինված: Դասընթացների նպատակն է կանանց օգնել, որպեսզի կրթական կապիտալն իրացնեն կարիերայում ու մասնագիտական-քաղաքական առաջնորդության դաշտում:

Կենտրոնը նաև իրականացրել է բազմաթիվ հանդիպում-քննարկումներ, աշխատաժողովներ ու թրեյնինգներ գենդերային հիմնահարցերի վերհանման ու բարձրաձայնման նպատակով: Միջոցառումներին մասնակցել են կանանց ՀԿ-ներ, պետական ու միջազգային կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ Երևանից ու դրա սահմաններից դուրս:

Կենտրոնի կողմից իրականացված հրապարակումներ

1. *Գևորգյան Ա. Ռ.,* «Գենդերային կարծրատիպերը» հայաստանյան համատեքստում, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/4
2. *Կոջոյան Ա. Ս.,* Գենդեր. պատմագիտական ակնարկ, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/4
3. *Կոջոյան Ա. Ս.,* Մեծ աղմուկ ոչնչից, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/4
4. *Հովհաննիսյան Ս. Հ.,* Ֆեմինիստական տեսություններ. լիբերալ ֆեմինիզմ, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/3
5. *Մանուկյան Ա. Գ.,* Գենդերային իրավահավասարության պայքարի պատմական առանցքը, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/4
6. *Շաքարյան Լ. Վ.,* Հաղորդակցային գործընթացի գենդերային ասպեկտները, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/2
7. *Շահնազարյան Գ. Ն.,* Գենդերային դիսկուրսը և դրա փոխակերպումը հայ հասարակությունում, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/3
8. *Սարգսյան Տ. Կ.,* Գենդերային չափումները վարչական էթիկայում, ԵՊՀ ԳՀԱԿ հոդվածներ, http://ysu.am/gender/hy/1383045671/page_31/2
9. *Шахназарян Г. Н.,* Стратегии сохранения и развития идентичности в условиях социальной неопределнности, Евразийские исследования: актуальные проблемы и перспективы развития, Ереван, 2013, стр. 494-506.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ *Աղաբաբյան Ալվինա Սամվելի*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Միրաքյան Վահրամ Գևորգի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Սիմոնյան Անի Գագիկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

- Ներքոնշյալ ուղղություններով գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացում,
- Ինֆոգեն վտանգների բացահայտմանն ուղղված գիտական մեթոդոլոգիայի մշակում և կիրառում տեղեկատվական տիրույթում,
- Ազգային անվտանգության տեսանկյունից արատավոր դիրքորոշումների ձևավորման, տարածման ճանապարհների ուսումնասիրում և հակազդման մեխանիզմների մշակում,
- Հայկական ԶԼՄ-ների բովանդակային քաղաքականության, դրա դրսևորումների և հասարակության վրա ունեցած հետևանքների գիտական հետազոտում,
- Լրատվամիջոցների ազդեցությամբ սոցիալական դիրքորոշումների ձևավորման մեխանիզմների և փոփոխման հնարավորությունների և ուղիների ուսումնասիրում,
- Կատարվող հետազոտությունների շրջանակներում համագործակցության հաստատում ինչպես լրատվամիջոցների, այնպես էլ համապատասխան պետական կառույցների հետ (նաև՝ Արցախում)՝ հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները լայնորեն կիրառելի դարձնելու նպատակով:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Ներքին և արտաքին միջավայրում հակահայկական քարոզչության հիմնական ուղղությունների և թեզերի ուսումնասիրություն և հակաքարոզչության կազմակերպում,
- Ինֆորմացիոն ներքին հոսքերի մշտադիտարկում, ինֆոգեն վտանգների բացահայտում և դրանց դեմ պայքարի մեթոդոլոգիայի մշակում,
- Հասարակության շրջանում ազգային անվտանգության տեսանկյունից վտանգ ներկայացնող սոցիալական դիրքորոշումների ձևավորման աղբյուրների, մեխանիզմների և տարածման ճանապարհների ուսումնասիրություն, հակազդման մեխանիզմների մշակում,
- Հայկական ինքնության ձևավորման հարցում լրատվամիջոցների դերի ուսումնասիրություն,
- Հայոց ցեղասպանության և Արցախյան հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրություն,
- Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական ասպեկտների, հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում Հայաստանի Հանրապետության և Արցախի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրություն,
- Արցախի և արցախյան հիմնախնդրի, բանակի, հայրենիքի, պետության և այլ պետականապահպան միավորների հետ կապված հասարակությունում առկա սոցիալական դիրքորոշումների ուսումնասիրություն,

- ԶԼՄ-ների միջոցով սոցիալական դիրքորոշման ձևավորման մեխանիզմների, դրանց կառուցվածքի, առաջացման և փոփոխման նախապայմանների, ինչպես նաև զանգվածային հաղորդակցության միջոցների ազդեցության և դրա հնարավոր հետևանքների ուսումնասիրում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում իրականացվել են մի շարք ծրագրեր և հետազոտություններ, որոնցից մի քանիսը առանձնակի կարևորություն ունեն:

1. Լաբորատորիան նախաձեռնել է «Արցախ» մատենաշարի պատրաստումը և հրատարակումը, որի յուրաքանչյուր հատորում վեր են հանվելու Արցախ աշխարհի պատմության առանձին դրվագները, ներկայացվելու են Արցախյան ազատամարտն ու հիմնախնդրի ներկայիս բանակցային փուլը, Արցախի հանդեպ իրականացված խորհրդային և մերօրյա Ադրբեջանի ագրեսիան և բազմաթիվ այլ հարցեր՝ կապված Արցախի և Արցախյան հիմնախնդրի հետ: Արդեն լույս է տեսել գրքաշարի առաջին մասը, որում ներկայացված է Արցախի համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1917թ., ինչպես նաև 1917-1923թթ. երկրամասում տեղի ունեցած պատմական և քաղաքական կարևորագույն և բախտորոշ իրադարձությունները: Ընթացքի մեջ են երկրորդ հատորի կազմման աշխատանքները:

2. Լաբորատորիայի շրջանակում բավականին լայնածավալ և համակողմանի ուսումնասիրության առարկա է դարձել այնպիսի մի հրատապ խնդիր, ինչպիսին է Հայաստանի դեմ տարվող թուրք-ադրբեջանական քարոզչությունը: 1994թ. հաստատված հրադադարից ի վեր հայ-ադրբեջանական հակամարտությունը մոլեգնում է դիվանագիտական և տեղեկատվական հարթակներում: Տարիներ շարունակ Բաքվում և Անկարայում փորձում են, Հայաստանի հանդեպ տնտեսական, դիվանագիտական և հոգեբանական ճնշումներ բանեցնելով, Հայաստանում հասունացնել Արցախն Ադրբեջանին հանձնելու դիրքորոշումներ: Այսօր արդեն առավել քան ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական քարոզչությունը վտանգում է մեր երկրի անվտանգությունը:

Ի՞նչ է «հոգեբանական անվտանգությունը», ի՞նչ նպատակներ է հետապնդում ադրբեջանական քարոզչությունը, ի՞նչ թեզեր է օգտագործում թշնամին իր քարոզչական նպատակը ձեռք բերելու համար, որո՞նք են թշնամական քարոզչության առավելություններն ու խոցելի կողմերը և, ի վերջո, ինչպե՞ս հակազդել թուրք-ադրբեջանական քարոզչական ագրեսիային, ինչպե՞ս չեզոքացնել դրանից բխող սպառնալիքները: Հարցերի այն շրջանակն է, որին անդրադարձ է կատարվել իրականացված հետազոտությունում: Կատարված աշխատանքի հիման վրա հրատարակության է պատրաստվել «Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական ասպեկտները. Հայաստանի Հանրապետության և Արցախի հոգեբանական անվտանգության խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում» մենագրությունը:

3. Հրատարակության է պատրաստվել նաև «Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը ԶԼՄ-ների միջոցով» մենագրությունը: Կատարված ուսումնասիրությունը վերաբերում է մեր օրերում առանձնակի կարևորություն ունեցող խնդիրների՝ հասարակության վրա զանգվածային լրատվամիջոցների ազդեցությանը և այդ կերպ սոցիալական դիրքորոշումների ձևավորմանը: Սոցիալական դիրքորոշումների ձևավորման ոլորտի ուսումնասիրություններն օգտակար են հատկապես տվյալ երկրի նկատմամբ այլ երկրների վարած քարոզչական պայքարին առավել արդյունավետ դիմակայելու համար: Սոցիալական դիրքորոշումների տեսությունների հիման վրա տեղեկատվական քաղաքականություն մշակելու արդյունքում մի կողմից հնարավոր է առավել արդյունավետ դարձնել հակառակորդի վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը, մյուս կողմից սեփական լսարանի

(բնակչության) և միջազգային հանրության վրա տարածվող բացասական տեղեկատվական-հոգեբանական հոսքերի դեմ պայքարն ու դրանց կառավարումը:

4. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ լաբորատորիայում ծավալուն ուսումնասիրություն է կատարվել էթնոցիդի հոգեբանական խնդիրների վերաբերյալ: Փորձ է արվել ժամանակակից հոգեբանության նվաճումների հիման վրա հետազոտել էթնոցիդի հոգեբանության կարևոր ասպեկտները՝ նախապատրաստումը, իրականացման որոշման կայացումը, իրականացնողների մոտ ագրեսիայի և սադիզմի դերակատարումը: Մեծապես ուսումնասիրության է ենթարկվել թուրքերի՝ որպես էթնոցիդ իրականացնելու ունակ ժողովրդի ազգային նկարագիրը: «Актуальные психологические проблемы этноцида» մենագրությունը պատրաստ է և հանձնվել է տպագրության:

5. Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիան մի շարք ծրագրեր է իրականացրել Արցախում, մասնավորապես՝ Քաշաթաղի շրջանում: Առաջին ծրագիրը եռօրյա այցի կազմակերպումն էր Արցախի Քաշաթաղի շրջանի հարավային հատված՝ վերաբնակեցված գյուղեր: Բացի նրանից, որ այցելությունն ուսանողների համար ճանաչողական բնույթ ուներ, և այցի ժամանակ վերաբնակեցված երկու գյուղերի՝ Աղաձորի և Արծվաշենի դպրոցների գրադարանները համալրեցինք բավականին մեծ թվով գրականությամբ, մեր այցելությունը նաև ինֆորմացիոն կարևոր խնդիր լուծելու նպատակադրում ուներ: Համալսարանականներն իրենց բազմաթիվ հրապարակումներով կարողացան ինֆորմացիոն ալիք բարձրացնել Քաշաթաղի՝ ռազմավարական նշանակություն ունեցող այդ շրջանի, վերաբնակեցված գյուղերի և տեղում առկա խնդիրների վերաբերյալ՝ այդ կերպ նպաստելով Արցախի այդ հատվածի շուրջ ձևավորված ինֆորմացիոն վակուումի ճեղքմանը: Հաջորդ այցելությունը 2014թ. հունիսին էր, որի ընթացքում վերաբնակեցված երկու գյուղերի՝ Աղաձորի և Գետամեջի դպրոցներին համակարգչային տեխնիկա և գրականություն նվիրաբերելուց բացի՝ իրականացվեց սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտությունը նպատակ ուներ պարզելու վերաբնակիչների մտադրությունները շրջանում իրենց հետագա բնակության վերաբերյալ, շրջանում հիմնավորվելու կամ այն հնարավոր լքելու պատճառները, ինչպես նաև բնակիչների շրջանում պաշտպանվածության զգացման աստիճանը: Հետազոտության արդյունքները համակարգման փուլում են:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	-	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Աղաբաբյան Ա. Ս., Ղարիբյան Ա. Ա.,* «Արցախ», մաս 1, «Լուսակն» հրատ., Երևան, 2014, 160 էջ:

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ *Գրիգորյան Կարեն Հովիկի, բան. գիտ. թեկնածու*

ՀՀ-ում գործող ամենահին հրատարակչությունը՝ ԵՊՀ հրատարակչությունը, 2014թ. ընթացքում հրատարակել է 87 անուն գիրք՝ 11.670 տպաքանակով, 1110.075 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով:

ԵՊՀ հրատարակչության աշխատանքային հիմնական ուղղություններն են՝

- ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականության մշակում և իրականացում,
- ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի բնականոն աշխատանքների կազմակերպում,
- գրքերի էջադրում, համակարգչային և նկարչական ձևավորում, խմբագրում, սրբագրում,
- տպագրական աշխատանքների իրականացում,
- գրքերի թվանշայնացում և էլեկտրոնային գրքերի ստեղծում:

Հաշվետու տարում հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ և ակադեմիական այլ գրականություն:

Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ ԵՊՀ ֆինանսավորմամբ լույս է տեսել Սեդա Գասպարյանի «Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ» աշխատությունը, որը Հայոց ցեղասպանությունը վերլուծում է լեզվաճանաչողական տեսանկյունից և հարցի վերաբերյալ տարբեր կարծիքների տեքստային մեխանիզմներն ուսումնասիրելու հնարավորություն է տալիս:

Լույս է տեսել նաև Ջուլիա Եսայանի «Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ» երկլեզվյան (հայերեն, անգլերեն) մենագրությունը, որտեղ առաջին անգամ փորձ է արված ներկայացնելու հայկական տեղանունների անվանափոխության մեթոդները հատկապես թուրքական տիրապետության շրջանում՝ տալով թուրքականացված տեղանունների ստուգաբանությունները:

Կարևոր է նաև Էդիկ Մինասյանի «Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն. 1991-2011թթ.» մենագրությունը: Առաջին անգամ փորձ է արվել գիտականորեն ներկայացնել հայկական անկախ երկու հանրապետությունների՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտի ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները:

Հրատարակվել է Հակոբ Զորյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ» ժողովածուն (կազմող՝ Պ. Հովհաննիսյան), որն ընդգրկում է ԵՊՀ հիմնադիր դասախոս, Հայոց պատմության ամբիոնի վարիչ, Պատմության ֆակուլտետի երբեմնի դեկան, պրոֆեսոր Հ. Զորյանի (1894-1942)՝ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու հայ պատմագրությանը նվիրված ուսումնասիրությունները: Նմանօրինակ ընդգրկմամբ ու բովանդակությամբ Հակոբ Զորյանն առաջին անգամ է ներկայացվում:

Խմբագրման փուլում է հանրաճանաչ իսպանացի գրող Գոնսալո Գուարչի «Սպիտակ լեռը» վեպը (թարգմանիչ՝ Մերի Սուքիասյան), որը հեղինակի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության վերջին գիրքն է: Գրքում նկարագրվում են Մեծ եղեռնի սահմռկեցուցիչ դեպքերը, թուրքերի կողմից կատարված աննկարագրելի ոճրագործությունները: Ներկայացվում են Ցեղասպանության ընթացքում հայերի հոսքը դեպի Լիբանան և հայերի ներդրումը Լիբանանի Հանրապետության կայացման գործում:

ԵՊՀ-ի կողմից ֆինանսավորված գրքերից հիշատակման են արժանի Արման Կիրակոսյանի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.)» աշխատանքը:

Պետք է առանձնացնել նաև Արման Եղիազարյանի «Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց» մենագրությունը՝ նվիրված Բագրատունյաց թագավորության հիմնադրմանը և Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու գահակալությանը, Նորայր Պողոսյանի «Նոր բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» և Ռուբեն Սաքապետոյանի «Բառգրքույկ» բառարանները, Վոլոդյա Հովսեփյանի և Մարգարիտա Եղիազարյանի «Ազգային տնտեսություն» ուսումնական ձեռնարկը, Գեղամ Գևորգյանի և այլ համահեղինակների «Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք» ուսումնական ձեռնարկը՝ 2 մասով, Գայանե Թոքմաջյանի և Լ. Կարապետյանի «Միջֆազային կատալիզը որոշ օրգանական ռեակցիաներում», Կառլեն Գրիգորյանի և Ծովինար Ադամյանի «Մարդու էկոլոգիա և էկոլոգիական ֆիզիոլոգիա», Վիգեն Բարխուդարյանի «Մոլեկուլային ֆիզիկա» ուսումնական ձեռնարկները, Արմեն Թռչունյանի և այլ համահեղինակների «Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ» գիրքը և այլ աշխատություններ:

Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ գրքեր են լույս տեսել նաև պետական պատվերով: Դրանք են՝ Ալեքսեյ Ջիվելեգովի «Թուրքիան և Հայկական հարցը» (կազմող՝ Էդիկ Մինասյան) հոդվածների ժողովածուն, Լեոյի «Հայկական հարցի վավերագրերը» աշխատությունը (վերատպություն, կազմող՝ Էդիկ Մինասյան):

Հասմիկ Ստեփանյանի «Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» գիրքը (թուրքերենով), որն Օսմանյան կայսրության դիվանագիտության, պալատական, վարչական, դատական, գիտության, ճարտարապետության, բժշկության և այլ ասպարեզներում արևմտահայության ունեցած դերի մասին է լույս է տեսել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ: Նախկին հրատարակությունը (հայերեն) արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ լույս են տեսել ևս մի քանի ստվարածավալ գրքեր, որոնք խոշոր ներդրում են հայագիտության ասպարեզում: Դրանցից է Գարեգին Հովսեփյանի «Երկեր» ժողովածուն, որն ականավոր հայագետի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի (1943-1952թթ.) մեծարժեք ստեղծագործությունների ընտրանին է: Այն ընթերցողին է ներկայացնում Գարեգին Հովսեփյանի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Ա, Բ, Գ պրակները և «Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» պատմագիտական ուսումնասիրությունը:

Հայագիտական շարքից են նաև Վարդ Բդոյանի «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը» ժողովածուն, որը ներկայացնում է Ջավախք աշխարհի ժողովրդական բանարվեստի գոհարները, ինչպես նաև Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» գիրքը, որտեղ ուսումնասիրված են հատկապես Բայրոնի և Մխիթարյան միաբանության կապերը, բայրոնիզմի դրսևորման նշանակալից երևույթները հայ գրականության մեջ: Գիրքը երկլեզվյան է՝ հայերեն և անգլերեն:

Հրատարակչությունը 2014թ. մայիսի 16-ից հունիսի 10-ը ԵՊՀ 95-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպել է «Գրքի տոնավաճառ 2014» ցուցահանդեսը, որի ընթացքում տեղի են ունեցել ավելի քան 200 անուն գրքերի ցուցադրություն-նվիրատվություններ ՀՀ մարզային, ՊՆ ռազմաուսումնական բուհերի, Արցախի պետական համալսարանի գրադարաններին, Մայր Աթոռի Մատենադարանին, Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանին: Նվիրատվություններն ուղեկցվել են մշակութային միջոցառումներով:

2014 թվականի հունիսի 10-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում տեղի է ունեցել գրքի տոնավաճառ, որի ընթացքում ԵՊՀ հրատարակչության հետ իրենց ուսումնագիտական գրականությունն

են ներկայացրել նաև Հայաստանի առաջատար հրատարակչությունները՝ «Անտարես», «Էդիթ Պրինտ», «ՄանՄար», «Զանգակ-97», «Պրինտինֆո»: Վերոնշյալ ծրագիրն աննախադեպ միջոցառում էր ԵՊՀ հրատարակչության բազմամյա պատմության մեջ:

ԵՊՀ հրատարակչությունը 2014թ. հոկտեմբերի 8-ից 12-ը մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին, որտեղ ներկայացրել է ԵՊՀ հրատարակչության ընտրված գրքերի կատալոգը (անգլերենով), որը պարունակում է ավելի քան 100 անուն գիրք՝ իր համառոտ բնութագրերով: ԵՊՀ հրատարակած գրքերը ցուցադրվել են նաև նոյեմբերի 8-ից 16-ը Ստամբուլում կայացած գրքի միջազգային ցուցահանդեսում:

Հաշվետու տարում ԵՊՀ հրատարակչությունում ընթացք է տրվել ինտերնետային կայքի ստեղծման, հրատարակված գրքերի թվանշայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքներին:

2014թ. ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված գրքերի ցանկ

1. Ադամյան Ծ., Գևորգյան Է. և ուրիշներ, Առաջադրանքներ և իրավիճակային խնդիրներ ֆիզիոլոգիայից, ուս. ձեռնարկ
2. Ալոյան Լ., Համբարձում Առաքելյանը և «Մշակը», մենագրություն,
3. «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, 2013թ., գլխ. խմբագիր՝ Ա. Ներսիսյան
4. «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, 2014թ., գլխ. խմբագիր՝ Ա. Ներսիսյան
5. Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., Արցախ. Արցախը վաղնջական ժամանակներից մինչև 1917թ.. Հայացք անցյալին (հայերեն, ռուսերեն, անգլերեն)
6. Այվազյան Կ., Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ուս. ձեռնարկ
7. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, ուս. ձեռնարկ, 3-րդ հրատ.
8. Աչոյան Ժ., Մկրտչյան Տ., Ընդհանուր ջրաերկրաբանություն, ուս. ձեռնարկ
9. Ասլանյան Լ., Ալավերդյան Ռ., Լույսի բևեռացումը և նրա հետազոտումը, ուս. ձեռնարկ
10. Ավանեսյան Ա., Մովսիսյան Հ., Մեթոդական ցուցումներ «Կառուցվածքային երկրաբանություն և երկ-րաբանական քարտեզագրություն» դասընթացի կուրսային աշխատանքների
11. Ավետիսյան Ա., Հանրային կապերը զանգվածային հաղորդակցության համակարգում, դասախոսություններ
12. Ավետիսյան Յ., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, ուս. ձեռնարկ
13. Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ, ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ. Խորհուրդ՝ Բաղդասարյան Ա., Ավանեսյան Հ. և ուրիշներ
14. «Արևելագիտության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, խմբ. Խորհուրդ՝ Մելիքյան Գ., Ասատրյան Գ. և ուրիշներ
15. Բաբայան Ա., Իսրայելյան Ա., Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ուսուցման մեթոդական ուղեցույց
16. Բալաբեկյան Ա., Միջուկային ռեակցիաներ, ուս. ձեռնարկ
17. Բարխուդարյան Վ., Մոլեկուլային ֆիզիկա, ուս. ձեռնարկ
18. Բդոյան Վ., Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, կազմող՝ Ռ. Ղարիբյան
19. Գասպարյան Ս., Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ, մենագրություն

20. Գևորգյան Գ., Գալստյան Լ., Թասլաքյան Ա. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզ. խնդրագիրք, մաս 1-ին, վերահրատարակություն
21. Գևորգյան Գ., Գալստյան Լ., Թասլաքյան Ա. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզ. խնդրագիրք, մաս 2-րդ, վերահրատարակություն
22. Գևորգյան Հ., Դրո, մենագրություն
23. Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները, մեթոդական ցուցումներ, գլխ. խմբագիր՝ Ռ. Մարկոսյան, կազմող՝ հեղ. խումբ՝ Գ. Հովհաննիսյան, Ն. Գալստյան, Մ. Սողոմոնյան և ուրիշներ
24. Գուարչ Գ., Սպիտակ լեռը, վեպ, թարգմ.՝ Մ. Սուքիասյան
25. Գրիգորյան Կ., Ադամյան Ծ., Մարդու էկոլոգիա և էկոլոգիական ֆիզիոլոգիա, ուս. ձեռնարկ
26. Գրիգորյան Վ., Հոգեֆիզիոլոգիա, դասագիրք
27. Եղիազարյան Ա., Աշոտ Ա Բագրատունի, թագավոր Հայոց (թագավորության թագադրության թվականը և գահակալության տարիները), մենագրություն
28. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, գլխ. Խմբագիր՝ Գ. Ղազինյան
29. ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների 95-ամյա ուղին, կազմող՝ Է. Մինասյան, Ա. Ավագյան
30. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, պարբերական, թիվ 1, պատ. խմբագիր՝ Մ. Մալխասյան
31. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, պարբերական, թիվ 2, պատ. խմբագիր՝ Մ. Մալխասյան
32. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, պարբերական, թիվ 3, պատ. խմբագիր՝ Մ. Մալխասյան
33. Եսայան Ջ., Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ, մենագրություն
34. ՁԼՄ կարգավորում և ինքնակարգավորում, կազմ.՝ Վ. Պետրոսյան, դասախոսություններ
35. Զալինյան Գ., Կիրակոսյան Ա., Մարդու գենետիկայի մեթոդներ, ուս. ձեռնարկ
36. Զորյան Հ., Պատմագիտական ուսումնասիրություններ, կազմող՝ Պ. Հովհաննիսյան
37. Էվինյան Ս., Թեմրեզյան Է., Աբրահամյան Ս., Անգլերեն հոգեբանների համար, ուս. մեթոդական ձեռնարկ
38. Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց, գիտական հոդվածների ժողովածու, (նվիրվում է Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հիմնադրման 5-ամյակին), կազմող, գլխ. խմբագիր՝ Կ. Կարապետյան
39. Թեմրեզյան Է., Էվինյան Ս., Նամակագրություն և ինքնակենսագրություն (անգլերեն), մեթոդական ձեռնարկ
40. Թոքմաջյան Գ., Կարապետյան Լ., Միջֆազային կատալիզը որոշ օրգանական ռեակցիաներում, ուս. ձեռնարկ
41. Թռչունյան Ա., Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ
42. Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, հեղ. խումբ, պատ. խմբագիր՝ Սաֆրաստյան Ռ.
43. Լեո, Հայկական հարցի վավերագրերը, կազմող՝ Է. Մինասյան
44. Խաչատրյան Ռ., Օպտիմիզացիայի մեթոդներ, ուս. ձեռնարկ
45. Ծրագիր «Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը» հատուկ դասընթացի, կազմ.՝ Ռաֆիկ Նահապետյան

46. Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914թ.), մենագրություն
47. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը. հիմնախնդիրներ և մարտահրավերներ
48. Հարությունյան Տ., Շտուրմ-Լիուվիլի եզրային խնդիրը, մաս 1, ուս. ձեռնարկ
49. «ՀՀ բուհական և տնտեսական համակարգերի փոխազդեցության և կառավարման բարելավման հիմնախնդիրները» հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսի հոդվածների ժողովածու, խմբ. խորհուրդ՝ Ս. Առաքելյան, Հ. Մարզպանյան և ուրիշներ
50. Հովհաննիսյան Հ., Ինչպես գրել գիտական աշխատանք պատմությունից, մեթոդական հանձնարարականներ
51. Հովհաննիսյան Հ., Վանկի դերը հայերենի հնչույթաբանության մեջ, մենագրություն
52. Հովհաննիսյան Ս., Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ, գործնական հոգեբանություն, ուս. ձեռնարկ
53. Հովսեփյան Գ. –Երկեր, ընտրանի, ԵՊՀ հրատ., 2014 թ.
54. Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումն ու անվտանգության ոլորտի բարեփոխումները, մենագրություն
55. Հովսեփյան Մ., Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915), դասախոսություններ
56. Հովսեփյան Մ., Ռադիոժուռնալիստիկայի հիմունքներ (պատմություն և տեսություն), դասախոսություններ
57. Հովսեփյան Վ., Ազգային տնտեսություն, ուս. ձեռնարկ
58. Մանրէաբանության և մանրէների կենսատեխնոլոգիայի նվաճումները, միջազգային գիտաժողովի նյութեր, կազմող՝ Հ. Փանոսյան
59. Մենեմշյան Ա., Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ, ուս. ձեռնարկ
60. Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմությունից. 1991-2011թթ., մենագրություն
61. Մինասյան Ս. և ուրիշներ, Ախտաբանական ֆիզիոլոգիա, դասախոսություններ
62. Մկրտիչյան Ա., Շահնազարյան Գ., Սահակյան Ա., Վարտիկյան Ա., Վերմիշյան Հ., Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում, հետազոտական ուսումնասիրություն
63. Շահազիզյան Ի., Քաղցրահամ ջրերի ջրիմուռների ցեղերի համառոտ որոշիչ, ուս. ձեռնարկ
64. Պողոսյան Ն., Նոր բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, բառարան
65. Ջիվելեգով Ա., Թուրքիան և Հայկական հարցը, հոդվածների ժողովածու, կազմող՝ Է. Մինասյան
66. Սահակյան Ա., Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում, մենագրություն
67. Սարգսյան Լ., Ջեյմս Ջոյսի ստեղծագործության վաղ շրջանը, մենագրություն
68. Սարգսյան Տ., «Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի ուսումնական պրակտիկայի և գործնական պարապմունքների կազմակերպման մեթոդական ուղեցույց
69. Սաքապետոյան Ռ., Բառգրքույկ. նոր և նորակազմ բառեր հայերենում, բառարան
70. Սողոմոնյան Մ., Միջազգային հարաբերությունների տեսություններ և վերլուծության մակարդակներ, դասախոսություններ
71. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում (թուրքերեն), մենագրություն
72. Վարդանյան Լ. և ուրիշներ, Դիվանագիտությունը և քաղաքագիտությունը տեքստերով (ֆրանսերեն), ուս. ձեռնարկ

73. Վարդևանյան Պ., Անտոնյան Ա., Մոլեկուլյար կենսաֆիզիկա, լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ
74. Տարեգիրք-2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, գլխ. խմբագիր՝ Հ. Սարգսյան
75. Տեղեկատվական պատերազմներ, դասախոսություններ, կազմող՝ Դ. Ալավերդյան
76. Տվյալների կառույցներ, կազմ.՝ Մ. Ճաղարյան, ուս. ձեռնարկ
77. Փիրումյան Գ., Հարությունյան Լ., Ջրերի մաքրումը մակերևութային ակտիվ նյութերից, ուսումնամեթոդական աշխատանք
78. Քալաշյան Վ., Պետական կառավարման արդյունավետությունը, դասախոսություններ
79. Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, թիվ 2, գլխ. Խմբագիր՝ Ապրեսյան Մ.
80. Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում, հոդվածների ժողովածու, կազմող՝ Ջիվանշիրյան Ժ.
81. 50-ամյա Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը, կազմող՝ Գ. Պետրոսյան
82. Аветисян А., Наш Ереван
83. Афанацьева Т., Краткий русско-арм. Словарь
84. Варданян С., Сонорные в составе финальных консонантных комплексов современного английского языка в речи и пении, մենագրություն
85. Саргсян Л., Из истории лингвистических учений, մենագրություն
86. Учебное пособие по русскому языку для студентов – геологов, Составители: Сираканян А., Мурадян А., Степанян И.
87. Gharibyan A., The issue of Nagorno-Karabakh in 1918-1920 and Great Britain
88. Materials of conference devoted to 80th anniversary of the Law department of Yerevan State University
89. Key performance indicators of Yerevan State University (2008-2013), Editorial board: A. Simonyan (Head), A. Grigoryan, G. Gevorgyan, R. Markosyan, A. Budaghyan, M. Santurjyan, A. Sargsyan

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

«Գիտական տեղեկագիր» հանդեսի բնական գիտություններ սերիան հրատարակվում է 1967 թ-ից: 2009 թ-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ՝ տեղեկագիրը տրոհվել է 3 հանդեսների:

2013թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել.

«Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, քիմիա, կենսաբանություն (անգլերեն) 3-րդ համարները և «Գիտական տեղեկագրի» երկրաբանություն, աշխարհագրություն (հայերեն, ռուսերեն) 3-րդ համարը:

2014թ. լույս են տեսել նշված 3 հանդեսների 1-ին և 2-րդ համարները:

Եվս մեկական համար լույս կտեսնի մինչև տարեվերջ:

2014 թվականի մայիսից «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) ֆիզիկամաթեմատիկական գիտություններ հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրապարակվող «zbMATH Journal» հանդեսում:

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2013թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 1-ը լույս է տեսել «Բանբերի» վեց շարքերի երեքական համար՝ ընդհանուր առմամբ 18 համար (N 135-143):

Յուրաքանչյուր համար ունի 5-5.5 մամուլ ծավալ, տպագրվել է 100 օրինակ տպաքանակով, բացառությամբ «Բանասիրություն» շարքի, որի տպաքանակը 120 է: Ընդ որում՝ «Բանասիրություն» շարքի 2014թ. երկրորդ համարը, նվիրված լինելով ակադեմիկոս Էդ. Աղայանի ծննդյան 100-ամյակին, ունի կրկնակի ծավալ: Հոդվածները լույս են տեսել հայերեն, անգլերեն, ռուսերեն, յուրաքանչյուր լեզվով հոդվածն ունի մյուս երկու լեզուներով ամփոփումներ:

2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ www.ysu.am ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԼՐԱՀՈՍԻ

[02.09.13] ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ՝ ՕՐՎԱ ՀԵՐՈՍԻ ԴԵՐՈՒՄ

Մայր բուհի առաջին կուրսեցիների համար անձամբ դասախոսություն է կարդացել նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

[02.09.13] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՀԱՄԱԽՄԲԵԼ ԷՐ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐԻՆ

Գիտաժողովին մասնակցեցին շուրջ 130 գիտնականներ, այդ թվում՝ 75 մաթեմատիկոսներ արտասահմանյան 20 երկրներից:

[04.09.13] ԷԿՈՒՐԱՎՈՒՆՔԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ Է

Ամերիկացի մասնագետներ Էրիկա Լիմանը և Ռենդի Թակերը ներկայացրեցին էկոլոգիական իրավունքի կրթության զարգացվածությունը ԱՄՆ-ում:

[04.09.13] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԹԵՄԱՏԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման մրցույթի արդյունքներով՝ հաղթած 159 ծրագրերից 39-ը բաժին է ընկել ԵՊՀ-ին:

[05.09.13] ԷԿՈԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ

Շրջակա միջավայրի խնդիրներն ուսումնասիրող մասնագետները ԵՊՀ-ում քննարկեցին բնապահպանական ոլորտի մի շարք կարևոր հարցեր:

[05.09.13] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԱՆԱՊԱՀՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Տեղեկանքը ներկայացնելու ժամկետը սահմանափակ է՝ մինչև սեպտեմբերի 10-ը:

[09.09.13] ԵՊՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Բակալավրիատի ընդունելության համար դիմումները պետք է ներկայացնել մինչև սեպտեմբերի 20-ը, իսկ մագիստրատուրայի համար՝ մինչև հոկտեմբերի 10-ը:

[11.09.13] ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲՎԵԼ ԷԻՆ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում մեկնարկեց «IONS Armenia» միջազգային ուսանողական գիտաժողովը, որը կտևի մինչև սեպտեմբերի 14-ը:

[11.09.13] ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

Բնապահպանները քննարկում են հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները:

[12.09.13] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Համալսարանական ինքնատիպ տոնի օրն այս անգամ սեպտեմբերի 11-ն էր:

[12.09.13] ՍԵՂԱՆԻՆ «ԴՐՎԱԾ» ԷԻՆ ՍՈՑԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 11-12-ը ԵՊՀ-ում անցկացվեց «Սոցիալական աշխատանքի արդի հիմնախնդիրները. քաղաքականություն, պրակտիկա և կրթություն» խորագրով կլոր սեղան:

[16.09.13] ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Ամփոփվել են 2013 թ-ի հունիսի 27-ին հայտարարված «Դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի և ռեսուրս շտեմարանի մշակման և ներդրման» մրցույթի արդյունքները:

[18.09.13] ԲՈՒՀ-ԲԱՆԱԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ Է ԼԻՆԵԼՈՒ
ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանը հանդիպեց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողության հետ:

[18.09.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ ԿԼԻՆԵՆ
Շուտով կմեկնարկի «Համալսարանականը դիրքապահ զինվորի կողքին» ծրագիրը:

[19.09.13] ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ Է ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ
Մեկնարկել է «Փախստականների իրավունք» խորագրով եռօրյա ամառային դպրոցը:

[19.09.13] ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ՝ ՆՎԵՐ ՈՒՍՈՒՑՉԻՆ
Աշխարհի տարբեր անկյուններում գտնվող ֆիզիկոսները հավաքվել են Երևանում՝ նշելու իրենց ուսուցչի՝ ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի 100-ամյակը:

[20.09.13] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ 22-ԱՄՅԱ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆԸ
ԵՊՀ ուսանողները որոշել էին Հայաստանի անկախության տոնը շնորհավորել եռագույն ֆլեշմոբով:

[23.09.13] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
Դիլիջանում անցկացվող գիտաժողովն այսօր ազդարարեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին նվիրված տոնական միջոցառումների մեկնարկը:

[23.09.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՉԻ ՄՈՌԱՑԵԼ ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԸ
ԵՊՀ շրջանավարտ Մամիկոն Մնացականյանը մաթեմատիկայի ոլորտի մի շարք նորարարությունների հեղինակ է դարձել:

[24.09.13] ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ
Մայր բուհում բացվել է «Թալիշագիտություն» մագիստրոսական ծրագիրը. աշխարհում այն դեռևս առաջինն է ու միակը ոլորտում:

[26.09.13] ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԸ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՋԵՌՔԲԵՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
Այսօր հայաստանյան մի քանի բուհերի ներկայացուցիչներ եվրոպացի մասնագետների հետ փորձում էին վեր հանել այդ ճանապարհի դժվարությունները:

[27.09.13] ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆ ԷՐ
Իրավաբանները մեծ տոնախմբությամբ նշում են ֆակուլտետի 80-ամյակը:

[30.09.13] ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ
Ուսանողները քննարկում էին Հայաստանում սպասարկման ոլորտի հիմնախնդիրները և առաջարկում դրանց լուծման ուղիներ:

[01.10.13] ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ՀԵՌԱԿԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՏԵՂԵՐԸ
Ըստ ՀՀ ԿԳ նախարարի հրամանի՝ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվել է 239 (անվճար) հեռակա ասպիրանտական տեղ:

[01.10.13] ՆԻՑՇԵ. ՄԱՐԴ, ՈՒՄ ԴԵՌ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ

Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց նիցշեագիտությանը նվիրված միջազգային գիտաժողով, որն այսպիսի մասշտաբներով առաջին անգամ է անցկացվում Հայաստանում:

[01.10.13] ՈՒԳԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԳԱՍԻՔԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ՈՒԳԸ միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուի 5-հատորյակի շնորհանդեսն էր:

[02.10.13] ԵՊՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

Սեպտեմբերի 18-ից 22-ը ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը «SGI» (Soka Gakkai International) հիմնադրամի նախագահ Դաիսակու Իկեդային ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու և Սոկա համալսարանի հետ համագործակցության պայմանագիր կնքելու նպատակով մեկնել էր Ճապոնիա:

[03.10.13] ՏԱՐԵԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆԸ

Մեկ ընդհանուր ձեռնարկում փորձել են ամփոփել ոլորտում առկա խնդիրները Արևելյան գործընկերության տարածաշրջանի պետություններում:

[03.10.13] ԵՊՀ-ՈՒՄ ՆՈՐ ԱՄԲԻՈՆՆԵՐ ԵՆ ԲԱՑՎԵԼՈՒ

Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս ուստարվա անդրանիկ նիստը: Օրակարգային հարցերը 9-ն էին:

[07.10.13] ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ԱԳՆ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս Վահան Բայբուրդյանը ՀՀ դիվանագիտության ասպարեզում նշանակալի ծառայությունների համար արժանացել է ԱԳՆ հուշամեդալի:

[07.10.13] ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱՀՈԳՎԱԾ Է ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Ոլորտի մասնագետները շեշտադրում են գենդերային անհավասարության պատճառներն ու հետևանքները ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային աշխատաշուկայում:

[08.10.13] ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում անցկացվեց միջոցառում՝ նվիրված ֆրանսիացի էկզիստենցիալիստ փիլիսոփա, վիպագիր և քննադատ Ժան Պոլ Սարտրին:

[08.10.13] ...ՈՐՊԵՍԶԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆԱ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ

Ուրալի դաշնային համալսարանի ուսանողական պատվիրակությունը համագործակցության հետքերով եկել էր ԵՊՀ:

[09.10.13] ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԸ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ ԵՆ

Հոկտեմբերի 5-ին Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում տեղի է ունեցել «Անկախության գավաթ» ծրագրավորման մրցույթը:

[09.10.13] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համալսարանականների հյուրն էր Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Սերգեյ Մավրինը:

[10.10.13] «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

Հայաստանի ազգային կինոկենտրոնի «Կինոաշուն» փառատոնն «այցելեց» նաև ԵՊՀ ուսանողներին:

[11.10.13] ԱՇԽԱՏԱՆՔԻ Է ՀՐԱՎԻՐՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԸ
Բունդեսթագի միջազգային խորհրդարանական կրթաթոշակը ստանալու դեպքում 3 հայ երիտասարդներ կաշխատեն գերմանացի պատգամավորներից մեկի գրասենյակում:

[14.10.13] ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՄՐՑՈՒՅԹ
Հոկտեմբերի 14-ին տեղի է ունեցել «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման հանձնաժողովի նիստը:

[14.10.13] ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆԸ ՆՇԵՑԻՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ
Շուրջ 100 առաջին կուրսեցիներ մասնակցել են երդման ինքնատիպ արարողությանը:

[15.10.13] ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ
Համալսարանականները դարձել են «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի մրցանակակիրներ:

[15.10.13] ԳԻՏԱԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՈՐՈՇՎԵՑ ՀԱՂԹՈՂԸ
Ռուս բանասիրության ֆակուլտետում կայացավ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի ֆակուլտետային առաջնությունը:

[16.10.13] ՄԵԿ ՇԱԲԱԹ ԽՈՍԵԼՈՒ ԵՆՔ ԻՏԱԼԵՐԵՆ
Այս օրերին ամբողջ աշխարհում անցկացվում է Իտալերեն լեզվի շաբաթը, որից անմասն չէ նաև ԵՊՀ-ն:

[16.10.13] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԱԳՆ
Հոկտեմբերի 15-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավար անձնակազմի հետ:

[17.10.13] ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ
Գիտաժողովը նվիրված էր Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հիմնադրման 5-ամյակին:

[17.10.13] ԵՊՀ-Ն՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ
Երկու օր Երևանում հավաքված Եվրոպայի կրթության նախարարները քննարկելու են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի իրագործման խնդիրները:

[17.10.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ
Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել Մայր բուհի ուսանողների ու ասպիրանտների՝ SS ոլորտում արձանագրած հաջող աշխատանքները:

[17.10.13] ՀԱՅԱԳԵՏՆԵՐԸ ԿՊԱՐԶԵՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
Անվանի հայագետները երեք օր շարունակ խոսելու են հայագիտության արդի մարտահրավերների ու դրանց հնարավոր լուծումների մասին:

[17.10.13] ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐՆ ԱՄՓՈՓԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ՀՀ բուհերի դասախոսների համար կազմակերպված մասնագիտական դասախոսությունների շարքն ավարտվեց:

[17.10.13] ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆՔ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԸ
Բնապահպանության ոլորտի մասնագետները քննարկեցին էներգաարդյունավետության բարձրացման ոլորտի խնդիրները:

[18.10.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ՊՐՈՖԵՍՈՐ ԿԻԼԻԱՆ ՎԱՎՈՒՆ
Հոգեբանները քննարկել են տնտեսագիտական հոգեբանության և մարդկային ռեսուրսների կառավարման արդի խնդիրները:

[18.10.13] ՄԵԿ ՀԱՅԱՍՏԱՆ, ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Միջազգայնագետներն այսօր հավաքվել էին պարզելու, թե, ի վերջո, որ ուղղությամբ կարող է շարժվել Հայաստանը՝ Եվրամիությա՞ն, թե՞ Եվրասիական միության:

[18.10.13] ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԵՏԱՔՐՔՐԻ ՆԱԵՎ ՕՏԱՐԵՐԿՐԱՅՈՒՆ
Անվանի հայագետ Ժիրայր Տէտէեանը վստահ է, որ շուտով կգա հենց այդ ժամանակը:

[18.10.13] ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐՆ ԱՊԱԳԱ ՔԻՄԻԿՈՍՆԵՐ ԵՆ
«Արփա» հիմնարկի 2-րդ կարգի մրցանակը բաժին ընկավ համալսարանականներին:

[18.10.13] ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԴԱՍԵՐ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ
Ժուռնալիստիկայի և Ռուս բանասիրության ֆակուլտետների ուսանողների հյուրերն արտասահմանցի փորձառու լրագրողներն էին:

[20.10.13] ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄԻՋԱՎԱՅՐ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ
Հայ տնտեսագետների համար կրկին գիտական միջավայր էր ստեղծվել. քննարկում էին տնտեսագիտական արդիական հիմնախնդիրները:

[21.10.13] ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԻՉԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾԵԼ Է ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ
Հայոց պատմությունն արդեն հասանելի է ռուսալեզու չափածոյի տեսքով:

[22.10.13] ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ
Հոկտեմբերի 15-ից 18-ը ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում տեղի ունեցավ «Վստահությունն ազգային գեոքաղաքական ինքնությունների ձևավորման գործընթացում» խորագրով միջազգային գիտաժողովը:

[23.10.13] ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՑԱՍՈՒՄ ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԴԻՄԱՑ
Մայր բուհի ուսանողներն արձագանքել են երեկ տեղի ունեցած ողբերգական դեպքին:

[25.10.13] ԼՍԱՐԱՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում բացվեց պատմաբան, աշխարհագրագետ, պրոֆեսոր Թադևոս Հակոբյանի անվան լսարան:

[25.10.13] ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ. ՀԱՍՑԵՆ՝ ԵՊՀ
ԵՊՀ-ում են հավաքվել շուրջ 170 հոգեբաններ, որպեսզի լուծումներ գտնեն հոգեբանության առջև ծառացած մերօրյա խնդիրներին:

[25.10.13] ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ
Նոր Ջուղայում Սրբոց Թարգմանչաց և Հայ մշակույթի տոների առիթով կազմակերպված միջոցառմանը մասնակցել է նաև համալսարանական Ժակ Մանուկյանը:

[28.10.13] ԴԱՍԸՆԹԱՑ ԲԻԶՆԵՍ ԻՄԻՋԻ ԵՎ ԷԹԻԿԵՏԻ ՄԱՍԻՆ
Մի քանի օր շարունակ «Գործարար իմիջ և բիզնես էթիկետ» խորագրով դասընթացը միևնույն վայրում կմեկտեղի ոլորտի հետաքրքրասերներին:

[28.10.13] ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ
Հոկտեմբերի 25-ին ԵՊՀ մի շարք դասախոսներ հյուրընկալվել էին Գյումրու «Ֆոտոն» վարժարանում:

[28.10.13] ԻՐԱՎԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻՑ ԷՐ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն այսուհետ հյուրընկալելու է գործող իրավաբանների, որպեսզի ուսանողներն ավելի լավ պատկերացնեն մասնագիտության դերը:

[28.10.13] ԵՊՀ ԹԻՄԵՐՆ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆՆ ԷԻՆ
Հայտնի են «ACM ICPC» ծրագրավորման բուհական միջազգային թիմային օլիմպիադայի հայաստանյան փուլի հաղթողները:

[29.10.13] ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՂՄ ԵՎ ԴԵՄ
Քննարկվեցին Հայաստանի քաղաքական կողմնորոշման մի շարք հիմնահարցեր:

[30.10.13] ԲԱՆԱՎԻՃԵԼՈՒ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
ԵՊՀ-ում մեկնարկել է Բանավեճի միջֆակուլտետային առաջնության նոր մրցաշրջանը:

[31.10.13] ԵԽ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ
Եվրոպական խորհրդարանի պատգամավոր դոկտոր Չարլզ Թեննոքին այսօր հանձնվեցին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման հավաստագիրը և հուշամեդալը:

[31.10.13] ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՎԻՃԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում կազմակերպվել էր «Պատգամավորի անձեռնմխելիություն» թեմայով կլոր սեղան-քննարկում:

[31.10.13] ՉԱՐԼԶ ԹԵՆՆՈՔ. «ԵՍ ՄՆՈՒՄ ԵՄ ՀԱՅԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԸ»
ԵԽ պատգամավոր Չարլզ Թեննոքն այսօր ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումը ստանալուց հետո հանդես եկավ նաև Հայաստանի և ԵՄ հեռանկարների մասին դասախոսությամբ:

[01.11.13] ԱՆՎԱՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԸ ՄԵԿՏԵՂՎԵԼ ԵՆ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ
Միջազգային համաժողովի նպատակը մեկն է՝ պարզել, թե որն է Ադրբեջանի Հանրապետության պատմական հենքը:

[04.11.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթի արդյունքները հայտնի են:

[04.11.13] ԳՐԱՆՑՎԵԼ Է ՄԵԿ ԹԵԿՆԱԾՈՒ
Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար դիմել է մեկ թեկնածու:

[04.11.13] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
Հայաստանյան ապահովագրական ընկերություններից մեկն ուսանողներին առաջարկում է աշխատանք:

[05.11.13] ՂԱԶԱԽ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ
Այսօր ԵՊՀ-ում հյուրընկալվել էր ՀՀ-ում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիտովը:

[05.11.13] ՀԱՅ-ԼԻՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ընդունեց ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին:

[06.11.13] «ԲԱՎԱԿԱՆ» ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ՆԱԵՎ ԵՊՀ-ՈՒՄ

Գենդերային խնդիրների մասին բարձրաձայնող վավերագրական ֆիլմը մեծ արձագանք է ունեցել մի շարք հեղինակավոր փառատոներում:

[07.11.13] ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՊԵՏՔ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ավստրիայի Սահմանադրական դատարանի պատվիրակությունն այցելել էր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ:

[07.11.13] ԵՊՀ-ՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԳՈՀ ԵՆ

Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը, որի հատուկ հյուրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոն էր:

[07.11.13] ՎԻԿՏՈՐ ԽՐԻՍՏԵՆԿՈՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ գիտխորհուրդը հյուրընկալեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոյին:

[08.11.13] ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ Է

ՈՒԳԸ հոդվածների ժողովածուն ընդունելի է թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության գործընթացի համար:

[08.11.13] ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ պրոֆեսոր Վահան Բայբուրդյանին նվիրված հոբելյանական միջոցառում:

[11.11.13] ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

ԵՊՀ ներկայացուցիչ Վահրամ Պետրոսյանը Մոսկվայում մասնակցել է միջազգային գիտաժողովի և կլոր սեղանի:

[11.11.13] ԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց աշնանային գիտական նստաշրջանը:

[12.11.13] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՐՑԱԽ

Այցը քառօրյա էր և մի քանի նպատակ էր հետապնդում՝ ծառատունկ, տարաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, այց զորամաս և պատմամշակութային վայրեր:

[12.11.13] ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄԵՆԱՄԱՐՏԵՐ ԻԿՄ-ՈՒՄ

Ֆակուլտետային մրցաշարի արդյունքում որոշվեցին լավագույն շախմատիստները:

[12.11.13] ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆ ԻՆԸ ՏԱՐԵԿԱՆ Է

Այսօր ԵՊՀ կոնֆերենց դահլիճում մեկնարկեց Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 9-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովը:

[13.11.13] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ՝ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Երիտասարդական կազմակերպությունների ցուցահանդես-համաժողովին մասնակցում էին ավելի քան 60 կազմակերպություններ:

[13.11.13] ՀԵՏԱՔՐՔԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ

Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն միջոցառում էր կազմակերպել գենդերային իրավահավասարության մասին:

[14.11.13] «ՆՐԱ ԱՄԵՆԱՄԵԾ «ՍԵՐԸ» ԹՈՒՄԱՆՅԱՆՆ ԷՐ...»

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողներն ու դասախոսները նշում էին հայտնի գրականագետ, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի 90-ամյակը:

[14.11.13] ՊԱԼԵԱՏԻՎ ԽՆԱՄՔ. Ո՞ՐՆ Է ՀՈԳԵԲԱՆԻ ԴԵՐԸ

Նոյեմբերի 13-ին ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողների համար պալեատիվ խնամքի մասին դասախոսություն կարդաց ռումինացի մասնագետ Մալինա Դումիտրեսկուն:

[14.11.13] ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ

Օրհուսի կոնվենցիայի իրականացման 4-րդ ազգային զեկույցի նախագծի քննարկումը կազմակերպվել էր Մայր բուհում:

[14.11.13] ՎԵՑ ԹԻՄԵՐԻՑ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆԸ ՄԵԿՆ ԷՐ

Ապագա լրագրողները պատասխանում էին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի հարցերին՝ փորձելով գտնել ֆակուլտետի ուժեղագույն թիմին:

[15.11.13] ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Ներկայացվել է «Բարձրագույն կրթությունն այսօր Հայաստանում. առկա խնդիրների վերլուծություն» զեկույցը:

[15.11.13] ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱԿ-Ի ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԴԵՐՈՒՄ

Հերթական ՄԱԿ-ի մոդել-խորհրդաժողովը միավորել էր հայաստանյան երեք բուհերի ուսանողներին:

[18.11.13] ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ն ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

ԵՊՀ-ում տոնական օրվա առիթով անակնկալ միջոցառումներ են սպասվում:

[18.11.13] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՀԱՂԹԵԼ Է ՄԱԿ-Ի ՄՈԴԵԼՈՒՄ

ԵՊՀ ուսանողները հանդես են եկել ՄԱԿ-ի անդամ երկրների պատվիրակների դերում՝ լավագույնս ներկայացնելով համապատասխան երկիրը:

[18.11.13] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է

Համալսարանական դիվանագետներն այցելել են ռուս գործընկերներին:

[18.11.13] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵՊՀ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց «ԵՊՀ լավագույն ուսանող-2013» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան:

[19.11.13] ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ

ԵՊՀ դասախոսները մասնակցեցին Կրակովի Յագելոնյան համալսարանի միջազգային գիտաժողովին:

[19.11.13] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՑԸ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ
ԵՊՀ պատվիրակությունը նոյեմբերի 10-ից 16-ը աշխատանքային այցով մեկնել էր Թուրքմենստան:

[19.11.13] ՆՈՐ ԼՍԱՐԱՆ ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ
Համալսարանական զոհված ազատամարտիկ Արմեն Կոթոլյանի անունով ԵՊՀ-ում կգործի նոր ու լիովին վերանորոգված լսարան:

[19.11.13] ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ
Ելույթներով հանդես եկան 8 զեկուցողներ Մայր բուհի տարբեր ֆակուլտետներից:

[20.11.13] ՀՐԱՎԻՐՈՒՄ Է «ERASMUS MUNDUS»-Ը
Այսօր ԵՊՀ-ում ներկայացվեցին «Erasmus Mundus» ծրագրի չորս նախագծերը՝ «Webb»-ը, «Ember»-ը, «Backis»-ը և «Humeria»-ն:

[20.11.13] ՌԵԿՏՈՐԻ ՀՅՈՒՐԵՐԸ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԱՅՐԵՐՆ ԷԻՆ
Հերոսների ծնողներն իրենց զավակների նման չեն մոռացվում, հիշվում և մեծարվում են համալսարանականների կողմից:

[21.11.13] ԿԻՆՈԱԿՈՒՄԲԻ ԴԻՏՈՒՄՆԵՐԸ ՍԿՍՎԵՑԻՆ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ
Սոս Սարգսյանը «հյուրընկալվել» էր ԵՊՀ մշակույթի կենտրոնում, բայց ոչ թե անձամբ, այլ հիշողությունների տեսքով:

[21.11.13] ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻՆ
Հայտնի ընկերության բնապահպանության բաժնի ավագ մասնագետը հանդիպեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների հետ:

[21.11.13] ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ
Նոյեմբերի 18-ին ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում կայացավ դեկանի ընտրությունը:

[21.11.13] ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ ԵՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
Այս անգամ ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հյուրը սոցիոլոգ Գայանե Ղազարյանն էր:

[21.11.13] ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԻՆ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
Նոյեմբերի 19-ից 21-ը ԵՊՀ-ում կազմակերպվել էին «Լիդերություն, կարիերայի առաջընթաց և գենդերային հիմնախնդիրները» խորագրով սեմինար-դասընթացներ:

[21.11.13] ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ
Ապագա քաղաքագետները պատրաստել են մի ծավալուն հետազոտություն, որը վերաբերում է Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական ներկա վիճակին:

[22.11.13] ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇՎԵՑ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները նոյեմբերի 21-ին նշում էին իրենց մասնագիտական տոնը:

[22.11.13] ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ՀՅՈՒՐԵՐՆ ԷԻՆ
Մարզային դպրոցների սաները շրջեցին համալսարանով՝ ծանոթանալով բուհի կառուցվածքին ու գործունեությանը:

[22.11.13] ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԻԶԱՄԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆԱՑՎԵ՞Լ Է
ԵՊՀ-ում անցկացվեց «Նիզամի Գյանջավի. կյանքը և ստեղծագործությունը» խորագրով գիտաժողով:

[22.11.13] ԵՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓԵՑ ՆԱԽՈՐԴ 5 ՏԱՐԻՆԵՐԸ
Այսօր կայացավ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության 4-րդ համագումարը, որն անցկացվում է յուրաքանչյուր 5 տարին մեկ:

[22.11.13] ԵՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ
Առաջիկա 5 տարիներին ևս Արհեստակցական կազմակերպությունը ղեկավարելու է Արմեն Ավետիսյանը:

[23.11.13] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՊՀ-Ն ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ
ԵՊՀ քաղաքագետները փորձում են ընդլայնել միջազգային կապերը:

[25.11.13] ԱԺ ՆԻՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
Ազգային ժողովի նիստ-դերախաղում պատգամավորների դերերը ստանձնել էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողները:

[26.11.13] ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ PR
Հանրային կապի մասնագետները քննարկեցին ոլորտի հիմնախնդիրները:

[26.11.13] ՈՒԳԸ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ ԷԻՆ
ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում անցկացվել է ՈՒԳԸ գիտական խորհրդի արտագնա նիստ:

[27.11.13] ԳԻՐՔ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԵԿԻՑ
Այսօր տեղի ունեցավ գրող Հովհաննես Ներզեթյանի «Մարդկության սկիզբը և վերջը մի անհատի կյանքն է. «ԵՍ»» աֆորիզմների գրքի շնորհանդեսը:

[28.11.13] ՋՈՒՐ. ԱՊՐԱ՞ՆՔ, ԹԵ՞ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎ
Բնապահպանական ոլորտի մասնագետները պատրաստվում են առաջարկությունների փաթեթ ներկայացնել ՀՀ Կառավարությանը:

[28.11.13] ՄՐՑՈՒՄ ԷԻՆ ԿԻՆՈՄԱՆՆԵՐԸ
Շուրջ 40 ուսանողների պայքարում որոշվեց այս տարվա ամենագիտակ կինոսիրողը:

[29.11.13] ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՈՒՂԻՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԱՆՑՆԵԼ
ԵՊՀ ասպիրանտ, զոհված ազատամարտիկ Միհեր Ջուլհաճյանն այսօր կդառնար 46 տարեկան:

[02.12.13] YSU.AM-Ը ՀԱՂԹԵԼ Է «ARMNET 2013»-ՈՒՄ
Մայր բուհի պաշտոնական կայքը մրցանակը ստացել է «Լավագույն բովանդակություն» անվանակարգում:

[02.12.13] ԵՐՋԱՆԻԿ ԱԿՆԹԱՐԹՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Արդեն երկար տարիներ է, ինչ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպում է բարեգործական միջոցառումներ:

[02.12.13] ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ
«Աջակցություն Գավառի մանկատանը» բարեգործական ֆուտբոլային մրցաշարում հաղթողներ չկային. հաղթել էին բոլորը:

[02.12.13] «ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ. ԲԱՐԻ՞Ք, ԹԵ՞Ղ ՉԱՐԻՔ»
Ժամանակակից տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունների մասին բարձրաձայնում են ուսանողները:

[02.12.13] ՓԱ՛ՌՔ ՈՒ ՊԱՏԻ՛Վ ՔԱՋ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻՆ
Տարբեր ֆակուլտետների մի խումբ ուսանողների համախմբել էր մեկ գաղափար. օդը լցված էր ռազմահայրենասիրական ոգով ու շնչով:

[02.12.13] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԿՕԳՆԻ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻՆ
Մայր բուհի ուսանողները սովորեցին գիտական հոդվածներ գրելու գլխավոր ու առանցքային առանձնահատկությունները:

[03.12.13] ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՄԵՅՐԱՆ ԱՄԻՐՅԱՆԻ
«Մեզ պահողը սերն է: Ինչի մասին էլ որ խոսենք, սուտ է, մարդկային հարաբերությունների առանցքը սերն է»,- վստահ էր Մեյրան Ամիրյանը:

[04.12.13] ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ
Երեք օր շարունակ հանրապետության մի շարք բուհերի ուսանողներ հանդես կգան պատմությանը նվիրված զեկուցումներով, որոնց թիվը գերազանցում է 40-ը:

[04.12.13] ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
Ապագա իրավագետները բարձրաձայնում ու քննարկում են ոլորտի խնդրահարույց հարցերը:

[04.12.13] ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում հետաքրքիր փոփոխություններ կլինեն, որոնք կնպաստեն մագիստրոսների հմտությունների զարգացմանը:

[05.12.13] ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ. ԳԵՆԱՅԻՆ ԻՆԺԵՆԵՐԻԱՅԻ ՀՐԱ՞ՇՔ, ԹԵ՞...
Էկոիրավունքի կենտրոնի քննարկումներն այս անգամ վերաբերում էին ժամանակակից գիտության օգուտներին ու վնասներին:

[06.12.13] ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ, ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ
Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում անցկացվեց հուշ-միջոցառում՝ նվիրված 1988 թվականի աղետաբեր երկրաշարժին:

[06.12.13] ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ
Համալսարանականները հետաքրքրված են գովազդի ոլորտով:

[06.12.13] ՄԱՆԴԱՐԻՆԸ ՀԱՄԱԽՄԲԵՑ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻՆ
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը լի էր մանդարինով. պատճառն արդեն ավանդույթ դարձած Մանդարինի տոնն էր:

[09.12.13] ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՁԵՆՔՆ ԻՐ ԼԵԶՈՒՆ Է
Ապագա դիվանագետները զարգացնում են օտար լեզվով՝ անգլերենով հաղորդակցվելու իրենց հմտությունները:

[09.12.13] ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻՆ ԲԱՑԱԿԱ ՉԵՆՔ ԴՆՈՒՄ
Անվանի գրողի հիշատակը միշտ վառ կմնա երիտասարդների շնորհիվ:

[10.12.13] ԻԿՄ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՊԱՅՔԱՐԻ ԷԻՆ ԵԼԵԼ ԳԻՏԱԿՆԵՐԸ
Յոթ թիմերի պայքարում հաղթող դարձավ տղաներից կազմված «Դվին» գիտակների թիմը:

[10.12.13] ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ապագա իրավագետները ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի դատին ներկայացրին իրենց աշխատանքները:

[11.12.13] «CRRC-ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը 10 ՏԱՐԵԿԱՆ Է
«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը» (CRRC) հոբելյանական միջոցառմանը ներկայացրեց անցած ճանապարհն ու հետագա ծրագրերը:

[11.12.13] ԴԻՎԱՆԱԳԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ Է
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ապագա դիվանագետները հյուրընկալել էին ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի հիմնադիր-տնօրեն Վահե Գաբրիելյանին:

[12.12.13] ՀԵՌԱՎԱՐ ՍԵՄԻՆԱՐԸ ՎԱՐԵՑ ԻՏԱԼԱՑԻ ԴԱՍԱԽՈՍԸ
«Tête-à-Tête» հեռավար ուսուցման ծրագրի շրջանակներում առաջին դասընթացը տեղի ունեցավ իտալերենի մասնագետների համար:

[12.12.13] ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ՈՒՆԻ
Դիվանագետ, պատմաբան Արա Պապյանը հանդիպեց ապագա փիլիսոփաների ու հոգեբանների հետ:

[12.12.13] ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՃԻՇՏ ԽՈՍՔ ԵՎ ԼԻՆԵԼ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Հանրային ելույթ» խորագրով սեմինար-մրցույթ:

[13.12.13] ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ՝ ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ
Երկու ֆակուլտետների ուսանողները որոշել էին բավականին հետաքրքիր ձևով նվեր մատուցել մարզասերներին՝ շախմատային մրցամարտեր կազմակերպելով:

[13.12.13] ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Այս անգամ ապագա իրավագետների հյուրերն էին ոլորտում գործող առաջատար փաստաբանները:

[13.12.13] ԵՊՀ ՊՈՐՏԱԼԸ ՄԻԱԿՆ Է ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Մայր բուհի գրադարանի նախասրահում այսօր տեղի ունեցավ ԵՊՀ ինտերնետային պորտալի շնորհանդեսը:

[16.12.13 ԴԱՍԸ ՎԱՐԵՑ ՀՀ-ՈՒՄ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԸ
ԵՊՀ մագիստրոսները մասնակցեցին «Հարավային Ասիա և Եվրասիա» թեմայով կլոր սեղան-քննարկմանը:

[16.12.13] «ՎԻՔԻՊԵԴԻԱՆ» ԵՊՀ-ՈՒՄ. ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆՆԵՐՆ ԵՆ
«Վիքիմեդիա Հայաստան» ՀԿ-ն կոնկրետ ոլորտների մասին հոդվածները հարստացնելու գործընթացը սկսել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներից:

[17.12.13] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՊՀ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ ՈՒ 2014 Թ-Ի ՆԱԽԱՀԱՇԻՎԸ
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ 2013 թվականի վերջին նիստը. օրակարգային հարցերը 8-ն էին:

[18.12.13] ՓՈՔՐԻԿ ԵՐԵԽԱՆ ԱՐԴԵՆ ՄԵԾԱՑԵԼ Է

«Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) միջազգային ամսագիրն արդեն 10 տարեկան է:

[19.12.13] ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՎԻՃԵԼ

Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում մեկնարկեց «Բանավեճը՝ որպես այլընտրանքային ուսուցման մեթոդ» երկօրյա դասընթացը:

[19.12.13] ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԻՆՈՆ ԵՊՀ-ՈՒՄ ԷՐ

Հայաստանում անցկացվող ֆրանսիական կարճամետրաժ ֆիլմերի փառատոնը ԵՊՀ-ով էլ անցավ:

[19.12.13] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ներկայացվեց Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ՄԿԿՏՀ):

[20.12.13] ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ

Այսուհետ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը կգործի նոր՝ առավել ընդարձակ ու հարմարավետ տարածքում:

[20.12.13] ԵՊՀ-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ 7.5 ՏՈԿՈՍՈՎ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ԵՆ

Այսօր կայացավ ԵՊՀ խորհրդի տարեվերջյան նիստը, որը վարում էր ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, խորհրդի անդամ Վիգեն Սարգսյանը:

[23.12.13] ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Դեկտեմբերի 16-ից 22-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում կազմակերպվել էր «Երկխոսություն հանուն ապագայի-2013» խորագրով գիտակրթական ծրագիրը:

[25.12.13] ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը Մայր բուհում ներկայացրեց Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրերը:

[26.12.13] ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏԸ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտ Կարեն Թոչունյանի հոդվածաշարը «Ակադեմիա» ամենամյա երկրորդ մրցանակաբաշխությունում ճանաչվել է լավագույնը:

[26.12.13] ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓԵՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այսօր կայացավ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության ընդլայնված նիստը, որի ընթացքում ամփոփվեց այս ուստարվա առաջին կիսամյակը:

[27.12.13] ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Համալսարանականները մեկտեղվել էին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում՝ միասնական նշելու տարեմուտը:

[28.12.13] ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

Այսօր կայացավ ԵՊՀ ՌԻԽ նախագահության ընդլայնված նիստ, որի ընթացքում ամփոփվեցին իրականացված ծրագրերը, ու նախանշվեցին 2014 թ-ի հիմնական խնդիրները:

[15.01.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Մաքսիմ Էդվարդսը ուսումնասիրել է Հայաստանում բնակվող ասորիների խնդիրները:

[15.01.14] ԵՊՀ-ՈՒՄ ԴԱՍԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ԵՆ ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՑ
Հունվարի 8-ից ԵՊՀ-ում մեկնարկել են առկա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի եզրափակիչ քննությունները և կտևեն մինչև հունվարի 30-ը:

[16.01.14] ՄԱՅԻՍԻ 16-Ը՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐ
Մայիսի 16-ը «Ուսանողների և երիտասարդների օր» նշելու մասին օրենսդրական նախաձեռնությունը ՀՀ Կառավարության այսօրվա նիստում հավանության է արժանացել:

[20.01.14] ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ
Այսօր ԵՊՀ գրադարանի մասնաշենքում գործող «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (CRRC)-Հայաստան»-ում կազմակերպվել էր «Հայաստանը քաղաքակրթությունների քառուղիներում» կլոր սեղան-քննարկում:

[21.01.14] ՈՒԳԸ-Ն ԿԻՐԱԿԱՆԱՑՆԻ ԵՊՀ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ
Նախատեսված է իրականացնել «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» խորագրով սեմինար-դասընթաց և հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված ԵՊՀ 95-ամյակին:

[22.01.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆՈՐ ԹԱՓ ԿՀԱՂՈՐԴՎԻ
Կայացավ Տեմպուս «ՊԻԿԱՍԱ» ծրագրի մեկնարկային հանդիպումը:

[24.01.14] ԵՊՀ-Ն ՈՒ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
ՀՀ զինված ուժերի 22-րդ տարեդարձին ընդառաջ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հյուրընկալվել էր ԵՊՀ-ում:

[29.01.14] ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
Փորձագետներն ուսումնասիրել են ՀՀ ոստիկանությունում իրականացրած բարեփոխումներն ու դրանց անդրադարձը հասարակության վրա:

[31.01.14] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս կիսամյակի առաջին նիստը՝ օրակարգային 7 հարցերով:

[05.02.14] ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՄԱՆ ԿԵՏՈՒՄ
Փետրվարի 4-ին ամբողջ աշխարհում նշվում է քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրը:

[06.02.14] ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԴԱՐԲՆՈՑՈՒՄ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճը լեփ-լեցուն էր. Մայր բուհը հյուրընկալել էր տասնյակ ավագ դպրոցներ ներկայացնող ավելի քան 100 աշակերտների:

[06.02.14] ԵՊՀ-Ն՝ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՈՒՀԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՑԱՆԿՈՒՄ
2013 թ-ի ամփոփ տվյալների համաձայն՝ «Ինտերֆաքս» խմբի վարկանշային ցանկում ԵՊՀ-ն զբաղեցնում է 11-րդ հորիզոնականը:

[07.02.14] ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԳՊԿ ՆԱԽԱԳԱՀԸ

ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում համալսարանականների հյուրը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն էր:

[10.02.14] ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ

ՀՀ ԲՈՀ-ի սահմանած ցուցակում ընդգրկվելու համար գիտական պարբերականները պետք է համապատասխանեն նոր չափանիշներին:

[11.02.14] ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

ԵՊՀ-ում անցկացվեց Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի մահվան 95-րդ տարելիցին նվիրված ուսանողական գիտաժողով:

[12.02.14] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ ուսանողական խորհուրդը կազմակերպում է «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» խորագրով դասընթաց:

[13.02.14] ԿՁԵՎԱՎՈՐՎԻ ՀԱՊԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԼԻԳԱ

Փետրվարի 13-ին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը մասնակցեց «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) համալսարանական լիգայի ձևավորում» խորագրով հրավիրված տեսակամուրջին:

[14.02.14] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ Է ԼԻՆԵԼՈՒ

ԵՊՀ-ն հյուրընկալել էր Երևանի համար 65, 109, 112, 119, 149, Աբովյանի համար 4, Վանաձորի համար 5, Աշտարակի համար 5 և Եղեգնաձորի ավագ դպրոցների ղեկավարներին:

[14.02.14] ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ԲԱԺԻՆ Է ԸՆԿԵԼ ԵՊՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF) տրամադրած 31 դրամաշնորհներից 13-ը բաժին է ընկել ԵՊՀ գիտնականներին:

[15.02.14] ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Փետրվարի 14-ին ԵՊՀ 6-րդ մասնաշենքի հետնաբակում համալսարանականները մեծ շուքով նշեցին Տեառնընդառաջի և Սբ. Սարգսի տոները:

[17.02.14] ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փետրվարի 14-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ «Beeline Scholarship» ծրագրի արդյունքների ամփոփմանը նվիրված հանդիսավոր արարողությունը:

[17.02.14] «ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ»

Փետրվարի 15-ին ԵՊՀ «Վարդանանք» ակումբը զոհված ազատամարտիկ Պետրոս Ղևոնդյանի անվան դպրոցում կազմակերպել էր հանդիպում աշակերտների և համալսարանականների հետ:

[17.02.14] ԳՆԱ՞Լ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ, ԹԵ՞ ՈՉ. ԲԱՆԱՎԻՃՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

«Հայաստանի համար լավագույն ապագան եվրաինտեգրացիոն քաղաքականություն վարելն է». այս թեմայի շուրջ էին այսօր բանավիճում ապագա իրավագետները:

[19.02.14] ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆՎԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Հովհաննես Թումանյանի ծննդյան և Գիրք նվիրելու օրը Իրավագիտության ֆակուլտետը հյուրընկալվել էր Հայաստանի ազգային գրադարանին:

[19.02.14] «ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է»
Փետրվարի 21-ը հայոց պետական տոնացույցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել է Մայրենիի օր:

[19.02.14] «ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՑԱՆՑՈՒՄ». ՈՒՂԵՑՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան սրահում տեղի ունեցավ «Լավագույնը ցանցում» գրքի շնորհանդեսը:

[19.02.14] ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆԱԽԱԴՐՅԱԼ
Այսօր «ՀՌԿԿ-Հայաստան» կենտրոնում ներկայացվեցին «Վստահությունը, ինստիտուտները և տնտեսական աճը Հարավային Կովկասում» հետազոտության արդյունքները:

[19.02.14] ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ
Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց «Սոցիալական մարքեթինգ» խորագրով դասընթաց ուսանողների և շրջանավարտների համար:

[20.02.14] «ԿԱՐԻԵՐԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՄԻ ՄԱՍՆ Է»
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կարիերայի կենտրոնը կազմակերպել էր «Կարիերայի պլանավորում» թեմայով սեմինար-դասընթաց :

[20.02.14] ԵՊՀ-ՈՒՄ ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ 3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Այժմ ԵՊՀ ուսանողներն ու դասախոսները կարող են սնվել նորաբաց բուֆետներում:

[20.02.14] ԵՊՀ-Ի ԵՎ ՄԱԿ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՏԵՍԱՆԵԼԻ ԵՆ
Այսօր ԵՊՀ գրադարանի ընթերցասրահում գործող ՄԱԿ-ի ավանդապահ գրադարանում տեղի ունեցավ «Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին» հայերեն 2-րդ հրատարակչության գրքի շնորհանդեսը:

[20.02.14] «ՎԵԲՈՄԵՏՐԻՔՍՈՒՄ» ԵՊՀ-Ն ԻՐ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼ Է
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 5 հարցերով:

[21.02.14] «ՈՉ ՄԻԱՅՆ ԼԱՎ ՄԱՍՆԱԳԵՏ, ԱՅԼԵՎ ԼԱՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՆՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ»
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանը հանդիպեց Երևանի համար 54 դպրոցի աշակերտների հետ:

[24.02.14] ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲՎԵԼ ԷԻՆ
Փետրվարի 20-ից 23-ը ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում անցկացվեց «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» երիտասարդական միջազգային 2-րդ գիտաժողովը:

[25.02.14] ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Փետրվարի 24-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ գերմաներեն լեզվի ուսուցման դասընթաց ուսանողների և դասախոսական կազմի համար:

[26.02.14] ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ
ԵՊՀ-ն շարունակում է կրթության որակի ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացման ակտիվ գործընթացը:

[26.02.14] ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՍԵՄԻՆԱՐ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Վաճառքի պրակտիկ հմտությունները Հայաստանում» թեմայով սեմինար-դասընթացների շարքը:

[26.02.14] ՄԻԱՎ-ՁԻԱՀ-Ի ՏԱՐԱԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ՝ ՄԵԿ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՄԲ
Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը լայն տարածում չունի, տարածվածությունը կազմում է ամբողջ բնակչության 0.1 տոկոսը:

[27.02.14] ՌՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՅՈՒՐԱՑՆԵՆ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները» խորագրով դասընթացը:

[27.02.14] ԵՊՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈՐՁ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ճանաչողական այցով ԵՊՀ-ում հյուրընկալվել էին մոլդովական երկու համալսարանների ներկայացուցիչները:

[28.02.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ
Արդեն հինգ տարի է՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնի և Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվում է Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում:

[28.02.14] ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ
Ապագա փիլիսոփաներն ու հոգեբաններն ակտիվորեն ուսումնասիրում են գիտական աշխատանք գրելու հմտությունները:

[28.02.14] ԱՌԻՏԻԶՄ. ՍՈՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ
ԵՊՀ-ում կազմակերպվել է երկօրյա սեմինար հայ մասնագետների համար, ովքեր աշխատում են աուտիզմով տառապող մարդկանց հետ:

[28.02.14] Ի՞ՆՉ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ԽՈՋԱԼՈՒՈՒՄ
Փետրվարի 26-ն ադրբեջանցիների կողմից նշվում է որպես, այսպես կոչված, «Խոջալուի ջարդերի» զոհերի հիշատակի օր:

[03.03.14] ՆԱԽԱԳԾՎՈՒՄ Է ՍՐԲԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ
Փետրվարի 28-ին Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողներ փորձեցին նախագծել և իրականացնել առցանց սրբագրման գործիք:

[03.03.14] Ի ՀԻՇԱՏԱԿ ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ
Փետրվարի 27-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կամերային երաժշտության տանը կայացավ Լուսինե Զաքարյանին և Խորեն Պալյանին նվիրված հիշատակի երեկո:

[03.03.14] ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏՆ ԱԶԴԱՐԱՐՎԱԾ Է
ԵՊՀ աշխատակցուհի Նելլի Գևորգյանի անհատական ցուցահանդեսը նվիրված է գարնան առաջին օրվան ու կանանց տոնին:

[04.03.14] ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանին նվիրված հուշ-ցերեկույթ:

[04.03.14] ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ ԱՊԱԳԱ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը հյուրընկալել էր ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիին:

[05.03.14] ԱԺ-Ի ՆՈՐ ՄՈԴԵԼ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում անցկացվեց «ԱԺ ընտրությունների մոդել» ծրագիրը:

[05.03.14] ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԱՂՔԱՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ» ԹԻՎԸ ՄԵԾ Է

Մասնագետները քննարկում են նվազագույն աշխատավարձի սահմանման միջազգային և տեղական չափանիշները, գնահատում ոլորտում առկա հնարավոր փոփոխությունները:

[06.03.14] ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «ATHENA»-«Աջակցություն բարձրագույն ուսումնական հաստատությունների կայունությանն ու ինքնավարությանը» ծրագրի հայաստանյան աշխատաժողովը:

[06.03.14] ԱՊԱԳԱ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՀԵՏ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում հայտնի մտավորականների, գործող լրագրողների հետ հանդիպումն արդեն ավանդույթ է դարձել:

[10.03.14] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ավարտվեց «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրը ԵՊՀ-ում» դասընթացի ծաղկաձորյան փուլը:

[11.03.14] ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Իտալական «AlmaLaurea» համալսարանների կոնսորցիումը Բոլոնիայում կազմակերպել էր «Զեռներեցություն և նորարարություն. շրջանավարտների դերակատարությունը» խորագրով կոնֆերանս:

[11.03.14] ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Արմավիրի մարզի՝ կարկտահարությունից տուժած գյուղերի բնակիչներ հանդիսացող ԵՊՀ ուսանողները կօգտվեն ուսման վարձերի 50% զեղչի հնարավորությունից:

[11.03.14] ...ՈՐՊԵՍԶԻ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄՆ ԷԼ ՍՈՎՈՐԻ ՀՈԳԵԲԱՆԻՆ ԴԻՄԵԼ

ԵՊՀ մասնագետների կողմից անցկացված սեմինարը նախատեսված էր Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի միջին և կրտսեր բուժանձնակազմի համար:

[12.03.14] ԵՊՀ 127 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎԵՑ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Մարտի 11-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կրթաթոշակի հավաստագրեր հանձնեց անվճար համակարգում չընդգրկված ԵՊՀ 127 ուսանողի:

[12.03.14] ԵՊՀ 95-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՈՒԳԸ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

ԵՊՀ ՈՒԳԸ «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» խորագրով սեմինար-դասընթացի մրցութային փուլն ավարտվել է. ընտրվել է 45 մասնակից:

[13.03.14] «ԱՅՑԵՔԱՐՏԸ ՁԵՐ ԻՄԻՋԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է»

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համատեղ կազմակերպել է եռօրյա դասընթաց:

[14.03.14] ԿԱՋԱՆՈՎԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ. ԱՄԵՆԸ ԳԻՆՈՒ ԽԱՂՈՂԻ ՄԱՍԻՆ

«Գինու խաղողի Աստվածաշունչը» համարվող գրքի համահեղինակներից մեկը՝ Ժոզե Վույամոն, այսօր համալսարանում կարդաց հանրային դասախոսություն:

[17.03.14] «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2014». ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ
Արդեն 7-րդ տարին է, ինչ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը հանրակրթական առարկաներից օլիմպիադա է անցկացնում:

[17.03.14] ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ
Բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ) մասնագետների ուշադրության կենտրոնում են:

[18.03.14] ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՏԱՐԵԼ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
Սեմինար-դասընթացը նվիրված էր գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտություններին:

[18.03.14] «ՄԱԼՎԻՆՅԱՆ ՀԱՐՑԸ» ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ
Համալսարանականների հյուրն էր հեղինակավոր մի շարք համալսարանների հրավիրյալ պրոֆեսոր Ֆաբիան Ռայմոնդոն:

[18.03.14] ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ
Այսօր «Թեքեյան» մշակութային կենտրոնում տեղի ունեցավ «XXI դարի Եվրասիան. խնդիրներ և հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի բացումը:

[18.03.14] ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ՍՏԱՑԱՆ
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում կայացավ հեռակա ուսուցման «Լրագրություն» մագիստրոսական ծրագրի առաջին շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը:

[19.03.14] ԲԵԼԳՈՐՈԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ԵՊՀ-Ի ԳՈՐԾԸՆԿԵՐ
ԵՊՀ-ն համաձայնագիր է ստորագրել Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի հետ:

[19.03.14] ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐՆ ԸՆՏՐԵՑԻՆ ԱՄԵՆԱԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՈՒՍԱՆՈՂԻՆ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ անցկացվեց «Ամենաինտելեկտուալ իրավաբան-2014» խաղ-մրցույթը:

[19.03.14] «ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ». ԲՈԼՈՐ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ՄԵԿ ԳՐՔՈՒՄ
ԵՊՀ-ում ներկայացվեց «Հայատյացությունը Ադրբեջանում» գիրքը, որում տրված է ադրբեջանական հակահայ քարոզչության ամփոփ նկարագիրը:

[20.03.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացավ սպորտային ինտելեկտուալ խաղ-մրցույթի եզրափակիչ փուլը:

[21.03.14] ՀԱՆԴԻՊՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄՆ ԷՐ
Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի և ուսանողների հանդիպումը՝ «առանց փողկապների» ձևաչափով:

[21.03.14] ՋՐԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Մարտի 23-ը Ջրի և Օդերևութաբանի համաշխարհային օրն է:

[22.03.14] ԵՊՀ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ
ՀՀ նախագահի նստավայրում տեղի է ունեցել մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

[22.03.14] ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ՈՒ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻՆ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում տեղի ունեցավ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթի հաղթողներին դրամաշնորհների հանձնման արարողությունը:

[24.03.14] ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի սաները հերթական ընթերցումներն ունեցան Եղեռնի զոհերի հուշահամալիրում:

[24.03.14] ՄԱՀԹՈՒՄԿՈՒԼԻ ՖՐԱԳԻ. ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՅԵՐԵՆ 3-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ-ում անցկացվեց Մահթումկուլի Ֆրագիի 290-ամյակին նվիրված կոնֆերանս, որի ընթացքում ներկայացվեց նաև նրա բանաստեղծությունների հայերեն ժողովածուն:

[25.03.14] ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Հայ-վրացական գիտական ու մշակութային կապերն ու տարածաշրջանային խնդիրները» թեմայով եռօրյա գիտաժողովը:

[25.03.14] ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ ՄԻՋՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսը ներկայացնող թիմը հաղթել է միջհամալսարանական «Արբիտրաժ-2014» խաղ-մրցույթում, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրսի թիմը՝ «Լավագույն թիմ» անվանակարգում:

[26.03.14] ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Շուտով ԵՊՀ գրադարան մուտք գործելը հնարավոր կլինի միայն ընթերցողի տոմսերով:

[26.03.14] «ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ...»

Մարտի 25-ը ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող, զոհված ազատամարտիկ Վարդան Դալլաքյանի ծննդյան օրն է:

[26.03.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Ամփոփվել են Ֆրանկոֆոնիայի միամսյակի շրջանակներում անցկացվող թելադրության ամենամյա մրցույթի արդյունքները:

[27.03.14] ԱՐԱՐԱՏԻՑ ԵՎՐՈՊԱ. ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՆԳԱՌԸ ԵՊՀ-Ն ԷՐ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբում ցուցադրվեց «Արարատից Եվրոպա» ֆիլմը:

[27.03.14] ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Այսօր ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում ԵՊՀ-ի և Քուվեյթի համալսարանի միջև տեղի ունեցավ փոխանակման և համագործակցության պայմանագրի ստորագրում:

[27.03.14] ԱՐՎԵՍՏԱՍԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՊԱՆԹԵՈՆ

Մարտի 27-ին աշխարհում նշվում է Թատրոնի միջազգային օրը:

[27.03.14] ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Այսօր տեղի ունեցավ «Թաքնված արժեք. սոցիալական կապիտալի ուսումնասիրությունն առցանց սոցիալական կայքերում» հետազոտական դրամաշնորհի արդյունքների քննարկում:

[28.03.14] ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2014»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Նրանք պարգևատրվեցին 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմներով ու գովասանագրերով, իսկ իբրև նվեր՝ գրքեր ստացան:

[28.03.14] ԲԱՆԿՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում «ՊրոԿրեդիտ» բանկի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ներկայացուցիչների հետ:

[01.04.14] ԵՐԲ ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Ծիծաղի և հումորի օրվան նվիրված «Հումորային շոու» նոր նախագծի մեկնարկը:

[02.04.14] ՓՈՓՈԽՎԵԼ ԵՆ ՈՒԳԸ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ՀՀ ԲՈՀ-ի նոր պահանջներին արձագանքելով՝ ԵՊՀ ՈՒԳԸ-ն մի քանի փոփոխություններ է կատարել իր գիտական հոդվածների ժողովածուներում տպագրության տրվող հոդվածին ներկայացվող չափորոշիչներում:

[03.04.14] ՆՇՎԵՑ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԼԵԶՎԱԲԱՆԻ 90-ԱՄՅԱԿԸ

Ալեքսանդր Մարգարյանը մինչև իր կյանքի վերջին օրերն անմնացորդ նվիրումով ծառայեց հայագիտությանը:

[03.04.14] ԴՐԱՄԱՏԻԿ ԴՐՎԱԳ ԱՐՑԱԽՑԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

Ապրիլի 2-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի և Ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ ցուցադրվեց Ջիվան Ավետիսյանի «Ընդհատված մանկություն» ֆիլմը:

[03.04.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՊՀ գիտխորհրդի նիստում գիտական զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Մովսիսյանը:

[03.04.14] ԵՊՀ-ՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼՈՒ Է ՆՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 5 հարցերով:

[03.04.14] ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱՎ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը ևս 5 տարի ղեկավարելու է Գուրգեն Մելիքյանը:

[03.04.14] ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում անցկացվեց հոգեբանական արդի թեմաներով միջբուհական գիտաժողով:

[04.04.14] ...ՈՐՊԵՍԶԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԵՑՆԵՆ ՍՈՎՈՐԵԼ

Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Ինքնուրույն ուսուցման խթանումը» խորագրով գիտաժողովը:

[05.04.14] ԵՊՀ-Ն ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ Է ՄԵԿՆՈՒՄ ՔԵՍԱԲԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

ԵՊՀ-ն 1 մլն դրամ է փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի բացած հատուկ հաշվեհամարին, որտեղ արված հանգանակություններն ուղղվելու են քեսաբահայերին օգնելու գործին: 500.000 դրամի չափով նվիրատվություն էլ կատարել է ԵՊՀ ուսանողական խորհուրդը:

[05.04.14] SAVE KESSAB. ԵՊՀ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ գիտական խորհրդի հայտարարությունը Սիրիայի Քեսաբ բնակավայրում հայերի և ալևիների դեմ իրականացվող ոճրագործությունը դատապարտելու մասին:

[07.04.14] ԵՊՀ-Ն ԱԿՏԻՎԱՅՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 31-ից ապրիլի 6-ը աշխատանքային այցով Բելառուսում էին Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ներկայացուցիչները:

[07.04.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ

Պորտուգալիա կատարած այցի շրջանակներում ՀՀ տարբեր բուհերի ներկայացուցիչներ այցելեցին Գյուլբենկյան հիմնադրամ:

[08.04.14] ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՅԱՎ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը ևս 5 տարի ղեկավարելու է Գագիկ Ղազինյանը:

[08.04.14] ԱՅՍՕՐՎԱ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ՝ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐ

Եվրոպայի առաջնությունից մեդալներով վերադարձած ըմբիշները Հայաստան ժամանած հենց առաջին օրը հյուրընկալվել էին ԵՊՀ-ում:

[08.04.14] ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեմպուսի HEN-GEAR ծրագրի շրջանակներում քննարկվեցին շրջանավարտների հետ աշխատանքներում ՏՀՏ-ների կիրառման խնդիրները:

[09.04.14] ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ «ԹՈՒՄՈ»

«Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ» բաժնի ուսանողներն արդեն մեկ տարի է, ինչ իրենց ներդրումն են ունենում TED ելույթների թարգմանության գործում:

[09.04.14] ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ. ԿԱԴՐԻՑ ԴՈՒՐՍ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ ցուցադրվեց «Էն ուրիշ Ֆրունզիկը» ֆիլմը:

[09.04.14] ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը հյուրընկալել էր ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի աշակերտներին:

[10.04.14] ԻՍՊԱՆԱԿԱՆ «EL MUNDO»-Ն՝ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ

Միջազգային «Making News» լրատվական գործակալությունը Հայաստանի մասին հատուկ ռեպորտաժ է պատրաստում, որում առանձին անդրադարձ կա նաև ԵՊՀ-ին:

[10.04.14] ԵՐԳՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Երգող համալսարանական-2014» ամենամյա մրցույթի եզրափակիչ փուլը:

[11.04.14] ԿՈՆԵԿՏԻԿՈՒՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. ԵՊՀ-Ն ԾԱՆՈԹԱՆՈՒՄ Է ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՓՈՐՁԻՆ

21-րդ դարում համալսարանների կառավարման խնդիրների վերաբերյալ իր փորձը հայ գործընկերներին այսօր ներկայացրեց Հարավային Կոնեկտիկուտի համալսարանի ռեկտոր Մերի Փափազյանը:

[11.04.14] ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱՎ

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը 5 տարի կրկին ղեկավարելու է Ալեքսան Բաղդասարյանը:

[14.04.14] ԳԻՏԵԼԻՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԾԱՌԱՅԵՆ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ

Ուսանողները զարգացնում են անգլերենի իմացությունն ու էսսե գրելու հմտությունները:

[14.04.14] ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը շուրջ 63 անուն մասնագիտական գրականություն է նվիրաբերել Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանին:

[14.04.14] ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Առաջին անգամ հայ կոմպոզիտորների երգերը կհնչեն ֆրանսերենով:

[14.04.14] ՊՐՈԲԱՑԻԱ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՊՀ-ՈՒՄ

Երեք օր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներն ու դասախոսները հնարավորություն կունենան ծանոթանալու Պրոբացիայի մասնագիտական բոլոր կողմերին:

[14.04.14] ԱՊԱԳԱ ՌՈՒՍ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ՝ ՖԼԵՇՄՈԲԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐ

Այսօր Ռուս բանասիրության ֆակուլտետի ՈՒԽ-ն ֆլեշմոբի միջոցով շնորհավորեց ԵՊՀ ուսանողական խորհրդի 20-ամյակը:

[14.04.14] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Այսօր Մայր բուհում օրը տոնական էր: Նշվում էր Ուսանողական խորհրդի 20-ամյակը:

[15.04.14] ԵՊՀ-Ն ՈՒ ԱՐՊՀ-Ն ԱՐԴԵՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ

Երևանի պետական համալսարանը և Արցախի պետական համալսարանը (ԱրՊՀ) ստորագրել են համագործակցության պայմանագիր:

[15.04.14] ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՊՀ-ՈՒՄ ԷՐ

Համալսարանականների հյուրն էր ֆիզիկոս, մաթեմատիկոս, ծրագրավորող, գրող Ստեֆան Վոլֆրամը:

[16.04.14] ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈՒՆՉՆ ԱՄԵՆՈՒՐ ԷՐ

ԵՊՀ-ում անցկացվեց Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում իրականացվող «Ֆրանսիական երգի փառատոն» համերգային ծրագիրը:

[16.04.14] ԵՊՀ-Ն՝ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ. EXPO-2014»-Ի ՄԱՄՆԱԿԻՑ

Այսօր մեկնարկեց «Կրթություն և կարիերա. EXPO-2014» միջազգային ցուցահանդեսը, որտեղ առանձին տաղավարով ներկայացված էր նաև ԵՊՀ-ն:

[16.04.14] ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼ

Ըստ փիլիսոփա Քյոթիսի՝ բարեհաջող նավագնացությունն ապահովում է ոչ այնքան նավն ինքը, որքան նավը հմտորեն վարողը…

[17.04.14] ԵՊՀ-Ն ՈՒ ՅԱԳԵԼՈՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԵՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և Կրակովի Յագելոնյան համալսարանի միջազգային և քաղաքական գիտությունների ֆակուլտետների միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր:

[17.04.14] ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այսօր մամուլի ասուլիսով հանդես են եկել ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ուսանողները:

[17.04.14] ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ապրիլի 17-ին ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում ՊՆ ներկայացուցիչները հանդիպեցին համալսարանականների հետ:

[17.04.14] ՆԱՐԵԿԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐՈՎԻ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հիման վրա մոնոներկայացում՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանի մասնակցությամբ:

[18.04.14] ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

ԵՊՀ ասպիրանտ Նաիրա Պողոսյանի աշխատանքը «Լոմոնոսով-2014» միջազգային գիտաժողովում ճանաչվել է լավագույնը:

[18.04.14] ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

Ապրիլի 17-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի ընդլայնված կազմով նիստը:

[18.04.14] ԱՐԴԵՆ ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՐՈՄԵՏՐ-2013»-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում ներկայացվեցին ՀՌԿԿ «Կովկասյան բարոմետր» ծրագրի շրջանակներում իրականացվող՝ 2013 թ-ի հետազոտության արդյունքները:

[18.04.14] ԿՐԹԱԹՈՇԱԿ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՌԴ-Ի ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԵՊՀ 3 ֆակուլտետների 7 ուսանողներ արժանացել են «Հայ համայնքը հայ ուսանողությանը» հիմնադրամի անվանական կրթաթոշակներին:

[18.04.14] ԵՊՀ-Ն ԿՐԿԻՆ ԱՄԵՆԱԿԱՐԴԱՑՈՂ ԲՈՒՀՆ Է

Երևանի պետական համալսարանն այս տարի նույնպես հաղթող է ճանաչվել «Ամենակարդացող բուհ» անվանակարգում:

[18.04.14] ՖԻԶՖԱԿՆ ԱՆԿԵՂԾ ՍԻՐԵԼԸ ՉԳՐՎԱԾ ՕՐԵՆՔ Է

-Գիտե՞ք՝ որն է համար 1 ֆակուլտետը ԵՊՀ-ում:
-Իհարկե Ֆիզիկայի ֆակուլտետը:

[22.04.14] ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ Է ՄԵԶ

Ֆրանսերենում կարևոր չէ, թե ինչ ես ասում, կարևոր է, թե ինչպես ես ասում:

[22.04.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

ԵՊՀ երիտասարդ համալսարանականներն ապրիլի 6-12-ը մասնակցել են «Լոմոնոսով-2014» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին:

[22.04.14] ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾԻ ՀՈՒՇԵՐԸ ՎԵՐԱԾՆՎԵԼ ԵՆ ԳՐՔԻ ՏԵՍՔՈՎ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Եթե լռենք, քարերը կաղաղակեն» գրքի շնորհանդեսը, որում զետեղված են Եղեռնը վերապրած Հրաչյա Գևորգյանի հուշերը:

[22.04.14] ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԵԼ ԵՆ

Ապրիլի 22-ը Երկիր մոլորակի օրն է, ուստի բնապահպանները ևս մեկ անգամ ավելորդ չեն համարում բարձրաձայնել բնապահպանական առկա խնդիրների մասին:

[23.04.14] ԵՊՀ-Ն ՀԱՊԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄ

25 բարձրագույն ուսումնական հաստատություն Եկատերինբուրգում հիմնադրեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության համալսարանական լիգան:

[23.04.14] ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Ապրիլի 25-ից 27-ը համալսարանականները կայցելեն Արցախ:

[23.04.14] ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցին նվիրված մոմավառություն՝ ի հիշատակ 1.5 միլիոն անմեղ զոհերի:

[24.04.14] «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՎԵՐՆ ԱՌ ԱՅՍՕՐ ԱՊԱՔԻՆՎԱԾ ՉԵՆ»

Ողջ աշխարհի հայությունն այսօր՝ ապրիլի 24-ին, հարգանքի տուրք է մատուցում Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

[25.04.14] ՄԵԿ ԱԶԳԻ ՄՈՌԱՑՎԱԾ ՄԻ ԷՋ

Շատերը նույնիսկ չգիտեն էլ, որ թուրքերի կողմից ցեղասպանության են ենթարկվել նաև այլ քրիստոնյաներ…

[25.04.14] ԹԵ ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՌՆԱԼ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Մեկնարկում է SS ոլորտում ՀՀ նախագահի ամենամյա կրթական մրցանակի հայտերի ընդունումը:

[28.04.14] ԵՊՀ 95-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵՑ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՎ

Մեկնարկեց ԵՊՀ 95-ամյակին նվիրված հոբելյանական ուսանողական գիտական նստաշրջանը, որտեղ ներկայացվելու է շուրջ 400 գիտական զեկուցում:

[28.04.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Ապրիլի 25-ից 26-ը Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում (МГИМО) տեղի է ունեցել Միջազգային հետազոտությունների ռուսական ընկերակցության VIII կոնվենտը (գիտաժողով):

[28.04.14] ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է, ԱՐՑԱԽԸ՝ ԴԱՐՊԱՍԸ

Ապրիլի 25-ից 27-ը համալսարանականներն Արցախում էին:

[29.04.14] ՄԻԳՐԱՑԻԱ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2013 թ-ի վիճակագրական տվյալների համաձայն՝ ամբողջ աշխարհում գրանցված է ավելի քան 230 միլիոն միգրանտ:

[30.04.14] ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱՎ

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը ևս 5 տարի ղեկավարելու է Սամվել Աբրահամյանը:

[30.04.14] «ԹԱՓԱՌՈՒՄԸ» ԿՁԳՎԻ ՄԻՆՉԵՎ ՀԱՋՈՐԴ «ԿԻՆՈԱՇՈՒՆ»

«Թափառում» ռոք օպերա-ֆիլմի դիտմամբ ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը կազմակերպեց իր՝ այս տարվա վերջին ցուցադրությունը:

[30.04.14] «ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ ՆԱ ԴՐԵՑ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ»

Ապրիլի 30-ը Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ Ազգային հերոս, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող Թաթուլ Կրպեյանի հիշատակի օրն է:

[30.04.14] ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՆ ԱՆՑԿԱՑՐԵՑ ՌՈՒՍ ՕՊԵՐԱՏՈՐԸ

Ապրիլի 29-ին ապագա ժուռնալիստները հյուրընկալել էին ռուս հայտնի օպերատոր Անդրեյ Դեբաբովին, ով հանդես եկավ վարպետության դասով:

[05.05.14] ՆՇՎԵՑ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԻ 75-ԱՄՅԱԿԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որը նվիրված էր Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հիմնադիր Էդիկ Զոհրաբյանին:

[06.05.14] «ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԻ»

Պետական, քաղաքական ու հասարակական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ այսօր ԵՊՀ-ում անցկացվեց հոբելյանական նիստ, և բացվեց նրա անվան լսարան:

[06.05.14] ՀԱՂԹԵՑ «ՆԱՎՍԸ»

ԵՊՀ ՈՒԽ ջանքերով վերականգնվեց ՈՒՀԱ-ի (KBH) միջֆակուլտետային առաջնությունը:

[07.05.14] ԵՎՐՈՊԱՅԻ ՈՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՏՄԱՆ ԿԵՏՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆՎԵԼ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ

ԵՊՀ-ում այսօր մեկնարկեց «Եվրոպա և Կովկաս. միջտարածաշրջանային կապերն ու ինքնության հարցերը» խորագրով միջազգային գիտաժողովը:

[07.05.14] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մայր բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ մասնագետների հետ քննարկում են Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները:

[08.05.14] ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՔՆՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ապագա իրավագետների հերթական դատախաղի թեման իրական քրեական գործ էր, որին համալսարանականները պատրաստվել էին ամենայն լրջությամբ:

[08.05.14] ԿՀԻՄՆԱԴՐՎԻ ԵՐԱԽՏԻՔԻ ԾԱՌՈՒՂԻ

Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ ԵՊՀ գրադարանի մուտքի մոտ կհիմնադրվի երախտիքի ծառուղի, որտեղ կտեղադրվեն հայանպաստ գործունեություն ծավալած օտարազգի հայտնի գործիչների կիսանդրիները:

[08.05.14] ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՔՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՍԿՍՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանում առաջին անգամ կիրականացվի մաքուր տեխնոլոգիաների բիզնես գաղափարների մրցույթ:

[09.05.14] ՀԱՂԹԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎԵՑ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԲԱԿԻՑ

Տարիներ շարունակ Մայիսի 9-ը տոնում են նաև համալսարանականները:

[12.05.14] ԵՊՀ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ «PLANCK» ԱՐԲԱՆՅԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Պրոֆեսոր Վահագն Գուրզադյանի ղեկավարած աստղաֆիզիկոսների խումբը (Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ) տիեզերական մնացորդային ճառագայթման հատկություններն ուսումնասիրելիս «PLANCK» արբանյակի միջոցով բացահայտել է Տիեզերքում հսկայական խոռոչի (void)՝ դատարկության գոյությունը:

[12.05.14] ՈՐՈՇՎԵՑ ԱՄԵՆԱԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԹԻՄԸ
Մինչև հաջորդ ինտելեկտուալ խաղերի անցկացումը խաղի խորհրդանիշը՝ բուն, կհանգրվանի Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում:

[12.05.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՊԵԿԻՆՈՒՄ ԿՆԵՐԿԱՑԱՑՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողը կմեկնի Չինաստան:

[13.05.14] «ԱՐՍԵՆՆ ՈՒ ԻՐ ՆՄԱՆՆԵՐՆ ԵՆ ՀԱՂԹԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ»
Մայիսի 10-ը ԵՊՀ զոհված ազատամարտիկ Արսեն Ղազարյանի հիշատակի օրն է:

[13.05.14] ՖԻԶԻԿԱՆ ԱՊԱԳԱ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՎԵԼԻ ՄԱՏՉԵԼԻ ՁԵՎՈՎ
ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում այսօր մեկնարկեց «Ֆիզիկայի արդի հիմնախնդիրները» խորագրով ուսանողական դպրոցը, որը տևելու է մինչև մայիսի 16-ը:

[14.05.14] «ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ» ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՖԼԵՇՄՈԲԻ ՄԻՋՈՑՈՎ
Մայր բուհի բակն այսօր սովորականից բազմամարդ էր…

[15.05.14] ՀԱՂԹՈՂԸ ԿՍՏԱՆԱ ՈՒՂԵԳԻՐ ԴԵՊԻ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ԵՊՀ-ում անցկացվում է «Всемирный фестиваль русского языка. Праздник русской словесности в Армении» խորագրով փառատոնի հերթական փուլը:

[15.05.14] ԵՊՀ ՌԱԴԻՈՖԻԶԻԿՈՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԼԵՑՏԵՆԱՆՏԻ ԿՈՉՈՒՄ
15 անվճար տեղ կհատկացվի ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա» մասնագիտության համար:

[15.05.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում մեկնարկեց Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (EURASHE) 24-րդ տարեկան համաժողովը, որը կրում է «Աշխատանքային շուկայի որակավորումները» խորագիրը:

[16.05.14] ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր, ՄԱ՛ՅՐ ԲՈՒՀ
Այսօր՝ մայիսի 16-ին, լրանում է Երևանի պետական համալսարանի հիմնադրման 95-ամյակը:

[16.05.14] ԵՊՀ-Ի ՆՎԵՐԸ ՄԱՐԶԱՅԻՆ ԲՈՒՀԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ
Այսօր ԵՊՀ պատվիրակությունը պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանի գլխավորությամբ շրջայց է կատարել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում՝ նախկին Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցի շենքում, որտեղ կայացել է Մայր բուհի բացման հանդիսավոր արարողությունը:

[16.05.14] ԹԱԹԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԵՊՀ-ՈՒՄ
ԵՊՀ-ում այսօր մեկնարկել է առաջին միջազգային թաթագիտական գիտաժողովը, որի նախաձեռնողն է Իրանագիտության ամբիոնը:

[17.05.14] ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ՆՈՐԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ԲԱՑԸ ԼՐԱՑՐԵՑ ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գրադարանը համալրվեց 120-ից ավելի անուն գրքերով, որոնք լույս են տեսել վերջին տարիներին:

[19.05.14] ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ
Մայիսի 16-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ հյուրընկալվել էին Գևորգյան հոգևոր ճեմարանում:

[19.05.14] ԳՐՔԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Մայիսի 17-ին Գավառի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի սրահում կազմակերպվել էր ԵՊՀ-ի կողմից նվիրաբերված 200 միավոր գրքի ցուցադրություն:

[19.05.14] ՄԱՆԿԱՏԱՆ ՀՅՈՒՐԵՐՆ ԷԻՆ ԱՊԱԳԱ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԸ

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները մեկ օր անցկացրին Խարբերդի մասնագիտացված մանկատանը:

[20.05.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՑԸ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Մայիսի 13-17-ը Թուրքմենստան էր մեկնել հայկական պատվիրակությունը՝ մասնակցելու թուրքմեն բանաստեղծ Մահթումկուլի Ֆրագիի 290-ամյակին նվիրված միջոցառումներին:

[20.05.14] ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՍԵՐՈՒՆԴ. ՎԱՐԴԱՆԱՆՔՅԻՆԵՐ

Այսօր ԵՊՀ թանգարանում տեղի ունեցավ «Դասը վարում են ազատամարտիկները» խորագրով միջոցառումը:

[23.05.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մայիսի 22-ին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցան քառօրյա թրեյնինգի ամփոփումն ու հավաստագրերի հանձնումը:

[26.05.14] ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ

Մայիսի 23-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացավ ՈՒԳԸ ընդլայնված նիստը, որի ընթացքում քննարկվեցին 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքները:

[27.05.14] ԵԹԵ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ ՉԻ ՄՈՏԵՆՈՒՄ ԲՈՒՀԻՆ, ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ ՀԱԿԱՌԱԿԸ

Հայաստանյան մի քանի խոշոր բուհեր միավորվում են՝ աշխատաշուկան համալսարաններին մոտեցնելու համար:

[27.05.14] ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՆՈՐ ԼՍԱՐԱՆ ՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ նորագույն տեխնիկայով հագեցած լսարանի ու գրադարանի բացման հանդիսավոր արարողությունը:

[29.05.14] ԵՊՀ ԵՎՍ 14 ՈՒՍԱՆՈՂ ԿՍՏԱՆԱ ԿՐԿՆԱԿԻ ԴԻՊԼՈՄ

ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակներում ամփոփիչ ատեստավորում են անցնում ԵՊՀ այն ուսանողները, ովքեր ստանալու են կրկնակի դիպլոմ:

[29.05.14] ԱԿՏԻՎԱՆՈՒՄ ԵՆ ԵՊՀ-Ի ԿԱՊԵՐԸ ՈՒՐԱԼԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Ուրալի դաշնային համալսարանի (ՈՒԴՀ) պատվիրակությունն ու ԵՊՀ ղեկավարությունը քննարկել են հետագա համագործակցության ուղղությունները:

[30.05.14] ԲՈՒՀ-ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում համալսարանական շունչն էր թևածում:

[31.05.14] ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՍՏԱՑԱՆ

Մայիսի 30-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում ամփոփվեց ԵՊՀ իրավաբանական կլինիկայի 2013-2014 ուսումնական տարին:

[02.06.14] ՕՐԸ «ՇՆՉՈՒՄ ԷՐ» ՊՈԵԶԻԱՅՈՎ

Մայիսի 31-ին ԵՊՀ ՈՒԽ մշակույթի հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Աստունքող համալսարանական» մրցույթը:

[04.06.14] ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
Հունիսի 10-ից 13-ը Մայր բուհում տեղի կունենան ԵՊՀ 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները:

[05.06.14] ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ԵՊՀ հոբելյանի տոնակատարությունների շրջանակներում հունիսի 10-12-ը տեղի կունենան մշակութային մի շարք միջոցառումներ:

[05.06.14] ՀՅՈՒՐԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԷԻՆ
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը հյուրընկալել էր «Երևակ» կրթահամալիրի 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտներին:

[05.06.14] ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԸ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողների շնորհիվ այսուհետ հնարավոր կլինի «Վիքիպեդիայում» աշխատել նոր գործիքներով:

[06.06.14] ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ԴԻՄԱԳԻԾԸ ԳՏՆԵԼՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ
Հայ հասարակության այսօրվա դիմագիծը պարզելու համար անցկացված հետազոտության արդյունքները ներկայացվեցին ԵՊՀ-ում:

[06.06.14] ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՆՈՋ ՁԱՅՆԸ ԼՍԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Այսօր ԵՊՀ հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ-Հայաստան) ամփոփեց հերթական հետազոտության արդյունքները:

[09.06.14] ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՈՒՆԻՎԵՐՍԻԱԴԱ-2014»-Ի ՀԱՂԹՈՂ ԲՈՒՀԵՐԸ
ԵՊՀ թիմը միավորների հանրագումարով 0.5 միավորով զիջեց 1-ին տեղը և զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը:

[09.06.14] ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Այսօր ԵՊՀ հունագիտության կենտրոն էր այցելել ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը:

[10.06.14] ԿՆՈՋ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ
ԵՊՀ 95-ամյակին նվիրված հիմնական միջոցառումների մեկնարկը տրվեց «Կանայք, առաջնորդությունը և հասարակությունը» խորագրով միջազգային գիտաժողովով:

[10.06.14] ԱՌԱՋԱՏԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԿ ՀԱՐԿԻ ՏԱԿ
Այսօր հոբելյանական միջոցառումների շրջանակներում ԵՊՀ հրատարակչության նախաձեռնությամբ Մայր բուհում կազմակերպվել էր գրքի տոնավաճառ:

[10.06.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՆՎԵՐԸ ՄԱՅՐ ԲՈՒՀԻՆ
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում համալսարանականների ներկայացրած ձեռքի աշխատանքները ապացուցեցին, որ նրանք ոչ միայն գիտության կրողներ են, այլև արվեստի:

[10.06.14] ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
ԵՊՀ 95-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում այսօր Մայր բուհում տեղի ունեցավ «Զանգակ» հրատարակչության կողմից հրատարակված մանկական գրքերի շնորհանդեսը:

[11.06.14] «ՀԱՄԱԼՍԱՐԱ՛Ն, ՄԵՆՔ ՔՈ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՆՔ»

ԵՊՀ հոբելյանին նվիրված միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ էր գրավում պոեզիայի փառատոնը՝ նվիրված հայ մեծանուն գրողների՝ Համո Սահյանի և Հովհաննես Շիրազի 100, Պարույր Սևակի 90-ամյակներին:

[11.06.14] ԲՈԼՈՐ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԷԻՆ 95-ԱՄՅԱ ԵՊՀ-ԻՆ

ԵՊՀ 95-ամյակին նվիրված տոնական միջոցառումների շարքում այսօր տեղի ունեցավ ԵՊՀ գիտխորհրդի հանդիսավոր նիստ, որի օրակարգում ընդգրկված էին բացառապես շնորհավորանքներ ու պարգևատրումներ:

[11.06.14] ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ այսօր անցկացված գիտխորհրդի հանդիսավոր նիստի ընթացքում համալսարանականներին հանձնեցին ՀՀ նախագահի, վարչապետի, ԿԳՆ-ի և ԵՊՀ-ի մեդալներ ու շնորհակալագրեր:

[11.06.14] «ՄԱՅՐ ԲՈՒՀՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ՆՇԱՁՈՂԸ». ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՊՀ գիտնականները պարգևատրվեցին ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալներով:

[11.06.14] ՄՈԼԻԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Երիտասարդ թարգմանիչները ներկայացրին իրենց առաջին թարգմանությունները:

[12.06.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԷԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Շարունակելով Մայր բուհի տոնին նվիրված միջոցառումների շարքը՝ հունիսի 11-ին ԵՊՀ-ում կրկին տոնական տրամադրություն էր տիրում:

[12.06.14] ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ XXI ԴԱՐՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Կրթական ոլորտի խնդիրները համախմբել էին հայաստանյան և արտասահմանյան մի շարք հեղինակավոր բուհերի պրոֆեսորներին:

[12.06.14] ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է

ԵՊՀ-ն և Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանն ամրապնդում են համագործակցությունը:

[13.06.14] ԵԶՐԱՓԱԿԻՉ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԼԵԶՎՈՎ

ԵՊՀ 95-ամյակին նվիրված հոբելյանական հիմնական միջոցառումները եզրափակվեցին դասական երաժշտության համերգով:

[17.06.14] «ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՈՎ»

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 52 ուսանողներ այսօր ստացան իրավագիտության մագիստրոսի աստիճանը հավաստող ավարտական դիպլոմներ:

[17.06.14] ԵՊՀ ՄԻ ՇԱՐՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ՈՐՊԵՍ ՋՈԿԱՏԱՎԱՐՆԵՐ

Արդեն մի քանի տարի է, ինչ տարբեր բուհերի ուսանողներ որպես ջոկատավարներ մասնակցում են ՀՀ Կառավարության ճամբարային ծրագրին:

[18.06.14] «ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ»-Ը՝ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հունիսի 17-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճը լցված էր շեքսպիրյան նոր շնչով:

[20.06.14] ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ Է

Հունիսի 20-ին ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում մեկնարկեց Հայկական տնտեսագիտական միության 2014 թ-ի տարեկան գիտաժողովը:

[20.06.14] ՈՒԽ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ

Այսօր ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ Ուսանողական խորհրդի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի արդյունքներն ամփոփող ընդլայնված նիստը:

[24.06.14] SS ՈԼՈՐՏԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ Է ԿԱՆՉՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ

Մեր երկրում բարձր տեխնոլոգիաների զարգացման գործում բուհերն այսուհետ ունենալու են անմիջական մասնակցություն՝ համագործակցելով ոլորտի խոշոր ընկերությունների հետ:

[24.06.14] ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ

Մայր բուհում քննարկվեցին Հայաստանում իրականացվող Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների աշխատանքներն ու առկա խնդիրները:

[26.06.14] ԱՅՍ ՏԱՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ ՊԱԿԱՍԵԼ Է 10 ՏՈԿՈՍՈՎ

Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս ուստարվա ամփոփիչ նիստը:

[26.06.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

ԵՊՀ 95-ամյակի կապակցությամբ մի խումբ աշխատակիցներ այսօր կայացած գիտխորհրդի նիստի ժամանակ պարգևատրվել են ԵՊՀ հուշամեդալով և արծաթե մեդալով:

[26.06.14] ԵՊՀ + «ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ» = ՈՐԱԿՅԱԼ ՈՒ ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԵՏ

Այսօր ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 19 ուսանողներ ԵՊՀ-ի կողմից ստացան ավարտական դիպլոմներ, իսկ «Սինոփսիս Արմենիա» ընկերության կողմից՝ վկայականներ:

[27.06.14] ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի դահլիճում ԵՊՀ ՈՒԳԸ-ն համագործակցության հուշագիր ստորագրեց Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ՈՒԳԸ-ի և ՀՀ ԳԱԱ ՈՒԽ-ի հետ:

[02.07.14] ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Տնտեսական սոցիոլոգիա» գիրքը կհետաքրքրի ոչ միայն սոցիոլոգներին և տնտեսագետներին, այլև գիտության այլ բնագավառներ ուսումնասիրողներին:

[04.07.14] ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է. ՆՈՐ ԿՅԱՆՔ՝ ԵՊՀ ԴԻՊԼՈՄՈՎ

Արդեն մի քանի օր է, ինչ Մայր բուհի տարբեր ֆակուլտետներում տոնական տրամադրություն է տիրում. շրջանավարտները ստանում են իրենց ավարտական դիպլոմները:

[04.07.14] ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԵՊՀ մասնագետներն այսօր հանդիպել են լրագրողների հետ և մասնագիտական տեսանկյունից ներկայացրել հայ-քրդական առնչությունները տարածաշրջանային արդի զարգացումներում:

[05.07.14] ԵՊՀ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ

ԵՊՀ-ում հունիսի 30-ից հուլիսի 5-ն անցկացվել է «Սահմանադրական զարգացումների առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում» խորագրով միջազգային ամառային դպրոցը:

[07.07.14] ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՔ ՌԴ-ՈՒՄ

Հուլիսի 1-ից 3-ը ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ներկայացուցիչները մասնակցել են «ՌԴ ազգային շահերը. առաջնահերթություններ, ռազմավարություն և հեռանկարներ» խորագրով հավաքին:

[09.07.14] ԿՄՇԱԿՎԻ ԵՊՀ 2016-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Այսօր մեկնարկեցին ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանն ուղղված աշխատանքները:

[10.07.14] ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ. ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ ԵՊՀ գիտխորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի նիստը:

[11.07.14] ՎԱՐԴԱՆԱՆՔՅԻՆԵՐԸ «ԿՄՆՎԵՆ» ՆԱԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀՈՂՈՎ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Վարդանանք» ակումբի կողմից կազմակերպված «Ամառային դպրոց-2014»-ի փակման արարողությունը:

[15.07.14] ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Հրապարակվել է 2014-2015 ուստարվա դիմորդների անվանացանկը՝ ըստ անցողիկ միավորների և մասնագիտությունների:

[15.07.14] ԱՐՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՊՀ-ՈՒՄ ԿԴԱՍԱՎԱՆԴՎԻ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում «Հեմատոլոգիա» (արյունաբանություն) դասընթացը ևս 3 տարի ուսումնասիրվելու է «TEMPUS» ծրագրի օգնությամբ:

[17.07.14] ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԵՎ ՔԻՄԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Փեթեր Լանգերը պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով:

[18.07.14] ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՅԻՆ ՄԵԾ ՍԻՐՈՎ ՈՒ ՋԵՐՄՈՒԹՅԱՄԲ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում հանդիսավորությամբ անցկացվեց Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի դիպլոմների հանձնման արարողությունը:

[21.07.14] ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ՄԱՅՐ ԲՈՒՀ

Սփյուռքի ինը կրթօջախներ ներկայացնող 30-ից ավելի երիտասարդներ այցելեցին Մայր բուհ:

[22.07.14] ԱՅՍ ՏԱՐԻ ՄԱՅՐ ԲՈՒՀՆ ՈՒՆԵՑԵԼ Է 4874 ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

Դիպլոմների հանձնման արարողությունները սկսվել են դեռևս հունիսից և շարունակվում են մինչ օրս:

[23.07.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է

Հուլիսի 21-ին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Արթուր Իսրայելյանն այցելել է ամերիկյան Մերիլենդի համալսարան:

[23.07.14] ԱՅՍ ՏԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՎ ԵՊՀ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ 3134 ԴԻՄՈՐԴ

2014-2015 ուստարվա ընդունելության համար ԵՊՀ-ում երկու փուլը միասին հայտագրվել էր 3720 դիմորդ:

[24.07.14] ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԵՐԹԸ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻՆՆ ԷՐ

Երիտասարդ տնտեսագետների ևս մեկ սերունդ ստացավ «պաշտոնական ուղեգիր» դեպի մասնագիտական աշխատաշուկա:

[25.07.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ՝ «ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՋԱԿԻՑ

Արդեն մի քանի օր է, ինչ Մայր բուհում են հյուրընկալվում «Սփյուռք» ամառային դպրոցի մասնակիցները:

[28.07.14] ՃԱՄԲԱՐ-ԲԱՆԱԿՈՒՄԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Հուլիսի 27-ին ԵՊՀ ուսանողները մեկնեցին Հադրութի շրջանի Տող գյուղ:

[03.08.14] ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Վախճանվել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանը:

[08.08.14] «ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ»՝ ՎԱՐԴԱՆԱՆՔՅԻՆԵՐԻ ՇՆՉՈՎ

Արցախում հարգանքի տուրք մատուցելով ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին՝ Մայր բուհի «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի սաներն այսօր Երևան վերադարձան բուռն տպավորություններով:

[28.08.14] ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՈՒՆԻ 3224 ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻ

2014-2015 ուստարվա ընդունելության համար ԵՊՀ-ում երկու փուլը միասին հայտագրվել էր 3720 դիմորդ, որից միայն 3224-ն է դարձել Մայր բուհի ուսանող:

[28.08.14] ԵՊՀ-Ն ՊԱՏՐԱՍՏ Է ՆՈՐԵԿՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ

Մայր բուհն այս տարի «նորաթուխ» համալսարանականների առջև դռները կբացի սեպտեմբերի 1-ին:

[29.08.14] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱԿ ՀԱՂԹՈՂՆ Է

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Հանրային կառավարում» բաժնի բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողուհի Տաթև Դերզյանը տարածաշրջանում միակն էր, ով հաղթող ճանաչվեց ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում կազմակերպված բազմալեզու ակնարկների մրցույթում: